358
խ-11

Բ. Գ. Կ. Բ.

ՀՐԵՏԱՁՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԱՍ II

1930

ԽՍՀՄ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ ՀԽՍՀ

ՌԱԶՄԱԿԱՆ ՅԵՎ ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Բ. Գ. Կ. Բ.

ՀՐԵՏԱՁՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

ՄԱՍՆ II

1929 № 34 ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ԽՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ՄԱՍ

08.11.2013 6981
42.489

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2878
ԳՐԱՌԵՏԳԼԽՎԱՐ 2010 թ.
ՏԻՐԱԺ 1000

ԳՐԱԴԱՐ...
ԱԳ
2007
ԳՓ
22304-59

ՀՐԱՄԱՆ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ք. Մոսկվա. 25 հունիսի, 1927 թ.

№ 326.

1. *Գործադրության մեջ մտցնել սրա հետ հայտարարվող Բ. Գ. Կ. Բ. «Հրետազորի մարտական կանոնադիրքը», մաս II—հրատ. 1927 թ. (Հր. Մ. Կ. 27):*

2. *Հրետազորի Մարտական Կանոնադիրքն իր մեջ պարունակում է ցուցումներ՝ հրետազորի մարտական գործադրության և մարտի զանազան տեսակների ընթացքում քաղաքական աշխատանքի մասին և ընդգըրկում է հրետանական մասերի և ստորաբաժանումների գործունեյությունը դիվիզիայի և կորպուսի շրջանակներում:*

3. *Հրետազորի նպատակահարմար կիրառման հիմքը կայանում է հրետազորի և հետևազորի ամենասերտ համագործակցության մեջ: Համագործակցությունը պայմանավորվում է. ա) հրետազորի մարտական բաշխմամբ, վորը պիտի ճիշտ համապատասխանի զորական միավորությունների մարտակարգի մասնատմանը, բ) կապի պատշաճ կազմակերպությամբ, վորը պիտի գոյություն ունենա հրետանական խմբակների ու մարտկոցների և սրանց կողմից ոգնություն ստացող հետևակի ստորաբաժանումների միջև և գ) հրետանական կրակով ժամանակին և գործուն աջակցությամբ, վոր ցույց է տրվում հետևակին:*

4. *Հրետազորի վրա բարդվելիք խնդիրները պետք է խստորեն համակերպված լինեն առկա միջոցների և ժա-*

մանակի հետ։ Հրետազորի օգտագործման իրական ծրագիրը պետք է կազմել, ելնելով հրանոթների և նրանց համար արկերի իսկական քանակից։ Հրետազորի հատկությունների իմանալը, որ պարտադիր է Բ. Գ. Կ. Բ. բոլոր հրամանատարների համար, և գլխավոր հարվածի ուղղությամբ ջանքերը կենտրոնացնելու անշեղ ձգտումը, ի հաշիվ լերկրորդական ուղղություններում տնտեսած ուժերի և միջոցների, միշտ կթեթևացնեն ճիշտ լուծումը ընդհանուր զորական հրամանատարին։

5. Կանոնագիրքը շաբլոններ (պատրաստի ձևեր) չի տալիս, և նրա ցուցումները պետք է կիրառվեն ամենամեծ ճկունությամբ և խստորեն համակերպված պիտի լինեն պարագայի պայմանների հետ։ Հրետանական հրամանատարների ու մարտիկների ակտիվությունն ու հեղափոխական գիտակցությունը, որ պիտի զուգակցված լինի մշտական ձգտումով՝ հետևակին ամեն կերպ օգնելու և նրա խնդիրների ծանրությունը թեթևացնելու, հրետազորի և ընդհանուր զորական միավորությունների հաջող աշխատանքի գրավականն է։

Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսար և ԽՍՀՄ Հեղափոխական Ռազմական Խորհրդի Նախագահ՝ ՎՈՐՈՇԻԼՈՎ

ԳԼՈՒԽ I.

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. ՆՇԱՆԱԿՈՒՄԸ։ Հրետազորի մարտական աշխատանքն անբաժանելի յե հետևակի մարտական գործունեյությունից ու կյանքից։ Հրետազորը, նրա հրանոթների տիպարից ու տրամաչափից անկախ, ի կատար է ածում բոլոր խնդիրները հետևակին օգնելու համար։

Հրետազորի նշանակումն է՝ հարվածել հակառակորդի կենդանի ուժն ու կրակային միջոցները, ավերել նրա կողմից կառուցված ամրությունները և բարոյապես ճնշել հակառակորդի դիմադրության կամքը։

Հրետանու կրակն իր նյութական ու բարոյական գործողությամբ թուլացնում է հակառակորդի դիմադրությունը կամ նրա հարձակողական թափը, հեշտացնում է իր հետևակի հարձակումը կամ նրան կայունություն է տալիս պաշտպանության ժամանակ։

Հրետանու նյութական գործողությունը կախված է նպատակների բնույթից, արկերի ու հրանոթների հատկությունից ու քանակից, կրակի ճշտությունից ու հոծությունից և կրակ վարելու հմտությունից։

Բարոյական գործողությունը նյութական գործողությունից անբաժանելի յե։

2. ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՆ.

ա) Հրետանու մասնատումը, վորը պիտի խստորեն համապատասխանի ընդհանուր զորական (հետևակի) միավորությունների որգանիզմի մարտական մասնատմանը. այդ թույլ է տալիս իրականացնել գործոն և անընդհատ օգնությունը հետևակին և լիակատար հա-

մագործակցությունն ամբողջ մարտի ընթացքում արագ փոփոխվող պարագայից անկախ:

բ) Կրակի համախմբումը, որն իրականացվում է, ըստ հնարավորին, ավելի շատ հրանոթների կրակի կենտրոնացումով մարտի վճռական շրջանում վճռական ուղղությամբ, հրետանական միջոցները նպատակահարմար բաշխելով մարտական խնդիրներին համեմատ:

գ) Գործողության հանկարծակիությունը, որն ապահովվում է հրետանու տեղափոխության թաքունությամբ ու արագությամբ և նրա դասավորության թաքունությամբ, հրաձգության համար յելակետային տվյալներ պատրաստելու ճշտությամբ, կրակ բանալու, կենտրոնացնելու և տեղափոխելու արագությամբ (կրակի ճկունությամբ):

դ) Թևային և շեղահար կրակի զուգակցությունը ճակատային կրակի հետ, որին կարելի յե հասնել, յեթե հրետանին թևանցող դրություն գրավի հակառակորդի վերաբերյալ: Հրետանու օգտագործումը չի կարող շաբլոնական լինել և պետք է ամբողջովին կախված լինի մարտի տեսակից ու բնույթից և ճկունությամբ ձևափոխվի պարագային համեմատ ամբողջ մարտի ընթացքում:

3. ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ բազմատեսակ են: Խնդիրները վորոշվում են մարտական գործողությունների բնույթով, հրանոթների և արկերի հատկությամբ, հրետանական միջոցների առկայությամբ և մասնավոր պարագայով:

Դրանցից ամենակարևորներն են.

ա) հարվածել և բարոյապես ջախջախել կենդանի ուժը և ղեկավարման ու մատակարարման օրգանները.

բ) վոչնչացնել հեռևակի կրակային միջոցները.

գ) կռիվ մղել հրետանու դեմ.

դ) ավերել ծածկարաններն ու փակոցները.

ե) կրակով ուղեկցել և կրակի պատնեշ ստեղծել.

զ) կռիվ մղել օդային միջոցների դեմ.

է) կռիվ մղել զրահապատ ուժերի դեմ:

Հակառակորդի զորքերին հարվածելը (բարոյապես և նյութապես) հանդիսանում է հրետանու գլխավոր խնդիրը մարտում: Ավերումը միջոցներից միայն մեկն է:

4. ՊԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: Մարտում հրետանու նպատակահարմար օգտագործման գրավականն է՝ նրա տակտիկական հատկությունների իմանալն ընդհանուր զորական պետերի կողմից ու հրետանական պետերի բարձր տակտիկական ու տեխնիկական պատրաստությունը:

Հրետանական պետերը պետք է լավ իմանան, թե իրենց և թե զորքի այլ տեսակների զենքի հատկությունները, վորոշակի ունակություններ ունենան հրետանու գործադրության համար, նմանապես հաստատակամություն, տոկունություն ու վճռականություն ունենան ու պատրաստ լինեն պատասխանատվությունն իրենց վրա վերցնելու:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՐԱԿԱՆ ՊԵՏԸ հրետանուն այնպիսի խնդիրներ է տալիս, վոր համապատասխանում են նրա հրանոթների հատկություններին ու առկա միջոցներին. հրետանական պետը խնդիրները բաշխում է նրան յենթարկվող մասերի միջև և հրետանական միջոցները գործադրում է ընդհանուր զորական պետի կողմից ընդունած գործողությունների ծրագրին ճիշտ համապատասխան ու զորքերի այլ տեսակների հետ լիակատար համագործակցությունը պահպանելով:

Բոլոր հրամանատարների աշխատանքը, հրետանու օգտագործման վերաբերյալ, պետք է տոգորված լինի մի ձգտումով՝ ապահովել հետևակի համար նրան տրըված մարտական խնդիրներին հասնելը ամենաքիչ կորուստներով ու ամենակարճ ժամանակում:

6. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԸ միշտ պիտի իրազեկ լինի ընդհանուր զորական հրամանատարության մտադրու-

թյուններին ու վճիռներին և իր ժամանակին նրան զեկուցի բանավոր կամ գրավոր պարագայի մասին ունեցած տեղեկությունները և իր նկատառումները հետագա գործողությունների մասին:

Հրամատարությունը վճիռ է կայացնում, լրիվին հաշվի առնելով հրետանական հրամատարի զեկուցումը:

Հրետավորին տրված խնդրի կատարումը կազմում է նրա մարտական գործունեության հիմքը:

Առանձին նպատակների գնդակոծումով տարվելը, թեկուզ և դրանք գրավիչ լինեն հրետավորի տեսակետից, կարող է ցրված թույլ կրակի հասցնել, փոխանակ կրակը կենտրոնացնելու տրված խնդիրն ի կատար ածելու համար:

Տրված խնդիրները կատարելու հետ միասին հրետանական պետը պարտավոր է հաշվի առնել հետեվակի պահանջներն ու նրան աջակցություն ցույց տալ:

Նկատի ունենալով ժամանակակից մարտի անորոշությունն ու բարդությունը, յուրաքանչյուր հրետանական պետ, ղեկավարվելով գործողությունների ընդհանուր նպատակով, պարտավոր է ձեռներեցություն ցուցահանել և ինքնուրույն կերպով վճիռ կայացնել այն դեպքերում, երբ անհապաղ օգնություն է հարկավոր ոչ միայն այն զորքերին, որոնց նա սատարում է, այլ և հարևան զորքերին, կամ երբ մարտի պարագան արագ փոխվել է:

Մարտական պարագայի լրջմտորեն և պարզ հասկացումը միշտ կթելադրի ճիշտ լուծումը:

ԳԼՈՒԽ II

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Հրետանին պետք է գործադրել մարտում այնպիսի խնդիրներին համապատասխան, որոնց լուծման համար հրականացված է հրանոթների կազմությունը: Մարտում հրետանու նպատակահարմար օգտագործման համար բոլոր պետերից պահանջվում է իմանալ հրանոթների հիմնական հատկությունները:

Մարտական պարագան կարող է պահանջել այս կամ այն տրամաչափի և սիստեմի հրանոթները գործադրել ոչ նրանց ուղղակի նշանակման համեմատ: Այդպիսի դեպքերում ճիշտ լուծումը պայմանավորվում է հրետանու զանազան տեսակների հատկությունների իմացումով և մարտի պարագայի ու բնույթի ճիշտ հասկացումով:

8. ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ: Ընդհանուր խնդիրները, որ վիճակվում են հրետանուն, նրանց բնույթին համապատասխան, կարող են ի կատար ածվել հետևյալ սիստեմի հրանոթներով.

Սիստեմները:	Խնդիրները:
76-մմ թնդանոթ. զանազան սիստեմի և 114—122-մմ հոբիցները:	ա) Հետեվակին սատարելը. կենդանի նպատակներին հարվածելն ու թունավորելը. արհեստական արգելքներն ու թեթև թաքստոցներն ավերելը. կրակի պատնեշ ստեղծելը. թնդանոթների համար՝ տանկերի դեմ կռիվ մղելը: բ) Կռիվ մղել հրետանու դեմ:
107—120-մմ թնդանոթները:	ա) Կրակ վարել հեռավոր նպատակների դեմ: բ) Կռիվ մղել հրետանու դեմ: գ) Խանգարել հակառակորդի թիկունքի կյանքն ու գործունեությունը (հեռավոր ոժանդակները, կայանները, ճանապարհների հանգույցները):

Սիստեմները։	Խնդիրները։
152-մմ հոբիցները։	ա) Ավերել ավելի ամուր դաշտային տիպի կառուցվածքները, վորը 122 մմ հոբիցների ուժից վեր է։ բ) Կռիվ մղել հրետանու դեմ։
150 մմ ու ավելի մեծ տրամաչափի թնդանոթները։	ա) Գնդակոծել հեռավոր շատ ամուր նպատակները, վորը 76-մմ, 107-մմ և 120-մմ թնդանոթների ուժից վեր է։ բ) Կռիվ մղել խոշոր, հեռահար ու ամենաշատ վնասակար հրետանու դեմ։
200-մմ և ավելի մեծ տրամաչափի հոբիցները։	Ավերել հակառակորդի դիրքի հատկապես կարեվոր ու լավ ամրացրած տեղամասերը։

9. ՀՐԵՏԱՆՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ։ Նայած հրանոթների տրամաչափին և հատկություններին, հրետանին ստորաբաժանվում է՝ զորական և մեծ հզորության հրետանու։

Փոխադրության յեղանակի համեմատ, հրետանին կարող է լինել՝ ձիաքարշ, գրաստային, ավտոմոբիլային, տրակտորային և յերկաթուղային հաստարանների վրա։

ա) Զորական հրետանին իր սպառազինման համար ունի՝ 76–մմ, 107—120–մմ թնդանոթներ և 114—122–մմ և 152–մմ հոբիցներ։ Այդ հրանոթներն այնպիսի դյուրաշարժություն ունեն, վոր հնարավորություն է տալիս նրանց շարժվել մյուս զորքերի հետ միասին դաշտային ճանապարհներով և առանց ճանապարհների։ Յերթային դրությունից՝ նրանց մարտական դրությանն անցնելը կատարվում է անհապաղ կամ մի քանի րոպեյում։

Զորական հրետանին որգանապես մտնում է զորական միավորությունների կազմի մեջ։

բ) Մեծ հզորության հրետանին ունի թնդանոթներ և հոբիցներ ավելի խոշոր տրամաչափի (155–մմ և ավելի), վոր տարբերվում են իրենց հեռահարությամբ և արկերի մեծ հզորությամբ։

Մեծ հզորության հրանոթները հարմարեցված են անիվներով շարժվելու ու մասամբ անիվների վրայից հրաձգության համար։ Նրանք, իրենց մեծ քաշի պատճառով, կարող են շարժվել միայն խճուղիներով. գետնուղիներով նրանք կարող են անցնել միայն կարճ հեռավորություններ, յերբ գետինը չոր է և ճանապարհներն ու կամուրջները շատ լավ վիճակում են։

Յերթային դրությունից մարտական դրությանն անցնելը պահանջում է զանազան սիստեմների համար մի քանի րոպեյից մինչև 12 ժամ և ավելի։

Մեծ հզորության դիրքային հրանոթները փոխադրվում են միայն խճուղիներով հատուկ սայլերի վրա քանդած դրությամբ. մի քանիսները հարմարեցված են միայն յերկաթուղիներով փոխադրելու համար։ Այդ հրանոթների հրաձգության համար հաստումը պահանջում է հատուկ ոժանդակ հարմարանքներ ու մի քանի ժամից մինչև 7 որ ժամանակ։

Մեծ հզորության հրետանին չի մտնում զորական միավորության կազմի մեջ և սովորաբար շարժվում է առանձին սյուներով հատուկ պաշտպանակի պահպանության տակ։

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ։ Զորական հրետանին նրա տակտիկական գործադրման հարմարության համար բաժանվում է գնդի, դիվիզիական և կորպուսային հրետանու։

Գնդի հրետանու հիմնական խնդիրն է ամենամոտիկից անմիջապես սատարել այն գնդի ստորաբաժանումներին, վորի կազմի մեջ նա մտնում է։ Նա գործադրվում է վոչ միայն ամբողջ ստորաբաժանումների (բաժնյակների և մարտկոցների) կազմով, այլև շատ դեպքերում առանձին հրանոթներով։ Վերջինս տեղի չի ունենում առավելապես այն դեպքերում, յերբ նա բաշխ-

վում է մանր հետևակ ստորաբաժանումների (վաշտերի) միջև:

Դիվիզիական հրետանին կազմում է հրետանական գունդը, որը մտնում է հետևակ կամ հեծյալ դիվիզիայի կազմի մեջ: Դիվիզիական հրետանու գլխավոր խնդիրն է՝ սատարել հետևակին. հաճախ նա գործադրվում է նաև հակառակորդի հրետանու դեմ կռիվ մղելու համար: Սպառազինված է թնդանոթներով և հաուբիցներով, որոնք կարող են շարժվել առանց ճանապարհների նաև վարգելով (կարճ հեռավորությունը նաև արշավակի): Ամենամեծ տրամաչափն է 122-մմ: Դիվիզիական հրետանու կազմակերպչական բաժանումը համապատասխանում է դիվիզիայի մասերի հնարավոր մարտական բաշխմանը և նրանց խնդիրներին:

Կորպուսային հրետանու հիմնական խնդիրներն են կռիվ մղել հակառակորդի հրետանու դեմ, կրակ վարել մեծ հեռավորությունների վրա, խանգարել հակառակորդի թիկունքի գործունեությունը և ավելի ամուր ծածկարանները, որոնց չի կարող ավերել դիվիզիական հրետանին: Կորպուսի հրետանին դիվիզիական հրետանու նկատմամբ հանդիսանում է իբրև ուժեղացման հրետանի: Ամենամեծ տրամաչափն է 152-մմ:

Զենիթային հրետանին կռիվ է մղում հակառակորդի օդային ուժերի դեմ հաստոցավոր գնդացիրների հետ միասին:

Դիվիզիական և գնդի հրետանին միասին կազմում են դիվիզիայի հրետանին, իսկ կորպուսային հրետանին կորպուսի բոլոր դիվիզիաների հրետանու հետ միասին կազմում են կորպուսի հրետանին:

Բանակը և ճակատը (բանակների խմբակը) իբրև օրգանական հրետանի չունեն:

Գլխավոր հրամատարության օժանդակի հրետանին (ԳՀՕՀ), կորպուսների և առանձին գործող դիվիզիաների հրետանու նկատմամբ, հանդիսանում է իբրև քանակապես և որակապես ուժեղացման հրետանի:

ԳՀՕՀ-ի կազմի մեջ մտնում են նաև զորական սիստեմի հրանոթները և մեծ հզորության հրանոթները:

ԳՀՕՀ-ի միավորությունները տրվում են բանակներին զանազան ժամանակամիջոցներով. բանակների հրամատարությունը բաշխում է այդ միավորությունները իր հայեցողությամբ ամենակարևոր ուղղություններում գործելու համար:

11. **ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ** այնպիսի կազմակերպություն ունեն, որը համապատասխանում է ղեկավարման հարմարությանը և մարտական խնդիրների լուծմանը:

Մարտկոցը հանդիսանում է իբրև հրանոթների և նրանց սպասավորող ուժերի ու միջոցների հիմնական (ամենափոքր) մշտական միավորություն: Մարտկոցը կրակի միավոր է. միայն որոշ դեպքերում նա տակտիկական միավորի դեր է կատարում: Մարտկոցի հրանոթները տեղավորվում են մեկ կրակային դիրքում: Մարտկոցներն առանձին գործող հրանոթների բաժանելը գործադրություն է ունենում որոշ դեպքերում գնդի հրետանու համար. դիվիզիական և կորպուսային հրետանու համար այդ թույլ է տրվում միայն բացառիկ դեպքերում:

Բաժնյակը հիմնական տակտիկական մշտական միավորությունն է, որ բաղկացած է մի քանի մարտկոցներից: Զորական հրետանու բաժնյակները խառը կազմ ունեն. նրանց մեջ որոշ հարաբերությամբ մտնում են թնդանոթային և հաուբիցային մարտկոցներ: Բաժնյակը գործում է իր հաստիքային կազմով. բաժնյակը բաժան բաժան անելուց պետք է խուսափել, որովհետև այդ խանգարում է ղեկավարման սիստեմը և անբարենպաստ կերպով անդրադառնում է մարտական աշխատանքի վրա:

Հրետանական գունդը բաղկացած է մի քանի բաժնյակներից և ղեկավարման ու հայթայթման անհրաժեշտ օր-

դաններից․ նա հանդիսանում է իբրև տակտիկական և վարչա-տնտեսական միավոր։

Դիվիզիական ու կորպուսային հրետանու գնդերը, իբրև կանոն, գործում են այն զորական միավորությունների կազմի մեջ, վորոնց օրգանիկ մասն են կազմում նրանք։

Հրետանական խմբակները *ժամանակավոր տակտիկական միավորություններ են, վոր կազմվում են զանազան ժամկետներով, զանազան կազմով, յուրաքանչյուր խմբակը վորոշ զորական միավորությանը սատարելու համար։*

Նայած հրետանու քանակին, խմբակները կազմվում են բաժնյակներից կամ մարտկոցներից կամ յեկուսից եվ միասին։ Իբրև կանոն, պետք է խուսափել հրետանական մասերի և ստորաբաժանումների միջական կազմակերպությունը բաժան-բաժան անելուց։

ԳԼՈՒԽ III․

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

12․ *ՀՐԵՏԱՆԻՆ ԿԱՐՈՂ Է ՎՃՌԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՄԱՐՏԻ ԸՆԹԱՑՔԻ ՎՐԱ ՄԻՄԻԱՅՆ ՆՐԱ ՑԵՎ ՀԵՏԵՎԱԿԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ։*

Համագործակցությանը հասնում են․

ա) սերտ օրգանիկ կապով հրետանու և զորքերի մյուս տեսակների միջև․

բ) ընդհանուր զորական և հրետանական հրամատարների պատշաճ փոխհարաբերությամբ, բոլոր հրամատարների և պետերի կողմից պահպանելով հրետանու կրակի լիակատար հզորության նպատակահարմար օգտագործման հիմնական պայմանները, այսինքն կրակն ուղղելով այն նպատակների դեմ, վորոնք մեր

հետևակին ամենից շատ են վնասում և այնպիսի հեռակայություններից, վորոնք հրանոթների տվյալ սիստեմի համար համապատասխանում են կրակի ամենամեծ գործոնությանը․ մասսայական կրակի կենտրոնացումով հակառակորդի ճակատի ամենակարևոր տեղամասերի վրա (մեկ հրանոթի կրակը ճակատի յուրաքանչյուր 20—60 մետրի վրա)․ ամենամեծ չափով օգտագործելով թևային կրակը (վորը մի քանի անգամ ավելի գործոն է քան ճակատային կրակը հրանոթների միևնույն քանակի համար)։

գ) կողմնորոշման միությամբ և խնդիրների ընդհանրությամբ․

դ) հրետանուն նպատակահարար և պարզ խնդիրներ տալով․

ե) հրետանու մարտական բաշխման նրա խնդիրներին համապատասխանությամբ․

զ) կենդանի կապի ռւկայությամբ և տեխնիքական կապի նպատակահարմար կազմակերպությամբ։

13․ *ՍՏՈՐԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ։ Հրետանին յենթարկվում է այն զորական միավորության պետին, վորին նա կցված է։*

Յուրաքանչյուր հրետանական պետ պետք է միայն մեկ անձնավորության անմիջական ստորադրության տակ լինի՝ ընդհանուր զորական կամ ավագ հրետանական պետի։ Ստորադրության անպարզությունը կամ կրկնակիությունը դժվարացնում է ղեկավարությունը, իսկ այդ աննպաստ կերպով անդրադառնում է հրետանու գործողության աջողության վրա։

Ստորադրությունը պետք է համապատասխան լինի հրետանու մարտական խնդիրներին։ Դրված խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ է լիակատար իրազեկություն, թե ով է ում յենթարկվում ու մանավանդ ով է ում օգնում։ Յեթե յենթադրվում է մարտի ընթացքում վերաստորադասություն կատարել, պետք է լրացուցիչ ցուցումներ տալ, թե ո՞վ, յե՞րբ, վո՞րտեղ և

ում ստորադասության տակ է անցնում և ինչ խնդիրներով:

Մարտում հրետանական միջոցները մանր մասերով ցրելը և փոշիացնելը ցանկալի չէ: Մյուս կողմից հրետանու ղեկավարման ավելորդ կենտրոնացումը, որը պարագան չի պահանջում, կարող է այնպիսի հետևանք ունենալ, որ հրետանին հնարավորություն չունենա իր ժամանակին օգնություն հասցնելու հետևակի առանձին ստորաբաժանումներին:

14. ԽՆԴԻՐՆԵՐ ԴՆԵԼԸ: Հրետանու խնդիրները դրվում է վերևից անմիջական պետերից, մարտի ընթացքում խնդիրները լրիվ են գալիս ներքևից հետևակ հրամանատարների և առաջավոր դիտողների հանձնարարությամբ կամ հրետանական հրամանատարների սեփական ձեռներեցությամբ:

Ընդհանուր զորական պետը խնդիր է տալիս հրետանու պետին, առանց քննության առնելու խնդրի լուծման եղանակներն ու միջոցները:

Խնդիր տալը պետք է կատարել տեղանքի վրա (տեղական առարկաներով) և դրա հետ միասին տալ գծագրական նկարներ (քարտեզ, կողմորոշ պլան, սխեմա):

Հրետանու խնդիրները տրվում են ամփոփ ու պարզ կերպով, որը պիտի որոշակի պատասխանի հետևյալ հարցերին.

1) ինչ է պահանջվում հրետանուց և ինչի համար.

2) որտեղ (ինչ նպատակների դեմ), երբ (ինչ ժամանակամիջոցում) և մանավանդ հետևակի որ ստորաբաժանման համար անհրաժեշտ է հրետանու օգնությունը:

Հրետանուն տրվելիք հրամանի մեջ բացի այդ մատնանշվում է.

ա) մարտի նպատակը, սկզբնական մոտավոր խնդիրը և գործողությունների վերջնական նպատակը.

բ) պարագան (հակառակորդի և իր զորքերի մասին տեղեկություններ):

գ) աջից ու ձախից սահմանափակված շերտը, որի սահմաններում կարող է դասավորվել հրետանին. ընդհանուր զորական պետը չպետք է խիստ սահմանափակ և կղզիացած շրջան նշանակի, որովհետև հրաձգության համար շրջանը կարող է ընտրել միայն հատուկ հրետանական հետախուզությունը հրետանու վրա դրած խնդրի համեմատ.

դ) ժամանակը, երբ հրետանին պետք է պատրաստ լինի ամենամոտավոր խնդիրն ի կատար ածելու համար. այդ ժամանակն առանց հատուկ անհրաժեշտության չպետք է կրճատել, որովհետև հրետանու հզորությունն օգտագործելու աստիճանը խոշոր չափով կախված է հրետանու հետախուզությունը և մարտի բռնվելու պատրաստությունը լիակատար և խնամքով կատարելուց.

ե) որ պետին է պատկանում առաջին կրակը բանալու իրավունքը. վաղաժամ հրետանական կրակ բանալը երբեմն կարող է խանգարել ընդհանուր զորական պետի մտադրությունները.

զ) կապը և ամենից առաջ ընդհանուր զորական պետի և նրան անմիջապես ենթարկվող հրետանական պետի միմյանց հետ անձնական, մշտական և սերտ շփումը:

Հրետանական պետերը, ղեկավարվելով ստացած հրամանով ու հաշվի առնելով բոլոր առկա հրետանական միջոցներն ու նրանց տեխնիկական առանձնահատկությունները, խնդիրները մանրամասն բաշխում են նրանց ենթարկվող մասերի մինչև և անպայման տեղանքի վրա, և նրանց ճիշտ ցույց են տալիս դիրքերի շրջանները:

2. ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄ

15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ: Հրետանու մարտական բաշխումը պետք է համապատասխանի այն խնդիրներին, որ տրված են զորական միավորու-

2

22304-58
(3040-17)
Ա. Մյասնիկյանի ... Публичная Библиотека

թյունը և նրա հրետանուն, այսինքն համապատասխանի միավորության մարտակարգի մասնատմանը ըստ կազմակերպչական ստորաբաժանումների:

Հրետանին նշանակվում է. 1) հետևակին սատարելու համար, որ կազմում է հետևակին սատարելու (ՀՍ) հրետանու խմբակների խնդիրը և 2) հակառակորդի հրետանու դեմ կռվելու, հակառակորդի հեռավոր թիկունքները, նրա ռեզերվները և այլն ռմբակոծելու համար, որոնք ի կատար են ածում հեռավոր գործողության (ՀԳ) հրետանու կորպուսային կամ դիվիզիական խմբակները:

Հրետանու խմբավորումը պետք է ապահովի.

ա) հետևակի հետ օրգանիկ կապի պահպանումը.

բ) հրետանու ղեկավարման միացումը մեկի ձեռքում անհրաժեշտ դեպքերում և նրան հաջող ղեկավարելու հնարավորության սահմաններում. դիվիզիայի հրետանու ղեկավարման լիակատար միացման ժամանակ, նրա հաջող գործողությունները հնարավոր են ձեռնտու տեղանքի վրա, յեթե մեր մարտկոցները դասավորվում են մինչև 8 կմ տարածության ճակատի վրա. այդ դեպքում դիվիզիայի բոլոր մարտկոցների կրակի միաժամանակ կենտրոնացումը հնարավոր է հակառակորդի մինչև 2 կմ տարածության ճակատի վրա.

գ) մարտի ժամանակ բոլոր վերախմբավորումների և վերաստորադասությունների կրճատումը, իսկ յեթե այդ անհրաժեշտ է, նրանց ամենապարզ և ամենաարագ կատարելը.

դ) սահմանված կազմակերպության պահպանումը. բացառությունները թույլ են տրվում մարտկոցները հատուկ ուժեղացման համար տալու ժամանակ, օրինակ՝ առաջապահին հեռահար մարտկոց տալը կորպուսային հրետանու կազմից, կամ հրաձիգ գնդի ուժեղացումը հոբիցային մարտկոցով դիվիզիական հրետանու կազմից:

հրետանուն խմբակների, իսկ վերջիններին յենթախմբակների բաժանելը կատարվում է խնդիրների միակերպության հատկանիշների համեմատ:

Հրետանու վերախմբավորումը կատարվում է առավել ընդհանուր զորական պետի պատվերով կամ նախապես հաստատված ծրագրի համեմատ:

16. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՅԵՎ ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ: Դիվիզիական հրետանին, իբրև կանոն, կազմում է հետևակին սատարելու (ՀՍ) խմբակները. կորպուսային հրետանին կազմում է հեռավոր գործողության (ՀԳ) կորպուսային կամ դիվիզիական խմբակները:

ՀՍ խմբակների թիվն ու կազմը կախված է հրետանու օգտագործման ծրագրից, որի նպատակն է կրակի կուտակումը ամենակարևոր ուղղության վրա յերկրորդական ուղղություններում հրետանական միջոցները անտեսելու հաշվին: Որոշ դեպքերում յերկրորդական ուղղությունների վրա ՀՍ խմբակները բոլորովին չեն նշանակվում:

ՀՍ յուրաքանչյուր խմբակը սովորաբար նշանակվում է մեկ հրաձիգ գնդին սատարելու համար: Խմբակը պարտավոր է կատարել հրաձիգ գնդի հրամանատարի պահանջը, նույնիսկ այն դեպքում, յեթե նրան չի յենթարկվում:

ՀՍ խմբակների մարտկոցները (բաժնյակները) խնդիրներ են ստանում սատարելու որոշ հետևակ ստորաբաժանումներին (գումարտակներին, վաշտերին), ամենասերտ կերպով կապ են հաստատում դրանց հրամանատարների հետ և պարտավոր են կատարել նրանց պահանջները:

ՀՍ խմբակների ստորադրությունը կախված է այն հրաձիգ գնդերի խնդիրներից, որոնց նրանք սատարում են, և պարագայից:

ՀՍ բոլոր խմբակները, սովորաբար, յենթարկվում են դիվիզիայի հրետանու պետին: Իսկ յեթե գունդը բարդ զորաշարժ է կատարում կամ գործում է շատ

կտրտուկ տեղանքում և ղեկավարումը դժվարացած ե, նույնպես և արագընթաց մարտերում, ՀՍ խմբակը, վորն այդ գնդին սատարում ե, դրվում ե հրաձիգ գնդի հրամանատարի ստորադասության տակ:

Կենտրոնացրած ղեկավարումն ամենամեծ չափով ապահովում ե հրետանական միջոցների լիակատար ոգտագործումը: Բայց այդպիսի ղեկավարումը յերբեք չպետք ե գործադրել ի վնաս իրական սատարմանը և հետևակի ու հրետանու սերտ համագործակցությանը: Ուստի հարկ ե լինում կենտրոնացրած ղեկավարումից հրաժարվել, յերբ լիակատար վստահություն չկա, թե հնարավոր ե մեր տրամադրության տակ յեղած ժամանակամիջոցում անընդհատ աշխատող կապ հաստատել ու պահպանել հետևակ զորամասերի հետ:

Գնդի հրետանին (Գ.Հ) միշտ յենթարկվում ե գնդի հրամանատարին: Բացառիկ դեպքերում նրան կարելի յե դուրս հանել գնդի հրամանատարի յենթարկությունից և մտցնել ՀՍ խմբակի մեջ: Այդպիսի դեպքեր լինում են՝ յերբ անհրաժեշտ ե այն մարտկոցների թիվն ավելացնել, վորոնք հարկավոր են պաշտպանության ժամանակ (դիրքային պատերազմ) խափանիչ կրակի սիստեմ կազմակերպելու համար, յերբ հարկավոր ե ուժեղացնել այն հրետանին, վորն ավերում ե արհեստական արգելքները (լարափակոցները), կամ ուժեղացնել ճակատի վրա գործող հրետանին ի հաշիվ այն մարտկոցների, վորոնք ժամանակավորապես վերցված են յերկրորդ շարանի հրաձիգ գնդերից: Վերջին դեպքում գնդի մարտկոցները ոգտագործվում են այն ուղղությունների վրա, վորտեղ հավանականորեն պետք ե ոգտագործվեն այն գնդերը, վորոնցից վերցված են մարտկոցները. այդ գնդերի մարտի բռնվելու ժամանակ, մարտկոցները յետ են վերադարձվում:

ՀԳ խմբակները նշանակվում են հակառակորդի

հրետանու դեմ կռվելու և նրա թիկունքը ռմբակոծելու համար:

ՀԳ խմբակները, սովորաբար, կազմվում են կորպուսային հրետանու մարտկոցներից և նրա ղեկավարման միջոցներից:

Յեթե անհնարին ե կենտրոնացրած կռիվ մղել հակառակորդի հրետանու դեմ կորպուսի մասշտաբով, ՀԳ խմբակները կազմվում են դիվիզիաներին կից. դրանց միջև բաշխվում են կորպուսային հրետանու մարտկոցներն ուղղությունների կարևորության համեմատ: Այդ դեպքում ՀԳ դիվիզիական խմբակները կարելի յեն ուժեղացնել դիվիզիական հրետանու մարտկոցներով:

ՀԳ կորպուսային խմբակ կազմելու ժամանակ, նրա առանձին յենթախմբակները խնդիրներ են ստանում վորոշ հրաձիգ դիվիզիաների շերտերի սահմաններում և գործում են այդ դիվիզիաների ամբողջ հրետանու հետ սերտ համագործակցություն պահպանելով ու կապ հաստատելով նրանց հրետանու պետերի հետ: Դիվիզիաների շերտերն ապահովվում են ՀԳ յենթախմբակների կրակով այն հաշվով, վոր մեկ դիվիզիայի շերտում կարելի լինի կենտրոնացնել ՀԳ բոլոր կամ մի քանի յենթախմբակների կրակը:

Յեթե անհնարին ե տվյալ ուղղությամբ ոգտագործել ՀԳ խմբակները, այդպիսիները չեն զատվում, ու հակառակորդի հրետանու դեմ կռիվ մղելը հանձնվում ե ՀՍ խմբակների մարտկոցներին:

ՀԳ խմբակին, իբրև կանոն, չպետք ե հանձնել դիվիզիայի ամբողջ ճակատի դիմաց յեղած զանազան մոտավոր նպատակների դեմ կռվելու խնդիրը, իր հետևակին սատարելու համար: Հրետանական կրակի տեղափոխությունները լայն ճակատի վրա, առանց որգանիկ կապ պահպանելու մարտկոցների և այն հետևակ ստորաբաժանումների միջև, վորոնց նրանք սատարում են, սովորաբար հաջող հետևանքներ չեն տալիս ու հաճախ պատճառ են դառնում հետևակի հարվածելուն իր հրետանու կրակով:

ՀԳ խմբակները միշտ յենթարկվում են հրետանու (կորպուսի կամ դիվիզիայի) համապատասխան պետին։

17. ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀՐԵՏԱՆԻՆ, որ տրվում է կորպուսներին և դիվիզիաներին, կազմվում է գլխավոր հրամանատարության ոժանդակի հրետանու (ԳՀՈՀ) մասերից կամ ստորաբաժանումներից։ Վերջիններս, նայած հրանոթների տրամաչափին, կարելի յե ոգտագործել կամ ՀՍ խմբակների, կամ ՀԳ կորպուսային կամ դիվիզիական խմբակների կազմի մեջ։

18. ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ։ Հաճախ նպատակահարմար է լինում ՀՍ խմբակների մարտկոցները ժամանակավորապես գործի դնել հրետանու և այլ հեռավոր նպատակների դեմ կռվելու համար և, ընդհակառակը, ՀԳ խմբակների կազմի առանձին մարտկոցներին հանձնարարել հետևակին սատարելու (76 մմ թնդանոթը կենդանի նպատակները հարվածելու համար կամ 152 մմ հոբիցը ամուր ծածկարաններն ավերելու համար)։ Սակայն, այդպիսի հանձնարարությունների համար, որ տրվում են մի խմբակի մարտկոցներին մյուս խմբակին նշանակված խնդիրները լուծելու համար, միշտ պետք է նախապես դիտողություն և կապ կազմակերպել այդ մարտկոցների համար նրան հավանորեն ոգտագործելու ուղղությունների վրա (լրացուցիչ սեկտորներ)։

Եջ 23-ում զետեղված № 1 սքեման մարտական բաշխման որինակ է տալիս դիվիզիական հրետանու և նրան կցված կորպուսային հրետանու բաժնյակի, պաշտպանության համար կանգ առած հակառակորդի վրա հարձակման ժամանակ (զորաշարժային պատերազմում)։

ՍՔԵՄԱ № 1.

ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿ



3. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԸ

19. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԸ հանդիսանում միաժամանակ և դիվիզիայի հրետանական գնդի հրամանատարը։ Նա դիվիզիայի հրամանատարի մշտական խորհրդատուն է հրետանական հարցերի մասին և պարտավոր է նրան զեկուցել իր նկատառումները մարտական գործունեության բոլոր դեպքերում հրետանական միջոցների ոգտագործման մասին։ Նրա վրա յե ընկնում

հրետանու կիրառման ծրագրի, մարտում հրետանային միջոցների լիակատար և նպատակահարմար օգտագործման և հրետանու ու հետևակի միջև պատշաճ համագործակցություն կազմակերպելու պատասխանատվությունը: Հրետանու պետը մասնակցում է օպերատիվ ծրագրերի և գործողությունների նյութական ապահովության հաշիվների մշակմանը: Նա պետք է մշտապես իրազեկ լինի պարագայի և դիվիզիային տրված խնդիրների մասին:

20. ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ: Դիվիզիայի հրետանու պետը մշտապես գտնվում է դիվիզիայի հրամանատարի մոտ, տեղեկություններ է ստանում նրանից և ինքը զեկուցում է նրան իր ստացած տեղեկությունները: Հրետանու պետը ցուցումներ է տալիս հրետանական հետախուզություն կազմակերպելու մասին հրետանական ստորաբաժանումների օգտագործման հավանական ուղղությունների վրա և ընդհանուր հսկողություն է ունենում հրետանու շարժման կարգի վրա:

21. ՄԱՐՏ ՆԱԽԱՏԵՍՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ դիվիզիայի հրետանու պետը, պարագայի, խնդրի և տեղանքի (քարտեզի) ուսումնասիրության հիման վրա, զեկուցում է դիվիզիայի հրամանատարին իր նկատառումները հրետանու մարտական բաշխման և օգտագործման մասին. կազմում է հրետանու աշխատանքի ծրագիրն ու հրամանը (կարգադրությունները). տալիս է բոլոր նախնական կարգադրությունները հետախուզություն և կապ կազմակերպելու մասին. կապ է հաստատում կորպուսի և հարևան դիվիզիաների հրետանու հրամանատարների հետ համագործակցություն ցույց տալու համար. ստուգում է հրետանու և հետևակի միջև հաստատած կապը. կարգադրություններ է անում հրապաշար մատակարարելու կարգի մասին:

22. ՄԱՐՏԻ ժամանակ դիվիզիայի հրետանու պետը գտնվում է դիվիզիայի հրամանատարի հրամանատարական դիտակետում: Եթե հրետանու պետի հրամանատարական դիտակետն առանձին է ընտրված, նա ամբողջ մարտի ընթացքում պարտավոր է դիվիզիայի հրամանատարի հետ ամենասերտ շփում պահպանել: Հրետանու պետը հետևում է մարտի զարգացմանը, հաշվի առնելով պարագայի բոլոր փոփոխությունները, ստորադրված հրամանատարներին անհրաժեշտ կարգադրություններ է անում, դրանց մասին զեկուցելով, յեթե հարկավոր է, դիվիզիայի հրամանատարին: Հրետանու պետը զեկուցում է դիվիզիայի հրամանատարին այն բոլոր միջոցառումների մասին, որ վերաբերում են հետևակ հրամանատարներին յենթարկված հրետանուն. այդ հրետանական ստորաբաժանումներին վերաբերող կարգադրությունները տալիս է միմիայն դիվիզիայի հրամանատարի թույլտվությամբ:

Ամբողջ մարտի ընթացքում հրետանու պետը հսկում է խմբակների մարտական սնունդի վրա և, կարիք յեղած դեպքում, հարկավոր կարգադրություններ է անում:

բ) ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ

23. ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ խմբակի պետը պատրաստում է քարտեզն առաջիկա յերթի համար. ծանոթացնում է ստորադրյալ հրամանատարներին յերթի նպատակի և պարագայի հետ. կազմակերպում է հետախուզություն. ցուցումներ է տալիս կապի մասին. կազմակերպում է մարտական սնունդը. հսկում է զորասյունի հրետանու շարժման կարգը պահպանելուն:

24. ՄԱՐՏԻՑ ԱՌԱՋ խմբակի հրամանատարը ծանոթացնում է բաժնյակների հրամանատարներին պարագայի և խնդիրների հետ: Հետախուզություն է կազմակերպում և անձամբ ղեկավարում է հետախուզությունը ստորադրյալ բաժնյակների հրամանատարների հետ միասին. նրանց խնդիրներ է տալիս և ցույց է տալիս դիրքային շրջանները. կապ է կազմակերպում հետևակի հետ և խմբակի ներսում: Միջոցներ է ձեռք առնում

դիրքերը ժամանակին և թաքուն գրավելն ապահովելու համար. կազմակերպում է մարտական սնունդը:

25. ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ խմբակի հրամատարը մարտադաշտի անընդհատ հետախուզություն է կատարում անձամբ և հետախույզների ոգնությամբ. դիտում է զորքերի գործողությունները. հետևում է իրեն ստորադրյալ բաժնյակների աշխատանքին. անընդհատ կապ է պահպանում հետևակի և բաժնյակների հրամատարների հետ, նրանց անհրաժեշտ մարտական կարգադրություններ անելով: Եթե անհրաժեշտ է այնպիսի տեղափոխություններ կամ վերաստորադասություն է կատարել, որը չի նախատեսված պլանով, խմբակի հրամատարը դրա համար թույլտվություն է խնդրում դիվիզիայի հրետանու պետից կամ համապատասխան ավագ ընդհանուր զորական կամ հրետանական պետից: Եթե ավագ պետի հետ յեղած կապը ժամանակավորապես խզված կամ դժվարացած է, իր նախաձեռնությամբ կարգադրություն է անում և դրա մասին պետին զեկուցագիր ուղարկում: Խմբակի հրամատարը ղեկավարում է խմբակին տրված հետախուզության հատուկ օրգանների գործողությունները, նրանց միջոցով ստացած տվյալները հաղորդելով ստորադրյալ բաժնյակներին և այն պետի շտաբին, որին յենթարկվում է խմբակը:

գ) ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՅԱԿԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ.

26. ԵՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲԻՑ ԱՌԱՋ բաժնյակի հրամատարը պատրաստում է քարտեզը յերթի համար և բաժնյակի պետերի կազմին ծանոթացնում է յերթի նպատակին ու պարագային. կազմակերպում է հետախուզություն. ցուցումներ է տալիս բաժնյակի մարտկոցների հրամատարներին և վարչական դասակի հրամատարին հեծելադետքեր ուղարկելու մասին. ցուցումներ է տալիս մարտական սնունդի ջոկի հրամատարին հեծելադետքեր ուղարկելու մասին. ցուցում-

ներ է տալիս մարտական սնունդի ջոկի հրամատարին՝ ջոկի ընթանալու տեղի և մարտկոցների հետ կապ հաստատելու կարգի մասին. հսկում է բաժնյակի ընդհանուր զորասյունի մեջ մտնելու կարգի վրա:

27. ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ բաժնյակի հրամատարն անընդհատ կապ է պահպանում մարտկոցների, հրամատարների, մարտական սնունդի ջոկի հետ, իսկ շատ դեպքերում նաև այն հետևակ մասերի հրամատարների հետ, որոնց յենթադրաբար նա պետք է սատարի: Բաժնյակի հրամատարը տեղեկացնում է մարտկոցների հրամատարներին բաժնյակի առաջավոր հետախուզության տվյալների մասին, հավաքում է մարտկոցներից առաջավոր հետախուզության տվյալները և հարկավոր դեպքերում իր պետին զեկուցագիր է ուղարկում նոր տեղեկությունների մասին. ժամանակ առ ժամանակ ստուգում է շարժման կարգը, քողարկման միջոցները և ոդա-քիմիական պահպանությունը:

28. ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ բաժնյակի հրամատարը մարտադաշտի անընդհատ հետախուզություն է կատարում անձամբ ու իր վարչական դասակի հետախույզների ոգնությամբ. անընդհատ կապ է պահպանում իր մարտկոցների հրամատարների հետ. դիտում է մարտկոցների գործողությունները և կապ է պահպանում հետևակի հետ:

Բաժնյակի հրամատարը ղեկավարում է այն հետախուզական տվյալների հավաքելն ու սիստեմավորումը, որ ստացվում են բարձր շտաբներից, մարտկոցներից և հետևակից, հետախուզական ամփոփումներ կազմելով և ուղարկելով զանազան մասերին ու շտաբներին և ժամանակին զեկուցագիր ուղարկելով վերադասության կարգով մարտական պարագայի բոլոր փոփոխությունների մասին. ղեկավարում է բաժնյակի կրակը, կրակային խնդիրներ տալով մարտկոցներին և դիտելով իր մարտկոցների կրակը. յեթե հարկավոր է, ցուցումներ է տալիս մարտկոցների հրամա-

տարներին․ հաշված հրաձգություն կիրառելիս բաժնյակի հրամատարը նպատակները ցույց տալու հետ միասին տալիս է մարտկոցների հրամատարներին և նպատակների պլանշետը կամ նրանց ուղղությամբ կատարած իր հատումները․ ուղարկում է մարտկոցներին օդաչափական ամփոփումները և տեղագրական, օդային և գործիական հետախուզության տվյալները։

Բաժնյակի հրամատարը կազմակերպում է ճանապարհների և նոր դիրքերի հետախուզություն և կարգադրություններ է անում մարտկոցների նոր դիրքերն անցնելու մասին, յեթե այդ տեղափոխությունն ընդհանուր պլանով չի նախատեսված, զեկուցում է կամ զեկուցագիր է ուղարկում դրա անհրաժեշտության մասին և վարվում է ստացած ցուցման համաձայն։

Բաժնյակի հրամատարը հսկում է սնունդը ժամանակին մատակարարելու և հրապաշարը ծախսելու վրա։

գ) ՄԱՐՏԿՈՑԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ․

29․ **ՄԱՐՏԿՈՑԻ ՀՐԱՄԱՏԱՐԸ ՅԵՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ** պատրաստում է քարտեզը և իր ստորադրյալներին ծանոթացնում է յերթի նպատակին և պարագային․ կազմակերպում է հետախուզությունն ու կապը և յերկնքի դիտողներ է նշանակում․ ստուգում է մարտական համալրի վիճակը․ մարտկոցն անձամբ յելակետն է տանում։

30․ **ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ** մարտկոցի հրամատարը, յեթե բաժնյակի հրամատարի հետ չի գնում, նրա հետ կապ է պահպանում․ շարժման ժամանակ շարունակ ստուգում է կարգը, քողարկումը և քիմիական դիտողությունը։ Մարտկոցի կողմից շատ մեծ արգելքներ հաղթահարելու ժամանակ անձամբ ղեկավարում է շարժումը։

31․ **ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ** մարտկոցի հրամատարը վերջնականապես հաստատում է հետախուզությամբ

նշած մարտկոցի դիրքը, ղեկավարում է դիրք դուրս գալն ու գրավելը և անձամբ հրաման է տալիս կրակ վարելու համար կամ հրաման տալը հանձնում է առաջավոր դիտողին, իր վրա սահմանելով ընդհանուր ղեկավարությունը․ անձամբ և հետախույզների միջոցով մարտադաշտի անընդհատ հետախուզություն է կատարում, զեկուցագիր ուղարկելով բաժնյակի հրամատարին բոլոր նոր տվյալների մասին, և կապ է պահպանում հետևակի հետ։

Մարտկոցի հրամատարը կարգադրություն է անում ճանապարհների և նոր դիրքերի հետախուզության մասին․ դիտողություն է կազմակերպում, վոր մարտկոցը անվտանգ լինի հակառակորդի կողմից գրավելուց, և ղեկավարում է մարտկոցի ինքնապաշտպանությունը։ Յեթե հակառակորդի կրակը ճնշում է մարտկոցը կամ նրան հակառակորդի կողմից գրավելու անմիջապես վտանգ սպառնում, մարտկոցի հրամատարը դրա մասին զեկուցում է իր անմիջական պետին․ յեթե հնարավորություն չկա նրանից ժամանակին ցուցումներ ստանալու, ինքնուրույն կերպով կարգադրում է դիրքը փոխելու։ Մարտկոցի հրամատարը վարվում է նույն ձևով, յեթե անհրաժեշտ է տեղափոխել դիտակետերը։ Կորուստների հաշիվ է պահում, դրանց մասին զեկուցագիր է ուղարկում և կարգադրություն է անում մարդկանց և ձիերի կորուստը ժամանակին փոխարինելու մասին։

4. ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

32․ **ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ** կատարվում է այնպիսի տեղեկություններ հավաքելու նպատակով, վորոնք անհրաժեշտ են հրետանու նպատակահարմար մարտական կիրառման համար։

Հետախուզությունը կատարում են բոլոր աստիճանի հրամատարները և հրետանական հետախուզության հատուկ օրգանները (տ․ հոդ․ 121)։

Երբ հրետանին շարժվում է ընդհանուր զորասյունի կազմի մեջ, ավագ հրետանային պետը կազմակերպում է իրեն յենթարկվող հրետանային ստորաբաժանումների հետախուզությունը, նրանցից յուրաքանչյուրին վորոշ ուղղություն նշանակելով հրետանու մարտական օգտագործման պլանի համեմատ, և ցուցումներ է տալիս ճանապարհի հետախուզություն կատարելու մասին:

Հրետանու օգտագործման ընդհանուր պլանը ամեն տեսակի մարտական գործողությունների ժամանակ կախված է բոլոր տեսակի հետախուզության տվյալների ամբողջությունից: Ուստի հետախուզությունը, վոր կատարվում է հրետանային ստորաբաժանումների կողմից, կազմակերպվում է մի ընդհանուր պլանով և այն ցուցումների համաձայն, վոր սերտ կապված են օպերատիվ յենթադրությունների և ուժերի ու միջոցների ընդհանուր խմբավորման հետ:

33. *ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԸ* հետախուզություն են կատարում սկզբում ընդհանուր զորական և հետևակ հրամատարների հետ միասին, իսկ հետո, մարտի ընդունված ընդհանուր պլանի համեմատ, պարագայի մանրամասն ուսումնասիրություն են կատարում և բոլոր պահանջված տվյալները հավաքում:

Այսպիսով, հետևյալ տվյալներից. 1) հրետանական հրամատարների և ընդհանուր զորական ու հետեվակ հրամատարների հետ միասին կատարած անձնական հետախուզության, 2) հրետանական պետերի անձնական ինքնուրույն հետախուզության, 3) հրետանական հետախուզության հատուկ օրգանների և 4) ընդհանուր զորական հետախուզության տվյալներից կազմվում է հրետանու աշխատանքի համար անհրաժեշտ յելակետային տվյալների ամբողջությունը:

Հրետանական հետախուզությունը կատարվում է անընդհատ մարտի ամբողջ ընթացքում:

34. *ՄԱՐՏԱԴԱՇՏԸ* և մարտկոցի կրակը դիտելը

զուգակցվում է առկա հրետանական միջոցների ամենալավ օգտագործման ձևեր անընդհատ փնտրելու հետ:

Հետախուզությունը միշտ անհրաժեշտ է: Պարագան ազդում է միայն նրա կազմակերպչական ձևերի, շուտափույթ կատարելու և հավաքվող տվյալների լիակատարության աստիճանի վրա:

Հրետանական միջոցներն ամենակարճ ժամանակում մարտի գործադրելու անհրաժեշտությունը յերբեմն հարկադրում է հրետանական հետախուզությունը վերածել միմիայն դիտակետի և կրակային դիրքի ընտրության. իսկ յեթե բավականին ժամանակ կա, կարելի յե շատ ընդլայնել հետախուզության խնդիրները մինչև ճիշտ տեղագրական աշխատանքի սահմանները:

Հետախուզության կազմակերպության համար շաբլոնները անթույլատրելի յեն:

5. ԿԱՊԸ *)

35. *ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:* Կապն ապահովում է մարտի ժամանակ հրետանու հաջող ղեկավարումը և համագործակցությունը մարտի ժամանակ հրետանու և զորքերի մյուս տեսակների միջև, նույնպես և հրետանու իրեն ներսում:

Ամենահասարակ և հաստատուն կապը կարելի յե հաստատել մշտական անձնական շփումով և միավորությունների փոխանակությամբ բոլոր աստիճանների պետերի, հարևանների և զորքերի տեսակների միջև և ամրապնդել փոխանցման տեխնիկական միջոցներով:

Որգանիկ կապը և գործողությունների համաձայնեցրած լինելը պայմանավորվում են.

---

*) Կապի ծառայության տեխնիկան վորոշվում է հատուկ հրահանգով:

ա) քաղաքական և ռազմական դաստիարակության ու ուսուցման ընդհանրությամբ և զորքերի փոխադարձ ծանոթությամբ ու վստահությամբ․

բ) զորամասերի ու զորքերի տեսակների փոխադարձ կողմորոշումով (անձնական շփում, կապի պատվիրակներ, կողմորոշ օպերատիվ փաստաթղթերի փոխանակություն)․

գ) Հրետանու խմբավորման որդանիկ համապատասխանությամբ հետևակի մասնատմանը․

դ) փոխանցման միջոցների անսարքել աշխատանքով, վոր ծառայում են հրամանները, կարգադրությունները, զեկուցագրերը, ծանուցումները և հարցումները արագ տարածելու կամ տեղ հասցնելու համար։

Փոխանցման միջոցների պակասությունը կամ նրանց աշխատանքի ընդհատումը յերբեք չի արդարացնում այն հրամատարին, վորը պատասխանատու բոլեյին չի գործադրել բոլոր ջանքերը մարտի ընթացքի վրա ազդելու համար։

36. ԿԱՊԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀՐԵՏԱՆԻՈՒՄ։ Ղեկավարման և հրամատարական կապը փոխանցում է կարգադրությունները վերևից և զեկուցագրերը ներքևից։ Այդ կապը հաստատվում է վերևից ներքև՝ պետից ստորադրյալին։

Կապը ճակատի յերկայնությամբ, վորն ապահովում է հարևան մասերի գործողությունների համաձայնեցված լինելը, հաստատվում է աջից դեպի ձախ։

Կապը, վորն ապահովում է հրետանու և հետևակի կամ հրետանու և նրան տրված ոդային կամ զործիական հետախուզությունների օրգանների միջև, հաստատվում է հրետանական պետերի կարգադրությամբ և միջոցներով։

37. ԿԱՊԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՐԵՏԱՆԻՈՒՄ։ Կապն իրականացվում է․

ա) ընդհանուր զորական և հրետանական պետերի հրամանները տարածելու և ուսումնասիրելու միջոցով․

բ) միական կողմորոշումով․

գ) Հրամատարների անձնական շփումով․

դ) հարևան հրետանական մասերի և սատարության յենթակա հետևակի միջև կապի պատվիրակների փոխանակությամբ․

ե) փոխանցման միջոցների օգտագործմամբ․

Հրամանները, վորոնք պարունակում են իրենց մեջ խնդիրների նշանակումն ու բաշխումը, մանրանշելով, թե վո՛ր հրետանին է սատարում այս կամ այն հետևակ մասին կամ ստորաբաժանմանը, հենց դրանով էլ հնարավորություն են տալիս համապատասխան կապ կազմակերպելու։

Միական կողմորոշումն արտահայտվում է նրանով, վոր ընդհանուր զորական, հրետանական և հետևակ հրամատարներն օգտվում են միևնույն գծագրական կողմորոշ նյութերով կամ նրանք այդպիսի նյութերն ուղարկում են միմյանց, նախապես իրար մեջ համաձայնեցնելով։

Այդպիսի նյութերը հանդիսանում են․ ա) վաշտային քարտերը (Հավելված №1), բ) կողմորոշ սքեմաները (Հավ․ №№ 2, 3ա և 3բ) և գ) կողմորոշ պլանը (Հավ․ № 4)։

Հրամատարների անձնական շփումը շատ մեծ նշանակություն ունի։ Ընդհանուր զորական և ավագ հրետանական պետերը պետք է գտնվեն միևնույն հրամատարական դիտակետում կամ, վորքան հնարավոր է, իրար մոտիկ։

Միևնույնը վերաբերում է հրաձիգ գնդի հրամատարին և նրան սատարող ՀՍ խմբակի հրամատարին, անկախ ստորադրությունից և ՀՍ խմբակի դիրքերի տեղադրության վայրից։

Առհասարակ, հետևակ հրամատարի և նրան սատարող հրետանու (խմբակի, բաժնյակի, մարտկոցի) հրամատարի հրամատարական և դիտողության կետերի միասին կամ իրարից մոտիկ տեղավորումը միշտ խո-

չոր չափով հեշտացնում է համագործակցությունը և ծառայում է իբրև անփոխարինելի և ամենահուսալի ձև իրական կապ պահպանելու համար։

Կապի պատվիրակներ հանդիսանում են․

Մարտկոցում--վարչական դասակի հրամատարական կազմի անձնավորությունը (կրտսեր և հատուկ դեպքերում՝ միջին), որը գործուղվում է վաշտի կամ դումարտակի հրամատարի մոտ հետևակի հետ կապ պահպանելու ջոկի կողմից։

Բաժնյակում—նույնպիսի անձինք, որը գործուղվում են կապի ջոկի հետ միասին դումարտակի կամ գնդի հրամատարի մոտ։

Հրետանական գնդերի կապի պատվիրակները (միջին հրամատարական կազմի անձինք) գործուղվում են հրաձիգ կամ հարևան հրետանական գնդերի հրամատարների մոտ։

Փոխանցման միջոցներն են՝ հեռախոս, ռադիո, տեսողական ազդարարություն, հեծյալ լրատարներ (պատվիրակներ), հեծանվորդներ, մոտոցիկլիստներ, ավտոմոբիլով լրատարներ, վազողներ, փոխանցողների շղթա, սավառնակներ։

38․ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Փոխանցման հիմնական միջոցը հրետանիում հանդիսանում է հեռախոսը։ Բոլոր մյուս միջոցները միայն լրացնում են այդ ու առավելապես ծառայում են ջուխտակցման համար անընդհատ աշխատանքն ապահովելու նպատակով։

Մարտկոցում հեռախոսով կապվում են․

1) հրամատարական դիտակետը կրակային դիրքի հետ․

2) օգնական դիտակետերը (առաջավոր, կողքի) հրամատարական դիտակետի հետ․ դրա հետ միասին օգնական դիտակետերը պետք է անպայման ապահովված լինեն ուղղակի հեռախոսային կապով կրակային դիրքի հետ՝ առանձին գծով կամ մարտկոցի հրամատարի փոխարկիչի (կոմմուտատորի) միջոցով․

3) հրամատարական դիտակետը այն հետևակ ստորաբաժանման (դումարտակի, վաշտի) հրամատարի հետ, որին սատարում է մարտկոցը։

Առաջավոր դիտակետը և հետևակի հետ կապ պահպանելու ջոկը, բացի այդ, պետք է միջոցներ ունենան (մալուխ, լրացուցիչ հեռախոսային ապարատ) տեղափոխությունների դեպքում անընդհատ կապ պահպանելու համար։

Բաժնյակում՝ հեռախոսային կապը հաստատվում է մարտկոցների հրամատարների հետ, հետևակ մասի (ստորաբաժանման) հրամատարի հետ, որին սատարում է բաժնյակը, և անունդի ջոկի հետ։

Հարևան հրետանական մասերի ու ստորաբաժանումների հետ հեռախոսային կապը հաստատվում է ամեն անգամ ավագ հրետանական պետի հատուկ ցուցումով։

Եթե ավագ պետը հեռախոսային կապ չի հաստատել ստորադրյալ ստորաբաժանման հետ կամ հաստատված կապը խանգարված է, հեռախոսային կապը հաստատվում կամ վերանորոգվում է նաև ներքևից դեպի վեր․ այդ դեպքում արգելվում է դրա համար հատուկ կարգադրությունների սպասելը։

№ № 5, 6 և 7 հավելվածներում հեռախոսային կապ կազմակերպելու օրինակներ են տված վաշտին և դումարտակին սատարող մարտկոցում և գնդին սատարող բաժնյակում։

Փոխանցման յերկրորդ միջոցն իր նշանակությամբ հանդիսանում են տեսողական ազդարարության անոթներն ու միջոցները՝ լամպերը, հրթիռները և դրոշակներով ու պայմանական նշաններով ազդանշաններ տալը։

Ավելի ուժեղ լամպերը գործադրվում են անպայման ձակատից դեպի թիկունքը ազդանշաններ տալու համար, իսկ ավելի թույլերը՝ թիկունքից դեպի առաջ։

Հրթիռներով օգտվելու ժամանակ, պետք է բավարարվել ամենաքիչ ազդանշաններով՝ խառնաշփոթու-

թյունից խուսափելու համար, որ կարող է ծանր հետևանքներ ունենալ: Միևնույնը վերաբերում է նաև դրոշակներով և պայմանական նշաններով ազդանշաններ տալուն:

Սավառնակների հետ կապ պահպանելու համար կիրառվում են ռադիոն և կտավե կտորները:

Ամեն տեսակի լրատարները կիրառվում են այն դեպքում, յերբ այլ միջոցներ չկան գրավոր կարգադրությունները, զեկուցագրերը, ծանուցումներն ու հարցումները տեղ հասցնելու համար:

Փոխանցողների շղթան փոխարինում է առավելապես հեռախոսին: Շղթան կարող է կիրառվել կարճ հեռավորությունների վրա այն դեպքերում, յերբ ժամանակ կամ հնարավորություն չկա հեռախոսային գիծ անցկացնել կամ յեղածը վերանորոգել (օրինակ, դիմամարտի սկզբում կամ հետապնդման ժամանակ):

6. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՇՏԱԲԸ

39. **ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՇՏԱԲԸ** հրետանական պետի ղեկավարման ապարատն է: Նրա հիմնական պարտականությունները հանդիսանում են.

ա) նախապատրաստական աշխատանքներ. քարտեզները պատրաստելը, պարագայի և տեղանքի ուսումնասիրությունն ու գնահատումը, հրետանու մարտական բաշխման, հետախուզության և մարտական սնունդի մասին նկատառումներ կազմելը.

բ) օպերատիվ և հետախուզական նյութ հավաքելու կազմակերպումը, նրանց մշակումը և մասերին ուղարկելը և հրետանու ամենայն օգտագործման մասին նկատառումներ կազմելը.

գ) հրետանու գործողությունների պլանի մշակումը ընդհանուր զորական պետի կողմից ընդունված վճռի և հրետանուն տրված խնդրի համեմատ.

դ) հրամաններ, զեկուցումներ, ծանուցումներ և հարցումներ կազմելու մշակումն ու տեխնիկան. արված կարգադրությունների կատար ածելու հսկողությունը.

ե) կապի կազմակերպությունը:

Մարտում շտաբը սպասավորում է հրետանական հրամատարի դիտակետին:

Շտաբի կազմի մեջ մտնում են օպերատիվ և հետախուզական մասերը: Շտաբի պետին յենթարկվում է կապը:

40. **ՕՊԵՐԱՏԻՎ ՄԱՍԸ** հավաքում և սիստեմավորում է բոլոր տեղեկությունները ստորադրյալ մասերի, հարևանների և հետևակի մարտական կազմի և տարատեղության (դիսլոկացիայի) մասին: Նա խմբավորում է հետախուզական մասից ստացած տվյալները հակառակորդի մասին:

Օպերատիվ մասը, ուսումնասիրելով պարագան, պատրաստում և մշակում է հրետանու օգտագործման պլանը ընդհանուր զորական միավորության խնդիրների համեմատ և այդ պլանի մասին զեկուցում է շտաբի պետին: Նա կազմում է սնունդի օրգանների դասավորման նախագիծը և նշում է մարտական սնունդի (դիվիզիայի կամ կորպուսի) գծերը:

Օպերատիվ մասը կազմում է մարտական հրամանները, կարգադրությունները և զեկուցումները, հավաքում է զեկուցագրերը և մշակում ու ուղարկում է մասերին օպերատիվ ամփոփումները:

Նրա պարտականությունն է պահել մարտական գործողությունների մատյանը, կազմել և բարձրագույն շտաբը ներկայացնել ժամկետավոր և անժամկետ զեկուցագրերը և վարել ընթացիկ օպերատիվ գրագրությունը:

41. **ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԱՍԸ** տեղեկություններ է հավաքում հակառակորդի և տեղանքի մասին: Այդ մասում կենտրոնանում են սխեմաներն ու լուսանկարները, որ հանվում են վերերկրյա դիտակետից և օդից: Հետախուզության տվյալները, մշակումից հետո, նկարում են սքեմաների և քարտեզների վրա, որոնց հի-

ման վրա ընդհանուր հետախուզական ամփոփումներ են կազմում և այդ ամփոփումները ներկայացվում են բարձրագույն շտաբին և ուղարկվում են ստորադրյալ մասերին։

42. ՀՐԱՄԱՆՆԵՐ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։ Հրետանական պետերը ղեկավարում են հրետանին հրամաններ տալու և առանձին կարգադրություններ անելու միջոցով։

Հրետանական հրամանները, որ կազմվում են մարտի համար, իրենց մեջ պարունակում են․

1) տեղեկություններ հակառակորդի, հարևանների և իր զորքերի մասին․

2) ընդհանուր զորական միավորության խնդիրը (պետի վճիռը)․

3) հրետանու ընդհանուր խնդիրները․

4) հրետանու բաշխումը խմբակների․ խմբակների մասնավոր խնդիրները մասնանշելով․

ա) յուրաքանչյուր հրետանական մասի (խմբակի) կրակային աշխատանքի հիմնական շերտը․

բ) լրացուցիչ սեկտորը, որի սահմաններում աշխատելու համար պետք է դիտողություն և կապ կազմակերպել․

գ) հատուկ խնդիրները սեկտորի սահմաններից դուրս․ ՀՍ խմբակի համար պետք է ճիշտ մասնանշել այն մասը, **որին սատարումը հանձնված է խմբակին․**

5) հրետանական դիրքերի շրջանները․

6) կրակի պատրաստվելու ժամանակը և բանալու կարգը․

7) հրաման տվող պետի տեղը և կապի ծառայության մասին ցուցումները (հրամատարական դիտակետերը, ծայրի կայարանները, զեկուցագրեր հավաքելու կետերը)․

8) մարտական սնունդը․

9) տեղակալները։

Մարտի ընթացքում վերաստորադասությունը, լե-

թե այդ նախատեսված է առաջուց, ցույց է տրվում 4-րդ կետում։

Հրետանական պետը կարող է անձամբ ծանոթացնել իր ստորադրյալ հրամատարներին պարագայի և ընդհանուր զորական պետի հրամանի հետ․ այդ դեպքում նա կարող է պահանջել անհրաժեշտ տվյալներն անցկացնել ստորադրյալ հրամատարների քարտեզների վրա։

Այդ հնարավորություն է տալիս հրաժարվել հրամանի կողմորոշ մասից (կ․ կ․ 1, 2, 3)։

Հրետանու կենտրոնացրած ղեկավարումը պահանջում է խնդիրների ճիշտ բաշխում և մարտի ժամանակ բոլոր մարտկոցների գործողությունների լիակատար համաձայնեցում։ Եթե բավականին ժամանակ կա, պետք է մանրամասն ծրագիր կազմել, որը հաճախ պլանային աղյուսակի ձև է ունենում (տես հոդ․ 217) և տեղավորվում է հրամանի բնագրի մեջ։

ԳԼՈՒԽ IV

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

I ՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

43. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է՝ փոխադարձ կապը տվյալ զորամասի քաղաքական ապարատի առանձին օղակների միջև և ամբողջ ապարատի սերտ ու մշտական շփումը մասսաների հետ։

Մարտական պարագան որոշ սահմանափակումներ է դնում ղեկավարման կոլեկտիվ ձևերի առջև։ Եթե փորձեր են արվում այդ սահմանափակումները հաշվի չառնել ու դրանց հակառակ աշխատանքը տանել այնպիսի մեթոդներով, որ ավելի յուրահատուկ են խա-

ղաղ պարագային, այդպիսի փորձերը պետք է ամեն կերպ վերացնել:

44. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԸ գնդում հանդիսանում է կարգադրությունների փոխանցումը կապի տեխնիկական միջոցների օգնությամբ զորամասը անձամբ հաճախելու ժամանակ և, հատուկ դեպքերում, ստորադրյալներին իր մոտ կանչելու միջոցով:

Ընտրովի քաղաքական ատյաններում աշխատանքը կատարվում է դրա համար սահմանված ձևերով, բայց հարմարվելով պարագային ու հնարավորություններին: Գրավոր ղեկավարման ձևերը կարող են կիրառվել (ինքնուրույն կերպով կամ բանավոր կարգադրությունները ջուխտակելու ժամանակ) ծայրահեղ անհրաժեշտության դեպքում:

Ղեկավարման կոլլեկտիվ ձևերի նեղացումը պետք է լրացված լինի նախաձեռնության, ինքնուրույնության ու կատարողների պատասխանատվության բարձրացումով և յուրաքանչյուր աշխատավորի պարտականությունների շրջանի ճիշտ վորոշմամբ:

Քաղաքական աշխատողների իրավունքներն ու պարտականություններն ամբողջապես վորոշվում են հատուկ հրահանգներով: Առանձին աշխատողների պարտականությունների հիմնական շրջանը, մարտական պարագայի պահանջների համեմատ, բերված է ներքևում:

45. ԳՆԴԻ ԿՈՄԻՍԱՐԸ զորամասի քաղաքական ղեկավարն է և, իբրև այդպիսին, հրամատարի հետ միասին պատասխանատու յե զորամասի մարտունակության և վիճակի համար ամեն տեսակետից:

Կոմիսարի պարտականությունները հիմնականում հետևյալն են.

ա) հրամատարի կողմից մարտական վճիռ կայացնելուն մասնակցելը և

բ) կուսակցական քաղաքական ղեկավարությունը:

Քաղաքական ղեկավարման բնագավառում կոմի-

սարի պարտականությունների մեջ մտնում են.

ա) ստեղծել կոմունիստների, թեկնածուների և կոմյերիտմիության անդամների միախումն և ամուր կազմակերպություն և ղեկավարել այդ կազմակերպության աշխատանքը.

բ) լիակատար և բազմակողմանի աջակցություն ցույց տալ գնդի հրամատարին՝ ամենահաջող կերպով լուծելու գնդի առաջ դրված մարտական, կազմակերպչական և տնտեսական խնդիրները. այդ պետք է իրականացնի ամրապնդելով և դաստիարակելով պետերի կազմի և մարտիկների մեջ քաղաքական գիտակցությունը, կարգապահությունը և մարտական տոկունությունը, ամբողջ քաղաքական ապարատի օգնությամբ:

գ) կազմակերպել և ղեկավարել քաղաքական լուսավորության աշխատանքը գնդում:

46. Դիվիզիայի հրամատարին ԳՆԴԻ ՀՐԱՄԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ հրետանու մարտական բաշխման և օգտագործման մասին, կոմիսարը հաղորդում է մասերի քաղաքական և բարոյական վիճակի մասին և ընդհանուր քաղաքական պարագայի մասին (տվյալ շրջանի բնակչության դրության մասին քաղաքական տեղեկությունները, վոր ձեռք է բերված գնդի հետախուզությամբ և հաղորդված է ավելի բարձր քաղաքական օրգաններին). միաժամանակ նա հաղորդում է իր նկատառումներն այն կազմակերպչական և քաղաքական միջոցառումների մասին, վորը յենթադրվելիք վճռի համեմատ պետք է իրականացնել նախապատրաստական շրջանում և նրա անմիջական կիրառման րոպեյին. վճիռ ընդունելուց հետո կոմիսարը ձեռք է առնում բոլոր միջոցները նրա պատշաճ քաղաքական ապահովության համար:

47. ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՆԴԻ ԿՈՄԻՍԱՐԸ գտնվում է հրամատարի հետ միասին հրամատարական դիտակետում: Վճռական դեպքերում, յերբ հատուկ միջոցներ են հարկավոր մարտիկների տոկունությունն ամրապնդելու և վոգևորություն ստեղծելու համար, կոմի-

սարն օգտագործում է բոլոր հնարավորությունները, վորպեսզի նա գտնվի մարտիկների մեջ մարտի ամենակարևոր կետերում:

Եթե բաժնյակը յերկար ժամանակ անջատվում է իր մասից, գնդի կոմիսարի օգնականին կամ առաջավոր մարտիկոջի քաղաքական ղեկավարին պետք է հանձնել բաժնյակի կոմիսարի պարտականությունները:

48. ՀՐԱՄԱՏԱՐԻ ՈԳՆԱԿԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻ այն անձնավորությունն է, վորն անմիջապես կանգնած է կուսակցական–քաղաքական ապարատի գլուխը և ղեկավարում է կուսակցական–քաղաքական աշխատանքը: Նա կատարում է 45–47 հոդվածներում հիշված պարտականությունները հրամատար–կոմիսարի ընդհանուր ղեկավարությամբ:

49. ԳՆԴԻ ՀԱՄԿԿ(բ) ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ: Նրա պարտականությունն է՝ ղեկավարել գնդում տարվող կուսակցական աշխատանքը՝ Կարմիր Բանակի Համ.Կկ (բ) բջիջների հրահանգի համաձայն: **Մարտական պարագայում բյուրոյի քարտուղարը մշտապես գտնվում է** գնդի շտաբի տեղում: Վճռական դեպքերում բյուրոյի քարտուղարը կոմիսարի կարգադրությամբ կարող է ուղարկվել մարտի ամենապատասխանատու կետերը:

Այն դեպքերում, յերբ պահանջվում է շուտափույթ միջոցներ ձեռք առնել և անհնարին է կոմիսարից համապատասխան ցուցումներ ստանալ, պատասխանատու քարտուղարն իր նախաձեռնությամբ պետք է գնա այն մարտամասը, վորն ուժեղացում է պահանջում, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով կոմիսարին շուտափույթ տեղեկացնելու համար:

50. ԱԿՈՒՄԲԻ ՊԵՏԻ հիմնական պարտականությունն է՝ կազմակերպել քաղաքական–լուսավորության աշխատանքը և կարմիր բանակայինի ու հրամատարի ազատ ժամանակը գնդի բոլոր ստորաբաժանումներում: **Հենվելով մարտիկոցների քաղաքական ղեկավարների ու**

հրամատարների աջակցության վրա, ակումբի պետը հայտաբերում և համախմբում է ակտիվը մարտիկոցներում և դաշտային ակումբի շուրջը և զվարճություններ է կազմակերպում արտադպրոցական աշխատանքի կարգով:

Հակառակորդից 1–2 օրագնացք հեռավորության վրա յեղած ժամանակ, տեղում դասավորման և ցերեկոթների կամ օժանդակ գնալու ժամանակ, ակումբի պետը պետք է անմիջապես գտնվի մարտամասին մոտ, ըստ հնարավորին, ծավալի իր աշխատանքը: Գունդը մարտակարգի բացադատվելուց հետո նա յետ է գնում 1–ին կարգի գումակը:

Մարտի ժամանակ ակումբի պետն առանց ծայրահեղ անհրաժեշտության չի թողնում իր աշխատանքը՝ ակումբի գույքի հսկողության, ագիտացիոն աշխատանքի և զվարճությունների ծրագիր մշակելու և դրա համար համապատասխան միջոցներ պատրաստելու վերաբերյալ:

51. ԳՐԱԴԱՐԱՆԱՊԵՏԸ մարտական պարագայում գտնվում է ակումբի պետի հետ, օգնելով նրան բոլոր աշխատանքներում, և անմիջապես պատասխանատու է գրականության ու լրագիր ժամանակին ստանալու և մարտիկոցներին ուղարկելու համար, հանգստի և յերթի ժամանակ:

52. ՄԱՐՏԿՈՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ (մարտկոցի հրամատարի քաղաքական մասի օգնականը) անմիջապես ղեկավարում է կարմիր բանակայինների ռազմա–քաղաքական դաստիարակությունը: Քաղղեկը տանում է դաստիարակչական աշխատանք, հենվելով մասսաների հետ ունեցած իր անմիջական մտերմության վրա և կարմիր բանակայինին նրա տրամադրությունները, արժանիքը, թերություններն ու թուլությունները հաստատապես իմանալու վրա: Ձգայուն և խոհեմ վերաբերմունքով քաղղեկը պետք է համախմբի կարմիր բանակայիններին և անշեղ դաստիարակի - նրանց մեջ քաղաքականապես

գիտակից, տոկուն, անվեհեր և կարգապահ մարտիկի հատկությունները։ Մարտական պարագայում իր ներկայությամբ և անձնական օրինակով նա պետք է ստեղծի տրամադրության բարձրացում, վոգեվորություն և գերազանց հանդիսանալու ցանկություն։

Պատերազմական ժամանակի քաղղեկների կազմը, նրանց ռազմական պատրաստության տեսակետից, միատեսակ չի լինում, ուստի քաղղեկի տեղը մարտում վորոշվում է հետևյալով.

ա) քաղղեկը, վորը վորոշ շարային նշանակում ունի (մարտկոցի հրամանատարի օգնական, վարչական դասակի հրամատար), մարտում կատարում է իր շարային պաշտոնի պարտականությունները մարտկոցի հրամանատարի ղեկավարությամբ.

բ) քաղղեկը, վորը շարային նշանակում չունի, բայց իր պատրաստությամբ և անձնական տվյալներով ընդունակ է վորոշ հրամանատարական պարտականություններ կատարելու, նայած պարագային, գնդի հրամանատարի և կոմիսարի վորոշմամբ կարող է օգտագործվել վորոշ պաշտոնի (մարտկոցի հրամանատարի օգնականի, դասակի հրամատարի) պարտականությունները կատարելու համար.

գ) բոլոր մնացած դեպքերում քաղղեկը գտնվում է այնտեղ, վորտեղ նրա ներկայությունը կարմիր բանակայինների մեջ կարող է ամենաօգտավետը լինել (դասակներից մեկում. սնունդի ծառայության վրա հսկողություն)։

53. ՄԱՐՏԿՈՑԻ ԲՋԻՋԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ։ Նրա հիմնական պարտականությունն է՝ կազմակերպել և վարել կուսակցական աշխատանքը մարտկոցում։ Նա կատարում է այդ աշխատանքն առանց կտրվելու իր ուղղակի պարտականություններից իր շարային պաշտոնի համեմատ։ Յեթե քաղղեկը վիրավորվում կամ սպանվում է, **բջիջի քարտուղարը մեխանիկորեն անցնում է նրա** տեղը ու կատարում է մարտկոցի քաղղեկի պարտականությունները մինչև կոմիսարի կարգադրությունը կամ

նոր քաղղեկի գալը։ Յեթե շարքից դուրս է գալիս քարտուղարը, նրա պարտականությունները ժամանակավորապես ստանձնում է քաղղեկը։ Բջիջի քարտուղարն իր ընտրովի պաշտոնի համար օժտված է «Բջիջների հրահանգ»-ով վորոշված իրավունքներով։ Մնացածում նա, ինչպես և բոլոր կոմունիստները, իր վրա կրում է այն պատասխանատու պարտականությունները, վոր հանձնված է կուսակցության կողմից իր անդամներին՝ լինել օրինակելի, տոկուն, անվեհեր ու անձնվեր մարտիկ։

ԳՆԴԻ (ԲԱԺՆՅԱԿԻ, ՄԱՐՏԿՈՑԻ) ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ կազմակերպում ու համախմբում է ՀամԼԿՅԵ Միության բոլոր անդամներին կուսակցական կազմակերպության շուրջն ու նրա ակտիվորեն աջակցում է նրա առաջ դրված խնդիրների իրականացման գործում՝ մասսաների քաղաքական ընդգրկման, նրանց մեջ մարտական հատկությունների դաստիարակման և բոլոր մարտական աշխատանքը կատարելու վերաբերյալ։

Կազմակերպիչն ուղղում է կազմակերպության բոլոր ջանքերն այն ուղղությամբ, վոր Համ ԼԿՅԵՄ-ի անդամներից մշակվեն օրինակելի մարտիկներ, վորոնք լիակատար տիրապետում են մասնագիտությունը (հետախույզ, նշանառու և այլն) և աչքի յեն ընկնում բոլոր անհրաժեշտ բարոյական-քաղաքական տվյալների բարձր մակարդակով։

Մարտում գնդի կազմակերպիչը գտնվում է գնդի կոմիսարի ցույց տված տեղում, նայած իր հրամանատարական-մարտական ստաժին։ Մարտկոցի կազմակերպիչը գործում է իր շարային մասնագիտության համեմատ։

2. ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

55. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ։ ԲԳԿԲ-ում աշխատանքի հիմնական խնդիրն է՝ ամրապնդել Կարմիր Բանակի, իբրև պրոլետարական դիկտատուրայի զինված

ապավենի, ռազմունակությունը: Այդ խնդրին կարելի է հասնել բանակի անձնական կազմի մեջ դաստիարակելով հետևյալը.

ա) անպայման վստահություն դեպի ՀամԿԿ(բ), հասկանալ նրա ղեկավարող դերը բանվորա-գյուղացիական միության մեջ և բանակի ամբողջ կազմի համախմբման միջոցով ՀամԿԿ(բ) և Խորհրդային իշխանության լոզունգների ու գաղափարների շուրջը.

բ) հասկանալ բանվոր դասակարգի ղեկավարող դերը ԽՍՀՄ-ում.

գ) հասկանալ պատերազմի դասակարգային բնույթը և ԽՍՀՄ-ի ու ամբողջ աշխարհի բանվորական և գյուղացիական մասսաների շահագրգռվածությունը, վոր Կարմիր Բանակը հաղթանակի իմպերիալիզմին.

դ) գիտակցություն, վոր կարմիր բանակայինին ճակատում նրա մղած կռվին ոգնում է ամբողջ յերկիրը, վորը պատրաստ է կրել բոլոր զրկանքները, ճակատային կյանքի համապատասխան պայմաններ ու նրանց թողած ընտանիքներին նորմալ ապահովություն ստեղծելու համար.

ե) դաստիարակել կարգապահ մարտիկի բոլոր հատկությունները՝ անվեհերություն, հաստատակամություն, քաջություն, նախաձեռնություն, ճարպկություն և տոկունություն.

զ) դաստիարակել վստահություն դեպի հրամանատարը.

է) հաստատ գիտակցություն, վոր սկսած պատերազմը պետք է հասցնել լիակատար հաղթանակին, չնայած բոլոր դժվարություններին ու զրկանքներին.

ը) հասկանալ, վոր ամեն մի մասնավոր հաջողությունը ճակատի տվյալ տեղամասում, ամեն մի հաջող կատարած մարտական հանձնարարությունը նպաստում է ընդհանուր հաղթանակին ամենաշուտ հասնելուն.

թ) բանակի այնպիսի վարմունք, վորը հարգանք ու վստահություն է ներշնչում դեպի բանակը ռազմական գործողությունների շրջանի աշխատավոր բնակչության

կողմից թե ԽՍՀՄ-ի յերկրներում և թե հակառակորդից ազատած վայրերում:

Կարմիր բանակայինը, մինչև իր ճակատում գործող զորամասը գալը, յենթարկվում է քաղաքական դաստիարակության զորահավաքի ժամանակ, շարաններով տեղափոխելու ժամանակ և պահեստի գնդերում:

Ճակատում գործող մասերում քաղաքական աշխատանքը, ամրապնդելով գիտելիքների, համոզմունքների և ունակությունների ամբողջությունը, վորն արդեն հավաքել է կարմիր բանակայինը դրանից առաջ, պետք է իր առաջ խնդիր դնի՝ ոգտագործել կարմիր բանակայինի գիտակցությունն ու համոզվածությունը մարտական գործողության համար հենվելով վոչ միայն պատերազմի ընդհանուր նպատակները հասկանալու վրա, այլև տվյալ մարտական հանձնարարության գործնական խնդիրների վրա:

56. ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ: Կարմիր բանակայինների ռազմաքաղաքական դաստիարակման վերաբերյալ ամբողջ աշխատանքը պետք է հիմնված լինի տվյալ զորամասի, ստորաբաժանման ընդհանուր բնութագիրը իմանալու վրա և յուրաքանչյուր կարմիր բանակայինին առանձին-առանձին ճանաչելու վրա:

Ճիշտ մարտական ղեկավարության համար, պետք է առաջին հերթին իմանալ յուրաքանչյուր հրանոթային համրանքի, նույնպես և մյուս սկզբնական ստորաբաժանումների բնութագիրը:

Անձական կազմի ուսումնասիրությունը հիմնված պիտի լինի զորամասի ընդհանուր սոցիալ-քաղաքական բնութագրի իմանալու վրա, վորը կազմվում է կարմիր բանակայինների և հրամանատարական կազմի տարիների, կուսակցականության, սոցիալական ու ազգային կազմի, քաղաքական և կուլտուրական մակարդակի մասին գընդում յեղած տվյալների հիման վրա:

Բնութագրի լիակատարության համար անհրաժեշտ

է թեկուզ ամենաընդհանուր տեղեկություններն ունենալ համալրման շրջանի մասին, վոր ստացվում են քաղաքական որգանների գծով: Քաղղեկը բնութագրի լրացուցիչ տվյալներն ստանում է սեփական դիտողություններից և բոլոր իրեն հաղորդած առորյա կյանքի, կենցաղի և տարվելիք աշխատանքի փաստերից ու յերևույթներից: Հատուկ յեղանակները (անկետաներ, հատուկ հարցումներ) ամենևին չեն կիրառվում:

Կարմիր բանակայիններին ուսումնասիրելու հիմնական միջոցներն ու պայմանները հանդիսանում են. պետկազմի, կոմունիստների և կոմյերիտականների անընդհատ շփումը կարմիր բանակայինների հիմնական մասսաների հետ, փոխադարձ համակրանքի ու վստահության զգացմունքը, կարմիր բանակայինների մշտական համոզմունքը պետերի կազմի և կուսակցական կազմակերպության ոգնության մեջ, վերջիններիս հոգատարությունը, զգայունությունը, խոհեմությունը և դիտողականությունը:

Ուսումնասիրության տվյալները գործնականապես հարկավոր են. ա) կարմիր բանակայիններին կանոնավոր ղեկավարման ու մարտական ոգտագործման համար և հրանոթային համրանքն ու մասնագետներին ընտրելու ժամանակ, բ) ռազմաքաղաքական դաստիարակման ընդհանուր աշխատանքի համար և գ) սխալների ու զանցանքների առաջն առնելու համար, վոր կատարվում են այս կամ այն անցողական անհատական հակումների ազդեցության տակ:

57. Գնդի կազմի մեջ մտնող ստորաբաժանումների (մարտկոցի, դասակի, հրանոթի համրանքի) ԲՆՈՒԹԱԳԻՐԸ վորոշվում է համապատասխան հրամատարների և քաղաշխատողների կողմից հետևյալի հիման վրա. ա) գնդի ընդհանուր բնութագրի ամբողջապես (կողմորոշումը տալիս է կոմիսարը), բ) առանձին կարմիր բանակայիններին ու հրամատարներին իմանալու և գ) տվյալ զորամասի կամ ստորաբաժանման մարտական գոր-

ծունեյության փաստերի: Ստորաբաժանման բնութագիրն իմանալը գործնականապես հարկավոր է նրան ղեկավարելու և մարտում ամենաճիշտ կերպով ոգտագործելու համար:

58. ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Ագիտացիայի և պրոպագանդի մեթոդներն ու միջոցներն ընտրելու ժամանակ, քաղաքական և հրամատարական կազմը պետք է հարմարվի ընդհանուր պարագային, կարմիր բանակայինների վիճակին և նրանց կարիքներին:

Յեթե կարմիր բանակայինները հոգնած են և նրանք կարիք ունեն հանգստանալու կամ նրանց ուժերը պետք է պահպանել առաջիկա մարտական աշխատանքի համար, պետք է խուսափել ագիտացիայի և պրոպագանդի բարդ ու հոգնեցուցիչ տեսակներից: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ընտրության վրա, յեթե այդ կատարվում է մարտերից անմիջապես առաջ:

Գործող մասերում կիրառվում են թե ագիտացիան և թե պրոպագանդը: Սակայն առավել նշանակություն է ստանում ագիտացիան, իբրև լայն ազդեցության սխեմ լայն մասսաների գիտակցության և տրամադրության վրա: Պրոպականդը, վոր նպատակ ունի լայն տարածում և յենթադրում է գաղափարների խորացրած յուրացում լայն շրջանի կողմից, կիրառվում է առավելապես մասերն ոժանդակի համար յետ քաշելու ժամանակաշրջաններում:

Լայն մասսաների գիտակցության և տրամադրության վրա ազդելու խնդիրն առաջ է բերում ամբողջ ագիտացիոն աշխատանքին մասսայական բնույթ տալու անհրաժեշտություն: Միևնույն ժամանակ, հրետանական մասերի վերաբերմամբ պետք է հատուկ ընդգծել ագիտացիայի այնպիսի փորձված մեթոդների ամբողջ նշանակությունն ու կարևորությունը, ինչպես անհատական և խմբական ագիտացիան, վորը կարող է գործադրություն ունենալ մարտական պարագայում հրե-

տանու մարտական դաստիարակության առանձնահատկությունների շնորհիվ:

Պատերազմի ընդհանուր խնդիրների և նպատակների հիման վրա ագիտացիան և պրոպագանդը պետք է ամենամեծ չափով կոնկրետ բնույթ կրեն և յելնեն այն փաստերի ու յերևույթների շրջանից, վորոնց պետք է ծանոթացնել լայն մասսաներին և վորոնք իրական են հանդիսանում այսօրվա համար:

Ագիտացիոն աշխատանքին առաջադրվող ամենակարևոր պահանջներն են՝ մարտական նպատակին ուղղված լինելը, հրատապությունը, ժողովրդականությունը, պարզությունը և լսարանի մակարդակի մշտական հաշվառումը:

59. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ *պետք է կազմել, հաշվի առնելով նրանց համար բոլոր բնորոշ առանձնահատկությունները՝ հրամատարական կազմի ավելի մեծ տոկոսը, քան հետևակ մասերում և խոշոր բանվորական միջախավը:*

Դրա հետ միասին քաղաքական կազմը հատուկ ուշադրություն պիտի դարձնի.

ա) հրամատարական կազմի և հատկապես կրտսեր կազմի հետ տարվելիք դաստիարակչական ու հրահանգչական աշխատանքի կազմակերպման վրա, ձգտելով ստեղծել նրանից մի հենարան քաղաքական ազդեցության բոլոր սկզբնական ստորաբաժանումներում տարածելու գործում, հատկապես այն դեպքերում, յերբ այդ ստորաբաժանումներն իրենց կազմի մեջ քաղմարտիկներ չունեն.

բ) պայքար կազմի նորմալ սպասավորման վրա: Դրա համար քաղկազմից և կուսկազմակերպությունից կպահանջվի վոչ միայն վորոշ հատուկ կազմակերպչական միջոցներ (այդ կազմի փոշխացման պատճառով), այլ և աշխատանքի բովանդակության համապատասխան հարմարեցում.

գ) թե կուսակցական և թե ագիտացիոն աշխատանքի ժամանակ խոշոր բանվորական միջախավի առկայությունը մշտապես հաշվի առնելու անհրաժեշտության վրա:

60. ԳՆԴՈՒՄ, ԲԱԺՆՑԱԿՈՒՄ, ՄԱՐՏԿՈՑՈՒՄ *ագիտացիայի ամենագործադրելի միջոցներն ու ձևերը հանդիսանում են.*

ա) լրագրերը, թռուցիկները և բրոշյուրները, վորոնք ստացվում են քաղաքական որգաններից. քաղկազմի խնդիրն է՝ կազմակերպել ժամանակին և կանոնավոր բաշխումը, լրագրով տարվելիք աշխատանքը և այլն.

բ) պատի (յերթական, սահմանված ձևի) լրագրերը.

գ) միտինգները, վորոնք, զորամասի դաստիարակման բարեհաջող պայմաններում և պատշաճ կազմակերպություն ապահովելու ժամանակ, նվիրվում են հատուկ կարևոր թեմաներին.

դ) անհատական և խմբական ագիտացիան (բացի ագիտացիա գեղարվեստական ձևերից, վորոնք հիմնական և ամենագործադրելի ձևն է).

ե) կինոն, ռադիոն, համերգները, կարմիր բանակայինների ինքնագործունեության գեղարվեստական ձևերը.

զ) հրամատարության հրամանների ընթերցումը (գործադրվում է ամենահրատապ, հուզմունք առաջացնող թեմաների շուրջը):

Բանավոր պրոպագանդի հնարավոր ձևերը հանդիսանում են զրույցներն ու խմբակները:

61. ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ *վորոշվում է ռազմա-քաղաքական դաստիարակման և ուսուցման ընդհանուր խնդիրներով, վոր բերված են 55 հոդվածում:*

Մասսաների քաղաքական լուսավորության անհրաժեշտությանը բավարարելով հանդերձ, այդ աշխատանքը միևնույն ժամանակ պետք է միշտ սերտ կապ ունենա մարտիկի ռազմական ուսուցման, ռազմա-մասնագիտական ունակությունների, վարժությունների և

բարոյական-մարտական հատկությունների մշակման խնդիրների հետ: Մարտական պարագայի բնույթին նայած, փոփոխվում է աշխատանքի կոնկրետ բովանդակությունը:

Հրամանատարը կամ քաղաշխատողը, վորն իրականացնում է անմիջական մարտական դաստիարակման խնդիրը, իր առաջ միշտ մոտիկ և կոնկրետ նպատակ ունենալով, իր աշխատանքի ընթացքում պետք է օգտագործի ամենաբազմազան ձևերն անհրաժեշտ հետեվանքի հասնելու համար:

Պատմվածքը, տպավորությունների փոխանակումը, խորհուրդը, կատակը, բոլորն էլ կարող են գործադրություն ունենալ ագիտացիոն աշխատանքի ընթացքում: Միջոցների այդպիսի բազմազանության շնորհիվ, ագիտացիան դառնում է ամենադժվար և պատասխանատու գործ, վորը վորոշում է հրամանատարի, քաղաշխատողի և քաղմարտիկի բոլոր գործողությունները և նրանցից պահանջում է հաստատ անկեղծ համոզմունք և մշտական ուշադրություն դեպի իրենց խոսքերն ու գործողությունները:

62. ԱՄԵՆԱԼԱՎ ՀԻՄՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ մարտական կյանքից վերցրած օրինակներն են: Մարտական դաստիարակման ամեն. մի գործնական խնդիր, օրինակ՝ հրանոթային համրանքի համաձայնեցրած աշխատանքի, քողարկման, ավիացիայի վախը հաղթահարելու, թունավորող նյութերի (ԹՆ) կարևորության բացատրությունը, այդ բոլորի համար կարելի յե կոնկրետ օրինակներ բերել իր և մյուս մասերի մարտական կյանքից:

Այս կամ այն մարտական յեղանակները չպահպանելու կործանարար օրինակները կարմիր բանակայինների մարտական աշխատանքը կուղղեն ճիշտ հունով (սովորեցնել սխալների վրա):

Այդ ժամանակ ամենակարևոր նշանակություն կունենա այն ագիտացիան, վոր մղվում է զորամասերի

(իր, հարևան կամ մամուլի տեղեկությունների հիման վրա), ստորաբաժանումների և առանձին հերոսների օրինակելի մարտական օրինակներով:

Մարտական արժանիքների շուրջը անհրաժեշտ է հասարակական կարծիք կազմակերպել և առողջ մրցակցություն ստեղծել: Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր մարտական զորամաս պետք է կուտակի, պահպանի և միշտ արդարացնի իր մարտական ավանդությունները: Ավանդությունների վրա պետք է տանել համալրումների դաստիարակումը:

Զորամասի մարտական արժանիքներով և ավանդություններով դաստիարակումը լրացվում է առանձին հրամանատարների, կարմիր բանակայինների և քաղաշխատողների սխրագործությամբ:

Հերոսության, դերազանց քաջագործության, խելացի նախաձեռնության, մարտական ձեռներեցության, ընդհանուր նպատակի համար անձնազոհության յուրաքանչյուր դեպքին պետք է անշեղորեն հետևի մարտական պարգևը:

Մարտական պարգև տալն առանց բավական հիմունքների հանցանք է Կարմիր բանակի և հեղափոխության հանդեպ:

63. ՀՐԵՏԱՎՈՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՏԱՐՐՆ Է՝ մշակել նրանց մեջ հրանոթի նշանակության ճշգրիտ հասկացողությունը: Համարների համերաշխ և ճարտար աշխատանքի անընդհատ կատարելագործման հիման վրա, անհրաժեշտ է միաժամանակ ձգտել.

ա) զգույշ և խնամքով վերաբերմունքին դեպի նյութական մասը և ձիական կազմը յերթական և մարտական կյանքի բոլոր պայմաններում և

բ) մարտում իր հրանոթները մինչև վերջին շունչը պաշտպանելու պատրաստակամությանը:

Վերջին հանգամանքը հրետանական մասերի քաղկազմի վրա պարտականություն է դնում պահպանել

մասերում (հետևակ, հեծյալ) քաղաքական աշխատանքին հատուկ ուղղություն տալու համար:

64. ՔԱՂԱՔԱԿԱՆ–ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ: Մարտական հաջողությունը խոշոր չափով կախված է նրանից, թե որքան է կարմիր բանակայինների ուշադրությունն ամբողջովին գրավված մարտական խնդրով: Անբավականության և բարոյական անհավասարակշռության տրամադրությունները, որ հանդես են գալիս զորամասի նյութական–կենցաղային անհարմարության հետևանքով կամ որևէ անբարեհաջող տեղեկությունների և լուրերի պատճառով, բացասաբար են ազդում մասերի մարտունակության վրա: Ուստի քաղաքական–բարոյական վիճակի ամրապնդման խնդիրը մարտական պարագայում և մանավորապես, մարտի անմիջական պատրաստության շրջանում, պետք է զորամասի թե հրամանատարական և թե քաղաքական կազմի մշտական հոգսը լինի:

Կարմիր բանակայինը պետք է վստահ լինի, որ հրամանատարական և քաղաքական կազմը շարունակ հոգում է նրա մասին: Այդ պայմանով կարմիր բանակայինը միշտ ավելի մեծ պատրաստակամությամբ տանում է այն զրկանքները, որ անխուսափելի յեն մարտական իրականության վորոշ րոպեներում:

Զորամասի կամ ստորաբաժանման քաղաքական–բարոյական վիճակի վրա մշտապես ազդելով ռազմա-քաղաքական դաստիարակման ամբողջ սիստեմի միջոցով, հրամանատարական և քաղաքական կազմը միշտ պետք է լիակատար իրազեկ լինի իր կարմիր բանակայինների տրամադրությունների մասին:

Յեթե, այս կամ այն պատճառների ազդեցության տակ, անբավականություն է նշմարվում, հրամանատարի ձեռնարկած կազմակերպչական միջոցների հետ զուգընթաց պետք է անհապաղ բացատրական աշխատանք կատարել:

Առանձին դեպքերում ամենաքիչ դիմացկուն և քաղաքականապես թույլ պատրաստված կարմիր բանակայիններ

ների շարքերում հնարավոր են խիստ հակաբարոյական զանցանքներ (ինքնագլուխ բացակայություն, դասալքություն, ծառայության վերաբերյալ զանցանքներ, տեղական բնակչության գույքին վնաս հասցնելը): Հիշյալ փաստերի դեմ կռվելու ամենալավ միջոցն է՝ ռազմա–քաղաքական դաստիարակման հետ միասին այնպես կազմակերպել ներքին կարգուկանոնը, ծառայությունը, կենցաղը, փոխհարաբերությունները, որ ինքնըստինքյան վերանա նրանց հանդես գալու հնարավորությունը (թափթփվածության դեմ պայքարելը, անձնական կազմի համապատասխան ընտրությունն ու բաշխումը):

Բոլոր դեպքերում, երբ բարոյական ազդեցության միջոցները հետևանքներ չեն տալիս (զանցանքի չարամտություն), զանցանք կատարողը կարգապահական պատժի յե յենթարկվում կամ դատարանի յե մատնըվում:

65. ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆԸ բանակի ամենավոխերիմ թշնամին է: Դրա դեմ պայքարելու համար գործադրվում են ամենավճռական միջոցներ: Համապատասխան կազմակերպչական և դաստիարակչական միջոցներով դասալքության առաջն առնելու ձգտելով, պետերի կազմը պետք է միջոցներ ձեռք առնի դասալքին բանտարկելու համար: Դասալքի բանտարկության և նրա կրած պատժի մասին պետք է տեղեկացնել տվյալ զորամասի ամբողջ կազմին:

66. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ օրենքով սահմանված արտոնություններով և ոգնությամբ քաղաքական–բարոյական վիճակի ամրապնդման միջոցներից մեկն է: Դրա հետ միասին հրամանատարական և քաղաքական կազմը պարտավոր է կարմիր բանակայիններին սիստեմատիկորեն աջակցություն ցույց տալ. Նրանց դիմումները պետք է ուղղել կարմիր բանակայինների նամակների բյուրոյի վարիչի միջոցով իշխանության տեղական օրգաններին, հետևել այդ դիմումների բավարարմանը

և, կարիք յեղած դեպքում, դիմել Խորհրդային իշխանության օրգանների աջակցությանը:

67. ՏՎՅԱԼ ԶՈՐԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ պետերի կազմը պետք է յելնի կազմի սովորական անմիատարրությունից: Այն զորամասը, վորտեղ քիչ գիտակից տարրերի ազդեցությունը խիստ սահմանափակ է և, ընդհակառակը, կարմիր բանակայինների (ակտիվը) լավագույն մասն է կազմակերպում հասարակական կարծիքը և մասսան իրեն յետևից տանում, բոլոր մարտական քննությունները հաջողությամբ կբռնի:

Քաղաքական-բարոյական վիճակը պատշաճ մակարդակի վրա պահելու գործում մեծ նշանակություն ունի կուսակցական և կոմյերիտական կազմի կանոնավոր բաշխումը: Անհրաժեշտ է ձգտել, վոր մարտկոցի յուրաքանչյուր ստորաբաժանումը և, առաջին հերթին, յուրաքանչյուր հրանոթային համրանքը ապահովելու թեկուզ մեկ քաղմարտիկով, յեթե նա համապատասխանում է այս կամ այն մասնագիտությանը:

3. ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

68. ԶՈՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ հանդիսանում է այն բոլոր քաղաքական աշխատանքի ուղղակի և անմիջական շարունակությունը, վոր տարվում է ճակատային պարագայում: Ապահովման ժամանակ քաղաքական աշխատանքի առանձնահատկությունը նրանումն է, վոր այդ աշխատանքը տարվում է ամենամեծ լարվածությամբ և ամբողջովին վորոշվում է այն խնդիրներով ու պահանջներով, վոր առաջադրում է անմիջական մարտական պարագան: Ամբողջ քաղաքական աշխատանքը ու հատկապես զորքերի մարտական գործունեյության մարտական ապահովումը քաղկազմից կպահանջեն·

ա) ռազմական գործն իմանալ·

բ) մշտապես իրազեկ լինել հրամատարի յենթադրություններին ու գործողություններին, և

գ) մշտապես կարողանալ ճիշտ գնահատել մարտական ու քաղաքական պարագան և վորոշել այն կոնկրետ խնդիրներն ու քաղաքական միջոցառումները, վորոնք բղխում են պարագայից:

Հրետանու մարտական աշխատանքի ու մարտակարգերի առանձնահատկությունները լիակատար հնարավորություն են տալիս քաղաքական ազդեցության հաջորդականությունն ու անընդհատությունը պահպանելու՝ թե մարտի պատրաստվելու շրջանում և թե մարտի ժամանակ:

69. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԹՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ պետք է այնպես ուղղել, վոր ապահովված լինի. ա) յերթական շարժման կարգապահությունը, բ) զգույշ վերաբերմունք դեպի նյութական մասը, անոթներն ու ձիական կազմը, գ) քողարկման կանոնների պահպանումը, դ) հնարավոր տագնապի կանխումը օդից հարձակվելու ժամանակ կամ այլ դեպքերում:

70. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (մինչև բաժնյակների և մարտկոցների խնդիր ստանալը) քաղաքական աշխատանքը պետք է այնպես ուղղված լինի, վոր կարելի լինի հասնել. 1) մոմենտի քաղաքական պահանջների հաստատ գիտակցության մարտիկների կողմից (ինչի համար և ում դեմ են կռվում), 2) զորքերի զանազան տեսակների համագործակցության նշանակությունը ճիշտ հասկանալու և հատկապես հրետանու դերը հետևակին սատարելու գործում, նույնպես և հրետանուն ապահովող մասերի կամ ստորաբաժանումների դերը և 3) ցածր ստորաբաժանումների (հրանոթային համրանքի, հեծելադետքերի և այլն) մարտական համախմբմանն ու համերաշխությանը:

71. ԱՆՄԻՋԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (խնդիր ստանալու պահից մինչև դիրք դուրս գալը, իսկ կրակային ջոկում նաև դիրքում մինչև «ի մարտ» հրամանը) քաղ. աշխատանքը պետք է այնպիսի բարոյական-քաղաքական տվյալներ զարթեցնի մարտիկների մեջ, վորոնք կարող կլինեն ապահովել մարտի հաջողությունը (հաստատակամություն, վճռականություն, համերաշխություն և արիություն):

Դրա հետ միասին հրամանատարը, քաղաշխատողը և քաղմարտիկը պարտավոր են բոլոր մարտիկների ուշադրությունը սրել դեպի մարտի անհրաժեշտ յեղանակները, հատկապես այն մարտիկների, վորոնց հատուկ են մարտական արմատացած թերությունները (դանդաղկոտություն կամ ընդհակառակը, շտապողություն, ավելորդ դյուրազգացություն դիտողության ու հետախուզության ժամանակ):

Հրամանատարական, քաղաքական կազմը և կուսակցական կազմակերպությունը, մարտի պատրաստվելու համար ընդհանուր աշխատանք տանելով բոլոր կարմիր բանակայինների մեջ, դրա հետ միասին պետք է առաջուց պատրաստեն բոլոր օրինակելի մարտիկներին, վոր նրանք մարտի անցողական վճռական շրջաններում (հակառակորդի կրակով իր մարտկոցի ճնշումը, մարտկոցի կամ հրանոթի վերցնելու վտանգը) իրենց օրինակով, տոկունությամբ և ճշտակատարությամբ պահպանեն պատշաճ տրամադրությունը և հենց դրանով օգնեն հրամանատարին նրա աշխատանքի ընթացքում:

72. ՄԱՐՏՈՒՄ մարտիկի ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացած լինի իր մարտական պարտականությունները ճիշտ, արագ, վարպետորեն կատարելու վրա:

Կրակի առանձին ընդհատումների ժամանակ խոշոր նշանակություն կունենա, 58–63 հոդվածներում բերված ագիտացիայի յեղանակների հետ միասին, մարտիկներին տեղեկացնելը, յեթե այդ հնարավոր է, այն զորամասերի դրության մասին, վորոնց սատարում է հր-

րետանին: Այդպիսի տեղեկացումը հարկավոր կլինի վոչ միայն հաջողության շրջաններում, այլ և յերբեմն անհաջողությունների ժամանակ, վորպեսզի ուժեղացնել հրետավորների յեռանդն ու մարտական վճռականությունը:

Մարտիկների համար անտեսանելի նպատակները, հակառակորդի զորքերի դասավորման շրջանում, հաջողությամբ ճնշելու մասին իրազեկումը միշտ ցանկալի յե, իբրև քաջալերող միջոց:

Մարտի ժամանակ քաղաքական կազմը, իր անմիջական մասնակցության ու շարային կազմի մեջ քաղաքական աշխատանք տանելու հետ միասին, պետք է հատուկ ուշադրություն դարձնի արկերի հայթայթման ու վիրավորների բացահանման գործում թերությունները վերացնելու վրա՝ սպասավորող կազմից պահանջելով պատասխանատվության բարձր գիտակցություն, ճշտություն և արագաշարժություն:

73. ՄԱՐՏԻՑ ՅԵԼՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ քաղաքական ապահովության ամենակարևոր պայմանն է՝ պահպանել կապը, համագործակցությունը, աշխատանքի ճշտությունը և հրամկազմի, քաղկազմի ու քաղմարտիկների նախաձեռնությունը: Առանց վոչ մի րոպե վոգու անվեհերությունը կորցնելու քաղաշխատողները պետք է գտնվեն այն տեղերում, վորտեղ ամենից հեշտ կարելի յե սպասել թուլության կամ խուճապի արտահայտություն:

Հրամանատարի կողմից մարտկոցին տված հրամանը պարզելով իրենց համար, քաղաշխատողները պետք է վորոշեն և ձեռք առնեն այն միջոցառումները, վոր կնպաստեն հրամանի հաջող կատարմանը (մնալ հրանոթների մոտ, գնալ քարշակների կամ սնունդի ջոկի տեղավորման վայրը):

Մարտից յելնելու պայմանները, հատկապես նախամտածված յետ քաշվելու դեպքերում, ամենից նպաստավոր են հակառակորդի զորքերի մեջ ագիտացիա մղե-

լու համար (մեր զորքերի թողած տեղերի հեղեղումն առաջուց պատրաստած տպագրած նյութերով)։ Ագիտացիայի նպատակն է՝ քաղաքական լքում առաջացնել հակառակորդի շարքերում։

74. ՄԱՐՏԻՑ ԵԼՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ, յերբ ամբողջ անձնական կազմը գտնվում է ծայր աստիճան հոգնած դրության մեջ, ըստ հնարավորին լիակատար ֆիզիկական հանգստի հետ միասին, անհրաժեշտ է օգտագործել աշխատանքի այնպիսի ձևերը, վոր ապահովում են բարոյական հանգիստ ու վերացնում են անտարբերությունն ու վհատական տրամադրությունները։

4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

75. Բնակավայրերում տեղավորվելու ժամանակ, իր ստորաբաժանումների քաղաքական սպասավորումը լիովին ապահովելուց հետո, քաղաքական կազմը պետք է հոգա բնակչության մեջ քաղաքական աշխատանք տանելու համար։ Այդ ամենախոշոր նշանակություն ունի հակառակորդից ազատված վայրերում։

Բնակչության մեջ տարվելիք աշխատանքի բովանդակությունը, միշտ հիմնվելով կուսակցության ընթացիկ քաղաքականության վրա, հակառակորդից ազատված տեղերում լրացվում է Կարմիր բանակի ազատագրական նպատակի, Խորհրդային իշխանության էության և նրա այն միջոցառումների բացատրությամբ, վոր ուղղված են աշխատավորների շահերի և ազգային քաղաքականության բավարարմանը, նույնպես և հակառակորդի յերկրի տիրող դասակարգի ներքին քաղաքականության մերկացմամբ։

Բնակչության մեջ տարվելիք բացատրական աշխատանքին պետք է ուղեկցի կոնկրետ խնդիրների ձևակերպումը, վոր ծառացած են բնակչության առաջ մոմենտի պահանջներին համապատասխան։

Բնակչության հետ փոխհարաբերության ամբողջ սիստեմը պետք է հիմնված լինի նրա ազգային-կենցաղային առանձնահատկությունները, սովորությունները, վարք ու բարքը, կրոնն իմանալու վրա և զգայուն, խոհեմ և ուշադիր վերաբերմունքով դեպի դրանց։

Այդ հատուկ նշանակություն ունի հակառակորդի յերկրի համար, վորտեղ բնակչությունը սխալ կարծիք ունի Կարմիր բանակի իսկական խնդիրների, Խորհրդային իշխանության քաղաքականության, նրա ազգային քաղաքականության և կրոնական համբերողության մասին։

76. ՊԱՐՀԱԿՆԵՐԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, պետք է պահպանել դասակարգային սկզբունքը, իբրև հիմնական և ղեկավարող սկզբունք։ Պարհակների ամենամեծ ծանրությունը պետք է բարդել անաշխատ տարրերի վրա, իսկ ամենափոքրը՝ բանվորների և գյուղական չքավորության վրա։

77. ԲՈԼՈՐ ՓԱՍՏԵՐԸ, ՎՈՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿԻ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ, անկախ նրանից, թե դրանց մասին գանգատներ են ստացվել տեղական բնակչության և տեղական իշխանության օրգանների կողմից կամ նրանք հայտնի յեն դարձել ընդհանուր ինֆորմացիայի կարգով, անպայման պետք է քննել, իսկ մեղավորներին պետք է պատասխանատվության յենթարկել կարգապահական կամ դատական կարգով։

Հատկապես կարևոր դեպքերում պետք է դատավարություն կազմակերպել տվյալ շրջանի բնակչության լայն խավերի ներկայությամբ։ Դատավճիռը պետք է լայն չափով հրապարակել այն շրջանում, վորտեղ կատարված է հանցանքը։

78. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՇՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՎՈՉ ՄԻԱՅՆ ՏԵՂՈՒՄ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿ, ԱՅԼՅԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ։ Մասնավորապես բնակա-

վայրերը գրավելու և նահանջի ժամանակ հարկավոր կլինեն հատուկ միջոցներ, վորպեսզի թույլ չտալ բնակչության նյութական և անձնական իրավունքները խախտելու (հինահարություն, թալանչիություն):

ԳԼՈՒԽ V.

ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

79. *ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ԿՐԱԿԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:*

Հրետանու ուժը նրա կրակումն է: Զորաշարժը մի միջոց է հրետանու կրակն ամենալավ կերպով օգտագործելու համար: Հրետանու կրակը բնորոշվում է հզորությամբ և ճկունությամբ: Այս հատկությունների զուգակցությունը հրետանուն հնարավորություն է տալիս իրականացնել իր կրակային զորաշարժը, այսինքն գործոն կրակի մասսան կենտրոնացնել հարկավոր րոպեներին ամենակարևոր ուղղությունների, կետերի և ճակատի տեղամասերի վրա:

Յերկայնակի *կրակը ամենագործոն կրակն է: Դրա համար ճակատով մեծ տարածություն ունեցող նպատակների գնդակոծման ժամանակ ամենաձեռնտուն՝ թևային կամ գոնե շեղակի կրակն է: Սակայն այդպիսի կրակի կազմակերպությունը կապի և դիտողության խնամքով նախամտածված սիստեմ է պահանջում: Հետևակի հետ ամենալավ կապը կարելի յե հաստատել, յերբ մարտկոցը տեղավորված է այն հետևակի շրջանում, վորին նա սատարում է. ուստի հաճախ հարկ է լինում ձեռք քաշել թևային կրակի առավելություններից:*

Կրակի գործոնության վրա խոշոր չափով ազդում է հրաձգության հեռակայությունը: Յերբ հեռակայությունն ավելանում է վորոշ սահմանից (տարբեր է հրանոթների զանազան սիստեմների ու արկերի տեսակների համար), կրակի գործոնությունը փոքրանում է:

80. ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ:

Հրետանային կրակը խնամքով նախապատրաստություն և հմուտ ղեկավարություն է պահանջում:

Բոլոր հնարավոր միջոցների և յեղանակների օգտագործումը, տակտիկական պարագայի համեմատ ամենագործոն հրաձգությունն ապահովելու համար, կազմում է ամեն մի հրետանական հրամատարի հիմնական պարտականությունը:

Հրետանու կրակի գործոնությունն ապահովելու համար իբրև միջոցներ ծառայում են.

ա) հրետանու և հետևակի միջև սերտ կապը, վորն ապահովում է հետևակի համար հրետանու կրակի ժամանակին օգնությունը:

բ) հակառակորդի և տեղանքի անընդհատ դիտողությունը, դիտողությունների փոխադարձաբար փոխանակումը հարևան հրետանական մասերի միջև և հրետանու ու զորքերի մյուս տեսակների միջև.

գ) հրաձգության համար յելակետային տվյալների, ըստ հնարավորին, ճիշտ նախապատրաստությունը, վոր ապահովում է նպատակներին հարվածելու հանկարծակիությունը.

դ) կրակի կուտակումը հարկավոր րոպեյին հարկավոր տեղում.

ե) հրետանու դասավորման խորությունը, վոր ապահովում է կրակի անընդհատությունը ամեն մի պարագայում:

Դրա հետ միասին, միմիայն ժամանակին *կրակ բանալը կարող է ապահովել նրա հաջող գործողությունը: Ուստի վորոշ դեպքերում հարկ է լինում սահմանափակվել հրաձգության համար յելակետային տվյալների միմիայն ամենակոպիտ վորոշմամբ, միայն թե հնարավոր լինի կրակը բանալ ժամանակին: Այդ հատկապես կարևոր է ՀՍ մարտկոցների համար:*

Կրակի համար նպատակներ ընտրելու ժամանակ, պետք է ընտրության համար իբրև հիմք ընդունել տակտիկական կարևորության հատկանիշը և վոչ թե գըն-

ղակծման տեխնիկական ձեռնատու կողմերը:

Հրաձգության արագությունն ու կրակ վարելու մեթոդը ամեն մի առանձին դեպքում պետք է համապատասխանի նպատակի բնույթին, տրված խնդրին և հրապաշարի առկայությանը:

Նյութական մասի շարքից դուրս գալուց խուսափելու համար չափազանց արագ հրաձգության ժամանակ, սահմանվում է կրակ վարելու արագության հետևյալ նորմաները·

Հրանոթի տեսակը	Հրաձգության տևողությունը	Ջիղերի վերջնական թիվը 1 հրանոթի համար 1 րոպեյում
76-մմ դաշտ. թնդան. 1902 թ. տիպարի	3 րոպ. ոչ ավելի 15 » » » 1 ժամից » »	6 ձիգ 1 րոպեյում 3 » 1 » 1 » 1 »
107-մմ դաշտ. թնդան. 1910 թ. տիպարի	3 րոպ. ոչ ավելի 15 » » » 1 ժամից » »	4 ձիգ 1 րոպեյում 2 » 1 » 1 » 1 »
122-մմ դաշտ. հոբից 1909 և 1910 թ. թ. տիպարի	3 րոպ. ոչ ավելի 15 » » » 1 ժամից » »	2 ձիգ 1 րոպեյում 1 » 1 » 1 » 3 »
152-մմ դաշտ. հոբից 1909 թ. տիպարի	3 րոպ. ոչ ավելի 15 » » » 1 ժամից » »	2 ձիգ 1 րոպեյում 1 » 1 » 1 » 4 »

Ծանոթություն 1. Արկերի վերջնակետ ծախսը հաշվելու համար 1 ժամից ավելի հրաձգության ժամանակ, պետք է օգտվել հետևյալ ֆորմուլաներով.

76-մմ. թնդ. համար — թ = 30 (ժ+1)
107-մմ. թնդ. » — թ = 20 (ժ+1)
122-մմ. հոբ. » — թ = 10 (ժ+1)
152-մմ. հոբ. » — թ = 8 (2 ժ+1)
} 1 հրանոթի համար

Ծանոթություն 2. Ժամանակը հաշվելու համար խոշոր կրակային խնդիրներ լուծելու ժամանակ, պետք է օգտվել հետևյալ ֆորմուլաներով.

76-մմ թնդ. համար — $ժ = \frac{թ}{30} - 1$

107-մմ թնդ. » — $ժ = \frac{թ}{20} - 1$

122-մմ հոբ. » — $ժ = \frac{թ}{20} - 0,5$

152-մմ հոբ. » — $ժ = \frac{թ}{16} - 0,5$

Վերոհիշյալ ֆորմուլաներում թ արկերի թիվն է 1 հրանոթիի համար, ժ հրաձգության տևողությունն է ժամերով:

Ամեն մի կրակային խնդիր տալու ժամանակ, ընդհանուր զորական, հրետանական և հետևակ հրամատարները պարտավոր են իրենց պահանջները չափակցել խնդրի լուծելու համար արկերի անհրաժեշտ ծախսի հետ:

Կրակն անմիջապես վարող հրամատարն իր հերթին պետք է արկեր ծախսի ոչ ավելի, քան այդ պահանջում է տրված խնդրի բնույթը:

Հրետանին կրակ է վարում իր հետևակի գլխի վրայով մինչև վերջին հնարավորությունը: Դրա համար անհրաժեշտ է սերտ և հաստատուն կապ մարտկոցների և առաջավոր հետևակ մասերի միջև:

ՀԵՏԵՎԱԿԻ ԱՆՎՏԱՆԳ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՆՊԱՏԱԿԻՑ՝ ՀՐԵՏԱՆՈՒ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հրանոթների անունները	Ծակատային կրակի ժամ.		Թևային կրակի ժամ.	
	Զգալի	Նշանակ (մասամբ)	Զգալի	Նշանակ (մասամբ)
76-մմ և 107-մմ թնդանոթները	250 մ.	250 մ.	100 մ.	60-80
122-մմ հոբից	200 մ.	400 մ.	100 մ.	400 մ.
152-մմ »	—	400 մ.	—	400 մ.

81. ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ կախված է մարտական գործողությունների բնույթից և մասնավոր պարագայից:

Զորաշարժային մարտերում հրետանու կրակային աշխատանքը, սովորաբար, չի կարող նախատեսված ու մասնատած լինել հատուկ մանրամասն ծրագրով. այդ պետք է լիովին համաձայնեցրած լինի ամբողջ զորական միավորության գործողությունների ընդհանուր ծրագրի հետ:

Վորքան ավելի ժամանակ կա նախապատրաստական աշխատանքների համար, վորքան լավ է ուսումնասիրած պարագան, այնքան ավելի մանրամասն պիտի լինի հրետանու գործողությունների ծրագիրը:

Հրետանու կրակային աշխատանքի ծրագրի զարգացման կարգը հետևյալն է.

ա) հրետանու ընդհանուր խնդիրները, խմբավորումը և ստորադրությունը.

բ) կրակի բաշխումը ըստ ճակատի և խորությամբ

գ) կրակի բաշխումը ըստ ժամանակի.

դ) կրակի տեսակները.

ե) հրաձգության արագությունն ու արկերի ծախսը:

82. ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ: Հրետանուն տրված խնդիրները նրա կողմից ամենալավ կատար անելու համար պահանջվում է, վոր տրամաչափերը լիովին համապատասխանեն այդ խնդիրներին, իսկ կրակի տեսակներն ու հրաձգության արագությունը՝ տվյալ հրետանուն յեղած հրապաշարին:

Հրետանային միջոցների ամենանպատակահարմար գործադրությունը զանազան տեսակի նպատակների դեմ հրաձգության համար բերված են հետևյալ աղյուսակում.

ՀՐԱՆՈԹՆԵՐԻ ՏՐԱՄԱՉԱՓԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ.

№№ ըստ կարգի	Նպատակների անունները	Համապատասխան հրանոթների անունները
	Ա. Ամուր կառուցվածքներ	
1	Բետոնից շինած հատկապես ամուր շինությունները 3,5—4,5 մ հողով ծածկած ապաստարանները. ամուր բլոկհաուզները բերդերում, ամրացած հանգույցներում և պաշտպանողական շերտերում:	ա) Հոբիցներ. 305-մմ. Օբուխովսկի գործարանի, 280-մմ Շնեյդերի. 203-մմ Վիկկերսի: բ) Ծովափնյա հրասանդներ 280-մմ և 275 մմ: գ) Թնդանոթներ. 275-մմ և ծովափնյա 254-մմ (վերջինները գործադրըվում են ուղղաձիգ նպատակների դեմ) իսկ հորիզոնական նպատակների դեմ, միայն յեթե չկան վերոհիշյալ հոբիցները կամ հրասանդները, այն էլ 20°ից ավելի անկման անկյուն ունեցող հեռավորություններից:
2	Ամուր շինություններ. բետոնե թեթև շինություններ (մոտ 50 սմ. բետոն) բլինդաժներ ու ծածկարաններ ավելի պակաս ամրություն ունեցող, քան հիշատակված են 1 հոդվածում:	ա) Կարելի յե գործադրել վերևում հիշված հրանոթները և բացի դրանցից— բ) Թնդանոթներ՝ 152-մմ 120 փթանոց, 190 փ. և 200 փ. 155-մմ Ֆրանսական. գ) Հոբիցներ՝ 150-մմ արագաձիգ (դաշտային և բերդային) 1910 թ. և 1909 թ. տիպարի և Վիկկերսի.
3	Ամրացրած շերտի խրամատներ, դաշտային տիպի բլինդաժներով, շքարաններով և դնդացրային բներով:	ա) Ամենակարևոր տեղամասերի ավերման համար գործադրվում են՝ 152-մմ թնդանոթներ և հոբիցներ, վոր հիշված են 2 հոդվածի բ և գ կետերում: Բացի դրանցից՝ բ) Հոբիցներ՝ 122-մմ և 120-մմ:
4	Դաշտային խրամատներ, խրամուղիներ և նրանց խաչմերուկները:	ա) Հոբիցներ՝ 152-մմ դաշտային և բերդային. 152-մմ անգլիական, 122-մմ և 120 մմ. բ) Թնդանոթներ՝ 155-մմ և 120-մմ ֆրանսական. բոլոր 107—76-մմ թնդանոթները:

№№ ըստ կարգի	Նպատակների անունները.	Համապատասխան հրանոթների անունները.
	Բ. Հրետանի	
5	Բաց կանգնած կամ թեթև բլինդաժներով ծածկված։	76-մմ արագաձիգ դաշտային ու լեռնային թնդանոթները. 107-մմ թընդանոթները։
	Հրետանի՝ վոչ շատ ամուր ծածկարաններում։	Թնդանոթներ՝ 122-մմ ֆրանսական, 120-մմ Օբուխովսկի գործարանի և Վիկկերսի։ 122-մմ դաշտային հոբիցներ, 152-մմ դաշտ. հոբիցներ, 120-մմ դաշտ. հոբիցներ։
	Հրետանի՝ հատկապես ամուր ծածկարաններում։	Թնդանոթներ 155-մմ ֆրանսական 152-մմ 200 փթանոց. 152-մմ Կանե, 152-մմ պաշարողական, արագաձիգ, Շնեյդերի սիստեմի։ 154-մմ ծովափնյա (բացառիկ ուժ ունեցող հրետանու դեմ)։ Այն դեպքերում, յերբ հոբիցները ազատ են բլինդաժներ ու խրամատներ ավերելու խնդիրներ լուծելուց կամ վերոհիշյալ թնդանոթները չկան, իսկ հակառակորդի հրետանին տեղավորված է հատկապես ամուր ծածկարաններում, գործադրում են և՝ 152-մմ, 122-մմ 120 մմ և 10-սմ հոբիցները և 120 ու 190 փթանոց թնդանոթները։
6	Գ. Գնդացիրներ.	ա) Թնդանոթներ՝ 76-մմ արագաձիգ դաշտային և լեռնային. 37-մմ, 40 և 47-մմ։ Բացի այդ խրամատներն ավերելու ժամանակ ջարդում են և գնդացիրները։ բ) Յեթե գնդացիրները տեղավորված են ամուր շենքերում, նրանց ջարդում են ավելի խոշոր տրամաչափի հրանոթներով, վոր համապատասխանում են ծածկարանների ամրությանը։

№№ ըստ կարգի	Նպատակների անունները	Համապատասխան հրանոթների անունները
7	Դ. Լարափակոցներ	ա) 76-մմ արագաձիգ դաշտային և լեռնային թնդանոթները։ բ) Լարափակոցները, վոր ծածկված են սարալանջով և անմատչելի յեն գետնամերձ հետագիծ ունեցող թընդանոթների համար, նույնպես և հատկապես ամուր լարափակոցներն ավերում են հոբիցների արկերով և ականանետներով։
8	Ե. Բաց կենդանի նպատակները	Առավելապես դաշտային ու լեռնային թնդանոթները և հոբիցները, նույնպես և 107-մմ դաշտային ծանր թընդանոթներն ու փոքրակալիբր հրետանի (գումարտակային տիպի)։
9	Զ. Սավառնակներ	ա) 76-մմ հակասավառնակային թընդանոթներ։ բ) 76-մմ արագաձիգ (1900 և 1902 թ. տիպարի), վոր զետեղված են հատուկ հաստոցների վրա։ գ) 40-մմ Վիկկերսի թնդանոթ-գընդացիրը։ դ) Մեծակալիբր գնդացիրները։
10	Է. Օդապարիկներ	ա) Թնդանոթներ՝ 107-մմ արագաձիգ ու 77 թվականի տիպարի, 120-մմ ֆրանսական։ Յեթե օդապարիկը տեղավորված է թեթև դաշտային հրետանու հասողության սահմաններում, գործադրում են նաև թեթև 76-մմ թընդանոթները։
11	Ը. Տանկեր. զրահամեքենաներ, զրահագընացքներ։	ա) Բոլոր դաշտային թեթև ու ծանր թնդանոթներն ու հոբիցները։ բ) Փոքրակալիբր թնդանոթներն ու գնդացիրները։

Իբրև կանոն, արգելվում է խոշոր տրամաչափները գործադրել այնպիսի խնդիրներ լուծելու համար, վոր ըստ ուժի չեն փոքր տրամաչափերի համար։

2. ԿՐԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

83. *ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ*։ *Հրետանային կրակը կարող է նպատակ ունենալ կամ* վոչնչացնել *հակառակորդի ուժերն ու միջոցները, կամ նրան* ճնշել։

Վոչնչացումն *իրականացվում է հարվածումով, թունավորումով, ավերումով կամ բոցավառելով։ Այդ իրագործելի յե գլխավորապես փոքր չափեր ունեցող նպատակների վերաբերմամբ և դիպուկ հրաձգություն է պահանջում։*

Ճնշումն *այնպիսի պայմաններ է ստեղծում, վորոնց ընթացքում հակառակորդի ուժերն ու միջոցները ժամանակավորապես զրկվում են գործելու հնարավորությունից։*

ՎՈՉՆՉԱՑՈՒՄ	ՃՆՇՈՒՄ
1. Կենդանի ուժի հարվածում։	1. Կենդանի ուժի անհանգստություն և ուժասպառություն։
2. Հետևակի կրակային միջոցների վոչնչացում։	2. Մարտկոցների չեզոքացում։
3. Մարտկոցների վոչնչացում։	3. Կրակային փակոց։
4. Ավերում՝ ա) արհեստական արգելքների. բ) դաշտային ծածկարանների. գ) շինությունների։	4. Շլացում։
5. Կռիվ տանկերի դեմ։	
6. Կռիվ ոդային ուժերի դեմ։	

84. *ԿՐԱԿ ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ*։ 1) Կենդանի ուժի հարվածումն *իրականացվում է ուժգին կրակ վարելով, հրաձգության զանազան արագությամբ։ Գործադրվում են շրապնելային, բեկորային, բեկորա-ֆուգասային ու բեկորա-քիմիական արկեր։ Հետևակի ճնշման համար, վոր չունի խրամատներ ու ապաստարաններ, բավական է ունենալ 3–6 մարտկոց հակառակորդի ճակատի մեկ կիլոմետրի համար, նայած ուղղության կարևորությանը։*

2) Հետևակի կրակային միջոցների վոչնչացմանը *կարելի յե հասնել առանձին մարտկոցների կրակով ու նույնիսկ առանձին մարտկոցներով։ Միջին հեռավորությունների վրա գնդացրային բնի վոչնչացման համար հարկավոր է* 76 մմ *թնդանոթների մինչև* 75 *ձիգ գործնական արագությունը լրիվին ոգտագործելու ժամանակ։ Ծածկված գնդացրին կամ ականանետին ճնշելու համար հարկավոր է* 122 մմ *կամ* 152 մմ *հոբիցների* 40–100 *ռումբ* 2,5— կմ *հեռավորությունների վրա։*

3) Մարտկոցների վոչնչացումը։ *Յեթե հակառակորդի մարտկոցը տեղավորված է բաց դիրքում, նրա վոչնչացման համար հարկավոր է ոդային դիտողություն և հրետանային հետախուզության հատուկ օրգանների աշխատանք։*

Հակառակորդի մեկ մարտկոցի վոչնչացման համար, վոր տեղավորված է չամրացրած դիրքում, հարկավոր է 50*-ից ավելի արկ՝ հակառակորդի յուրաքանչյուր հրանոթի համար։ Յեթե հակառակորդի դիրքը ամրացրած է, արկերի այդ քանակը ե՛լ ավելի յե մեծանում։*

Յերեք մարտկոցի փորձնական հրաձգության համար՝ հակառակորդի մեկ մարտկոցի դեմ հարկավոր է 30–60 *րոպե, նայած մարտկոցների ու սավառնակների աշխատանքի համերաշխությանը։*

Ընդհանուր առմամբ հակառակորդի մարտկոցների ճնշումը մեծ դժվարություններ է ներկայացնում։ Հակառակորդի մարտկոցների հետ կռիվը, սովորաբար

մզվում և ամբողջ մարտի ընթացքում։

4) Ավերում։ ա) Արհեստական արգելքների ավերման համար առանձին մարտկոցներ են գործադրվում։ Մեկ յերեքհրանոթանոց 76-մմ մարտկոցը կարող է 1,5—2 ժամվա ընթացքում 6 մետր լայնությամբ անցք բանալ մինչև 20 մետր խորություն ունեցող լարափակոցներում։

Արկերի միջին ծախսը ավերման համար՝ 50 նռնակ է 2 յերկարության մետրի համար ճակատային կրակի ժամանակ, դիտողության ամենալավ պայմաններում և 2 կիլոմետրից վոչ ավելի հեռավորության վրա։ Հատուկ արկերով հրաձգության ժամանակ, արկերի ծախսը կարելի յե պակսեցնել։

Արհեստական արգելքները, վոր դասավորված են միքանի շերտերով, առանձին փորձնական հրաձգություն են պահանջում յուրաքանչյուր շերտի դեմ։

Հրաձգության արագությունը թույլ պիտի տա յուրաքանչյուր առանձին ձիգի ճիշտ դիտողությունը և մեկ հրանոթի համար 1 րոպեյում 1 ձիգից ավելի չպիտի լինի։ Յեթե ականանետներ կան, արհեստական արգելքների ավերումը պետք է նրանց հանձնել։

Արկերի մոտավոր ծախսի աղյուսակը տես № 8 հավելվածում։

բ) Դաշտային ծածկարանների ավերման համար գործադրվում են զանազան տրամաչափերի հրանոթներ (76-մմ—305-մմ), նայած նրանց ամրությանը։

Խրամատների դեմ յերկայնակի կրակ վարելու ժամանակ, յուրաքանչյուր առանձին արկի գործունությունը, ճակատային կրակի նկատմամբ, ավելանում է միջին հաշվով 2–3 անգամ։

գ) Շինությունների ավերումը կատարվում է կամ, արկերի ֆուգասային գործողությամբ, կամ բոցավառելով. ամենից հաճախ յերկուսն էլ գործադրության կոմենան։

Գործադրվում են ֆուգասային արկերը (գլխավորապես հաբիցային ռումբերը), հրձիգ արկերը և, յեթե վերջինները չկան, շրապնելը։

ԱՐԿԵՐԻ ՄՈՏԱՎՈՐ ԾԱԽՍԸ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԽՐԱՄԱՏՆԵՐ ՈՒ ԾԱԾԿԱՐԱՆՆԵՐ ԱՎԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հրանոթներ	Արկեր	ՆՊԱՏԱԿՆԵՐ	Արկերի թիվը ճակատի 2 մետրի համար	
			Ճակատային կրակի ժամանակ	Թևային կրակի ժամանակ
76-մմ	Նռնակներ	Շքարոններ, թույլ տրամատի խրամատներ, խրամուղիներ (հեռավորությունը մինչև 3 կմ)։	30[1])	10
122-մմ	Ռումբեր	Խրամատներ ու թեթև բլինդաժներ (հեռավ. մինչև 3 կմ.)։	30—40[1])	10—15
152-մմ	»	Լրիվ տրամատի խրամատներ ու ծանր տիպի բլինդաժներ (հեռավ. մինչև 3 կմ.)։	15—20[1])	7
280—305-մմ	»	Հատկապես ամուր սորբերկրյա ապաստարաններ։	Մոտ 50 արկ 1 նպատակի համար։	
203—228-մմ	»	Նույնը	60-80 արկ 1նպատ. համար	
280—305-մմ	»	Բետոնե ապաստարաններ, գնդացրային և թնդանոթային կազեմատներ։	100 ռումբից սկսած 9 կիլոմետրից պակաս հեռավորությունների վրա և մինչև 150 ռումբ ավելի մեծ հեռավորութ. համար։	

[1]) Ցույց տված նորմաները ճիշտ են, յեթե խրամատի ճակատի լայնությունը 10 մետրից պակաս չի։ Ավելի փոքր տեղամասերի համար արկերի թիվը, վոր անհրաժեշտ է խրամատի 1 յերկարության մետրը ավերելու համար, պետք է ավելացնել։

փայտե շինությունների վոչնչացումն ու ավերումը կատարվում է 76-մմ և 107-մմ թնդանոթների հրձիգ արկերի կրակով. յեթե յեղանակը չոր է և շինությունների նյութը համապատասխանում է՝ թնդանոթների և հոբիցների սովորական փուգասային և շրապնելային արկերով:

Քարե շինությունները վոչնչացվում են հոբիցների գագաթնահար կրակով, 122-մմ տրամաչափից սկսած, հապաղումով փուգասային ռումբերով նայած շինության ամրությանը: Արկերի հաշիվն է՝ մոտ 8 հատ շինություններով բռնած մակերեսի յուրաքանչյուր 100 քառակուսի մետրի համար:

Յերկաթուղային կամրջի կամ ուղեկամրջի ավերման համար անհրաժեշտ է 100-200 ռումբ 305-մմ—228-մմ:

Հողաթմբի վրա գցած յերկաթուղային գծի ավերման համար անհրաժեշտ է 500-300 ռումբ 152-մմ—203-մմ:

Յերկաթուղային սլաքների և կայարանների մյուս կառուցվածքների ավերման համար՝ 200-100 ռումբ 107-մմ—152-մմ:

5) Տանկերի և զրահավտոմոբիլների վոչնչացման համար կիրառվում են առանձին հրանոթներ, վոր գործում են փոքր հեռավորությունների վրա, առաջուց վորոշ բնագծերի դեմ փորձնական հրաձգություն կատարելով:

6) Սավառնակների դեմ կռվելու համար գործադրվում են զենիթային մարտկոցները և գնդացիրները: Վերբերկրյա գործողության հրանոթների ոգտագործումը, իբրև կանոն, աննպատակահարմար է:

85. ԿՐԱԿ ՃՆՇՄԱՆ ՀԱՄԱՐ: 1) Անհանգստացնող կրակը վարում են կարճատև կրակային հարձակումների կամ չափակցված հրաձգության ձևով ձիգերի միջև հավասար միջոցներով: Ամենալավ գործողությունն է ունենում այդ յերկու տեսակի հրաձգությունների համակցությունը. այդ դեպքում կրակային հարձա-

կումները պետք է հանկարծակի լինեն: Յերկարատև անհանգստացնող կրակը կոչվում է ուժասպառող կրակ:

2) Մարտկոցների չեզոքացումը կատարվում է կամ նռնակով ու շրապնելով համակցված հրաձգությամբ, կամ քիմիական արկերով:

Առաջին դեպքում գործադրվում է 2-3 մարտկոցի կենտրոնացրած կրակը, կարճատև կրակային հարձակումների ձևով, հարձակումների միջոցներում՝ դանդաղ, չափակցված կրակը մարտկոցներից մեկով կամ նույնիսկ մեկ հրանոթով:

Յերկրորդ դեպքում գործադրում են քիմիական արկերը սակավակայուն ԹՆ.

3) Կրակային փակոց: Անշարժ կրակային փակոցը (ծածկույթը) սովորաբար գործադրվում է դիրքային պատերազմում. ա) հետևակի առաջ շարժումն արգելելու համար, բ) նրա յետխաղացումն արգելելու համար, գ) տվյալ շրջանում հետևակին մյուս մասերից կտրելու համար:

Կրակի այդ տեսակների համակցությունը կազմում է կրակային քոլորում:

76-մմ մարտկոցով անշարժ կրակային փակոց ստեղծելու համար անհրաժեշտ է 1 րոպեյում յերկու պայթյուն առաջացնել ճակատի 20 մետր յերկարության վրա:

Յերեք հրանոթանոց 76-մմ մարտկոցն ընդունակ է ծածկույթ ստեղծել 100 մետր ճակատի վրա, յուրաքանչյուր հրանոթի համար 6 ձիգ մեկ րոպեյում հրաձգության արագության ժամանակ: Թեվային կրակի ժամանակ մարտկոցի տեղամասի լայնությունը կարելի յե ավելացնել 3-4 անգամ:

Կրակի տեվողությունն ամեն անգամ 3 րոպեյից ավելի չպիտի լինի:

Կրակային փակոցը հեռավոր բնագծերի, ճանապարհների ու շրջանների վրա յերբեմն կոչվում է արգելիչ կրակ:

Շարժական խափանիչ կրակը (կրակի պատնեշը)

պահանջում է մեծ քանակությամբ հրանոթ ու արկերի շատ մեծ ծախս. այդ գործադրվում է դիրքային պատերազմում և այն էլ շատ մեծ քանակությամբ հրետանի լինելու դեպքում:

Կրակի պատնեշը կարող է լինել հասարակ (սովորական) կամ կրկնակի. վերջին դեպքում ստեղծվում է յերկու շարժական ծածկույթ՝ մոտավոր, վոր կազմվում է բեկորային արկերով, և հեռավոր՝ կազմվում է քիմիական արկերով (սակավակայուն ԹՆ):

Կրակի պատնեշը կարող է լինել հաշված (200 մետր վոստյուններով դեպի առաջ, յուրաքանչյուր 5 րոպե) կամ դիտելի (կրակի տեղափոխությունները իր հետևակի դիտվող շարժմանը համապատասխան): Կրակի պատնեշի շարժումը դեպի յետ արգելվում է:

Արկերի թվի հաշիվը և կրակի արագությունը յուրաքանչյուր հրանոթի համար նույնն են, ինչ վոր անշարժ կրակային փակոցի համար:

4) Շլացումը գործադրվում է հակառակորդի դիտողներին չեզոքացնելու համար: Այդ կատարվում է ծխատու և ֆոսֆորային արկերով:

(Տես մարտական որինակը՝ «Հրապաշարի ծախսի մոտավոր հաշիվը», հավելված № 9):

3. ԿՐԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

86. ԿՐԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ: Յուրաքանչյուր մարտկոց, իբրև կանոն, պետք է ունենա. ա) պատասխանատու կրակային շերտ կամ ուղղություն, բ) լրացուցիչ սեկտոր:

Պատասխանատու շերտերը բաշխվում են նայած՝ ա) ուղղությունների կարևորությանը, բ) հրանոթների սիստեմին և գ) դիտողության պայմաններին: Բաժնյակների (խմբակների) հրամատարները բաշխում են պատասխանատու շերտերը, իբրև կանոն, տեղանքի վրա կողմորոշների միջոցով:

Լրացուցիչ սեկտորը նշանակվում է հարևան մարտ-

կոցների հետ կրակային համագործակցությունն իրականացնելու համար հրաձգության գործոն հեռավորության սահմաններում:

Մարտկոցին կարելի յե տալ հատուկ ուղղություն՝ ա) խափանիչ կրակ ստեղծելու համար, բ) հարևան մարտկոցների համար մեռյալ տարածությունների ազդեցությունը վերացնելու համար (առանձին ամենակարևոր մասույցների վրա):

Հրետանական խմբակն ունի. ա) պատասխանատու կրակային շերտ, բ) լրացուցիչ կրակային սեկտորներ (շերտեր):

Մասնավորապես, ՀՍ յուրաքանչյուր խմբակի լրացուցիչ կրակային շերտը, իբրև կանոն, ամբողջովին կամ մասամբ ընկնում է հարևան խմբակի պատասխանատու կրակային շերտի հարևան մասի վրա:

87. ՊԵՏԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: 1) Դիվիզիայի (յերբեմն կորպուսի) հրետանու պետը.

ա) բաշխում է հրետանին ու հետևում է ոդային ու գործիական հետախուզությունների որգանների նպատակահարմար ոգտագործմանը.

բ) յեթե նրա ձեռքում միացված է ամբողջ հրետանին խմբակներին տալիս է պատասխանատու և լրացուցիչ կրակային շերտեր.

գ) յեթե նրա ստորադրության տակ մնում է հրետանու միայն մի մասը, նույնը կատարում է միայն այդ մասի վերաբերմամբ.

դ) համաձայնեցնում է իրեն չենթարկված ՀՍ հարևան խմբակների համագործակցությունը, ցույց տալով նրանց, թե վորտեղ է անհրաժեշտ լրացուցիչ կրակային շերտեր նշանակել և վորտեղ հատուկ ուղղություններ ստեղծել առաջին և յերկրորդ խմբակների առանձին մարտկոցների համար.

ե) սահմանում է իրեն յենթարկված հրետանու կրակային աշխատանքի կարգը և դեկուցում է դիվիզիայի (կորպուսի) հրամատարին ՀՍ խմբակի աշ-

խատանքի նպատակահարմար կարգի մասին ընդհանուր հրամանում հայտարարելու համար·

դ) մարտի ժամանակ, նայած պարագային, իրեն յենթարկված խմբակներին տալիս է ընթացիկ մարտական խնդիրներ և հետևում է, վոր հրետանու կրակային աշխատանքը մշտապես համապատասխանի հետևակի պահանջներին·

ե) յեթե, առանց ամբողջ հրետանին իր ստորադրության տակ միացնելու, նա չի կարողանում իր ուժերով առանձին խնդիրներ լուծել, դիվիզիայի հրամատարի անունից հաղորդում է հրաձիգ գնդերի հրամատարներին, վոր անհրաժեշտ է նրանց յենթարկված հրետանուն նշանակել այդ առանձին խնդիրները լուծելու համար· միաժամանակ նա ճիշտ ցույց է տալիս այդ խնդիրները լուծելու համար նշանակվելիք մարտկոցների թիվը (վորոշ դեպքերում նաև նրանց անունները), նրանց խնդիրները և կատարածելու կարգն ու ժամկետը:

2) Բաժնյակի (խմբակի և յենթախմբակի) հրամատարը·

ա) նշանակում է մարտկոցներին մարտական խընդիրները և ցույց է տալիս նպատակները, հետևելով, վոր մարտկոցների աշխատանքը մշտապես համապատասխանի հետևակի պահանջներին·

բ) տալիս է նրանց պատասխանատու կրակային շերտեր, լրացուցիչ սեկտորներ և հատուկ ուղղություններ·

գ) նշանակում է կրակ բանալու, վերականգնելու, իսկ յերբեմն էլ դադարեցնելու ժամանակն ու կարգը·

դ) ցուցումներ է տալիս կրակի թույլատրելի արագության և հրապաշարը ծախսելու մասին·

ե) վորոշ դեպքերում նշանակում է առանձին խընդիրների լուծման համար արկի տեսակը (օրինակ, քիմիական արկեր):

3) Մարտկոցի հրամատարը·

ա) Պատրաստում է մարտկոցը կրակ բանալու համար:

բ) կրակի համար հրաման է տալիս խնդիրներին համապատասխան·

գ) ինքնուրույն կերպով կրակը տեղափոխում է, յեթե նոր նպատակն ավելի կարևոր է համարում իրեն տրված մարտական խնդիրների լուծման և հետևակին օգնելու տեսակետից, նույնպես և մոտավոր ինքնապաշտպանության անհրաժեշտության դեպքերում:

ԳԼՈՒԽ VI

ՅԵՐԹ

88. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ: Նայած հակառակորդի հեռավորությանը, հրետանու տեղափոխությունների կազմակերպման իբրև հիմք ընդունվում են՝ կամ մշտական մարտական պատրաստության պահանջները, կամ անձնական և ձիական կազմի ուժերի պահպանումը:*

Հակառակորդից հեռու (2 օրագնացքից ավելի) յեղած ժամանակ, հրետանին կարող է շարժվել առանձին սյունով: Այդ դեպքում նրան ուղարկում են ավելի լավ ճանապարհով: Հակառակորդին մոտիկ տեղերում հրետանին գնում է զորական սյուների կազմի մեջ: ԳՀՈՀ-ի մասերը (մանավանդ մեքենական քարշ ունեցողները և մեծ հզորության հրետանու մասերը) կարող են նաև այս դեպքում շարժվել առանձին սյունով, վորի համար հատուկ պաշտպանակ է նշանակվում:

89. ՅԵՐԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ: *Հրետանու պետը, դիվիզիայի հրամատարից հիմնական ցուցումներ ստանալուց հետո, զեկուցում է նրան իր նկատառումները հրետանու բաշխման և հետախուզության ու հրետանային թիկունքի կազմակերպման մասին և ի զարգացումն դիվիզիայի հրամատարի հրամանի, հրետանու պետը տալիս է իր հրամանը, վորը պարունակում է.*

ա) շարժման նպատակն ու պարագան,

բ) դիվիզիայի խմբավորումը յերթի համար,
գ) հրետանու բաշխումը,
դ) ցուցումներ հետախուզության, կապի և պահպանության վերաբերյալ,
ե) ցուցումներ օդային պաշտպանության վերաբերյալ,
զ) պարկերի տեղերը և կապը նրանց հետ,
է) յելուստի ժամանակը,
ը) մեծ դադարի ժամանակն ու տեղը,
թ) հրետանու պետի տեղը:

Յեթե ժամանակ կա, հրետանու պետը հավաքում է ստորադաս հրամատարներին և անձամբ տեղեկացնում է նրանց առաջիկա յերթի կատարման մասին, յեթե անձամբ հավաքելու հնարավորություն չկա, ցուցումներ է տալիս հեռախոսով, հեռագրով կամ գրավոր կերպով:

Ամեն մի հնարավոր դեպքում տեղեկացումը պետք է նախորոք կատարել:

90. **ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ** պետք է համապատասխան լինի մարտի համար հրետանու նշած խմբավորմանը:

Յեթե մարտ է նախատեսվում, մի քանի սյուներով շարժվելիս, հրետանու մեծ մասը մտցվում է այն սյունի մեջ, վորը նշանակված է գլխավոր հարվածը հասցնելու համար: Յուրաքանչյուր սյան կազմի մեջ հրետանու բաշխումը կախված է մասնավոր պարագայից:

Առաջապահին տրվում է բավականին ուժեղ հրետանի: Հատկապես ցանկալի յե առաջապահի կազմի մեջ մտցնել հոբիցներ և հեռահար հրետանի:

Գլխավոր ուժերի հրետանին, սովորաբար, շարժվում է նրանց գլխին մոտ: Մարտական սնունդի ջոկերը՝ իրենց բաժնյակների մոտ: Առանձին գործող մարտկոցների համար առանձնացվում են մարտական սնունդի ողակներ: Պարկերը պետք է լինեն I և II կարգի դումակների միջև առանձին սյունով կամ գլխավոր ուժերի տոում, I կարգի դումակի յետևում:

91. **ՊԵՏԵՐԻ ՏԵՂԵՐԸ:** Դիվիզիայի հրետանու պետը և նրա շտաբը սովորաբար շարժվում են դիվիզիայի հրամատարի և շտաբի հետ, իսկ սյուների հրետանու պետերը՝ սյուների պետերի հետ:

Առաջապահի բաժնյակների և մարտկոցների հրամատարները գնում են իրենց մասերի հետ, իսկ յեթե յերթի ժամանակ հակառակորդի հետ ընդհարում է նախատեսվում՝ իրենց հեծալադեսքերի հետ միասին առաջապահի գլխում: Գլխավոր ուժերի բաժնյակների հրամատարները՝ իրենց մասերի հետ, կամ, պարագային նայած, գլխավոր ուժերի գլխում, կամ առաջապահի տոում:

92. **ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ:** Առաջապահի մարտկոցների առաջավոր հետախուզությունը շարժվում է յերթական ուղեկալի յետևից, իսկ գլխավոր ուժերի առաջավոր հետախուզությունը՝ պահապան մասի տոում: Առաջապահի հրետանու առաջավոր հետախուզության օրգանները օգտակար է լինում ուղարկել հետևակի հետախույզ մասերի հետ միասին 8–10 կլմ. առաջ:

Ճանապարհի ընտրությունն ու հետախուզությունը:

Շարժվելու ճանապարհի ընտրությունը հիմնական նշանակություն ունի: Իբրև կանոն, յերկու ճանապարհից, պետք է ընտրել վոչ թե ավելի կարճը, այլ ավելի հարմարը:

Մարտկոցների անարգել շարժումն ապահովվում է ճանապարհի հետախուզությամբ, վորը հանձնվում է հրետանու հեծելադեսքերին. սրանք ուղարկվում են հրետանու շարժման ճանապարհով գնալու համար: Յեթե ժամանակ կա, հրետանու շարժման համար նշած ճանապարհները պետք է հետազոտել նախորոք:

93. **ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԹԻ ՀԱՄԱՐ:** Յելուստից առաջ անձնական կազմը, իբրև կանոն, պետք է կերակուր ստանա, ձիերը պետք է կերակրած և ջրած լինեն: Մարդկանց և ձիերի վիճակը, հրանոթների նյութական մասը, մարտամթերքը,

զենքը, հագուստը, հանդերձանքի վիճակն ու հարդարումը և ձիերի պայտումը պետք է խնամքով ստուգել յելուստից անմիջապես առաջ:

Դասավորման տեղում պետք է վոչնչացնել, այն ամենը, ինչ վոր կարող է մատնել ռազմական գաղտնիքը:

94․ ԴՅՈՒՐԱՇԱՐԺՈՒԹՅՈՒՆ: *Գնդի և դիվիզիական հրետանին կարող է շարժվել քայլով, վարգով կամ փոփոխական քելքով: Արշավակի՝ կարճ հեռավորությունների վրա, յեթե անհրաժեշտ է: Կորպուսի և մեծ հզորության հրետանին (ձիաքարշ), իբրև կանոն, շարժվում է քայլով: Գիշերը հրետանին շարժվում է միմիայն քայլով:*

Զորական սյան կազմի մեջ հրետանու շարժման սովորական արագությունն է 4 կլմ․ մեկ ժամում․ մեկ որագնացքի նորմալ մեծությունն է 25–30 կլմ․:

95․ ԿԱՊ: *Բացի սյան միջի ընդհանուր կապից, հրետանու պետը հեծյալ կապ է սահմանում հրետանական մասերի միջև: Խաչմերուկների վրա և մանավանդ անտառում և գիշերը փարոսներ են դրվում:*

96․ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՔՈՂԱՐԿՈՒՄ: *Զորական սյան հրետանին ապահովվում է հետևակով և նրա յերթական պահպանությամբ: Յեթե հրետանական սյան խորությունը 1000 մետրից ավելի յե, նրան հատուկ պաշտպանակ կարելի յե տալ:*

Անմիջական պահպանության համար մարտկոցներից կարելի յե ուղարկել հեծելադետքեր դեպի յերկու կողմը:

Յուրաքանչյուր մարտկոցում, բացի հակողային պաշտպանության միջոցներից, կազմակերպվում է յերկնքի դիտողություն: Յերթի և կանգառումների ժամանակ լայն չափով գործադրվում է քողարկումը, լիովին ոգտագործելով տեղական առարկաները: Քողարկման միջոցները ժամանակին կիրառելուն հետևում են բոլոր հրամատարներն առանց բացառության:

97․ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ *հրետանական մասերը պետք է․*

ա) սերտ կապ ունենան քիմիական դիտողության պոստերի հետ․

բ) իմանան քիմիական տագնապի համար սահմանած ազդանշանը և ապահովեն դիտողությունն ու այդ ազդանշանով ժամանակին միջոցներ ձեռք առնելը:

գ) կազմակերպեն մարդկանց և ձիերի պաշտպանությունը ԹՆ–ից:

Յեթե քիմիական հարձակումն սպասվում է ոդից, այդ դեպքում զորամասերը պետք է կազմակերպեն անընդհատ ռդային–քիմիական դիտողություն:

98․ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՐԳԸ: *Հրետանին շարժվում է ճանապարհի՝ շարժման և քողարկման համար ավելի հարմար կողմով:*

Մասերի միջև հեռավորությունն է 20 մետր․ հատկապես դժվար տեղանքում շարժվելիս, հեռավորությունները կարող են ավելի լինել:

Յերթի ժամանակ թույլատրվում է գնալ ազատ, խոսել, ծխել, յերգել, ոձիքներն արձակել և գլխարկները վերցնել: Յեթե պարագան թույլ չի տալիս ծխել, յերգել և խոսել, այդ մասին հատուկ պատվեր է տրրվում: Ժամանակ առ ժամանակ ոգտակար է ձիերից իջնել և ձիերի կապը քաշել:

Յեթե վորևե մասը հեռանում է սյունից, նա պարտավոր է նախազգուշացնել այդ մասին նրա յետևից գնացող մասին:

Պատահական կանգառումների ժամանակ, յետևից գնացող մասերը և լծվածքները կից մոտենում են առջևից գնացող մասերի տոլին, իսկ շարժումը վերականգնելու ժամանակ վերցնում են պատշաճ հեռավորությունները:

Բնակավայրերի միջով և ջրի աղբյուրների (ջրհորների, աղբյուրների, գետակների և գետերի) մոտով անցնելիս, բոլոր աստիճանների պետերը միջոցներ են

ձեռք տանում, որպեսզի կարգը չխանգարվի և փոշու սյունից յետ չմնա:

Վերելքներ և վայրէջքներ: Երկար վերելքներում և վատ ճանապարհում համարներն իջնում են և գնում են վոտքով, ընդ վորում համարները տանում են ձեռքի ձիերը: Եթե անհրաժեշտ է, ձիերի մի մասը վերցնում են մի լծվածքից մյուսներն ուժեղացնելու համար: 5 զույգ ձիուց ավելի լծելը նպատակահարմար չէ:

Շատ ուղղորդ վերելքներում քարշակները տանում են առանձին-առանձին, իսկ հրանոթները և ամբարկղների վերջակուրծները քաշում բարձրացնում են պարաններով:

Ուղղորդ վարէջքներում առաջալուծքն ու միջնալուծքը լծից արձակում են. համարներն օգնում են արգելակել, պարանով պահելով հրանոթը կամ ամբարկղը յետևից:

Անցարաններ: Նավակամուրջներով ձիավորներն անցնում են յերկու-յերկու: Թույլ կամուրջներով ձիավորները և հորեկի ձիավարները վոտով են գնում: Բոլոր ձիերը տանում են կապը քաշած: Հրանոթներն ու սայլերը գնում են կամրջի մեջտեղով:

Անիվներն արգելակել, կամրջի վրա և նրա յելքի մոտ կանգառնելն արգելվում է: Հրամատարները դընում են իրենց մասերի գլխում: Կամրջի մյուս կողմում պետք է կանգնեն հրամատարական կազմի անձինք շարժման կարգին հետևելու համար:

Հունով անցնելիս, պետք է վաղորոք խնամքով հետախուզություն կատարել: Մասերի և առանձին լծվածքների միջև հեռավորություններն ավելացվում են նայած հոսանքի ուժին:

Կամրջանավերի կամ լաստանավերի վրայով անցնելիս, ձիերը մտցնում են մեկ-մեկ ու կանգնեցնում են մեջտեղում մի շարք, գլուխները դեպի զանազան կողմերը (մեկումեջ), կամ յերկու շարք գլուխները դեպի ներս:

Հրանոթները (սայլերը) կանգնեցնում են այնպես, վոր նավի բեռնավորումը համաչափ լինի: Անիվներն արգելակում են ու նրանց տակը սեպեր են դնում:

99. ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՐԺՎԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Շարժումը կատարվում է քայլով: Բոլոր ձիավորները ժամանակ առ ժամանակ իջնում են և վոտով են գնում. պետք է մշտապես ստուգել, արդյոք ճանապարհը կտրած տեղեր չկան: Ամբողջ հրամատարական կազմից պահանջվում է հատուկ ուշադրություն և կարգապահություն:

100. ԴԱԴԱՐՔՆԵՐ: Հրետանին փոքր դադարքների համար կանգ է առնում սյան մյուս զորամասերի հետ միաժամանակ: Առաջին փոքր դադարքի ժամանակ պետք է կարգի բերել հանդերձանքն ու վոտնամանները և ստուգել թամքվածքն ու լծվածքը:

Հրանոթներն ու ամբարկղները, սովորաբար, ճանապարհից դուրս չեն գալիս: Բարեհաջող տեղանքում լծվածքները տեղավորվում են ստվերում:

Մեծ դադարքի տեղն ընտրվում է ջրի մոտ և օդային դիտողությունից ծածկված տեղում:

Մեծ դադարքի ժամանակ մարդկանց տաք կերակուր են տալիս, ձիերը ջրում ու կերակրում են: Խնամքով զննություն է կատարվում հանդերձանքի, թամքվածքի, լծվածքի ու պայտման: Հրանոթների նյութական մասի զննություն է կատարվում:

101. ՀՐԵՏԱՆՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՍՅՈՒՆՈՎ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Գնդի և դիվիզիական հրետանու շարժման արագությունն է 5–8 կմ (ավելացրած արագությունների ժամանակ վոտավորները նստում են սայլերի վրա), կորպուսի հրետանու արագությունն է 4–5 կմ. մեկ ժամում: Միջին օրագնացքն է 25–30 կմ, արագացրած օրագնացքն՝ 40 կմ.: Եթե անհրաժեշտ է, կարելի յե և՛ ավելի մեծ լարվածություն պահանջել. սակայն օրագնացքի հետագա ավելացումը ծանր կերպով անդրադառնում է մարդկանց և մանավանդ ձիերի վիճակի վրա:

Մեքենական քարշ ունեցող հրետանին տեղափոխվում է 7–8 կմ․ արագությամբ, փոքր հեռավորությունները՝ մինչև 12 կմ․ մեկ ժամում։ Միջին օրագնացքը 60 կիլոմետր է, իսկ ամենամեծը՝ 100 կմ․։ Մեկ ժամում 8 կմ․ ավելի մեծ արագությունն ուժեղ կերպով անդրադառնում է նյութական մասի վիճակի վրա։ Ավելի օգտակար է ավելացնել շարժման ժամերի թիվը։

Եթե ճանապարհների ցանցը բավարար է, հրետանին շարժվում է մի քանի սյուներով, որոնք կազմում են միատեսակ շարժունություն ունեցող մասերից։

Ավագ հրետանական պետը սահմանում է ճիշտ յերթուղիները, նշանակում է մեծ դադարքները և ձեռք է առնում բոլոր միջոցները սյուների շարժումը հավասարեցնելու համար։

ԳԼՈՒԽ VII

ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂՈՒՄ

102․ ՊԱՀԱՆՋՆԵՐ։ Հրետանու հանդստի համար դասավորման տեղը և նրա դասավորման յեղանակը պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին․

ա) թաքնվածությանը,

բ) անակնկալ հարձակումից ապահովությանը,

գ) մարտակարգի անցնելու արագությանն ու պարզությանը,

դ) յերթի համար հրետանին ընդհանուր սյունի մեջ քաշելու հարմարությանը։

103․ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ։ Հրետանին, տեղավորվելով այլ տեսակի զորքերի շարքերում, այնպիսի շրջաններ է գրավում, որոնք համապատասխանում են նրա քաշվմանը հետագա յերթի հա-

մար․ կամ առաջիկա մարտական գործողությունների պլանին։

Հրանոթները, ռմբարկղները, սայլերը, անձնական և ձիական կազմը տեղավորվում են թաքուն, լիովին օգտագործելով քողարկման բոլոր միջոցները։ Հրանոթների, ռմբարկղների և սայլերի գծային դասավորությունն արգելվում է։

Մասերը տեղավորվում են տեղ հասնելուն պես առանց մյուսներին սպասելու։

104․ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։ Ընդհանուր զորական պետի հրամանին համապատասխան, որը, սովորաբար, տրվում է մեծ դադարքի ժամանակ, հրետանու պետը հենց այնտեղ էլ տալիս է իր հրամանը, որի մեջ ցույց է տալիս։

1) պարագան,

2) առաջիկա տեղավորման շրջանները կամ կետերը,

3) խնդիրները, որ տրվում են պահապան մասերին,

4) ցուցումներ հակառակորդի հարձակման և տագնապի դեպքում,

5) կապը,

6) հայթայթումը (կարգը, գծերը, կետերը),

7) մասերի յելուստի համար պատրաստ լինելու ժամը։

Սյուների հրետանու պետերը ցույց են տալիս միայն հրետանու տեղավորման շրջանները։ Մասերի դասավորման տեղերը մանրամասն ցույց են տալիս բաժնյակների և մարտկոցների հրամատարները։

105․ ՊԱՀԱՊԱՆ ՄԱՍԵՐԻ ՄԵՋ ՀՐԵՏԱՆՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ սահմանափակվում է իսկական անհրաժեշտությամբ։

Որապահ մասի կազմի մեջ հրետանու նշանակումը պարտադիր է։

Պահպանության կազմի մեջ յեղած ժամանակ,

մարտկոցները, դիրքում տեղավորվելով, պահպանում են լիակատար մարտական պատրաստությունը: Յեթե մարտկոցները դիրքում չեն տեղավորվում, համենայն դեպս դիրքը պետք է նախօրոք ընտրել. պետք է նշել դիտակետերը, կրակային դիրքերը և դեպի այդ դիրքերը տանող ճանապարհները: Ձիերի թամբերը չեն վերցնում, ձիասարքերը չեն հանում: Մարդիկ իրենց վրայից զենքը չեն հանում և իրենց տեղերից չեն հեռանում:

106. ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ: Հրետանին տեղավորվում է հետևակի պաշտպանության տակ, վորը գրավում է բնակավայրի հակառակորդին ավելի մոտիկ կողմը:

Բնակարաններն ընտրում են ջրի մոտ: Հրանոթները, ամբարկղները և սայլերը դնում են բակերում կամ բակերից դուրս, բայց միշտ օդային դիտողությունից ծածկված: Մարդիկ և ձիերը տեղավորվում են մոտիկ բակերում: Ցանկալի յե ձիերի համար ծածկած շենքեր ունենալ:

Պահակի զետեղարանը և տագնապի դեպքում հավաքատեղերը պետք է թույլ տան արագ շարժվելն ու յելուստը:

Մարտական սնունդի ջոկերը տեղավորվում են իրենց բաժնյակների մոտ. բաժնյակների կազմից անջատված մարտկոցների համար նշանակվում են սնունդի ողակներ:

Ջուր խմելու համար նշանակվում են վորոշ ջրհորներ. մյուսներից ջուր խմելն արգելվում է: Փորում են արտաքնոցի համար փոսիկներ. այլ տեղերի ոգտագործումը միանգամայն արգելվում է: Յելուստից առաջ փոսիկները պետք է հողով լցնել ծածկել: Անպետք բաները և սատկած անասունները պետք է նախապես ախտահանել և հողի տակ թաղել.

107. ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴՈՒՐՍ: Մեկ տեղում, իբրև կանոն թույլատրվում է կենտրո-

նացնել մեկ բաժնյակից վոչ ավելի: Հիմնական պահանջներն են՝ թաքուն տեղավորման հնարավորությունը և մոտերքում լավ խմելու ջրի առկայությունը բավարար քանակությամբ: Տեղը պետք է լինի ընդարձակ, գետինը՝ չոր, բայց վոչ ավազուտ: Ամենալավ տեղը նոսր անտառն է:

Ճանապարհներին անմիջապես մոտիկ տեղերում դասավորությունը ցանկալի չէ:

Հրանոթները, ամբարկղները, սայլերը պետք է տեղավորել ծածկված, թփերի մեջ, տեղանքի ծալքերում, ծառերի միջև կամ անտառի բոլորքում: Դասավորման ժամանակ կանոնավոր գծագրությունները արգելվում են:

Մարդիկ տեղավորվում են իրենց հրանոթների (սայլերի) մոտ: Ձիերը տեղավորում են ծածկված, առավելապես ծառերի մոտ: Ձիակապարանների ձոպանները կապում են այնպիսի հեռավորության վրա, վոր ձիերի շարքերի միջև ազատ անցքեր մնան:

Լծասարքը պետք է դնել քարշակների և ամբարկղների վրա, բայց յերբեք չի կարելի գետնի վրա դնել: Ձիու ծածկոցները, յեթե ձիերի վրա չեն դցած, կարելի յե գետնի վրա դնել:

108. ԲՆԱԿԱՐԱՆՈՐԴՆԵՐՆ ուղարկվում են առնըվազն յերկու ձիավոր ամեն մի մարտկոցից:

Բնակավայրերից դուրս դասավորման տեղ ընտրելու համար անպայման նշանակվում են միջին հրամատարական կազմի անձինք:

Յուրաքանչյուր սյան մարտկոցի բնակարանորդները, սյան հրետանու պետի կարգադրությամբ միացվում են բաժնյակներից մեկի ավագ բնակարանորդի տրամադրության տակ:

Բնակարանորդները շարժվում են առաջապահի առաջավոր հետախուզության հետ կամ նախօրոք առաջ են ուղարկվում սյան մյուս մասերի բնակարանորդների հետ միասին: Ավագ հրետանական բնակարանորդը յեն-

թարկվում է այսն ավագ (ընդհանուր զորական) բնակարանորդին։

Դասավորման տեղերը նշանակելու կարգը (հերթը)․

1) նյութական մասը և զումակը,

2) պահակի տեղավորումը և հավաքի կետերը,

3) մարդկանց և ձիերի տեղավորումը,

4) շտաբները և հրամատարական կազմի բնակարանները։

Տները բաշխելով, բնակարանորդները զննում են բնակարաններն ու ախոռները և, յեթե կարիք կա, հրամայում են տնատերերին կարգի բերել այն։

Բնակարանորդներին արգելվում է պատերի, ցանկապատերի և դռների վրա վորևէ մակագրեր և նշաններ անել, վորոնք կարող են ռազմական գաղտնիքը մատնել։

Աշխատանքը վերջացնելուց հետո, բնակարանորդները հանդիպում են իրենց մասերին ու նրանց տեղերն են տանում։

Գ Լ Ո Ւ Խ VIII

ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

I. ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ

109․ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ։ Հրետանին մարտում տեղավորվում է զորքերի մյուս տեսակների հետ միասին։

Հրետանու տեղավորումը զորական միավորության մարտակարգի մեջ պետք է ապահովի․

1) դրված խնդրին հասնելը․

2) զորքերի տեսակների միջև անընդհատ և ամենասերտ կապի և համագործակցության հնարավորությունը մարտի ամբողջ ընթացքում․

3) հակառակորդի վերերկրյա և օդային դիտողությունից ծածկվածությունը։

110․ ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ։ Հրետանու մարտակարգը կարող է համապատասխան չլինել հետևակի մարտակարգին։ Սակայն հրետանական դիրքերը, սատարության յենթակա հետևակի դասավորման շրջանից դուրս, գրավելու ձգտելը թույլատրելի յե միայն այն դեպքում, յերբ կա ամուր կապ, վորն ապահովում է համագործակցությունը մարտի ամբողջ ընթացքում։ Այդ պայմանի բացակայության դեպքում, հրետանու և սատարության յենթակա հետևակի միասին տեղավորմանը պետք է առավելություն տալ հանդեպ թեվային գծերի ձեռնտու կողմերին։

Հրետանու թևային կրակը հակառակորդի համար մեծ մասամբ անակնկալ է լինում և մի քանի անգամ ավելի ուժեղ է քան ճակատային կրակը միևնույն թվով հրանոթներ կրակելու ժամանակ։

Հրետանական կրակով, գրոհվող կետի կողահարումը, յեթե լավ դիտակետ կա, գրոհող հետևակին թույլ է տալիս մոտենալ (60–80 մետ. վրա) հակառակորդին, առանց սեփական արկերի հարվածի տակ ընկնելու վտանգի։ Ճակատային կրակի ժամանակ, վոր վարում են իր հետևակի գլխի վրայով, հետևակի մոտեցումը հակառակորդին 200 մետրից ավելի մոտ, արդեն վտանգավոր է դառնում։

Ամենամոտ մատույցների պաշտպանության ժամանակ, իր հետևակի ոգնությանը կարելի յե հասնել հրետանու կողահարող կրակով։ Գրոհի յետ մղելը առանձնապես հեռավորությունների վրա հնարավոր է այն ժամանակ, յերբ հրետանին տեղավորված է հետևակի մարտակարգի միջանցներում կամ թևերում (սանդղաձև դեպի յետ)․ յերբ հրետանին տեղավորված է հետևակի ծոծրակի դիմաց, ճակատային հրետանական կրակ վարելը անհնարին է դառնում։

Յեթե մարտկոցների և նրանց կողմից սատարություն ստացող հետևակ ստորաբաժանումների միջև հուսալի կապ կա, մարտկոցների ցրված սանդղաձև

դասավորումը լայն ճակատի վրա, առանց նրանց գնդակոծը սահմանափակելու, ամենից լավ է ապահովում հետևակի ուղեկցությունը և կենտրոնացրած խաչաձև կրակի իրականացումը (*հրետանական գործոն կրակի սահմաններում*):

Եթե դեպի ձախ թևը կենտրոնացրած կրակ է նախատեսվում, ձեռնտու է մարտկոցների դասավորումը սանդղաձև աջից (աջաթևյան մարտկոցն առջևում) և ընդհակառակը՝ դեպի աջ թևը կրակի կենտրոնացման համար:

2. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ

111. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ: Մարտակարգի բացազատվելով, հրետանին դասավորվում է* հրետանական դիրքում, *որ պետք է բավարարի* հետևյալ պահանջներին:

ա) թույլ տալ մարտական խնդրի կատարումը, ապահովելով հուսալի կապը հետևակի և հրետանու միջև, նույնպես և հրետանու դիրքի առանձին տարրերի (էլեմենտների) միջև.

բ) ծածկել հրետանին վերերկրյա և օդային դիտողությունից.

գ) ծածկել անձնական ու ձիական կազմը և նյութական մասը հարվածվելուց, ապահովելով հանգիստ աշխատանքը.

դ) թույլ տալ մարտակարգից շարժման համար կարգի արագ անցնելը:

112. *ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՏԱՐՐԵՐՆ ԵՆ. ա) դիտակետերը, որ հարմար են մարտադաշտը դիտելու և իր հրետանու կրակը ճշտելու համար.*

բ) կրակային դիրքերը—հրանոթները կանգնեցնելու տեղերը.

գ) քարշի ջոկերի և մարտական սնունդի ջոկերի դասավորման տեղերը:

Հրետանական դիրքի բոլոր տարրերը քողարկվում

են *վերերկրյա և օդային դիտողությունից: Դիրքում տարվող այն աշխատանքները, որ տեղի չեն ունենում դիրքը գրավելուց առաջ և դիրքը գրավելու ժամանակ, կատարվում են* թաքուն *և առավելապես գիշեր ժամանակ:*

Դիրքերի առանձին տարրերը պետք է միացված լինեն միմյանց հետ ծածկված ու հարմար հաղորդակցության ուղիներով և հուսալի կերպով *կապված լինեն իրար հետ: Կապի միջոցները միշտ ջուխտակացվում են: Լարային կապի գծերը գցվում են թաքուն և ծածկվում են հակառակորդի կրակից և դիտողությունից:*

113. *ԴԻՏԱԿԵՏԵՐԸ պետք է հակառակորդի, մարտադաշտի և իր զորքերի ամենամեծ* տեսածիրը *տան,* հնարավորություն *տան այնտեղ աշխատելու կրակը դիտելու և ճշտելու համար, ծածկված լինեն վերերկրյա և օդային դիտողությունից: Նրանց տեղը պետք է այնպես ընտրել, որ հակառակորդը չկարողանա հեշտությամբ փորձնական հրաձգություն կատարել նրանց դեմ, և որ դիտակետին մոտենալու ճանապարհները նույնպես և կապի գծերը չդիտվեն հակառակորդի կողմից:*

Դիտակետերը բաժանվում են.

ա) հրամանատարական *(բաժնյակի, մարտկոցի),*

բ) լրացուցիչ՝ *առաջավոր, կողքի, պահեստի և կեղծ:*

Հրամանատարական դիտակետը ծառայում է մարտկոցի (բաժնյակի) հրամանատարին՝ մարտկոցի (բաժնյակի) կրակն անմիջապես ղեկավարելու և հակառակորդին, մարտադաշտը և իր զորքերին դիտելու համար:

Հրամանատարական դիտակետը պետք է միշտ կապված լինի *կրակային դիրքի հետ, այն պետի հրամանատարական դիտակետի հետ, որին մարտկոցը (բաժնյակը) ենթարկվում է և այն հետևակ մասի (ստորաբաժանման) հրամանատարի հետ, որին տվյալ մարտկոցը (բաժնյակը) օգնում է:*

Հրամանատարի կետ *կոչվում է այն տեղը, որը գրավել է ավագ հրետանական պետը և նրա շտաբը նրան*

յնենթարկվող հրետանու մարտական գործողությունները ղեկավարելու համար:

Լրացուցիչ դիտակետեր.

ա) առաջավոր դիտակետը ծառայում է հետևակի առաջավոր մասերի հետ ավելի սերտ կապ պահպանելու և մոտավոր նպատակների դեմ կրակը ճշտելու համար. հարձակման ժամանակ այդ կետը հաճախ հրամանատարական կետ է դառնում. նա միշտ կապված է հրամանատարական դիտակետի հետ.

բ) կողքի դիտակետերը գրավում են այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում հեշտացնել փորձնական հրաձգությունը և հրաձգությունը այն նպատակների դեմ, որոնք հրամանատարական և առաջավոր դիտակետերից լավ չեն երևում, գիշերային հրաձգությունը դիտելու և նպատակների տեղագրական հատումների համար.

գ) պահեստի դիտակետերը սարքավորվում են նախորոք կամ միայն ընտրվում են, եթե հրետանու տեղափոխություն է նախատեսվում, նույնպես և այն դեպքերի համար, երբ դիտակետում մնալը կրակով հարվածելիության կամ ԹՆ պատճառով դժվարանում է:

դ) կեղծ դիտակետերն ընտրվում և սարքավորվում են հակառակորդին մոլորության մեջ գցելու համար. սակայն նրանց արտաքին տեսքը չպետք է սուր կերպով աչքի ընկնի և իսկական դիտակետերից շատ տարբերվի:

Բոլոր դիտակետերը տեղավորվում և կապվում են միմյանց հետ այնպես, որ դիտողության և կրակի ղեկավարության անընդհատությունն ապահովված լինի:

Առաջին հենց հնարավոր դեպքում պետք է դիտակետի համար հակառակորդի կրակից և ԹՆ-ից ծածկարան պատրաստել:

114. ԿՐԱԿԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԸ լինում են ծածկված և բաց:

Ծածկված դիրքը թաքցնում է մարտկոցը հակա-

ռակորդի վերերկրյա և օդային դիտողությունից. նա պետք է թաքցնի ոչ միայն նյութական մասը, այլ և ձիգերի փայլը, ծուխը և փոշին:

Բաց դիրքը գրավում են բացառապես անհրաժեշտության դեպքում, երբ պահանջվում է անմիջապես կրակ բանալ, կամ ինքնապաշտպանության համար:

Մարտկոցների կրակային դիրքը պետք է թույլ տա.

ա) հրաձգություն կատարել բոլոր հեռակայությունների վրա՝ վերջնակետ հեռավորներից մինչև ամենամոտ հեռակայությունները ամենափոքր նշանառով և, ըստ հնարավորին, լայն գնդակոծ ունենալ ճակատի յերկայնությամբ, առանց չգնդակոծվող (մեռյալ) տարածություններ և մատույցներ թողնելու.

բ) Կրակը տեղափոխել հարևան տեղամասերի և թևերի վրա, առանց հրանոթներն իրենց կանգնելու տեղերից շարժելու.

գ) գնդակոծել իր հետևակի կողմից գրաված ամբողջ ներքին ռայոնը, առանց թիկունք տեղափոխվելու և նոր դիրք գրավելու:

Կրակային դիրքի մոտերքում չպետք է լինեն՝ աչքի ընկնող տեղական առարկաներ, որոնք հակառակորդի համար հեշտացնում են կողմորոշումը, և ժայռոտ զառիվայրներ, որոնք քարի կտորներով հարվածելու վտանգ են սպառնում: Գետինը պետք է լինի պինդ, բայց ոչ թե քարոտ:

Իրար կողքին տեղավորված մարտկոցների կրակային դիրքերը պետք է շարաններ կազմեն, որպեսզի, մեկ մարտկոցի դիրք փոխելու ժամանակ, մյուս մարտկոցը շարունակի կրակ վարել առաջին մարտկոցի նպատակների դեմ:

Առաջին հերթին կրակային դիրք ընտրելու առավելությունը վերապահվում է թնդանոթային մարտկոցներին:

Եթե մարտի զարգացում է նախատեսվում և հիմ-

նական դիրքերի ուժեղ գնդակոծման դեպքի համար, պետք է պահեստի կրակային դիրքեր ընտրել՝ հիմնական դիրքերի առջևում, կողքին կամ յետևում: Պահեստի դիրքերից կրակ վարելու բոլոր տվյալները պետք է նախօրոք պատրաստել: Առանց ծայրահեղ անհրաժեշտության արգելվում է պահեստի կրակային դիրքերն անցնել:

Մեկ շրջանում յերկարատև մարտական աշխատանքի ժամանակ, մանավանդ դիրքային պատերազմի պայմաններում, օգտակար է կեղծ դիրքեր պատրաստել: Կեղծ դիրքերում պետք է բռնկումներ սարքել կամ այնտեղ պարբերաբար առանձին հրանոթներ դնել, վորպեսզի, նրանցով կրակ բանալով, հակառակորդին մոլորության մեջ գցել:

Բռնկում տվող կեղծ մարտկոցների կառուցումը հատկապես անհրաժեշտ է, յերբ մարտկոցները կրակում են գիշեր ժամանակ առանց բոցամարիչի:

115. ՔԱՐՇԻ ՋՈԿԵՐԻ ՏԵՂԵՐՆ ընտրվում են թաքուն և կրակային դիրքերի մոտերքում այնպես, վոր քարշակները մարտկոցին մոտեցնելը չդանդաղեցնի մարտկոցի նոր դիրք անցնելը:

Քարշակները դասավորվում են ապակենտրոնացրած ձևով, ամենից հաճախ սանդղաձև, մարտկոցի կրակային դիրքի թևերից դուրս:

Քարշակների տեղավորությունը չպետք է հարվածվի կրակային դիրքերին ուղղված հակառակորդի կրակով:

Քարշակները գազավտանգավոր տեղերում դասավորելն արգելվում է:

Քարշակների տեղերը պետք է հուսալի կերպով ծածկված լինեն հակառակորդի վոչ միայն վերերկրյա, այլ և օդային դիտողությունից:

Քարշի ջոկերը պետք է հուսալի կերպով կապված լինեն կրակային դիրքի հետ տեսողական, կենդանի և տեխնիկական կապով:

116. ՍՆՈՒՆԴԻ ՋՈԿԵՐԸ, իբրև կանոն, տեղավորվում են հակառակորդի գործոն հրետանական կրակի վոլորտից դուրս և օդային դիտողությունից ծածկված, բայց ըստ հնարավորին, մարտկոցների կրակային դիրքերից 3 կմ. վոչ հեռու:

Սնունդի ջոկերը պետք է կապված լինեն կրակային դիրքերի հետ ծածկված ուղիներով վոչ միայն վերերկրյա, այլ և, ըստ հնարավորին, օդային դիտողությունից:

Մարտկոցներին սպասարկելու համար սնունդի ջոկից զատված օղակները կապվում են իրենց մարտկոցների հետ սնունդի ջոկի հրամատարի ցուցումի համաձայն և աշխատանք են տանում սույն կանոնագրքի XVI գլխում բացատրած հիմունքներով:

117. ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ: Հրետանու մարտակարգըն ապահովվում է հակառակորդի անմիջական դիտողությունից հետևակի ամբողջ մարտակարգով:

Մոտավոր սեփական պահպանության համար մարտկոցներից առանձին դիտողներ են դրվում:

Օդը դիտելու համար նշանակվում են օդա-քիմիական դիտողության պոստեր:

Օդա-քիմիական պաշտպանության և օդային նպատակների վրա հրաձգության համար կիրառվում են հակասավառնակային (զենիթային) հրետանական և գնդացրային մասեր կամ հատուկ նշանակվում են 76 մմ թնդանոթների մարտկոցներ հատուկ հակասավառնակային հաստարաններից հրաձգության համար:

118. ԴԻՐՔ ԳՐԱՎԵԼՆ ՈՒ ՓՈԽԵԼԸ հրետանու կողմից կատարվում է մարտի զարգացման հետ զուգընթացաբար:

Հրետանու յերթական սյուներից կամ նրա նախնական կանգառման տեղերից կրակային դիրքերն անցնելը կատարվում է, ըստ հնարավորին արագ, ծածկված ճանապարհներով, վորոնք պետք է նախապես հետազոտված լինեն մարտկոցների հրամատարների

կարգադրությամբ ուղարկված հեծելազնտակների կողմից: Կրակային դիրքի գրավումը կատարվում է թաքուն, քողարկման բոլոր միջոցները կիրառելով: Դիրքին մոտենալն ու գրավելը օգտակար է գիշերը կատարել, յեթե ժամանակն ու պարագան այդ թույլ են տալիս:

Հրետանական դիրքերը փոխելը մարտում պահանջում է՝ խնամքով նախամտածված պլան, նոր դիտակետերի ու դիրքերի և հին դիրքերից դեպի նորերը տանող թաքուն ճանապարհների նախապես հետախուզություն, նույնպես և մարտկոցի ամբողջ անձնական կազմի մանրամասն ծանոթություն մարտի նշած պլանի հետ:

Լավ կազմակերպությունը, հաջող ընտրած չարժման ճանապարհը և տեղափոխությունների արագ կատարումը գլխավոր պայմաններն են:

Դիրքերը փոխելիս, առաջին հերթին պետք է գրավել դիտակետերը և կապ հաստատել նրանց և նշած նոր կրակային դիրքի հետ: Յեթե անհրաժեշտ է տեղափոխություն կատարել, առանց մարտկոցի կրակը դադարեցնելու, այդ դեպքում պետք է. 1) նոր գրավվող դիտակետերը կապել թե նոր (նշած) և թե հին (գրաված) կրակային դիրքի հետ և այդ դիտակետերից կրակի ճշտում կատարելը. 2) հրանոթները տեղափոխվում են մեկ-մեկ և նոր դիրքը գրավելուց հետո, տեղափոխված հրանոթները միանգամից կրակ են բաց անում:

3. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ[1])

119. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՆ ապահովում է հրետանու համար ժամանակին մարտի բռնվելը և նպատակահարմար մարտական գործադրությունը:

1) Հետախուզության ծառայության տեխնիկան վորոշվում է հատուկ «Հրահանգով»:

Հրետանական հետախուզության խնդիրն է. ապահովել հրետանու անարգել և թաքուն շարժումն ու տեղավորումը, հրետանու համար դիտակետեր և կրակային դիրքեր գտնելն ու հետազոտությունը, հակառակորդի և տեղանքի մասին տեղեկություններ հավաքելը, իր զորքերի գործողությունների և իր հրետանու հրաձգության դիտողությունը:

Հետախուզությունը կատարվում է ակտիվ և անընդհատ կերպով մարտի ամբողջ ընթացքում: Հետախուզության օրգանները հարկավոր տեղեկություններն ստանալու համար օգտագործում են բոլոր հնարավորություններն ու յեղանակները, հնարքություն և նախաձեռնություն ցուցահանելով, առանց վերևից ցուցումներ սպասելու:

Հետախուզությունը թաքուն է կատարվում, վորպեսզի հրետանու կրակ բանալու պատրաստությունը չհայտաբերել և հակառակորդի կրակը հրետանական դիտակետերի վրա չգրավել:

Հետախուզությունը պետք է ժամանակին լինի. հետախուզության տեղեկությունները պետք է արագ տեղ հասցնել վաղորոք լավ հաստատված կապի միջոցով:

Հետախուզության միջոցով ստացված տեղեկությունները պետք է ճշգրիտ լինեն:

120. ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ կախված են առկա միջոցներից և պարագայի պայմաններից: Հետախուզության կազմակերպությունը պետք է համապատասխանի տակտիկական պարագային և չի կարող շաբլոնական ձևով կատարվել:

Հետախուզությունը կատարվում է հրետանու հատուկ հետախուզական օրգանների և հրետանու հրամատարի կողմից հետևակի կամ հեծելազորի կողմից ապահովված շրջանում:

Մեծ մասամբ հրետանական հետախուզությունը կատարվում է հետևակի հետախուզության հետ միասին կամ հետևակ պահպանության պաշտպանության տակ։

121. ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Գործադրելու միջոցների նկատմամբ հրետանական հետախուզությունը բաժանվում է վերերկրյա և օդային հետախուզությունների։

Առաջինը կատարում են հրետանական հսկելադետքերը, հրետանական պոստերը և գործիական հետախուզության օրգանները՝ տեղագրական, օդերևութաբանական, լուսաչափական, ձայնաչափական։

Երկրորդը կատարում են սավառնակները և օդապարիկները։

Վերերկրյա դիտակետերն ընդունակ են ամենաճիշտ տեղեկությունները հավաքել, որ սահմանափակված են տեսողության դաշտի սահմաններով։

Սավառնակի հետախուզությունը թույլ է տալիս հեռու և ծածկված նպատակների դիտողությունը։ Սավառնակից կատարվող դիտողությունը խոշոր չափով կախված է մթնոլորտային պայմաններից և չի կարող անընդհատ կատարվել։ Սավառնակից լուսանկարելու հնարավորությունը մեծ նշանակություն ունի. լուսանկարների ուսումնասիրությունը արժեքավոր հետևանքներ է տալիս։

Սավառնակների հետ կապն իրականացվում է ռադիոյի, հրթիռների, վիմպելների ու գետնի վրա փռած քաթանների միջոցով։ Լավ կազմակերպված կապի ժամանակ, սավառնակի վրայի դիտողն ընդունակ է հրաձգությունը ճշտել և նպատակները ցույց տալ։

Օդապարիկը (կապովի) իր մեջ միացնում է վերերկրյա կետերի ու սավառնակների դրական հատկությունների մի մասը։ Տեսողական դաշտի շառավիղը նրանից մոտ 20 կիլոմետր է։ Օդապարիկը շատ է ենթարկվում մթնոլորտի ազդեցության, բավականին

կայուն չէ և դիտողության գիծը շեղակի է, նրա մեծ չափերը նրան շատ խոցելի են դարձնում, մանավանդ օդից։ Վերելքի վերջնակետ բարձրությունը մեկ դիտող ունենալով 1·700 մետր է, երկու դիտող ունենալով 1·200 մետր է. դիտողության համար ամենաձեռնտու բարձրությունը 800–ից մինչև 1·200 մետր է։ Ճակատի գծից հեռավորությունն է 6–ից մինչև 12 կմ. օդապարիկը կապվում է գետնի հետ հեռախոսով։

122. ԱՌԱՋԱՎՈՐ ԵՎ ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ։ Եթե բացագատում է նախատեսնվում, երթական շարժման սկզբի հետ միաժամանակ կազմակերպվում է առաջավոր հրետանական հետախուզություն։ Այդ հետախուզությունն իրականացվում է հատկապես ուղարկված առաջավոր հսկելադետքերով։

Առաջավոր հսկելադետքերն ուղարկվում են բաժնյակների և մարտկոցների հրամատարների կողմից նրանց ենթարկվող մասերի հավանական օգտագործման ուղղություններով։

Հսկելադետքերի շարժման ուղղություններն ու շերտերը բաշխվում են ավագ հրետանական պետի կողմից հրետանու բացագատման նշած պլանին համապատասխան։

Առաջավոր հետախուզության հսկելադետքերի զեկուցագրերն ուղարկվում են այդ հսկելադետքերն ուղարկող հրամատարներին։ Զեկուցագրեր ուղարկելու կարգը ցույց է տրվում նախորոք։

Մարտկոցների ու բաժնյակների հրամատարները հրամատարական հետախուզություն են կատարում դուրս գալով դեպի առաջ իրենց հրամատարական հսկելադետքերի հետ միասին։

Հրամատարական և առաջավոր հետախուզությունները միանում են, եթե պահապան մասի հրետանու մարտկոցի (բաժնյակի) հրամատարը դուրս է եկել դեպի առաջ երթական ուղեկալների գծի վրա։ Այդ տեղի է ունենում դիմամարտի պայմաններում՝ միշտ, հարձակ-

ման ժամանակ՝ յերբեմն, յերբ հրետանու բացազատման արագությունը վճռական նշանակություն է ունենում։

123. ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ։ Մարտկոցների շարժման ճանապարհով ուղարկվող հեծելադետքերը ճանապարհի հետախուզության հատուկ խնդիր են ստանում։ Այդ հեծելադետքերը նախազգուշացնում են նրանց ուղարկող պետերին ճանապարհի վրա հանդիպող արգելքների մասին. իրենց ուժերով նրանց վերացնելու միջոցներ են ձեռք առնում կամ դիմում են մյուս մասերի պետերի կազմին աջակցություն ցույց տալու, կամ ճանապարհներ են փնտրում արգելքի շուրջն անցնելու համար։

Նրանք հետազոտում են կամուրջների, հուների, խրուտ տեղերի դրությունը, վորոշում են կայուն ԹՆ վարակված շրջանների սահմաններն ու ճանապարհներ են գտնում այդ շրջանների շուրջն անցնելու համար։

124. ԱՌԱՋԱՎՈՐ ՀԵԾԵԼԱԴԵՏՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ։ Առաջավոր հեծելադետքի պետը գնահատում է հեծելադետքի շարժման ճանապարհի յերկու կողմն ընկած տեղանքը, քարտեզի վրա նշանակելով հարմար դիրքերի շրջաններն ու ձեռնտու դիտակետերը։

Նա անընդհատ կապ է պահպանում յերթական պահպանության ամենամոտ որգանների հետ։ Յեթե առջևում հետևակ հետախուզության հետ շարժվում են հրետանական հետախուզության որգանները, այդ դեպքում նրանց զեկուցագրերն ընդունել և ըստ պատկանելույն ուղարկելն ամեն մի առաջավոր հրետանական հեծելադետքի պարտականությունն է հանդիսանում։

Կանգ առած հակառակորդի վրա հարձակում կատարելու ժամանակ, առաջավոր հեծելադետքի պետը պետք է նախազգուշացնի նրան ուղարկող պետին շարժման ճանապարհի վրայի այն բնագծերի և կետերի մասին, վորոնցից հրետանու շարժումը կարող է հայ-

տաբերված լինի հակառակորդի վերերկրյա դիտողության կողմից։

Յերթական պահպանության որգանների կանգառման կամ բացազատման ժամանակ, առաջավոր հեծելադետքերը գրավում են ամենաձեռնտու դիտակետերը, վոչ մի րոպե չընդհատելով դիտողությունը։

Մարտի բռնվելու ժամանակ, առաջավոր հեծելադետքի պետը, վոչ մի դեպքում չդադարեցնելով տեսողական կապն իրենց առաջավոր հետևակ մասերի հետ և ուժեղացնելով մարտադաշտի և հակառակորդի դիտողությունը, պետք է.

1) անմիջապես կապ հաստատի հետևակ մասի (ստորաբաժանման) հետ, վորին նա պետք է ոգնի, նրա հրամատարի կարգադրության տակ ուղարկելով հեծյալ հետախույզ (յեթե այդպիսին առաջուց ուղարկված չի յեղել).

2) արագ մի հետախույզ ուղարկի մարտկոցի (բաժնյակի) հրամատարին բանավոր զեկուցելու՝ յերթական պահպանության կանգառման, հակառակորդի գործողությունների, ընտրած դիտակետի, նշած կրակային դիրքի ու շարժվելու ճանապարհի մասին.

3) անմիջապես սկսի հեռախոսային կապ գցել դիտակետից դեպի ընտրած կրակային դիրքը, ըստ հնարավորին, նշած հրամատարական դիտակետի վրայով։

4) կազմակերպի դաշտի անընդհատ դիտողությունը, նկատելով հակառակորդի բոլոր գործողությունները, բոլոր նորից յերևան յեկող նպատակները, ձգտելով վորոշել հետևակի, հրետանու խմբավորումն ու հակառակորդի դիտակետերի տեղերը։

125. ՄԱՐՏԿՈՑԻ (ԲԱԺՆՅԱԿԻ) ՀՐԱՄԱՏԱՐԻ ՀՐԱՄԱՏԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ։ Մարտկոցի հրամատարը, յեթե նա այլ խնդիր չի ստացել, արագ գալիս է առաջավոր հեծելադետքի կողմից նշած դիտա-

կետը կամ մի այլ, իր կողմից ընտրած դիտակետը և ընդունում է հեծելադետքի պետի զեկուցումը:

ՍԽԵՄԱ № 2

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿ. ՄԱՐՏԿՈՑԻ ԴԻՐՔ ԳՐԱՎԵԼԸ



Նա հաստատում կամ փոխում է ընտրած դիրքը և կապի գիծ գցելու կարգադրությունները. յեթե հարկավոր է համարում, հրամայում է լրացուցիչ դիտակետեր գրավել և նրանց հետ կապ է հաստատում:

Միաժամանակ մարտկոցի հրամանատարը.

ա) ամենաարագ յեղանակով մարտկոցին պատվեր է ուղարկում նշած դիրքը դուրս գալու համար.

բ) Նշած կրակային դիրքն է ուղարկում դիրքի հեծելադետքը այդ դիրքի հետախուզության համար, հրանոթների, քարշակների ծածուկ ճանապարհների տեղերը ճշտելու համար և դիրքի քողարկման միջոցներ ձեռք առնելու համար: Այդ հեծելադետքի կողմից ուղարկվում է հետախույզ-ուղեցույց, վորը տանում է մարտկոցը դեպի դիրք գնած ծածուկ ճանապարհով:

Զեկուցագիր ուղարկելով հրետանական դիրք բռնելու մասին այն պետին, վորին նա յենթարկվում է, մարտկոցի հրամանատարն սկսում է տվյալներ պատրաստել ամենաարագ կերպով կրակ բանալու համար:

126. ԲԱԺԱՆՑԱԿԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՀԵԾԵԼԱԴԵՏՔԵՐԸ առաջապահի բացազատումն սկսելու հետ միաժամանակ դիտակետեր են գրավում նրանց ցույց տված շերտում, մարտադաշտի, հակառակորդի և իր զորքերի անընդհատ դիտողություն են սահմանում, մարտկոցների դիտակետերի հետ հեռախոսային կապ են հաստատում և զեկուցագիր են ուղարկում կատարածների մասին նրանց ուղարկող պետին:

127. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ժամանակ պետք է ավագ հրետանական պետին տա այն տեղեկությունները, վոր անհրաժեշտ են հրետանական պաշտպանության պլան կազմելու համար: Տեղեկությունների լիակատարությունը կախված է հետախուզության տրամադրության տակ յեղած ժամանակից:

Հետախուզությունը բոլոր հրետանական մասերով կատարվում է մի ընդհանուր պլանով, վոր մշակվում է ավագ հրետանական պետի շտաբում:

Հետախուզության պլանով յուրաքանչյուր մարտկոցին հանձնվում է վորոշ հիմնական շրջան, իսկ յերբեմն էլ նաև լրացուցիչ շրջաններ:

Մի քանի մարտկոցների կրակը մի ուղղությամբ կամ շրջանում կենտրոնացումն իրականացնելու հա-

մար, առանձին մարտկոցների շրջանները պետք է իրար պաշտպանեն մասամբ, իսկ յերբեմն և լրիվ:

Հրետանական հետախուզությունը պաշտպանության ժամանակ պետք է նախօրոք ուսումնասիրի պաշտպանողական շերտի առջևում ընկած շրջանը և վորոշի·

ա) կողմորոշ տեղական առարկաներն ու բնագծերը, վորոնք կարող են հեշտացնել փորձնական հրաձգությունը·

բ) հակառակորդի կենդանի ուժի հավանական կուտակման շրջանը, հավանական հրետանական դիրքերը և դիտակետերը·

գ) հարմար մատույցները, ճանապարհները:

Պաշտպանողական շերտի ներսի շրջանում հրետանական հետախուզությունը պետք է գտնի ամենահարմար կրակային դիրքեր և նրա ոգնական, պահեստի և կեղծ կրակային դիրքեր ու դիտակետեր, վորոշի չգընդակոծվող տարածությունները, անտեսության դաշտերը, թաքուն մատույցները, հարմար ճանապարհները դեպի առաջ և յետ, գաղավտանդավոր տեղերը և իր զորքերի ճիշտ դասավորումը, մանավանդ պաշտպանողական շերտի և մարտական պահպանության առջևի յեզրը:

128· ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ: Հետախուզության բոլոր տվյալները խնամքով գրանցվում են, անց են կացվում սքեմաների և կողմորոշ պլանների վրա և կենտրոնացվում են ավագ հրետանական պետերի շտաբներում:

Բոլոր ստացած նյութերի փոխանակությունը հետևակի և հրետանու միջև, նույնպես և նրանց ուղարկելը հարևաններին ու ստորադրյալներին պարտադիր է:

Հաստատուն ճակատի ժամանակ լայն գործադրություն է ստանում գործիական հետախուզությունը: Նրա գործունեությունն է գլխավորապես վորոշել հա-

կառակորդի մարտկոցների կանգնելու տեղերը: Իբրև նրա աշխատանքի հետևանք մարտկոցների հրամատարներն ստանում են նպատակների պլանշետները և այն տվյալները, վորոնք թույլ են տալիս ճշտամոտ հրաձգություն վարել:

4. ՊԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

129· ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԸ: Հրետանական հրամատարների աշխատանքը, հրետանու մարտի համար բացազատման ժամանակ, պետք է խիստ համակերպված լինի տվյալ մարտական պարագայի հետ և համապատասխանի վերևից տրված խնդրին:

Հրետանական պետը պետք է միշտ իրազեկ լինի պարագայի մասին և ընդհանուր զորական հրամատարության մտադրությունների և վճիռների մասին: Հրետանու պետը յերթի ժամանակ, սկզբնական հետախուզության և, ըստ հնարավորին, մարտի ժամանակ պետք է լինի այն ընդհանուր զորական պետի մոտ, վորին նա յենթարկվում է, հակառակ դեպքում պետք է նրա հետ անընդհատ կապ պահպանի:

Պարագան ուսումնասիրելիս հրետանական հրամատարը գնահատում է այն տվյալները, վոր ստացել է ավագ պետից, անձնական հետախուզության ժամանակ, ընդհանուր զորական և հրետանական հետազոտությունից և քարտեզի սկզբնական ուսումնասիրությամբ: Այդ դեպքում պետք է զատել ճիշտ հայտնի տվյալները յենթադրություններից ու այնպիսի տեղեկություններից, վորոնք ստուգման կարիք են զգում:

130· ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ: Պարագան և տրված խնդիրն ուսումնասիրելուց հետո, հրետանական հրամատարը վճիռ է ընդունում և կարգադրություններ է անում, մասնավոր խնդիրներ նշանակելով և բաշխելով նրանց իրեն յենթարկվող մասերի միջև:

Հրետանու բացազատման մասին բոլոր կարգադրությունները պետք է հստակ ու պարզ լինեն և ամեն մի հնարավորության դեպքում պետք է տեղանքի վրա անձամբ ցույց տրվեն։

Հրետանու բացազատման մասին կարգադրությունները պետք է պարունակեն.

ա) տեղեկություններ հակառակորդի, իր զորքերի և ընդհանուր զորական հրամանատարի ընդունած վճռի մասին.

բ) բաժնյակներին, մարտկոցներին տրված խնդիրները, ցույց տալով, թե նրանք ո՛ր հետևակ մասերին են օգնում և ո՛ր ուղղությունների վրա.

գ) բաժնյակների (մարտկոցների) դիրքային շրջանները.

դ) ցուցումներ կապի մասին և հրետանու պետի հրամանատարական կետի տեղը.

ե) տեղակալները։

Հրետանական հրամանատարները պետք է նկատի ունենան, որ մարտական պարագայի պահանջները, օրինակ, հրետանու ամենաշուտ մարտի բռնվելը, կարող են եական փոփոխություններ մտցնել հրետանու բացազատման վերաբերյալ նրանց աշխատանքի մեջ, վերածելով նրանց ամենահասարակ և արագ կարգադրությունների։

131. ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԻՄԱՄԱՐՏՈՒՄ պետք է ապահովի հրետանու բացազատման և մարտի բռնվելու արագությունը։ Այդ պատճառով կարգադրություններ անելը պետք է լինի արագ, վճռական, պարզ և կարճ. յերբեմն անհրաժեշտ է լինում սահմանափակվել ամենամոտ խնդիր տալով և ցույց տալով այն ուղղությունը, որի վրա գործում է այն հետևակ մասը, որին նա օգնում է։

Առաջապահի հրետանու պետը, յեթե կարգադրություններ չի ստանում, իր ժամանակին զեկուցում է ա-

ռաջապահի պետին, որ անհրաժեշտ է հրետանին անմիջապես բացազատել այն պայմանով, որ հրետանու բացազատումը վերջանա հետևակ մասերի և առաջապահի բացազատումից առաջ։

Մասնավոր խնդիրներ տալը և առաջապահի հրետանու մարտի բռնվելը դիմամարտում հաճախ կատարվում է հրետանական պետերի նախաձեռնությամբ։

132. ԱՌԱՋԱՊԱՀՈՒՄ ԱՅԼ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՄԱՄԱՐՏՈՒՄ պետք է նույնպես լինեն արագ, վճռական և պարզ։ Բաժնյակի հրամանատարը, բացազատման մասին կարգադրություն և խնդիր ստանալով, նշում է իրեն նշանակած շրջանում ամենամոտիկ հարմար ժամանակավոր կետը՝ պարագան անձամբ գնահատելու համար և այնտեղ է գնում իր մարտկոցների հրամանատարների հետ կամ կարգադրում է, որ նրանք այնտեղ գնան։

Անգործությունը կամ հապաղումը առաջավոր հետախուզությունից տեղեկագրեր չստանալու պատճառով անթույլատրելի յե։

Բաժնյակի հրամանատարը ցույց է տալիս մարտկոցների հրամանատարներին.

ա) հարձակման ուղղությունը և խնդիրը, որ նշանակված են այն մասերի համար, որոնց օգնում է հրետանին.

բ) մարտկոցների կրակային դիրքերը, կրակային շերտերը և դիտողության սեկտորները.

գ) իր դիտակետի, մարտական սնունդի ջոկերի և վիրակապական կայանի դասավորման տեղերը։

Յեթե հանգամանքները միանգամից մեծ արագություն են պահանջում և մանավանդ կտրուկ տեղանքում, բաժնյակի հրամանատարը սահմանափակվում է ցույց տալով մարտկոցների հրամանատարներին.

ա) հետևակ մասերը, որոնց նրանք պետք է օգնեն.

բ) դիրքերի շրջանները մարտկոցների համար։

Մնացածը վերապահվում է նրանց նախաձեռնությանը:

Բացազատման մասին բոլոր կարգադրություններն անելուց հետո, բաժնյակի հրամատարը գրավում է իր վերջնականապես ընտրած դիտակետը և սկսում է կազմակերպել կապը մարտկոցների և այն հետևակ ստորաբաժանումների հետ, վորոնց նա ոգնում է, նույնպես և նոր (լրացուցիչ) խնդիրներ է տալիս հրետանական հետախուզության որգաններին:

133. ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՍՅԱՆ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՄԱՄԱՐՏՈՒՄ ԲԱՑԱԶԱՏՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ նույնանման են առաջապահի հրետանական պետերի աշխատանքին: Նրանք նույնպես պետք է տոգորված լինեն վճռական ձգտումով հրետանին ամենաարագ կերպով մարտի մտցնելու, վորպեսզի կանխել և իր կրակով ապահովել գլխավոր ուժերի հետևակի բացազատումը:

Գլխավոր ուժերի հրետանու բացազատումն ու մարտի բռնվելը կատարվում է ավագ ընդհանուր զորական պետի ցուցումներն ստանալուց հետո. վորոշ դեպքերում, յերբ առաջապահին ոգնություն հասցնելը չի կարելի հետաձգել, իսկ ավագ պետի կարգադրությունները չեն ստացվել, այդ կատարվում է նաև հրետանու պետի անձնական նախաձեռնությամբ:

Մասնավոր խնդիրներ տալը և հրաձգության համար նպատակների ընտրությունը մարտի սկզբում,— մինչև գլխավոր ուժերի հետևակի բացազատվելն ու մարտի բռնվելը,—մեծ մասամբ կատարվում է հրետանական պետերի նախաձեռնությամբ: Հետագայում խնդիրները ճշտվում են, ղեկավարությունն ու կապը հարթվում են, դիրքերը փոխվում և կատարելագործվում են պլանաչափ կերպով:

Յեթե բաժնյակը (մարտկոցը) բացազատվելու հետ միաժամանակ անցնում է հետևակի հրամատարի ստորադրության տակ, այդ դեպքում հրետանական հրամատարը նրանից ստանալով պարագայի, հետևակ ստո-

րաբաժանումների խնդիրների մասին տեղեկություններ, խնդիր հրետանու համար և ցուցումներ կրակ բանալու կարգի մասին, բացազատման մասին բոլոր կարգադրություններն անում է զեկուցելով այն պետին, վորին նա յենթարկված է: Հետևակ հրամատարից ստացած խնդրի, գրաված դիրքերի և իր մնալու տեղի մասին բաժնյակի (մարտկոցի) հրամատարն անմիջապես զեկուցագիր է ուղարկում ավագ հրետանական պետին:

134. ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՈՒՄԸ ԿԱՆԳԱՌԱԾ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ինչպես առաջապահում, նույնպես և մանավանդ գլխավոր ուժերում, կատարվում է ավելի պլանաչափ ու մեթոդիկ կերպով, քան դիմամարտում:

Հրետանական պետերի աշխատանքի համար իբրև հիմունք ծառայում են ցուցումներն ու տեղեկությունները, վոր ստացվում են զորական հրամատարությունից, անձնական հետախուզությունը և հետախուզության որգաններից ստացած տվյալները, վորոնց գործադրությունը թույլ է տալիս պարագան:

Առաջապահի ու գլխավոր ուժերի հրետանու բացազատումը կատարվում է այն պլանով, վոր կազմում են հրետանական պետերը, պաշտպանողական շերտի համապատասխան մասի տարածությունն ու դծագրությունը և պարագայի բոլոր այլ տվյալները պարզելուց հետո:

Հրետանու ղեկավարությունը մեծ մասամբ միանգամից կենտրոնացվում է ավագ հրետանական պետի ձեռքում ինչպես առաջապահում, նույնպես և գլխավոր ուժերում: Հետախուզության ոդային և մասնագիտական միջոցների հետ կապը կազմակերպվում է բացազատման սկզբին:

Հրետանական հրամատարների նախապատրաստական աշխատանքը պետք է ապահովի լավ կազմակերպված ու գործոն կրակի կիրառման հնարավորու-

թյունը։ Դրա համար հրետանական հրամատարի աշխատանքը նախորոք է սկսվում։

Ընդհանուր զորական միավորության կազմի մեջ ուժեղացման հրետանի նշանակելու ժամանակ, վերջինս, յեթե բավականին ժամանակ կա, միանգամից դիրք չի բռնում, այլ սովորաբար, մնում է թիկունքում կես որադնացքի հեռավորության վրա։ Ուժեղացման հրետանին դիրք է գրավում միմիայն այն ժամանակ, յերբ նրա հրամատարները անձնական հետախուզություն կկատարեն, դիրքային շրջանները ճիշտ կվորոշեն և կապ կհաստատեն հետևակ մասերի հետ, վորոնց նա պիտի ոգնի, և դասավորման համար նշանակած շրջանում արդեն կանգնած հրետանու հետ։ Ավագ հրետանական պետը կարող է հանձնել իրեն յենթարկվող մասերին հետախուզություն կատարել ուժեղացման հրետանու համար, վորպեսզի վերջինիս, տեղ հասնելուն պես, անմիջապես ստանա բոլոր հետախուզական տվյալները, մինչև նպատակների պլանշետները ներառյալ։

135. **ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԵՐՏԸ ՎԱՂՈՐՈՔ ԴՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՅԱՁԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ** հրետանական պետի աշխատանքը կայանում է նրանում, վոր նրանք իրենց յենթարկյալների հետ միասին խնամքով անձնական հետախուզություն կատարելուց հետո, ընդհանուր զորական հրամատարության ցուցումների համաձայն, բաշխում են հրետանին, մասնավոր խնդիրներ են տալիս մարտի բոլոր ժամանակաշրջանների համար, ցույց են տալիս դիրքային շրջանները, հետևակի հետ կապ են կազմակերպում ու բաշխում են հետախուզության ոդային և մասնագիտական միջոցները, նույնպես և ճարտարագիտական ու քողարկման միջոցները։

Բոլոր մարտկոցների համար ցույց են տալիս դիրք դուրս գալու համար ճանապարհներն ու ժամկետները, ցուցումներ են տալիս հակատանկային և հակոդային պաշտպանության կազմակերպության համար, նույնպես և կապի, պահպանության և սնունդի համար։

ԳԼՈՒԽ IX

ԴԻՄԱՄԱՐՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

136. **ՄԱՐՏԻ ԲՆՈՒԹԹՅՈՒՆԸ**։ Դիմամարտը զորաշարժային պատերազմում մարտական գործողությունների նորմալ տեսակն է հանդիսանում։ Դիմամարտն ամենից առաջ բնորոշվում է նրանով, վոր յերկու կողմերն ել ձգտում են նախաձեռնությունն իրանց ձեռքըն առնել ու իրենց ձեռքում պահել։

Պարագայի անորոշությունն ավելացնում է պատահականությունների հավանականությունը և նպաստում է տակտիկական ակնկալությանը։

Ուստի կրակի գերակշռության հասնելը հակառակորդի հանդեպ, դիմամարտի հենց առաջին շրջանում վճռական նշանակություն է ունենում։ Դրանով վորոշվում է հրետանու դերը դիմամարտում։

137. **ՀՐԵՏԱՆՈՒՆ ՏՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**։ Դիմամարտի հաջողությունը խոշոր չափով կախված է հրետանու կազմակերպված արագ և նպատակահարմար գործողություններից։ Այդ պատճառով նրանից պահանջվում է.

1) մարտ նախաստեսնելիս—նպատակահարմար բաշխում սյուների միջև ու սյուներում, նույնպես և սերտ կապ հետևակի հետ յերթի ժամանակ.

2) մարտադաշտին մոտենալիս—ակտիվ ու արագ հետախուզություն.

3) պահապան մասերի ընդհարման ժամանակ—բացազատման արագություն, գործողությունների վճռականություն, հետևակի հետ լիակատար համաձայնություն պահպանելով և կանխելով պահապան մասերի հետևակի բացազատումը.

4) գլխավոր ուժերի մարտի բռնվելիս—կանոնավոր և պարագային համապատասխան մարտական բաշխում, մարտկոցների և հետևակի (գումարտակների ու վաշտերի) միջև կապի արագ կազմակերպություն ու

կրակի կենտրոնացում ամենակարևոր ուղղության վրա։

2. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

138. ԿՈՐՊՈՒՍԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԸ, կորպուսի հրամատարի գործողությունների սկզբնական պլանին համապատասխան, դեռ յերթ սկսելուց առաջ միջոցներ է ձեռք առնում հրետանու նպատակահարմար օգտագործման համար։

Այդ միջոցները հետևյալներն են.

1) կորպուսային հրետանին բաշխել դիվիզիայի յենթադրելի խնդիրներին համապատասխան.

2) մարտամթերքը բաշխել ու նրանց կրել բերելը կազմակերպել։

Դիմամարտում հատուկ կորպուսային խմբակ գատելը նպատակահարմար չէ։ Ամբողջ կորպուսային հրետանին պետք է տալ դիվիզիաներին։

139. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԸ պետք է պատրաստի ունենա հրետանու գործողությունների պլանը՝ դիվիզիայի հրամատարի պլանին համապատասխան։

Այդ պլանը կարելի յե նշել ընդհանուր գծերով դեռ յերթից առաջ ու արտահայտվում է սյուների միջև հրետանու բաշխումով, նույնպես և հրապաշարի շարժական պահեստների համապատասխան բաշխումով։

Դիվիզիայի հրամատարի սկզբնական պլանի հիման վրա, դիվիզիայի հրետանու պետը պատրաստում է (բարձրացնում է) որազնացքի քարտեզը, մանրամասն ուսումնասիրելով տեղական բնագծերն ու ռայոնները, վորոնք կարող են նշանակություն ունենալ մարտի համար և մասնավորապես հակառակորդի հետևակի ու հրետանու դեմ կռիվ մղելու համար։

Յեթե ժամանակ կա (գիշերոթում), այդ քարտեզից ամենահասարակ կողմորոշ սքեմա յեն հանում ու բաժնյակների հրամատարներին ուղարկում։

Քարտեզի (սքեմայի) վրա, հնարավոր հակընդդեմ ընդհարման բնագծերին ու ռայոններին համապատասխան, նշանակում են ամենակարևոր ճանապարհներն ու ժամատույցները թե իր զորքերի և թե հակառակորդի համար, նույնպես և վորոշվում են տեղանքի վորոշ կետերի բարձրագունությունը մյուսներից, նշանակելով իշխող բարձունքները։

Հենց նրանց վրա յել նշանակում են դիտակետերի և հրամատարական կետերի նույնպես և կրակային դիրքերի հնարավոր տեղերը։

140. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՅԵՐԿՈՒ ԿԱՄ ՅԵՐԵՔ ՍՅՈՒՆՈՎ ՇԱՐԺՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ, դիվիզիայի հրետանու պետը դեռ յելակետում հուսալի կենդանի կապ է հաստատում սյուների հրետանու պետերի հետ, նկատի ունենալով. և

ա) Կրակային համագործակցություն հաստատել զանազան սյուների հրետանու միջև այնպիսի շրջաններ և կետեր գրավելու ժամանակ, վորոնք նշանակություն ունեն ամբողջ դիվիզիայի համար.

բ) Հրետանական կրակը կենտրոնացնել գլխավոր հարվածի ուղղությամբ. այդ ուղղության ընտրությունը կկատարի դիվիզիայի հրամատարը, առաջապահների մարտի բռնվելուց հետո։

Իբրև կապի ամենահուսալի միջոց հանդիսանում են հատուկ հեծելազետքերը (հրամատարական կազմի մի անձնավորություն 2–3 հետախույզների հետ)։

141. ՍՅՈՒՆԵՐԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԵՐԸ (դիվիզիայի յերկու կամ մի քանի սյունով շարժվելու ժամանակ) նույնպես ուսումնասիրում են բնագծերը, նրանց վրա հնարավոր գործողությունների տեսակետից և կապ են կազմակերպում սյան հրետանական մասերի և հետևակի միջև։

Քարտեզի նախապատրաստությունը կազմում է նաև բոլոր հրետանական պետերի պարտականությունը՝ բաժնյակի հրամատարից սկսած մինչև մարտկոցների վարչական դասակների հրամատարները։

3. ՅԵՐԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԱՄԱՐՏ ՆԱԽԱՏԵՍՆԵԼԻՍ

142. *Յերթի համար հրետանու բաշխումը սյուների միջև պետք է համապատասխանի այն գաղափարին, որ մտցված է գործողությունների ընդհանուր պլանի մեջ։*

Յեթե դիվիզիայի հրամանատարը նախապես նշել է հրաձիգ գնդերի մարտական օգտագործման պլանն ու կարգը, այդ դեպքում ամբողջ հրետանին պետք է բաշխված լինի այդ պլանին համապատասխան։

Դիվիզիայի յերկու կամ մի քանի սյունով շարժվելիս, յուրաքանչյուր սյան հրետանու կազմը պետք է համապատասխանի սյան դերին առաջիկա ընդհարման ժամանակ։

Յեթե դիվիզիայի հրետանու պետը նախատեսնում է հրետանու որոշ մասի իր ձեռքում միացման հնարավորությունը, գլխավոր ուժերի բացազատումից հետո, նա պետք է հաշվի առնի, թե հրետանու ինչպիսի բաշխումը կապահովի այդ միացումը ամենակարճ ժամանակամիջոցում և առանց հետևակի հետ ունեցած օրգանիկ կապը խախտելու։

Օրինակ, յեթե սյուներից մեկը նշանակված է թիկնանցման համար, կամ շարժվում է անտառոտ կամ շատ կտրտված տեղով, նրա կազմի մեջ պետք է այնպիսի հրետանի նշանակել, որն ընդունակ է նրա անջատ գործողություններն ապահովել. այդ դեպքում այդ մասերի միացյալ ղեկավարման սիստեմի մեջ մտցնելու վրա հույս դնել կարելի չէ։

Յեթե դիվիզիան մեկ ճանապարհով է շարժվում, հրետանական բաժնյակները պետք է շարժվեն կամ այն գնդերի հետ, որոնց նրանք պիտի օգնեն, կամ նրանց հետ հուսալի կենդանի կապ պիտի ունենան։ Այդ դեպքում հրետանու պետը նախապես կենդանի կապ է հաստատում այն բաժնյակների հետ, որոնք նշանակված են միացյալ ղեկավարման սիստեմի մեջ մտցնելու համար։

143. *ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ ՍՅԱՆ ՄԵՋ։ Դիվիզիայի յերկու կամ մի քանի ճանապարհով շարժվելու ժամանակ առաջապահների կազմի մեջ մտցվում է բավականին ուժեղ հրետանի, որն ընդունակ է ապահովել առաջապահների կողմից ակտիվ խնդիրների լուծումը (միջին հաշվով 2–3 մարտկոց յուրաքանչյուր գումարտակի համար)։ Սյան մնացած հրետանին շարժվում է ամբողջովին կամ մեծ մասամբ գլխավոր ուժերի գլխում։*

Դիվիզիական հրետանու կազմից առաջապահների կազմի մեջ առաջին հերթին նշանակվում են հոբիցները։ Օգտակար է առաջապահներին 107 մմ *թնդանոթներ տալ։*

144. *ԿԱՊԸ ՀԵՏԵՎԱԿԻ ՀԵՏ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ ապահովվում է բաժնյակներից (մարտկոցներից) ձիավորներ (առավելապես կապի ջոկի հրամատարներ) ուղարկելով այն մասերը, որոնց պիտի օգնեն այդ բաժնյակները (մարտկոցները) մարտում։ Մարտկոցների կապի ջոկերը, որ հետևակի հետ կապ են պահպանում, շարժվում են բաժնյակի հրամանատարի հետ կամ նրա ցուցումով այնպես, որ մարտի բռնվելուն պես նա կարողանա նրանց բաշխել գումարտակների միջև։*

145. *ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ։ Առաջավոր հեծելադետքերը շարժվում են անմիջապես յերթական ուղեկալների յետևից, նրանց հետ տեսողական կապ պահպանելով։*

Նրանց ամենագլխավոր խնդիրն է հանդիսանում հակառակորդի հետախուզությունը, *հաջորդաբար գրավելով դիտողության համար ձեռնտու կետեր, ինչպես առաջուց քարտեզի վրա նշանակած, այնպես էլ տեղանքի վրա նոր ընտրած։ Նրանք նույնպես կարող են կրակային դիրքերի մոտավոր շրջաններ նշել,*

բայց միայն նրանց շարժման ճանապարհին ամենաժամ չերտում:

Երբ առաջավոր հեծելադետքերի հետագա շարժումն անհնարին է դառնում, նրանք իրենց գրաված կետերից հակառակորդի անշարժ դիտողություն են հաստատում: Այդ կետերը հենց դրանով դիտակետեր են դառնում: Այդ կետերի և հետևակի առաջավոր մասերի միջև անմիջապես կապ է հաստատվում:

Առաջավոր հեծելադետքերի զեկուցագրերը, նույնպես և առաջավոր հետևակ մասերի տեղեկությունները, առաջապահի հրետանու պետին, սովորաբար, հնարավորություն են տալիս իր մարտկոցների գործողությունների միացման համար առաջին միջոցներն անմիջապես նշել:

Հրետանական հետախուզության օրգաններից ստացած զեկուցագրերը, սովորաբար, հետևակի զեկուցագրերից ավելի շուտ են ստացվում, և այդ պատճառով արժեքավոր նյութ է հանդիսանում, որը ուշադիր վերաբերմունք է պահանջում ընդհանուր զորական և հետևակ պետերից: Հատկապես կարևոր են հակառակորդի ուժերի ըստ խորության մասնատման մասին տեղեկությունները, որ չի կարող միանգամից տալ հետևակը:

Առաջապահի հրետանու հրամատարական հեծելադետքերը շարժվում են առաջավոր յերթական ուղեկալի յետևից: Վերջին դեպքում առաջավոր հեծելադետքերը կարող են չլինել:

4. ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆԻՆ

146. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ: Առաջապահի հրետանին պատրաստ պիտի լինի բացազատվել ու կրակ բանալ, առաջապահի կորիզ կազմող հետևակի բացազատումը վերջանալուց առաջ: Ուստի, իբրև ընդհանուր կանոն, նա դիրք է դուրս գալիս դեռ առաջապահի ամբողջ հետևակի բացազատվելուց առաջ:

Գնդի սյուներով դիվիզիայի շարժվելու ժամանակ, յուրաքանչյուր սյան գլխավոր ուժերի հրետանին գործում է մասնավորապես այնպես, ինչպես դիվիզիական սյան առաջապահի հրետանին:

147. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՊԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ: Մասնավոր պետերի նախաձեռնությունը, պահապան մասերի բացազատման շրջանում, հատուկ նշանակություն ունի: Առաջին մասնավոր խնդիրների լուծման արագությունից, որ առաջադրում է ինքը պարագան, հաճախ կախված է լինում հետագա գործողությունների հաջողությունը:

Շատ հաճախ բաժնյակների և մարտկոցների հրամատարներն անձնական հետախուզություն են սկսում, առանց առաջավոր հեծելադետքերից զեկուցագրեր ստանալուն սպասելու:

148. ԿԱՊԸ ՀԵՏԵՎԱԿԻ ՀԵՏ: Կապի ապահովումը այն հետևակ մասերի հրամատարների հետ, որոնց պետք է օգնի հրետանին, հրետանական հրամատարների ամենալուրջ հոգատարության առարկան պիտի լինի: Իբրև ընդհանուր կանոն, բաժնյակների հրամատարներն անձնական և համենայն դեպս կենդանի կապը չեն կորցնում այն հետևակ հրամատարների հետ, որոնց հետ կապ են ունեցել յերթի ժամանակ:

Երբ առաջապահի պետը խնդիր է տվել գումարտակների (վաշտերի) հրամատարներին, վերջիններիս մոտ պիտի գան կապի ջոկերը այն բաժնյակներից (մարտկոցներից), որոնք նշանակված են նրանց օգնելու համար: Հրետանական կապի բաշխումը պետք է համապատասխան լինի այն խնդիրների կարևորությանը, որ լուծում են այս կամ այն հետևակ ստորաբաժանումները:

Ամենաձեռնտուն այն դեպքն է, յերբ հրետանական կապն ամրացրած է մնում այն հետևակ ստորաբաժանումների հետ, որոնց հետ կապը հաստատված է յեղել յերթից առաջ:

149. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՊԸ: Մարտի բռնկվելիս, ավագ հրետանական պետերը ձեռք են առնում

բոլոր միջոցները իրենց ստորադրյալների հետ արագ կենդանի կապ հաստատելու համար: Միաժամանակ նաև մարտկոցների հրամատարները, առանց սպասելու ավագ հրամատարների կողմից նրանց հետ կապ հաստատելուն, իրենք պարտավոր են կապ հաստատել նրանց հետ:

Մինչև մարտկոցների հետ տեխնիկական կապ հաստատելը առաջապահի հրետանու պետի և բաժնյակների կողմից, մարտկոցները կրակ են բացում ու վարում իրենց նախաձեռնությամբ և հետևակի պահանջներով: Ներքին տեխնիքական կապ հաստատելուց հետո, առաջապահի հրետանին միանում է իր պետի ձեռքում. սակայն հետևակի պահանջներին և նրա հետ սերտ կապին մարտի այդ շրջանում առաջին տեղն է պատկանում:

150. Առաջապահի հրետանու գործողությունները պետք է աչքի ընկնեն իրենց արագությամբ և խիզախությամբ: Դանդաղկոտություն չպետք է տեղի ունենա. հատկապես ձեռնտու յե կրակ բանալ հակառակորդի սյուների վրա, քանի վոր դրանք չեն բացազատվել: Ամբողջ անձնական կազմի գործունեությունը պետք է ուղղված լինի կրակի գերակշռություն ձեռք բերելուն՝ գործողությունների ամենամոտ առարկաների հանդեպ մարտի ամենամոտ շրջանում: Կրակը պետք է բանալ, մարտական խնդիր ստանալուց հետո 30 րոպեյից վոչ ուշ:

Հրետանական կրակ բանալու րոպեն հակառակորդի վրա ճնշող ներգործություն է ունենում և միևնույն ժամանակ խոշոր չափով բարձրացնում է իր զորքերի հարձակողական թափը:

Կապի գծերը կարճ պիտի լինեն: Կրակի ղեկավարությունը պարզ պիտի լինի:

Հրետանական կապի սիստեմի և հրետանական դիրքերի կատարելագործումն իրականացվում է աստիճանաբար, մարտի զարգացման հետ միասին: Մարտական գործողությունների հենց առաջին շրջանում, առաջին հերթին պետք է արագ կրակ բանալ և իր ժա-

մանակին կրակի ներգործություն ունենալ ամենակարևոր նպատակների վրա:

151. ՆՊԱՏԱԿՆԵՐ ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՀԱՄԱՐ: Դիվիզիական հրետանու հիմնական խնդիրն է բոլոր դեպքերում կռիվ մղել հակառակորդի հրետանու դեմ ձեռնտու բնագծեր, մատույցներ և տեղական առարկաներ գրավելու համար: Դիմամարտի առաջին շրջանում հակառակորդի մարտկոցների ճնշումը հրետանու հիմնական խնդիրը չե: Միմիայն իրենց հայտաբերած և ամենից շատ վնաս տվող հակառակորդի մարտկոցները կարող են իբրև նպատակ ծառայել առաջապահի հրետանու համար:

Յեթե առաջապահին կորպուսային հրետանի յե տրված հակառակորդի հրետանու դեմ կռիվն ու նրա թիկունքի ռմբակոծումը հանձնվում է կորպուսային հրետանուն:

5. ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՀՐԵՏԱՆԻՆ

152. ԳՆԴԻ ՍՅՈՒՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՈՒՄԸ կատարվում է ինքնուրույն կերպով, սյուների մարտի բռնվելու հետ միասին:

Սյան հրետանու պետը, սյան պետի կարգադրություններին համապատասխան, հրետանու առաջին խնդիրները տալիս է ամենաընդհանուր գծերով:

Բացազատման ու կրակային աշխատանքի ընթացքում խնդիրները ճշտվում ու լրացվում են, առաջին հերթին ոգնության յենթակա հետևակի հրամանատարների պահանջներով:

Հենց վոր սյուներից մեկը մարտի յե բռնվում, դիվիզիայի հրետանու պետն ուղարկում է նրա մոտ իր հետախուզությունը, պարագան պարզելու ու մարտի ընթացքը դիտելու համար:

Յեթե անհրաժեշտ է այդ սյան հրետանին ուժեղացնել մի ուրիշ սյան հաշվին, դիվիզիայի հրետանու պետը կարող է այդ կատարել դիվիզիայի հրամատարի անունից:

Սակայն այդ թույլ է տրվում այն պայմանով, վոր·

ա) ուժեղացվող սյունը շատ կարևոր խնդիր լուծի·

բ) թուլացվող սյունը դեռ մարտի չի բռնվել·

գ) ժամանակի ապարդյուն կորուստ չի լինի:

153· ԴԻՎԻԶԻԱՅԻ ՍՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՈՒՄԸ: Դիվիզիայի հրամանատարի կողմից վճիռ ընդունելուց անմիջապես հետո, դիվիզիայի հրետանու պետը բաշխում է հրետանին ու ցույց է տալիս բաժնյակների հրամանատարներին, թե նրանք ում պիտի ոգնեն և ում հետ կապ պիտի հաստատեն: Դրան համապատասխան բաժնյակների հրամանատարներն անմիջապես ուղարկում են կապի ջոկերը հետևակ ստորաբաժանումներին:

Գլխավոր ուժերի հրետանու դիրք դուրս գալը թաքուն ու արագ է կատարվում:

Իբրև ընդհանուր կանոն, գլխավոր ուժերի ամբողջ հրետանին, կամ գոնե նրա մեծ մասը դուրս է գալիս վարգով, հետևակի առաջ ընկնելով (տես 123 էջի մարտական որինակը):

Դիրք դուրս գալու ճանապարհները պետք է խնամքով հետախուզել· հրետանական մասերում ուղեցույցներ (հետախույզներ) պիտի լինեն:

Հրետանու բացազատումը հաճախ կատարվում է վտավաններով՝ մեկ բնագծից դեպի մյուսը:

Հետևակի կրակային ոգնության անընդհատության համար, յետևից գնացող մարտկոցները բացազատվում են առջևում հետևյալ, հակառակորդին ավելի մոտ բնագծի վրա: Հետագա վտավաններով շարժման կազմակերպությունը, սովորաբար, բաժնյակների հրամանատարների պարտականությունների մեջ է մտնում:

154· ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ կախված է սյան կազմից, տարվա յեղանակից, որվա ժամանակից, տեղանքի բնույթից, ճանապարհների ու գետնի վիճակից:

Հրետանու մարտի բռնվելու իբրև նորմալ ժամկետ

ՍԽԵՄԱ № 3

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿ



պետք ե համարել մեկ ժամ, մարտական խնդիր ստանալու պահից: Մարտական աշխատանքի հետագա ընթացքի, կապի կազմակերպության, իսկ յերբեմն ել հրետանու դասավորման մեջ հարկ ե լինում ուղղումներ մտցնել:

Պարագան

Առաջապահն իր հրետանու հետ միասին մարտ ե մղում: Հետևակին ամենից շատ խանգարում ե Ա. գյուղի ծայրի մոտ գտնվող հակառակորդը:

Գնդի գլխավոր ուժերը բացազատվում են ԱԲ ճանապարհից դեպի արևմուտք:

Լուծում

Գլխավոր ուժերի հրետանին դուրս բերել դեպի առաջ, առանց սպասելու հետևակի բացազատվելու վերջանալուն, ու գյուղում գտնվող հակառակորդի հետևակի կրակը ճնշել:

ԽՆԴԻՐ

«Մեր գլխավոր ուժերը բացազատվում են ճանապարհից դեպի արևմուտք և հարձակվում են Ա. գյուղի վրա.

Հրետանուն վարգով դուրս գալ Բ. անտառի ռայոնը և Ա. գյուղում գտնվող հետևակի կրակը ճնշել: Կրակ բանալ պատրաստ լինելուն պես (կամ—«իմ պատվերով»):

155. ԽՆԴԻՐՆԵՐ: Նաև գլխավոր ուժերի բացազատվելուց հետո, իբրև գործողությունների գլխավոր առարկա հանդիսանում ե հակառակորդի կենդանի ուժը և մոտավոր գործողության կրակային միջոցները:

Հակառակորդի հրետանու դեմ պայքարով զբաղվելը նաև այդ շրջանում հաճախ կարող ե վնաս բերել կենդանի ուժի դեմ պայքարի ուժգնությանը: Միմիայն իրենց լավ հայտաբերած հակառակորդի

մարտկոցները հրետանու գործողությունների առարկան պիտի լինեն:

156. ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ պետք ե համապատասխան լինի այն վճռի գաղափարին, վորն ընդունել ե դիվիզիայի հրամանատարը դիմամարտի վճռական շրջանի համար:

Խոշոր ու բարդ վերախմբավորումները ղեկավարման մեջ մեծ դժվարություններ են մտցնում, ամեն կերպ դրանցից պետք ե խուսափել:

Վորքան ավելի լավ են ուսումնասիրված տեղանքն ու հակառակորդի մասին տեղեկությունները և վորքան ավելի հմուտ և նախատեսված կերպով ըստեղծված ե յեղել հրետանու յելակետային խմբավորումը գլխավոր ուժերի բացազատման ժամանակ, այնքան ավելի քիչ ե լինում վերախմբավորման հավանականությունը:

Բաշխման սիստեմի ընտրության ժամանակ ավագ-հրետանական պետը պետք նկատի ունենա.

1) կապը հետևակի հետ.

2) տեղեկանքի բնույթն ամբողջ դիվիզիայի ճակատում և յուրաքանչյուր գնդի գործողությունների շերտում առանձին-առանձին:

Այդ գնահատման իբրև հետևանք լինում ե կամ նշած ՀՍ խմբակի յենթարկումը հրաձիգ գնդերի հրամանատարներին (նորմալ դեպք), կամ նրանց թողնելը ավագ հրետանական պետի ձեռքում:

Յեթե դիվիզիան յերկու կամ յերեք սյունով ե շարժվելիս յեղել, այդ դեպքում հրետանու միացումը, սովորաբար, խոշոր դժվարություններ ե ներկայացնում:

Առաջապահների կազմի մեջ մտնող հրետանական մասերն ամենից հաճախ մնում են հրաձիգ գնդերի հրամանատարների ստորադրության տակ (հետևակի հետ ունեցած այդ մասերի կապը, վորը հաստատված ե յեղել դեռ մարտի սկզբից առաջ, ամենաամուր կապն ե լինում);

Յեթե յերկու սյան կազմից բացազատված հրետանին հնարավոր չէ միացնել ընդհանուր ղեկավարման տակ, կազմված խմբակներից յուրաքանչյուրը պարտավոր է ամեն միջոց ձեռք առնել լիակատար կրակային համագործակցություն հաստատելու համար:

Յեթե դիվիզիայի գլխավոր ուժերի բացազատվելուց անմիջապես հետո, մարտկոցների մի մասը դնդի սյուներից անցնում են դիվիզիայի հրետանու պետի ստորադրության տակ, նրանց կապը հետեվակի հետ այդ վերաստորադասության ժամանակ չըպետք է խախտվի:

Ընդհանուր դիվիզիական սյան գլխավոր ուժերի բացազատման ժամանակ, հրետանու մեծ մասի, իսկ յերբեմն էլ ամբողջ հրետանու միացումը դիվիզիայի հրետանու պետի ձեռքում ավելի հեշտ ու արագ է իրականացվում:

ՀԳ խմբակ կազմելը հազվադյուտ դեպք է լինում: Հակառակորդի հրետանու դեմ կռիվը սովորաբար մղում են ՀՍ խմբակների կազմի մարտկոցները, վորոնք կրակ են բացում հակառակորդի դիտակետերի և մարտկոցների դեմ, հենց վոր նրանք իրենց հայտաբերում են:

157. ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Դիրքային շրջանի ընտրությունը և տեղանքի վրա գըլխավոր ուժերի հրետանու խմբավորումը պետք է համապատասխանեն հրետանուն տրված ընդհանուր խնդիրներին: Մասսայական կրակի արագ և պարզ կենտրոնացումն ամենակարեվոր ուղղության վրա հիմնական պահանջն է հանդիսանում. դիտակետերի ու հետեվակի հետ կապը պետք է ամենակարճը լինի:

Դիմամարտում մեծ նշանակություն է ունենում առանձին մարտկոցների թեվային կրակը:

Թեվային ու շեղահար կրակի պլանաչափ կազմակերպությունը դժվար է և հակասում է բացազատման պարզությանն ու արագությանը: Հազվադյուտ դեպքում կարելի յե հույս ունենալ նման պարագայում համաձայնեցրած կրակային կողահարում ստեղծել, վորն իրականացվում է մեծ քանակությամբ մարտկոցներով:

Հակառակորդի թևը շահած ժամանակ, մեկ մարտկոցը, վորը թևն է դուրս տալիս և յերկայնակի կրակ է բացում փոքր հեռավորություններից (մինչև 2,5 կմ. դիվիզիական թնդանոթների և մինչև 3,5 կիլ. հոբիցների համար), կարող է այնպիսի ներգործություն ունենալ, վորը համապատասխանում է ամբողջ բաժնյակի կրակային ուժին ճակատային կրակի ժամանակ:

Հակընդդեմ ընդհարման ժամանակ վորոշ մարտկոցներ այնպիսի խնդիրներ են ստանում, վորոնք պահանջում են հեռահարության լիակատար օգտագործում: Այդպիսի մարտկոցները պետք է, վորքան հնարավոր է, ավելի հեռու դուրս բերել: Այդ պահանջը ամենից հաճախ պետք է առաջադրել կորպուսային հրետանու հեռահար թնդանոթային մարտկոցներին:

158. ԿԱՊԸ ՀԵՏԵՎԱԿԻ ՀԵՏ ամենից լավ է ապահովել, մարտկոցները դասավորելով այն գումարտակների (վաշտերի) շրջաններում, վորոնց նրանք օգնում են: Փոխանցման կենդանի միջոցների և տեսողական նշանարարության միջոցների կիրառումը դիմամարտում հիմնական նշանակություն ունի: Կապը հետեվակի հետ, վորքան հնարավոր է, պետք է քիչ կախում ունենա հեռախոսային լարից: Շատ դեպքերում հասարակ տեսողական կապը կարող է վճռական ազդեցություն ունենալ:

Հետեվակի հետ կապ պահպանելու ջոկերի (մարտկոցների և բաժնյակների) աշխույժ աշխատանքը մարտի հենց սկզբից մինչև վերջը կարող է խոշոր ազդեցություն ունենալ մարտի վախճանի վրա:

Բացի այդ, շատ կարևոր է հետեվակի կողմից ազդանշանների հմուտ և սիստեմատիկ կիրառումը այն շրջանում, վորն անմիջապես նախորդում է գրոհին,

և գրոհը կատարվելու ժամանակ։ Հետևակի գրոհի շարժվելու մոմենտը պետք է միանգամայն պարզ նշանակված լինի, որպեսզի չվրիպի հրետանական դիտողի աչքից։

Ուստի ազդանշանների կիրառումը ցանկալի է նաև այն դեպքերում, երբ գրոհի սկզբի ժամանակը սահմանված է հրամանով կամ առանձին կարգադրություններով։

159. ԿՐԱԿԻ ՍԻՍՏԵՄԸ։ Գրոհից առաջ հրետանին իր կրակով ճնշում է հակառակորդի հետևակին և նրա կրակային միջոցները, ազատելով իր հետևակի ձեռքերը։

Գրոհն սկսելիս, հրետանու մեծ մասն իր կրակը տեղափոխում է գրոհվող շրջանի թևերի և մոտավոր թիկունքի վրա։ Այդ շրջանում հակառակորդի դասավորման ներսը ներխուժած մեր հետևակ մասերի պաշտպանությունը մեծ նշանակություն է ունենում։

Հակառակորդի հրետանու դեմ կռիվը մղում են ՀԳ խմբակի մարտկոցները, եթե այդպիսին կազմված է։ Դրանից անկախ, բաժնյակների հրամատարների և նույնիսկ մարտկոցների հրամատարների նախաձեռնությամբ կարելի է կրակ բանալ հակառակորդի մարտկոցների վրա, նրանց հայտաբերելուն պես։

160. ԴԻՐՔԵՐ ՓՈԽԵԼԸ ԴԵՊԻ ԱՌԱՋ։ Հետևակի առաջ շարժման հետ միաժամանակ, անհրաժեշտ է լինում որոշ մարտկոցներ, գլխավորապես ՀՍ խմբակների կազմից, դուրս բերել դեպի առաջ։

Այդ շրջանում հետևակի հետ հուսալի կապ հաստատելն ու պահպանելը մեծ դժվարություններ է ներկայացնում։ Բացի առաջավոր հրետանական դիտողներից և հետևակի հետ կապ պահպանելու ջոկերից, մեծ օգնություն կարող են հասցնել սավառնակները. սրանք հայտնում են հրետանուն առաջավոր հետևակ մասերի վիճակի մասին և հաղորդում

են կրակն ամենակարևոր նպատակների վրա ուղղելու պահանջները։

Դիմամարտում առանձին մարտկոցների ինքնուրույն կերպով դեպի առաջ դուրս գալը, երբ նրանք կորցնում են ավագ պետերի հետ շփումը, նորմալ երևույթ է հանդիսանում։

161. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, հրետանու առաջին խնդիրն է՝ պահպանել իր հետևակին, երբ նա դասավորվում է պաշտպանության համար և կրակի սիստեմ է կազմակերպում։ Այդ իրագործվում է հակառակորդի հետևակի առաջշարժման ճանապարհները խափանելով և հակառակորդի այն մարտկոցների կրակը ճնշելով, որոնք ամենից շատ վնաս են հասցնում մեր հետևակին։

Հրետանու հետևյալ ամենակարևոր խնդիրն է՝ խանգարել հակառակորդի հետևակի վերախմբավորումն ու բացազատումը այն ժամանակ, երբ նա գրոհի համար ելակետային դրություն է ընդունում։

Այդ խնդիրների լուծման հետ միաժամանակ, հրետանական պետերն ուժեղացնում են հետախուզությունը. ա) ավելի լավ դիտակետեր և հրամատարական կետեր ընտրելու համար. բ) կրակային դիրքերի խոր դասավորում կազմակերպելու անընդհատ կրակային համագործակցությունն ապահովելու համար և գ) կապի սիստեմը (հատկապես փոխանցման մալուխային ցանցը) կատարելագործելու համար։

162. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ։ Եթե հակընդդեմ ընդհարումը տեղի է ունենում գիշեր ժամանակ, այդ դեպքում սյան գլխում պետք է թողնել հրետանին միայն խիստ սահմանափակ քանակությամբ, եթե դիմամարտը նախատեսվում է առաջուց։

Հատկապես օգտակար է պահապան մասերում թեկուզ քիչ հոբիցներ ու ականանետներ ունենալ, որովհետև նրանց կրակը մեծ բարոյական ազդեցություն է ունենում։

Մարտի բռնկելիս, հրետանու մի մասը կրակ է

վարում դլխավորապես քարտեզով հակառակորդի թիկունքի վրա, նույնպես և իրենց հայտաբերած հակառակորդի մարտկոցների վրա:

Մեծ քանակությամբ մարտկոցներ մարտի մըտցնելը սովորաբար հնարավոր չի լինում կիրառել, վորովհետև տեսանելի նպատակները քիչ են լինում և վտանգավոր է իր զորքերը հարվածելու տեսակետից:

Գիշերային դիմամարտում մարտկոցների մեծ մասը սպասողական դրության մեջ պահելը լայն գործադրություն է ունենում:

Կրակող ու կրակ վարելու պատրաստվող մարտկոցների կապը հետևակի հետ բացառիկ նշանակություն է ունենում:

Կապի գծերը, վորքան հնարավոր է, պետք է կարճ լինեն: Անձնական շփումը առաջին և ամենակարևոր պայմանն է:

6. ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

163. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:* Հետապնդման հաջողության գրավականն է՝ արագությունը և նախաձեռնությունը:

Հենց վոր նշմարվում է հակառակորդի յետխաղացումը, հրետանին պետք է բոլոր ջանքերը լարի, վորպեսզի ժամանակ չտա նրան ուշքի գալ և նոր դիմադրություն կազմակերպել:

Հետապնդումը շատ ձեռնտու յե, վորովհետև դիմամարտում հակառակորդը, սովորաբար, հնարավորություն չի ունենում խոր (շարանած) դիմադրության սիստեմ կազմակերպել նախապես:

Հետապնդման ժամանակ հրետանու հեռահարությունն ու դյուրաշարժությունը ամենակարևոր դերն են խաղում: Հետապնդումը պետք է այնպես կազմակերպել, վոր նրան մասնակցող վոչ մի հրանոթ չմնա առանց ոգտագործելու:

164. *ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:* Հետապնդման սկզբում առանձին բաժնյակների և

մարտկոցների նախաձեռնությունը վճռական նշանակություն ունի: Հեռահար հրետանին և դիվիզիական հրետանու ամենից շուտ դուրս բերած մարտկոցներն սկզբում շարունակում են կրակ վարել իրենց նախկին դիրքերից: Հեռահար մարտկոցների համար իբրև նպատակ հանդիսանում են, բացի հակառակորդի մարտկոցներից, յետխաղացման ճանապարհները, նրանց ամենակարևոր հանգույցները, կամուրջները և յերկաթուղու կայարանները: Մնացածները հարվածում են յետքաշվող հետևակին և հակառակորդի ուշացած մարտկոցներին:

Յեթե ոդային հետախուզության միջոցներ կան, սրանք կարող են մեծ ոգուտ տալ նախկին դիրքերից կրակ վարող այդ հրետանուն: Յեթե այդպիսի միջոցները քիչ են կամ բոլորովին չկան, հիմնական դերը պատկանում է առաջավոր հրետանական հետախուզության որգաններին:

Հակառակորդի յետխաղացումն այս կամ այն չափով բարոյալքում է նրա զորքերը: Ուստի նույնիսկ վերջնակետ հրաձգությունը կարող է լավ հետևանքներ տալ:

Մարտկոցների մյուս մասը միանգամից մասնակցում է հետապնդմանը, առաջ շարժվելով հետևակի յետևից: Այդ շրջանում հրետանական միավորությունների միջի կազմակերպչական կապի պահպանման հոգսը յերկրորդական տեղ է բռնում: Շատ ավելի մեծ նշանակություն է ունենում հետևակի հետ անընդհատ կապի պահպանումը: Այդ պատճառով, մարտկոցների դիրքերի փոփոխումը պարագայի պահանջի համաձայն առանց հատուկ պատվերի, պետք է նորմալ յերևույթ համարել:

Քողարկած և նույնիսկ բաց կրակային դիրքեր բռնելը, թեկուզ կորուստների գնով, լայն կիրառում է ունենում:

Հրետանու ղեկավարման ապակենտրոնացումը հասնում է նրան, վոր նույնիսկ առանձին հրանոթ-

ներ են դուրս բերվում ինքնուրույն շարժվելու և հետևակի հետ գործելու համար:

Ավագ պետերը (բաժնյակների հրամանատարները, խմբակների հրամանատարները) իրենց կողմից միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի բոլոր մարտկոցները միաժամանակ շարժման մեջ չգտնվեն, այսինքն վորպեսզի հետապնդող հետևակ մասերին անընդհատ կրակային օգնություն ցույց տրվի:

Դրա համար հրետանու կողմից նախապես նշանակվում են այն մարտկոցները, վորոնք հետապնդման առաջին շրջանում մնում են ավագ հրետանական պետերի տրամադրության տակ:

Հետագայում այդ մարտկոցները դուրս են բերվում դեպի առաջ ճանապարհներով, և այդ հնարավորություն է տալիս արագ հասնել այն մարտկոցների յետևից, վորոնք շարժվելիս են յեղել առանց ճանապարհների:

165. *ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ* ավելի դյուրաշարժ մարտկոցներ են նշանակվում:

Յերբեմն օգտակար է լինում զուգահեռական հետապնդում կատարող մասերին տալ հեռահար մարտկոցներ և նույնիսկ առանձին հրանոթներ այն անցարանները, կապանները և ճանապարհները ռմբակոծելու, վորոնցով յետ են քաշվում հակառակորդի զորքերն ու գումակները:

166. *ՍՆՈՒՆԴԸ ՄԱՐՏԱՄԹԵՐՔՈՎ:* Վճռական և հաջող հետապնդումը հնարավոր է միայն մարտամթերքը պլանաչափ կերպով և ժամանակին մոտ բերելու ժամանակ: Ուստի հետապնդում նախատեսնելիս, հրետանական պետերը պարտավոր են նախօրոք բոլոր միջոցները ձեռք առնել հետապնդում կատարող մարտկոցների անընդհատ սնունդի կազմակերպման համար:

Ընդհանուր զորական պետերը պարտավոր են հրետանու տրամադրության տակ դնել բոլոր ունեցած լրացուցիչ փոխադրական միջոցները և, առաջին հերթին, բեռնակիր ավտոմոբիլները:

ԳԼՈՒԽ X

ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏ ԶՈՐԱՑԱՐԺԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

167. *ՀՐԵՏԱՆՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ:* Կանգ առած հակառակորդի վրա հաջողությամբ գրոհ տալու համար, հարձակվողը պետք է հաղթահարի պաշտպանության ուժերի ու միջոցների նյութական ու բարոյական կայունությունը, նրա հանդեպ կրակի գերակշռություն ձեռք բերելով:

Հետևակը կարելի յե գրոհի շարժել միմիայն այն ժամանակ, յերբ հրետանին խախտած կլինի պաշտպանվողի կրակի սիստեմի կազմակերպությունը:

Կրակի սիստեմի կազմակերպության խախտման տակ պետք է հասկանալ վոչ թե ամրաշինական կառուցվածքների ավերումը, այլ հակառակորդի կենդանի ուժի ու կրակի միջոցների այնչափ լիակատար ջախջախումը, վորպեսզի նրանք չկարողանան ուժասպառ անել գրոհող հետևակ մասերը ու նրանց հարձակողական թափը կոտրել:

Դրա համար, սովորաբար, բավական է լինում հաղթահարել դիմադրության վոչ բոլոր օջախները, այլ նրանց մեծ մասը և այն էլ նրանցից ամենակարևորները, վորպեսզի խանգարել գնդացրերի խաչաձև կրակի սիստեմը:

Պաշտպանություն կազմակերպած հակառակորդի վրա հարձակվելիս, հրետանին պետք է ջարդի նրա ուժերն ու միջոցները, թողնելով հետևակին ջարդելու այն, ինչվոր վողջ է մնացել հրետանու կրակից: Սակայն այդ չի ժխտում հետևակի համար այն անհրաժեշտությունը, վոր նա պետք է պատրաստ լինի իր ուժերով հաղթահարել կռվի առանձին օջախները և ջախջախել հակառակորդի կենդանի ուժի հակընդդեմ հարվածներ տալու մասնավոր փորձերը:

Հրետանու ոգտավետ աշխատանքի աստիճանը կարող է բազմազան լինել, նայած պարագային, հրետանական միջոցների քանակին, ղեկավարման հմտությանը և հետևակի հետ ունեցած կապին:

Եթե ամբողջ մարտակարգը բավականին հագեցված չէ հրետանական միջոցներով, ավելի ձեռնտու ու նպատակահարմար է այդ միջոցները լրիվ չափով ոգտագործել հակառակորդի դիրքի ամենակարևոր ռայոնների դեմ, քան հավասարաչափ մանր մասերով բաշխել ամբողջ ճակատի վրա:

168. ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: Հարձակման ժամանակ հրետանու հաջող գործողությունների համար անհրաժեշտ է.

ա) կենտրոնացնել գլխավոր ուղղության վրա բավականին ուժեղ հրետանական միջոցներ (հրանոթներ և արկեր).

բ) խնամքով կազմակերպել կրակային աշխատանքը.

գ) լիակատար կապ և համագործակցություն հաստատել հետևակի հետ:

169. ՀԱՇՎԱՐԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Վորքան ավելի ուժեղ են հակառակորդի դիրքերը, այնքան ավելի ճիշտ, նախամտածված և լիակատար պիտի լինի հրետանական նախապատրաստությունը, բայց այնքան էլ ավելի ժամանակ է պահանջում այդ նախապատրաստությունը: Ուստի հակառակորդի դիրքի վրա գրոհ կազմակերպելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այն ժամանակը, վոր պետք է կորցնել հրետանու ամենամեծ ոգտակար ներգործություն ստանալու համար:

170. ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ զորաշարժական պատերազմում պաշտպանության համար կանգ առած հակառակորդի վրա հարձակման ժամանակ.

1) Մերձեցման շրջանում հրետանին ոգնում է առաջավոր պահապան մասերին, աջակցելով հակառակորդի պահպանությունը ճնշելուն ու յետ մղելուն:

2) Հարձակման շրջանում հրետանին պաշտպանում և ապահովում է մարտակարգի բացազատումը և հետևակի կողմից գրոհի համար ձեռնտու յելակետային դրություն գրավելը: Միաժամանակ հրետանին իր կրակով հարկադրում է հակառակորդին հայտաբերել իր կրակային միջոցների և, մասնավորապես հրետանու տեղն ու ուժը:

3) Գրոհի նախապատրաստության ժամանակ, հրետանին վոչնչացնում է պաշտպանության միջոցները, ճնշելով կովի կրակային ոջախները և մասամբ ավերելով ամրաշինական կառուցվածքները. Հրետանին կռիվ է մղում հակառակորդի մարտկոցների դեմ, ձգտելով նրանց ճնշել գոնե ժամանակավորապես, ու բարոյալքում է կենդանի ուժը, թուլացնելով նրա դիմադրության ընդունակությունը:

4) Հետևակի գրոհի ժամանակ, հրետանին անմիջապես ոգնում է նրան, իր կրակով անընդհատ ուղեկցելով նրան և ճնշելով հակառակորդին. Հրետանին պաշտպանում է գրոհը, իր կրակով վրա տալով այն բնագծերի և կետերի վրա, վորտեղից հակառակորդը կարող է դիմադրություն կատարել ու կրակ վարել և հակագրոհներ ձեռնարկել: Միաժամանակ նա շարունակում է կրակ վարել հակառակորդի հրետանու դեմ, կաշկանդելով նրա գործողությունները, և հակառակորդի թիկունքների դեմ, նրանց նորմալ աշխատանքը խանգարելով, ոժանդակների մոտեցումը և մարտական սնունդի ու բացահանման որգանների գործողությունը խափանելով:

5) Հակառակորդի պաշտպանության շերտի ներսը հետևակի խորը ներխուժելու ժամանակ, հրետանին շարունակում է հետևակին աջակցել, յետ շպրտելով և բարոյալքելով ճանապարհին հանդիպող կենդանի ուժն ու կրակային միջոցները, կասեցնում ու ճնշում է հակագրոհների փորձերը և աջակցում է հետևակի կողմից տարածություն գրավելուն:

171. ՊԱՐԱԳԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ: Գրոհի հաջողության համար հարկավոր է, վոր հարձակման ուղղության ու շերտի և գլխավորա-

պես գլխավոր հարվածի ուղղության ընտրությունը համապատասխանի հրետանական միջոցների ամենալիակատար օգտագործման հնարավորությանը:

Այդ դեպքում պետք է նկատի ունենալ. ա) ժամանակը, որն անհրաժեշտ է հրետանու խմբավորման և մարտական աշխատանքի համար նրա նախապատրաստության համար. բ) դիտողության վերերկրյա և օդային միջոցների առկայությունը, որոնք հրետանուն հնարավորություն են տալիս գործուն և անընդհատ կրակ վարել պաշտպանության ամենակարևոր օջախների դեմ. գ) տեղանքի բնույթը, որից կախված է հրետանու բացազատման, խմբավորման, կրակ վարելու և նրա մարտական սնունդի հաջողությունը:

Յեթե ընդհանուր պարագան հարկադրում է ընդհանուր զորական հրամանատարությանն այնպիսի ուղղություն ընտրել, որը հրետանու համար շատ ձեռնտու կողմեր չունի՝ վերերկրյա կետերից տեսողական դիտողություն կատարելու տեսակետից, պետք է նկատի ունենալ հրետանուն օդային և գործիական հետախուզությունների միջոցներով ապահովության կարևորությունը:

Սակայն, յեթե անհնարին է գլխավոր հարվածի ընտրությունը համաձայնեցնել հրետանու կարիքների հետ, հրետանին պետք է պատրաստ լինի լարվածության և զոհերի գնով կատարածել նրան առաջադրած խնդիրները:

2. ՄԱՐՏԻ ԲՌՆՎԵԼԸ

172. *ԱՌԱՋԱՊԱՀՆԵՐԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:* Հակառակորդի պաշտպանողական շերտին մոտենալիս, առաջապահների հրետանին օգնում է իր հետևակին, ճնշելով հակառակորդի մարտական պահպանության կրակային միջոցները:

Հետագայում առաջապահների հրետանին պետք է պաշտպանի գլխավոր ուժերի և նրանց հրետանու մո-

տեցումն ու բացազատումը, նրանց համար ապահովի հաջող և պլանաչափ կերպով գրոհի համար ձեռնտու յելակետային դրություն գրավելու հնարավորությունը, իսկ գլխավոր ուժերի հրետանու համար բացի այդ, հակառակորդին հաջող հետախուզելու հնարավորությունը:

173. *ԱՌԱՋԱՊԱՀՆԵՐԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԿԱԶՄԸ:* Այդ խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ է, որ առաջապահները բավականին հագեցված լինեն հրետանիով և որ այդ հրետանին բավականին հզոր և դյուրաշարժ լինի:

Դրա համար հակառակորդի պաշտպանողական շերտին մոտենալիս, պետք է յուրաքանչյուր զորական սյան առաջապահի կազմի մեջ ունենալ սյան ամբողջ հրետանու մոտ կեսը և, գլխավորապես, հոբիցները:

Յերբեմն օգտակար է լինում ամենակարևոր ուղղության վրա շարժվող սյուների առաջապահների կազմի մեջ մտցնել կորպուսային հրետանու մի մասը:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ զորաշարժական մարտում հրետանու վերախմբավորումը միշտ դժվարություն է ներկայացնում ու խանգարում է հրետանու գործողությունների անընդհատությանը: Ուստի չպետք է տարվել առաջապահների հրետանու ուժեղացումով ի հաշիվ գլխավոր ուժերի չափազանց թուլացման:

Ամեն մի առանձին դեպքում ճիշտ լուծումը կախված է պարագայից:

174. *ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ:* Հրետանուն դեռ սյուների միջև ու սյուների ներսում բաշխելուց առաջ, պաշտպանողական շերտին մոտենալու համար, պետք է օդային և վերերկրյա հետախուզություն կազմակերպել: Հարձակողական գործողությունների նախապատրաստության ժամանակ, մարտադաշտը խնամքով հետախուզելու համար հաճախ բավական ժամանակ է լինում: Այդ հանգամանքը մեծ պահանջներ է դնում հետախու-

զությանը: Շատ դեպքերում հետախուզության տվյալներն ազդում են հրետանու մարտի համար խմբավորման պլանի վրա:

Առաջապահների հրետանական հետախուզությունը պետք է ինքնուրույն և անկախ լինի գլխավոր ուժերի հրետանական հետախուզությունից: Սակայն ավագ հրետանական պետը կարող է առաջապահների հրետանու հետախուզության վրա նաև մի քանի այնպիսի լրացուցիչ խնդիրների լուծում դնել, որոնք նշանակություն ունեն գլխավոր ուժերի հրետանու գործողությունների համար:

Մասնավորապես հակամարտկոցային հետախուզությունը, իբրև ընդհանուր կանոն, պետք է կազմակերպված լինի դեռ առաջապահների հրետանու կողմից: Այդ դեպքում կարող է մեծ օգուտ բերել կրակային հետախուզությունը, որը հայտաբերում է հակառակորդի կրակային միջոցները և շատ դեպքերում հնարավորություն է տալիս ընդհանուր գաղափար կազմել նրա դասավորման մասին:

175. ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱՋԱՏՈՒՄԸ կատարվում է հետևակ մասերի պաշտպանության տակ: Հակառակորդի տեղում դասավորումը թույլ է տալիս չշտապել հրետանու բացազատում կատարելու ի վնաս նրա ձեռնտու խմբավորմանը: Սակայն ուշացումը պետք է խիստ սահմանափակված լինի իսկական անհրաժեշտությամբ, որովհետև մերձեցման շրջանում առաջին խնդիրների արագ լուծումը հեշտացնում է ձեռնտու ելակետային դրություն գրավելը և խնամքով հետախուզություն կատարելը:

Առաջապահի հրետանու համար իբրև փործողության առարկաներ մեծ մասամբ հանդիսանում են առաջին հերթին շարժական, վաղանցիկ նպատակները՝ դնդացիրները, հրաձգային խմբակները, գրահապատ միավորները, առաջ դուրս բերած մարտկոցները ու առանձին հրանոթները: Ավելի խորը դասավորված հրետանու դեմ ձեռնտու չէ այդ շրջանում կռիվ մղել, այլ միայն հաշվի առնել:

176. ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, սովորաբար, միացվում է այդ հրետանու պետի ձեռքում:

Բաժնյակները բացազատվում են լայն ճակատների վրա (բաժնյակի համար), զատելով այն մարտկոցները, որոնց համար, մեծ հեռավորության պատճառով, ավելի ձեռնտու չէ առանձին գործել:

Կապ: Յուրաքանչյուր բաժնյակ և յուրաքանչյուր մարտկոց դեռ երթի ժամանակ կապվում է հետևակ մասերի հետ (գումարտակների, վաշտերի հետ):

Կապի բնույթը հետևակի հետ և հրետանու մեջ մոտենում է այն կապին, որը բացատրած է դիմամարտի համար IX գլխում:

177. ԱՌԱՋԱՊԱՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Մարտկոցների դիրքերի ռայոնները հաճախ նույնը չեն լինում, ինչ որ հրետանու դիրքերի ռայոնները մարտի հետագա շրջանում:

Մասնավոր խնդիրների լուծման համար որոշ մարտկոցներ ու առանձին հրանոթներ կարող են կարճ ժամանակով այնպիսի կրակային դիրքեր բռնել, որոնք լիակատար չեն ծածկում հակառակորդի դիտողության աչքից:

Առաջապահի մարտկոցները, հատկապես վաղանցիկ, մանր նպատակների ճնշման ժամանակ, պետք է տեղանքն օգտագործեն ամենալրիվ չափով: Թնդանոթային մարտկոցների համար հատկապես կարևոր է մեծ մեռյալ տարածություններից խուսափել:

Առաջապահի հրետանու տեղափոխությունները վրտավաններով են կատարվում: Մարտկոցներն առաջ են շարժվում ցատկումներով, մեկ բնագծից դեպի մյուսը, մյուս մարտկոցների կրակի պաշտպանության տակ:

Որոշ դեպքերում հարկ է լինում տեղափոխությունների համար մարտկոցները մասնատել. հրանոթները հաջորդաբար փոխում են իրենց կրակային դիրքերը, մեկը մյուսին կրակով օգնելով:

3. ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

178. *ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ*: Գլխավոր ուժերն ըսկսում են իրենց հրետանական հետախուզությունը դեռ պահապան մասերի բացազատման շրջանում: Հետագայում հետախուզությունը կատարվում է մարտի ամբողջ ընթացքում:

Հրամանատարական հետախուզության նպատակահարմար կազմակերպությունը, սիստեմատիկ ու լիակատար իրականացումը հարձակողական մարտում հիմնական նշանակություն է ստանում:

Հակառակորդի առջևում ընկած տեղանքի հետախուզությունը միացվում է ավագ հրետանական պետերի ձեռքում: Որքան ավելի շատ ժամանակ կա նախապատրաստական գործողությունների համար, այնքան ավելի խիստ է պահպանվում այդ միացումը:

Եթե այդ ժամանակը հասնում է մեկ օր ու գիշերվա և ավելի, դիվիզիայի հրետանու պետը, դեռ գրոհի համար հրետանու մարտական բաշխումից առաջ, խնամքով հետախուզություն է կատարում դիվիզիայի ամբողջ ճակատի վրա իրեն յենթարկվող հրետանական պետերի հետ միասին: Այդ հետախուզության տվյալները դիվիզիայի հրամանատարի վճռի հետ միասին հիմունք են կազմում գրոհի համար հրետանու բաշխման ու խմբավորման համար:

Եթե նախապատրաստական գործողությունների համար ժամանակը մի քանի ժամից ավելի չէ, շատ դեպքերում հարկ է լինում սահմանափակվել միայն ավագ հրետանական պետերի հարևանցի սկզբնական հետախուզությամբ, նրանց հետախուզական գործունեության գլխավոր մասը թողնելով նախապատրաստության հետագա շրջանի համար:

Հրետանական խմբակների հրամանատարները, խնդիրներ, պատասխանատու կրակային շերտեր ու դիրքային ռայոններ ստանալուց հետո, հրամանատարական հետախուզություն են կազմակերպում մեծ խնամքով:

Խմբակի հրամանատարը, վորն ոգնում է վորևէ զորական (հետևակ) միավորությանը, յեթե նույնիսկ վերջինիս հրամանատարին չի յենթարկվում, պարտավոր է նրա հետ միասին հետախուզություն կատարել:

179. *ՀՐԵՏԱՆՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԼԱՆԸ* կազմվում է հետախուզությունը վերջացնելուց հետո: Հրետանու օգտագործման պլանը կազմելիս, պետք է յելնել տվյալներից հետևյալի մասին.

ա) հակառակորդի պաշտպանողական շերտի բնույթի, գծագրության, սիստեմի և նրա ուժերի միջոցների մասին.

բ) հարձակման ճակատի ու գլխավոր հարվածի ճակատի տարածության մասին.

գ) իր զորքերի խմբավորման ու բաշխման մասին.

դ) հրետանու քանակի մասին.

ե) արկերի քանակի մասին:

Միմիայն այդ տվյալների ամբողջությունը մանրամասն պարզելուց հետո, հնարավոր է լինում նշել առկա հրետանական միջոցների օգտագործման պլանը և անցնել հրետանու խնդիրների ու բաշխման ճշտմանը:

180. *ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*: Հարձակման վճռական շրջանում հրետանու գործողությունների հաջողությունը խոշոր չափով ապահովվում է հրետանու ղեկավարման միացումով ու նրա նպատակահարմար խմբավորումով մարտական խնդիրներին համապատասխան:

Հակառակորդի պաշտպանողական շերտի համար գլխավոր ուժերի հրետանու կռվի բռնվելու նախապատրաստության համար պետք է բավականին ժամանակ տրվի: Հետևակի կողմից ձեռնարկած պաշտպանողական շերտի վաղաժամ գրոհը մինչև հրետանու լիակատար պատրաստությունը, սովորաբար չի կարող հաջողություն ունենալ:

Մյուս կողմից, յերկարատև հրետանական նախա-

պատրաստությունը զորաշարժական հարձակման ժամանակ ցանկալի չէ, վորովհետև այդ հնարավորություն է տալիս հակառակորդին պատրաստվել պաշտպանողական գործողությունների համար՝ գրոհողի ուժերի նրկատած խմբավորմանը համապատասխան ու, իր հերթին, իր ուժերի վերախմբավորում կատարել հակազորաշարժի կամ մասնավոր հակագրոհների համար:

Այդ պատճառով հրետանու ընդհանուր խմբավորումը պետք է հաշված լինի հակառակորդի կենդանի ուժի ու կրակային միջոցների արագ և այնքան լիակատար ճնշման համար, վոր հետևակի գրոհը կարողանա հաջողություն ունենալ:

181. *ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ*: Հակառակորդի հետևակի և հրաձգային միջոցների ճնշման համար պաշտպանողական շերտի 1 կլմ. տեղամասի վրա պահանջվում է մոտ 7 մարտկոց, գոնե գլխավոր հարվածի ուղղությունում:

Հակառակորդի հրետանու դեմ հաջող կռվելու համար պահանջվում է առնվազն 2 մարտկոց, հակառակորդի մեկ մարտկոցի համար այն շրջաններում, յերբ հրետանին իր մասսայական կրակով վրա յե տալիս հակառակորդի մարտկոցների վրա, նրանց չեզոքացնելու համար: Մնացած ժամանակ, հակառակորդի յուրաքանչյուր արդեն ճնշած մարտկոցի համար բավական է ունենալ նրա չեզոքացման համար 3 կամ 2, կամ նույնիսկ մեկ հրանոթ:

Զորաշարժական պատերազմում դժվար է հույս ունենալ այնպիսի հրետանական մասսաներ կենտրոնացնելու, վորոնցից հնարավոր լինի հատուկ հակամարտկոցային խմբակ զատել, վորն իր քանակով ավելի ուժեղ լիներ հակառակորդի մարտկոցների ընդհանուր քանակից կամ գոնե նրան հավասար լիներ: Այդ պատճառով հակառակորդի հրետանու դեմ վճռական կռվի շրջանում պետք է լայն չափով կիրառել դիվիզիական հրետանու մարտկոցների խոշոր մասի մասնակցությունն այդ կռվում:

182. *ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄ*: Զորաշարժական պատերազմում հարձակման ժամանակ հրետանու լիակատար միացումը, իբրև ընդհանուր կանոն, իրականացվում է դիվիզիայի մասշտաբով:

Ցանկալի յե, վոր կորպուսային հրետանին հատուկ ՀԳ խմբակ կազմի: Յեթե դրոհի ճակատի լայնությունը, տեղանքի բնույթը և նախապատրաստական աշխատանքի համար ժամանակն այդ թույլ չեն տալիս, այդ դեպքում ամբողջ կորպուսային հրետանին կամ նրա մեծ մասը պետք է յենթարկել այն դիվիզիային, վորը գլխավոր հարվածն է հասցնում: Այն դեպքերում, յերբ կորպուսը գրոհ է տալիս 5 կլմ-ից վոչ ավելի ճակատի վրա, հնարավոր է կորպուսի ամբողջ հրետանու միացումը, յեթե բավականին ժամանակ կա:

Այդ դեպքում կարելի յե թույլատրել գՐոհի իրետանու կազմի մեջ մտցնել ժամանակավորապես վորոշ մարտկոցներ այն դիվիզիայի կազմից, վորը գտնվում է ոժանդակում:

Սակայն, այդ հնարավոր է միայն այն պայմանով, վոր այդ դիվիզիան հետագայում խնդիր չի ստանալ մի այլ ուղղության վրա գործելու կորպուսի գրոհի համար նշանակված սահմանափակող գծերից դուրս:

Յեթե դիվիզիային կամ կորպուսին ԳՀՈՀ միավորություններ են տրված, այդ դեպքում նրանք յենթարկվում են հրետանու համապատասխան պետին. նրանց մտցնում են ընդհանուր խմբավորման մեջ և խնդիրներ են ստանում համապատասխան խմբակների պետերից:

Դիվիզիական հրետանին և ուժեղացման համար տրված հրետանին, սովորաբար մնում են դիվիզիայի հրետանու պետի ձեռքում կամ ամբողջովին, կամ նրանց մեծ մասը:

Այն դեպքերում, յերբ հակառակորդի հետևակ դիվիզիան պաշտպանվում է լայն ճակատի վրա (7–10 կլմ), ավելի ձեռնտու յե ՀԳ խմբակ կազմելուց բո-

լրովին հրաժարվել, դրա հաշվին ուժեղացնելով այն ՀՍ խմբակները, որոնք գործում են ամենակարևոր ուղղության վրա: Հակառակորդի հրետանու դեմ կռվելու և նրա թիկունքի գործունեությունը խանգարելու համար այդ դեպքերում առանձին մարտկոցներ են նշանակվում ՀՍ խմբակների կողմից:

Պաշտպանողական շերտի ներսում պայքարի ընթացքում հրետանու հաջորդական առաջշարժման և վերաստորադասության սխեմը պետք է նախօրոք մանրամասն մշակել: Յուրաքանչյուր վերաստորադասության մոմենտները պետք է հարմարեցնել որոշ հետևակ մասերի հայտնի բնագծեր կամ տեղական առարկաներ անցնելուն:

Սակայն, պետք է նկատի ունենալ, որ մարտական պարագան կարող է փոփոխություններ մտցնել սկզբնական ենթադրությունների մեջ: Վաղանցիկ մարտի պայմաններում և կտրուկ տեղանքում հաճախ ձեռնտու չէ լինում ՀՍ խմբակները ենթարկել հրաձիգ գնդերի հրամանատարներին:

183. ՀՐԱՆՈԹՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ: 122 մմ հոբիցները ՀՍ խմբակներ են կազմում:

76 մմ թնդանոթային մարտկոցները կարելի է հաջողությամբ նշանակել հետևակի անմիջական օժնության համար և հակառակորդի հրետանու դեմ կռվելու համար:

152 մմ հոբիցներ նշանակելը հետևակին սատարող հրետանու կազմի մեջ խոշոր չափով ավելացնում է պաշտպանվողի հետևակին հաղթահարելու հնարավորությունը:

107 մմ մարտկոցները, իբրև ընդհանուր կանոն, հակառակորդի հրետանու դեմ պայքարի և նրա թիկունքի գործունեությունը խանգարելու խնդիրներ են լուծում:

184. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ: Յուրաքանչյուր հրետանական խմբակի խնդիրները վորոշվում են վոչ թե իրենց դիրքերի ռայոններով, այլ հակառակորդի դասավորման ներսում չեղած նպատակներով:

Խմբակների, բաժնյակների և մարտկոցների միջև խնդիրների բաշխումը կատարվում է տեղանքի վրա՝ օգնության ենթակա հետևակ մասերի ուղղությանը համապատասխան:

185. ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ պետք է ապահովի, մի կողմից՝ կրակային ուժի ամենալավ օգտագործումը, իսկ մյուս կողմից՝ ամենասերտ կապը հետևակի հետ:

Այդ պահանջներից առաջինի իրագործման համար ՀՍ հրետանու դասավորությունը չի սահմանափակվում այն շրջանով, որ գրավել է հետևակը, վորին սատարում է այդ հրետանին: Բաժնյակները (մարտկոցները) տեղավորվում են այնտեղ, վորտեղից նրանց համար ամենից շատ ձեռնտու չէ չեղահար և չերկայնակի կրակ վարել նշանակված նպատակների վրա: Սակայն, մարտկոցները լայն տարածության վրա ցրելը, բարդացնելով ղեկավարությունը, նրա կազմակերպման համար ժամանակ է պահանջում: Բացի այդ հեռախոսային կապի գծերը չպետք է տանել ճակատի չերկայնությամբ, իսկ մալուխը կենտրոնաձև տանելու համար մեծ քանակությամբ մալուխ է պահանջում: Այդ պատճառով չեղահար և չերկայնակի կրակի լայն օգտագործումը պետք է խիստ համաձայնեցրած լինի ժամանակի ու միջոցների հետ:

Հաճախ ձեռնտու չէ լինում, չերբ հետևակը հասնում է դրոհի մոտավոր նպատակներին, և չեթե համապատասխան կապ ու դիտողություն կա, կողահարող մարտկոցը ՀՍ մեկ խմբակից տեղափոխել մյուսը՝ նշանոցի հասարակ ավելացումով (№ 4 սխեմա) կամ մի փոքր դարձումով:

Դրա հետ միասին ՀՍ մարտկոցների վորոշ մասը պետք ե թողնել այն հետևակ մասի դասավորման և գործողությունների շրջանում, վորի համար աշխատում են այդ մարտկոցները: Այդ վերաբերում ե, առաջին հերթին, դիվիզիական հրետանու այն մարտկոցներին, վորոնք, հետևակի առաջշարժման

ՍԽԵՄԱ № 4



ժամանակ, մյուսներից առաջ փոխում են իրենց դիրքերը և հրաձիգ գնդերի հրամատարների ստորադրության տակ են անցնում: ՀԳ խմբակի մարտկոցները սովորաբար տեղավորվում են լայն ճակատի վրա, լիովին ոգտագործելով իրենց հեռահարությունն ու չեղահար կրակը:

Վորոշ մարտկոցներին թույլատրվում ե նույն նպատակով տեղավորվել նաև իր զորական միավորության սահմանափակող գծերից դուրս, վորի մասին պետք ե հաղորդել հարևան միավորությունների հրետանական պետերին: Մարտկոցների մի մասը կա-

րող ե դիրքային շրջաններ ստանալ նաև հարևան կորպուսների տեղամասերում:

186. ԴԻՐՔԵՐԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Դիտակետերի համար գլխավոր պայմանն ե՝ լավ տեսանելիություն: Սակայն կրակային գործողության անընդհատության համար, հրամատարական դիտակետերը չպետք ե հակառակորդին այնքան մոտ լինեն, վոր նրանց հեռախոսային կապը կրակային դիրքերի հետ հաճախակի ընդհատման սպառնալիքի տակ լինի:

Առանձին կրակային խնդիրների լուծման համար (մասնավորապես, արհեստական արգելքներում անցքեր բանալու), վորոնք պահանջում են կրակողի մոտիկ տեղավորություն, սովորաբար, հնարավոր ե լինում սահմանափակվել առաջավոր դիտակետով:

ՀՍ մարտկոցների հրամատարական կետերի նորմալ հեռավորությունը հակառակորդի առաջավոր մասերից—½-ից մինչև 1½ կիլոմետր ե:

Կրակային դիրքերի հեռավորությունը կախված ե մարտկոցի խնդիրներից: Ցեթե չեղահար և թեվային կրակի ամենալիակատար ոգտագործումը իբրև հիմնական պահանջ ե հանդիսանում, այդ դեպքում հաճախ ավելի լավ ե լինում մարտկոցը դնել մի կիլոմետր հեռու, միայն թե լիակատար կողահարում ստանալ:

Ամենալավ հեռակայությունը մինչև հակառակորդի խրամատները.

ա) Հոբիցների համար՝ 3 կմ (և 2 կմ-ից վոչ մոտիկ).

բ) 76 մմ թնդանոթների համար՝ 3 կմ.-ից վոչ ավելի.

107 մմ թնդանոթները պետք ե իրենց հեռահարությունն ոգտագործեն հակառակորդի թիկունքը ռմբակոծելու համար և վոչ թե թիկունքային դիրքերից կրակ վարելու համար:

187. ԿԱՊԸ ՀԵՏԵՎԱԿԻ ՀԵՏ: Հետևակի հետ անարգել կապի հիմք են ծառայում մարտկոցների կապի ջոկերը, վորոնք պետք ե գան հրաձիգ վաշտերի

դասավորման տեղերը գումարտակի մարտակարգի բացազատման սկզբին, վորպեսզի տեղանքի վրա ծանոթանան վաշտերի խնդիրներին և նրանց կատարման պլանին:

Իբրև ընդհանուր կանոն, հարձակողական մարտում վաշտային քարտերի օգտագործումը մարտկոցների հրամատարների կողմից պարտադիր է:

Հետևակին օգնող բաժնյակների հրամատարները կամ գումարտակների հրամատարների հետ միասին գտնվում են միևնույն դիտակետերում, կամ նրանց հետ կապ են պահպանում իրենց կապի ջոկերի միջոցով:

Փոխադարձ իրազեկման համար օգտվում են կողմորոշ սքեմայով (տես հավելված №№ 1—3 ա):

Մարտում հետևակը կիրառում է տեսողական նշանարարության միջոցները կամ հրթիռները առաջուց սահմանած կրճատագրով: Հրետանուն ազդանշաններով հաղորդում են.

ա) հետևակի վորոշ ընագծերի, պայմանական գծերի կամ կետերի հասնելու մասին.

բ) հետագա շարժումն անհնարին լինելու մասին.

գ) կրակը դադարեցնելու պահանջի մասին.

դ) կրակը դեպի առաջ տեղափոխելու պահանջի մասին.

ե) կրակը թևերի վրա տեղափոխելու պահանջի մասին:

Վերջապես, գրոհին անմիջապես նախորդող շրջանում, ուժեղ հրետանական կրակի կենտրոնացումը հակառակորդի դիրքի վրա, հետևակ ստորաբաժանման տեղամասում, վերջինիս համար գրոհ տալով իբրև ազդանշան է հանդիսանում: Յուրաքանչյուր հետևակ ստորաբաժանման հրամատար պետք է հիշի, վոր ավելի բարենպաստ մոմենտ նա չի ունենալ:

188. ԳՐՈՀԻ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: Գրոհի հրետանական նախապատրաստության տևողությունը վորոշվում է այն ժամանակով, վորն անհրաժեշտ է

պաշտպանության կենդանի ուժի և կրակային միջոցների նյութապես և բարոյապես բավականին լիակատար հաղթահարելու համար: Հրետանական նախապատրաստության տևողությունը կախված է հակառակորդի ամրությունների բնույթից և, մասնավորապես, արհեստական արգելքների առկայությունից, և յեթե այդպիսիներ կան, տևում է միջին հաշվով 3—4 ժամ. այդ նախապատրաստությունը, սովորաբար, սկսվում է հետևակի հարձակման շրջանում:

189. ԿՐԱԿԻ ՀԱՄԱՐ ՅԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ: Հանկարծակիության ամենալիակատար իրականացման համար հրետանին պետք է յելակետային տվյալներ պատրաստի ամենամեծ հնարավոր ճշտությամբ կրակ վարելու համար:

Յանկալի յե կրակ վարել առանց փորձնական հրաձգության, սահմանափակվելով միայն հիմնական ուղղությունների ստուգումով առանձին ձիգերով: Յեթե հնարավոր չե կրակ վարել առանց փորձնական հրաձգության, այդպիսին պետք է կրճատել, այնքան, վորքան թույլ են տալիս միջոցներն ու տվյալները:

Բացի տեղագրական աշխատանքներից, օդաչուական և ձգաբանական ուղղումներից, կարող են ահագին օգուտ բերել այն լուսանկարները, վորոնք կատարվում են սավառնակներից:

Յեթե փորձնական հրաձգությունն անհրաժեշտ է, այդպիսին կատարվում է գրոհի որը հրետանական նախապատրաստության սկզբից անմիջապես առաջ:

Նախապես փորձնական հրաձգություն կատարելը կարող է տեղի ունենալ միայն իրական անհրաժեշտության դեպքում:

Կրճատ փորձնական հրաձգությունը կատարվում է առաջուց մշակած պլանով այն հաշվով, վոր մարտկոցների մի մասը փորձնական հրաձգություն կատա-

րի առաջին շրջանի նպատակների վրա, իսկ մյուսը միևնույն ժամանակ՝ յերկրորդ շրջանի նպատակների վրա, ապա—հակառակ կարգով:

Փորձնական հրաձգության մոտավոր կարգը

ժամանակը	Առջևի յեզրի վրա	Երկրորդ բնագծի վրա	Պայքարի յերկրորդ շրջանի նպատակների վրա դիրքի խորքում
4-00—4-40	Մարտկոց -- Ա Մարտկոց -- Բ	Գ Դ	Ե Զ
4-40—5-20	Մարտկոց — - Գ Մարտկոց — - Դ	Ե Զ	Ա Բ
5-20—60-0	Մարտկոց -- Ե Մարտկոց — Զ	Ա Բ	Գ Դ

190. ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ: Նախապատրաստական աշխատանքները պետք է ծածուկ կատարել: Հետախուզությունը չպետք է աչխուժության տպավորություն ստեղծի: Շարժումը սովորականից ավելի չպիտի լինի: Տեղագրական աշխատանքները պետք է կատարել մարտկոցների գալուց առաջ: Այդ աշխատանքներին պարտավոր են մասնակցել այն բոլոր հրետանական մասերը, վորոնք արդեն դիրք են բռնել ավելի շուտ:

Հրետանական դիրքերի ամրաշինական սարքավորումը չպետք է վաղաժամ հայտաբերել: Անհրաժեշտ շինանյութերը պետք է նախորոք պատրաստել, բայց աշխատանքները չպետք է կատարել մարտկոցների գալուց առաջ:

Դիրքերին մոտենալու ճանապարհներն ու կածանները, նույնպես և կապի գծերը պետք է խնամքով քողարկել: Մալուխն ամենալավն է առուներով տա-

նել, մի քիչ հողով ծածկել, բայց յերբեք չթույլատրել, վոր լարերը օդի միջով տանեն:

191. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԸ ԳՐՈՀԻ ՀԱՄԱՐ: Զորաշարժական պատերազմում հրետանու գործողությունների մանրամասն պլան կազմելը, մարտկոցների կրակի բաշխումով զանազան նպատակների վրա, մինչև մեկ րոպեյի ճշտությամբ, հնարավոր է լինում միայն այն ժամանակ, յերբ նախապատրաստական աշխատանքների համար առնվազն 2-3 որ ժամանակ կա: Այդ դեպքում պլաններն ու հրամանը կազմվում են մոտավորապես այնպես, ինչպես ամրացրած շերտի գրոհի համար և դիրքային պատերազմում: (Գլուխ XI):

Յեթե նախապատրաստական աշխատանքի համար ժամանակը քիչ է, այդ դեպքում սահմանափակվում են կարճ հրետանական հրամանով հետևյալ բովանդակությամբ.

1) Կողմորոշ մասը:
2) Ընդհանուր զորական պետի վճիռը:
3) Հրետանու մարտական բաշխումը:
4) Խմբակների խնդիրները (ըստ շրջանների):
5) Դիրքային ռայոնները:
6) Ցուցումներ կապի վերաբերյալ:
7) Մարտական սնունդը:
8) Հրետանական պետի գտնվելու տեղը:
9) Տեղակալները:

Հրամանին կցվում է կողմորոշ սխեման:

Հրամանն ուղարկվում է բոլոր այն հրաձիգ գնդերի հրամատարներին ու դումարտակի հրամատարներին, վորոնց հետ կապված են դիվիզիական հրետանու մասերը:

4. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԱՏԱՐՈՒՄԸ ԳՐՈՀԻՆ

192. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ: Հրետանական նախապատրաստության առաջին

գործողությունը, իբրև ընդհանուր կանոն, հանդիսանում է հայտաբերած հակառակորդի մարտկոցների ճնշումը:

Յեթե հրետանու տրամադրության տակ բավականին քանակությամբ օդային ուժեր չկան (գոնե 2-ական սավառնակ յուրաքանչյուր հակամարտկոցային բաժնյակի համար) և յեթե հրետանական հետախուզության հատուկ օրգանները հակառակորդի մարտկոցների դասավորման տեղերը ճիշտ չեն գտել, այդ դեպքում սրանց վոչնչացնելը բացառապես դժվարություններ է ներկայացնում:

Յեթե օդային հետախուզության միջոցները քիչ են և յեթե հակառակորդի մարտկոցների կրակային դիրքերի մասին տեղեկությունները միանգամայն ճիշտ չեն, նրա դեմ կարելի յե հաջողությամբ կռվել, մարտկոցների կրակը ժամանակավորապես ճնշելով և իր հետևակի համար ճանապարհ բանալով դեպի այդ մարտկոցները:

Կրակային հարձակումը հայտաբերած և նույնիսկ հավանական դիտակետի և ներքին հրետանական կապի սիստեմի վրա հաճախ ավելի մեծ և իրական հետևանքներ է տալիս, քան մարտկոցների կրակային դիրքերը գտնելու ու հարվածելու փորձերը:

Չեզոքացումն իրականացնելու համար հրետանին վրա յե տալիս հակառակորդի հայտաբերած մարտկոցների, դիտակետերի և կապի գծերի վրա, կենտրոնացրած կրակի կարճ հարվածներով: Այդ կրակային հարձակումներին, ըստ հնարավորին, մասնակցում է ամբողջ դիվիզիական և կորպուսային հրետանին, նույնպես և մեծ հզորության հրետանին, յեթե այդպիսին կա: Բացառություն են կազմում այն մարտկոցները, վորոնք հատուկ նշանակում են ստացել արհեստական արգելքներում անցքեր բանալու համար:

Հակառակորդի հրետանու վրա նման կրակային հարձակումները կրկնվում են զանազան, բայց առաջուց վորոշված, ժամանակաշրջանից հետո:

Այդ կրակային հարձակումների արանքներում այն մարտկոցները, վորոնք այդ հարձակման են քաշվել՝ հետևակի ճնշումն իբրև հիմնական խնդիր ունեցող խմբակներից, անցնում են իրենց գլխավոր խնդրի կատարմանը, իսկ հակառակորդի հրետանու դեմ կռվելը թողնում են հակամարտկոցային հրետանուն:

193. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԹԻԿՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ: Հակառակորդի թիկունքը կազմալուծելու համար մարտկոցներ են նշանակվում դիվիզիայի ՀԳ խմբակի կազմից (կամ կորպուսի ՀԳ խմբակից, յեթե այդպիսին կազմած է յեղել): Այդ խնդրի լուծումը սովորաբար դրվում է հեռահար թնդանոթային մարտկոցների վրա:

Կրակը պետք է վարել մարտի վորոշ մոմենտներում ճանապարհների հանգույցների, ամենակարևոր ճանապարհների, յերկաթուղային կայարանների, շտաբների, կապի հանգույցների, դաշտային պահեստների, վրա և այն ռայոնների վրա, վորտեղ հայտաբերված է ոժանդակների կուտակում: Սակայն, այդ տեսակի խնդիրներ լուծելիս, պետք է սահմանափակվել միայն ամենագլխավոր նպատակների ընտրությամբ, վորպեսզի իզուր տեղը արկեր չծախսել:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ձորակների, կիրճերի և հովիտների ռմբակոծման վրա, վորտեղ ամենից հաճախ հնարավոր է ոժանդակների և դումակների տեղավորումն ու շարժումը:

Հակառակորդի թիկունքի գործունեությունը խանգարող մարտկոցների կրակային աշխատանքն սկսվում է նախապատրաստության հենց սկզբից և պլանով կարելի յե մտցնել հակառակորդի վրա կատարվող կրակային հարձակումների սիստեմի մեջ:

194. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏԵՎԱԿԻ ՃՆՇՈՒՄԸ: Զորաշարժական պատերազմում թեպետ կարելի չէ հույս դնել ծածկարանների լիակատար ավերման վրա, կրակը խրամատների, գնդացրային բների, ա-

պատսպարանների և խրամուղիների վրա, նույնպես և պաշտպանության համար հարմարեցրած տեղական առարկաների վրա պետք է վարել ավերիչ հրաձգության մեթոդներով:

Միայն հրանոթային չափակցված և մշտապես աճող կրակը ծածկարանների վրա, լրիվ չափով կողահարումն օգտագործելով, ամենալավ նյութական և բարոյական հետևանքներ է տալիս:

Յեթե հակառակորդի ամրությունները թույլ են կամ բոլորովին բացակայում են, այդ դեպքում կարելի յե հաջողությամբ կիրառել մարտկոցային հերթեր և շտապ կրակ:

Նախապատրաստության վերջին շրջանի ընթացքում օգտակար է կրակի կեղծ տեղափոխություններ կատարել դեպի հակառակորդի պաշտպանողական շերտի խորքը, հակառակորդի համար դրանով տպավորություն ստեղծելով, իբր թե սկսվում է հետևակի գրոհը: Կրակի այդպիսի կեղծ տեղափոխությունները հակառակորդի վրա ճնշող ազդեցություն են ունենում, միևնույն ժամանակ հարկադրում են նրան իր ուժերն ու միջոցները հայտաբերել և ավելացնում են նրա կորուստները:

195. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ: Արհեստական արգելքների մեջ անցքեր բանալու համար առաջին հերթին նշանակվում են գնդի մարտկոցները: Նրանք անցքեր են բացում իրենց գնդերի տեղամասերում, առանց հրետանու ընդհանուր խմբավորման մեջ մտնելու և հրետանական նախապատրաստության շրջանում այլ խնդիրներ լուծելու համար չեն նշանակվում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր, սովորաբար, գնդի մարտկոցները դրա համար չեն հերիքում, արհեստական արգելքներ քանդելու համար մարտկոցներ են նշանակվում նաև դիվիզիական հրետանու ՀՍ խմբակներից: Յեթե լարափակոցը բաղկացած է յերկու կամ յերեք շարք ցցերի մեկ շեր-

տից, մեծ օգուտ կարող է տալ դիվիզիական և կոր-
պուսային հոբիցների յերկայնակի կրակը (ռումբով):

Անցքերի թիվը պետք է ճիշտ վորոշված լինի առաջուց, վորպեսզի հետևակ հրամանատարները ճիշտ իմանան, թե նրանց ստորաբաժանումների հարձակման շերտում քանի անցք և վորտեղ պիտի բացվեն: Իբրև ընդհանուր կանոն, այն տեղերը, վորտեղ պիտի անցքեր բանալ, պետք է ցույց տան գումարտակների հրամանատարները:

196. ԳՐՈՀԻՆ ՍԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ: Գրոհի մոմենտի մասին հայտնում են մարտկոցների հրամանատարներին հետևակի հետ կապ պահպանող ջոկերը և միաժամանակ վաշտերի հրամանատարները առաջուց սահմանած տեսողական ազդանշաններով: Հետևակի գրոհի շարժելուց անմիջապես առաջ, գրոհի մոտավոր նպատակների վրա ուղղված հրետանու կրակը հասնում է ամենամեծ լարվածության, ընդ վորում այդ կրակին մասնակցում են, ըստ հնարավորին, ավելի մեծ թվով մարտկոցներ: Քանի հետևակը մոտենում է այդ նպատակներին, կրակը տեղափոխվում է հետևալ նպատակների վրա և առաջին հերթին նրանց վրա, վորոնք իրենց կրակով կարող են դիմադրության մոտավոր օճախների հաջող գրոհը խանգարել:

Հատուկ նշանակություն ունի իր ժամանակին կրակի տեղափոխությունը դեպի թևերը, գնդացրային և հրացանային այն կրակը ճնշելու համար, վորը վարում են հարևան ռայոններից: Թևերի այդպիսի ապահովությունն իրականացնում են ՀՍ մարտկոցների մի մասը այն ժամանակ, յերբ այդ մարտկոցների մյուս մասը շարունակում է հետևակի համար ճանապարհ բանալ դեպի դիրքի խորքը:

ՀԳ մարտկոցները շարունակում են կռիվ մղել հակառակորդի հրետանու դեմ: Յեթե վերջինս մեծ ակտիվություն է ցուցահանում և հետևակին խոշոր վնաս է հասցնում, դժվարացնելով նրա առաջշարժումը, այդ դեպքում հակառակորդի մարտկոց-

ների դեմ կռվելու համար քաշվում են նաև վորոշ մարտկոցներ ՀԱ խմբակներից:

Յեթե ՀԳ ուժեղ խմբակ կա, նրա կազմից վորոշ մարտկոցներ կարող են արգելիչ կրակ վարել, հակառակորդի թիկունքում շարժումը խափանելով:

Կրակի պատնեշը զորաշարժական պատերազմում չի կիրառվում, վորովհետև նա արկերի շատ մեծ ծախս է պահանջում, իսկ նրա կազմակերպությունը յերկար ժամանակ է պահանջում: Կրակի հաջորդական տեղափոխությունները մի քանի ամենակարևոր նպատակներից դեպի մյուսները շատ ավելի մեծ ոգուտ է տալիս:

Անընդհատ կրակային ոգնությունը շարունակվում է նաև հակառակորդի դիրքի խորքում կռվի ժամանակ:

Հակագրոհների յետ մղումը: Հակառակորդի հակագրոհների յետ մղումին մասնակցում են ՀԱ մարտկոցները:

197. ԴԻՐՔ ՓՈԽԵԼԸ ԴԵՊԻ ԱՌԱՋ: Քանի հետևակը առաջ է շարժվում, հրետանին սկսում է դիրքերը փոխել դեպի առաջ, առաջուց նշած պլանի համաձայն, ընդ վորում առաջշարժումն սկսելու մոմենտը վորոշվում է բաժնյակների հրամանատարների, իսկ վորոշ դեպքում էլ մարտկոցների հրամանատարների նախաձեռնությամբ:

Առաջին հերթին դիրքերը փոխում են գնդի մարտկոցները, ապա 122 մմ հաուբիցները և այն 76 մմ թնդանոթային մարտկոցները, վորոնք տեղավորված են մյուսներից ավելի խորը կամ կորցրել են իրենց կապը հետևակի հետ:

Գնդի մարտկոցներն արհեստական արգելքների ավերման վերաբերյալ իրենց աշխատանքը վերջացնելուց հետո, միանգամայն պատրաստվում են դեպի առաջ տեղափոխվելու համար: Դիվիզիական հրետանու մարտկոցները, վորոնք նշանակված են առաջին հերթին տեղափոխվել, պետք է լավ իմանան, թե յերբ վո՛ր ճանապարհով պետք է սկսեն շարժումը:

Դրա համար հետևակի հետ կապ պահպանող նրանց ջոկերն ուղարկվում են այն գումարտակների կամ վաշտերի հրամանատարների մոտ, վորոնց նրանք հետագայում պիտի ուղեկցեն:

Շարժման ճանապարհները պետք է նախապես հետախուզել: Յերբ հետևակն սկսում է առաջշարժվել դեպի հակառակորդի պաշտպանողական շերտի խորքը, այդ կապի ջոկերը շարժվում են հետևակ հրամատարների հետ կամ, համենայն դեպս, գտնվում են նրանց տրամադրության տակ:

Բացի այդ, հետևակը ազդանշանի լապտեր և հրթիռներ է գործադրում իր առաջշարժման մասին տեղեկություններ տալու և մարտկոցները դեպի առաջ դուրս կանչելու համար:

Հիմնական պահանջը, վոր առաջադրվում է հետևակին ուղեկցող մարտկոցներին, հետևյալն է՝ ըստ հնարավորին, ավելի արագ կրակ բանալ այն նպատակների վրա, վորոնք տեսանելի յեն յելակետային դիտակետերից: Ուստի նոր դիրքերում տեղավորվելիս, կապի գծերը կարճ պիտի լինեն, ղեկավարությունը՝ պարզ: Չպետք է դիտակետերի և կրակային դիրքերի վորակի յետևից ընկնել:

Հրաձիգ գնդերի հրամանատարները պետք է լավ իմանան, թե վո՛ր հրետանական մասերը և վո՛ր բնագծերը կամ գծերը հետևակ մասերի կողմից անցնելուց հետո, անցնում են նրանց ստորադրության տակ: Նույնպես և այդ մասին պետք է իրազեկ լինեն վերաստորադասության յենթակա հրետանական մասերը: Վերաստորադասության անմիջական իրականացումը վորևէ հիշեցումներ չպետք է պահանջի:

ՀԱ խմբակների մարտկոցները, վորոնք տեղավորված են իրենց հետևակի գործողությունների շերտից դուրս, ամենալավ կողահարման համար, սովորաբար, փոխում են իրենց դիրքերը վերջին հերթին, ավագ հրետանական պետի տրամադրության տակ մնալով:

198. ՎԵՐԱԽՄԲԱՎՈՐՈՒՄ: Հակառակորդի պաշտպանողական շերտի խորքում հետևակի հաջողու-

թյամբ տարածվելու ժամանակ, հրետանին, ավագ հրետանական պետի ձեռքում մնալով, վերախմբավորվում է հաջողության զարգացմանը լայն չափով աջակցելու և հակառակորդի կողմից ընդհանուր հակազորաշարժի առաջն առնելու համար:

Հետապնդման կազմակերպությունը կատարվում է «Դիմամարտ» գլխում տված ցուցումների համաձայն:

199. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ: Յեթե գրոհը չի հաջողվել, հրետանին իր կրակով պետք է պաշտպանի հետևակ մասերի յետխաղացումը դեպի յելակետային դրությունը և խափանի հակառակորդի կրնկակոխ առաջշարժումը:

Յեթե հակառակորդը հարձակման է անցնում, փորձելով մեր դասավորման ներսը մտնել, հրետանին պետք է իր վրա ընդունի նրա առաջին հարվածները և նրա հարձակողական թափը կոտրի: Դրա համար հրետանին ռմբակոծում է նրա հարձակվող մասերը, ամենամեծ հեռավորություններից սկսած մինչև ամենամոտ հեռավորությունները, կրակը մինչև վերջնակետ լարվածությանը հասցնելով:

Հետևակի յետխաղացումը դեպի յելակետային դրությունը և նրա մարտակարգի վերականգնումը պետք է պաշտպանել թեկուզ հրանոթների մասնակի կորուստի գնով:

Գ Լ Ո Ւ Խ XI

ՀԱՐՁԱԿՈՒՄ ԴԻՐՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ԱՄՐԱՑՐԱԾ ԾԵՐՏԻ ԳՐՈՀԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

200. *ՄԱՐՏԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ*: Ամրացրած շերտը հարկ է լինում գրոհել այն ժամանակ, յերբ հնարավոր չի լինում նրան թիկնանցել:

Յեթե զորաշարժական հարձակման ժամանակ հընարավոր է լինում սահմանափակվել պաշտպանողական շերտի ամենափոքր ավերումով, ամրացրած շերտի գրոհի ժամանակ ավերման անհրաժեշտությունն ավելանում է: Այդ վերաբերում է մանավանդ արհեստական արգելքների ավերմանը: Հրետանական նախապատրաստության համար անհրաժեշտ ժամանակը, սովորաբար, վորոշվում է մինիմալ ժամանակամիջոցով, վորն անհրաժեշտ է լարափակոցի մեջ անցքեր բանալու համար:

Հակառակորդի կրակային միջոցները ծածկված են, լավ պաշտպանված են և շարանված են ըստ խորության, նրանց կրակը կազմակերպված է նախորոք:

201. *ՀՐԵՏԱՆՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ*: Ամրացրած շերտի պատռման ժամանակ հրետանական նախապատրաստությունն ու գրոհին սատարությունը հիմնական նշանակություն են ունենում: Հետևակի համար պայքարի առանձին օջախների հաղթահարելու վերաբերյալ ինքնուրույն կերպով մասնավոր խնդիրներ լուծելու անհրաժեշտությունը պետք է հասցրած լինի ամենափոքր սահմանի:

Հրետանին պետք է հնարավորություն տա ընդհանուր զորական հրամատարությանը՝ նշանակած ժամին վոտքի կանգնեցնել գրոհի համար նշանակած ամբողջ հետևակին, նրան հասցնել մինչև նշած նպատակները և ապահովել հաջողության զարգացումը:

202. *ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ* ամրացրած շերտի գրոհի ժամանակ, ընդհանուր առմամբ, նույնանման են հարձակման ժամանակի խնդիրներին զորաշարժական պատերազմում: Փոխվում են միայն խնդիրների կատարածման սահմաններն ու ձևերը:

Մասնավորապես հրետանին պարտավոր է.

ա) ապահովել իր հետևակի համար գրոհի համար յելակետային դրություն գրավելը (ամրացրած շերտի առջևի յեզրից 200 մետրից վոչ հեռու).

բ) խանգարել հակառակորդի ղեկավարման սիստեմը և թիկունքի գործունեությունը.

գ) ճնշել հակառակորդի ամենաշատ վնասաբեր մարտկոցները և նրանց հնարավորություն տալ վերսկսել գործոն կրակային աշխատանքը մարտի ամբողջ ընթացքում.

դ) անցքեր բանալ արհեստական արգելքների մեջ, ջարդել գնդացրային բլինդաժները, ճնշել գնդացիրները, քանդել ապաստարանները, ճնշել հետևակին և հրետանական դիտողներին խրամատներում և փակել խրամուղիները.

ե) ուղեկցել կրակով հետևակին դեպի դիրքի խորքը նրա առաջշարժման ժամանակ.

զ) լայնացնել պատառումը դեպի աջ ու ձախ և կաշկանդել կողահարող շրջանները.

ը) ճնշել հակագրոհների փորձերը և յետ շպրտել սկսված հակագրոհները:

203. ՀՐԵՏԱՆՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Հրետանին պետք է աշխատի իբրև ճիշտ մեխանիզմ: Պատահականություններին պետք է, որքան հնարավոր է, քիչ տեղ տալ: Հակառակորդի պաշտպանողական շերտը պետք է ուսումնասիրել բոլոր մանրամասնություններով: Բոլոր առանձին նպատակները, որ յենթակա յեն կրակային մշակման, պետք է լավ հայտնի լինեն ինչպես հրետանուն, այնպես էլ հետևակին: ՀՍ յուրաքանչյուր մարտկոց պետք է ոչ միայն իմանա, թե նա ո՛ր հետևակ ստորաբաժանմանն է սատարում, այլև անընդհատ շփում ունենա նրա հետ:

Հրետանու գործողությունների մանրամասն մշակված պլանը պետք է խնամքով ուսումնասիրված լինի բոլոր հետևակ հրամատարների կողմից:

Անակնալությունն ու ոպերատիվ գործողությունների գաղտնապահությունն անհրաժեշտ պայման են հանդիսանում:

Առանց վճռական գերակշռության հրետանական և օդային միջոցների նկատմամբ, գրոհն առաջուց տա-

հաջողության է մատնված: Այդ դեպքում գրոհը հնարավոր է միայն հակառակորդի զորքերի ուժեղ և մեծ հայտնի բարոյալքման ժամանակ:

2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

204. ՅԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՆՈՐՄԱՆԵՐ: Ամրացված շերտի գրոհը կազմակերպվում է կորպուսի մասշտաբով:

Յեթե հակառակորդի դիրքերն ամրացվել են հապճեպ կերպով և, առհասարակ, խոշոր ամրաշինական զարգացում չեն ստացել, այդ դեպքում գրոհը կարելի յե սահմանափակել մինչև 1½–2 կմ. ճակատով առաջին շարանի յուրաքանչյուր դիվիզիայի համար:

Յեթե հակառակորդի դիրքերն ավելի շատ են ուժեղացրած, առաջին շարանի դիվիզիայի գրոհի ճակատը, որպես կանոն, չի գերազանցում 1½ կմ: Այդ դեպքում անհրաժեշտ է ուժեղացնել հրետանին ոչ միայն քանակով, այլև որակով, այսինքն գործի դնել մեծ հզորության հրետանին:

205. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: Յուրաքանչյուր կորպուսում գրոհի ամբողջ հրետանին յենթարկվում է մեկ ավագ հրետանական պետին: Այդ պետի, նույնպես և նրա ամենամոտ օգնականների անձնական հատկությունները առաջնակարգ նշանակություն են ունենում:

Յերբ հետևակը հետզհետե առաջ է շարժվում դեպի հակառակորդի դիրքերի խորքը, հրետանու մի մասը, մշակած պլանի համաձայն, անցնում է դիվիզիաների և հրաձիգ գնդերի հրամատարների ստորադրության տակ:

206. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ: Ընդհանուր ոպերատիվ խնդիր ստանալուց հետո, հրետանու պետը միջոցների նախնական հաշիվ է անում, պատառման հնարավոր ճակատը որոշելու համար: Ապա կազմակերպում է իր շտաբը, տեղեկություններ է հավաքում գրոհի նշած տեղամասի մասին ընդհանուր գծերով և սկզբնական հետախուզություն է կա-

տարում, որի հիման վրա վերջնականապես ընտրում է տեղամասը: Դրանից հետո կատարվում է մանրամասն հետախուզություն ու պաշտպանողական շերտի ուսումնասիրություն և ընդհանուր զորական պետին զեկուցելուց հետո կազմվում է հրետանու գործողությունների պլանը:

207. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇԻՎԸ: Հետևակի ճնշման ու խրամատների, գնդացրային բլինդաժների և ապաստարանների ավերման համար պետք է ունենալ, նայած ամրությունների ուժին, 50–30–20 մետր ճակատի յերկայնությամբ մի հրանոթի համար կամ 20–35–50 հրանոթ ճակատի յուրաքանչյուր կիլոմետրի համար: Այդ դեպքում 76 մմ թնդանոթների թիվը ցանկալի յե ունենալ այդ խնդիրները կատարածող հրանոթների ընդհանուր թվի ½–¼ վոչ ավելի, վորքան ավելի շատ են ամրացրած դիրքերը, այնքան ավելի քիչ պիտի լինի այդ թնդանոթների տոկոսը:

Արհեստական արգելքներ ավերելու համար պետք է յելնել այն հաշվից, վոր առաջին շարանի յուրաքանչյուր հրաձիգ դասակի համար միջին հաշվով հարկավոր է մեկ անցք, կամ մեկ դիվիզիայի համար՝ 16 անցք: Ավերման համար նշանակվում են գլխավորապես 76 մմ թնդանոթները և բոլոր տեսակի ականանետները:

Հակառակորդի հրետանու դեմ կռվելու համար, հրետանական միջոցների նախնական հաշվի ժամանակ, պետք է յելնել վոչ միայն իր մարտկոցների առկա թվից, այլ և զանազան տիպարների և տրամաչափի հրանոթների փոխհարաբերությունից: Այդ հատուկ նշանակություն ունի հակառակորդի հրետանու նյութական մասի ավերման խնդիրները լուծելու ժամանակ:

Հակառակորդի 1 կմ ճակատի համար մարտկոցների ընդհանուր թիվը, դրա մեջ հաշված նաև հակամարտկոցային հրետանին, սովորաբար պետք է լինի 10—15 մարտկոց: Հրանոթների թիվը հաշվելիս, պետք է նկատի ունենալ նաև արկերի պաշարի առկա քանակը:

Յեթե այդ քանակությամբ մարտկոցներ չկան, և պակասը չի կարելի տանկերով լրացնել, իսկ գրոհել անհրաժեշտ է, այդ դեպքում պետք է ապահովել հրետանիով վերոհիշյալ հաշվով գոնե գլխավոր հարվածի տեղամասը: Սակայն պետք է հիշել, վոր այդ ստեղծում է մյուս տեղամասերում գրոհի համար մեծ դժվարություններ և հետևակում մեծ կորուստների հավանականություն:

208. ՊԱՏԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ: Պատառման տեղամասը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

ա) լավ տեսանելիություն ամբողջ առաջին շերտի և ամենամոտ, իսկ ավելի լավ է նաև ավելի խորը թիկունքի արհեստական արգելքների.

բ) ճակատի գոգավորություն դեպի մեր կողմը (կողահարության հարմարություն).

գ) այնպիսի տեղանք, վոր թույլ է տալիս ստեղծել հետևակ զինադաշտ և հետևակի մոտեցում հակառակորդին ամբողջ ճակատով 200—100 մ. վրա:

դ) խոշոր հրետանական մասսաների կենտրոնացման հնարավորություն և նրանց ծածկված դասավորություն, ձեռնտու վերերկրյա դիտակետերի առկայություն և կրակային կողահարման հնարավորություն.

ե) ճանապարհների առկայություն և իր թիկունքի սարքավորման հնարավորություն: Զափազանց կարևոր է, վորպեսզի տեղամասերը զննվեն և գնահատվեն միևնույն անձնավորությունների կողմից:

209. ԳՐՈՀԻ ՀՐԵՏԱՆՈՒ ՇՏԱԲԸ ՅԵՎ ՆՐԱ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ:

Շտաբի կազմի մեջ պետք է մտնեն.

ա) շտաբի պետը,
բ) օպերատիվ մասի պետը,
գ) հետախուզության պետը,
դ) կապի պետը,
ե) քիմիական ծառայության պետը,
զ) պարետը և նրա օգնականները,

ը) հատուկ հրետանական հետախուզության ստորաբաժանումների պետերը,

թ) սավառնակային ջոկատի հրամանատարը,

ժ) սադյորական դասակի հրամանատարը,

ի) գրագիրներ և գծագրիչներ:

Բացի այդ յուրաքանչյուր հրետանական խմբակից հրամանատարական կազմի մեկ անձնավորություն:

Շտաբի տրամադրության տակ գտնվում է նաև հեռագրական վաշտը և ռադիոկայանը:

Պարետի տրամադրության տակ գտնվում են հեծելազորի դասակը և առնվազն մեկ հետևակ դասակ:

Շտաբի հիմնական նախնական աշխատանքն է՝ գրոհի շրջանի մասին տեղեկությունների հավաքում. քարտեզներ, դասավորման սխեմաներ, դիրքերի, դիտակետերի, ճանապարհների նկարագրություններ: Շատ մեծ նշանակություն է ունենում օդից լուսանկարելը: Յեթե նախորոք շատ լուսանկարներ պատրաստված չեն յեղել, անհրաժեշտ է լուսանկարել ամբողջ շրջանը, իր թիկունքից սկսած մինչև հակառակորդի թիկունքը այն հաշվով, վոր նկարած շերտի ընդհանուր խորությունն առնվազն 12—15 կմ. լինի:

210 ՆՇԱԾ ՇՐՋԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ: Հրետանու պետն իր շտաբի կազմի յերկու կամ յերեք անձնավորության հետ, նույնպես և հարվածող խմբակի շտաբի ներկայացուցիչների և ճարտարագետի հետ միասին դուրս է գալիս նախնական հետախուզության: Կորպուսի շտաբում նա քարտեզ է ստանում, վորի վրա ճիշտ նկարած է հակառակորդի և իր զորքերի դասավորությունը, նաև քարտեզի նկարագրությունն ու լուսանկարչական պլանը:

Շրջանի շրջագայությունը կատարվում է ավտոմոբիլներով կամ ձիով:

Հետախուզությանը մասնակցողներին դիմավորելու համար առաջուց պայմանավորված կետերն են ուղարկվում, իբրև ուղեցույցներ, հրամանատարական կազ-

մի անձինք այն մասերից, վորոնք տեղավորված են հետախուզական շրջանում:

Զննությունը կատարվում է արագ կերպով: Հակառակորդի դասավորությունը, վորն առաջուց պետք է ուսումնասիրված լինի քարտեզով, զննվում է հաջորդաբար զանազան դիտակետերից՝ թե գործող ու թե հընարավոր: Միաժամանակ նշվում են հրամանատարական կետերը, դիտակետերը, կրակային դիրքերը, նոր ճանապարհներն ու կամուրջները և հների վերանորոգումը:

Շրջագայությունը վերջացնելուց հետո, նայած հակառակորդի դասավորմանը, տեղանքի բնույթին ու դիտակետերի տեսակներին, նշում են այն ռայոնների թիվը, վորոնց պետք է բաժանել հակառակորդի ճակատը՝ նրա հրետանական մշակման համար: Այդ ռայոններին համապատասխան, նշում են ՀՍ խմբակների մոտավոր կազմը:

211 ՀԵՏԱԳԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԻ ՇՏԱԲՈՒՄ: Առաջին արագ զննությունից հետո, հրետանու պետն իր մոտակա պատասխանատու աշխատակիցների հետ միասին անցնում է ռայոնի մանրամասն ուսումնասիրությանը: Այդ ժամանակ դիրքերում արդեն դասավորված մասերը ամեն կերպ նրան աջակցություն են ցույց տալիս:

Յուրաքանչյուր դիտակետից պետք է գծագրել անտեսության դաշտերը ու դրան համապատասխան պետք է անցնել նոր լրացուցիչ կետեր փնտռելուն: Հրետանական մասերի հրամանատարները պարտավոր են հետևել, վորպեսզի իրենց յենթարկվող մարտկոցների բոլոր դիտակետերի անտեսության դաշտերը գծագրված լինեն ամենամեծ խնամքով ու ճշտությամբ:

Հրետանու պետն ու նրա օգնականներն անձամբ շրջում են վոտով կամ ձիով բոլոր գրաված և հնարավոր դիտակետերը, նշանակում են այն ամենը, ինչ վոր բաց է թողնված, դիտողության ընդհանուր սխեմի

մեջ ուղղումներ են մտցնում և տեսանելիության վերջնական ամփոփում կատարելով, կազմում է վերջնական սխեմը:

Շրջագայությունն ինքը կատարվում է հետևյալ կարգով. սկզբում բոլորը միասին շրջում են ամենակարևոր դիտակետերը, միաժամանակ ուսումնասիրելով հակառակորդի դասավորությունն ընդհանուր առմամբ. դրա համար կարելի յե գործադրել 1-ից մինչև 3 որ. ապա շրջանը բաժանում են առանձին տեղամասերի, և անձնական հետախուզություն կատարողներից յուրաքանչյուրն ուսումնասիրում է իր տեղամասը. վերջապես, յերբ այդ ուսումնասիրությունը վերջանում է, հրետանու պետը նորից հավաքում է բոլոր մասնակցողներին ու նրանց հետ միասին ևս մեկ անգամ շրջում է բոլոր տեղամասերը:

Այդ ժամանակ հրետանու պետի շտաբը կողմորոշ պլան է կազմում (եթե այդպիսին չի յեղել) կամ հոգ է տանում այդ պլանը կատարելագործելու: Ապա լրացուցիչ սքեմաներ են կազմում ե՛լ ավելի խոշոր մասշտաբով (լուսանկարների մասշտաբով):

Յերբ ամբողջ շրջանը ուսումնասիրած և ճիշտ նկարած կլինի, վերջնականապես նշում ու ներկայացնում են ընդհանուր զորական պետին ի հաստատություն պատասխան սահմանները՝ (գրոհի գոտին): Այդ սահմանները ընտրում են այն հաշվով, վոր գրոհող հետևակը թևերից պաշտպանված լինի այն շրջանների գնդացրային ու հրացանային կրակից, վորոնք հարվածական խմբակի հրետանու կրակային մշակման գոտուց դուրս են գտնվում: Սակայն այդ լիովին խուսափել համարյա թե յերբեք չի հաջողվի: Համենայն դեպս, պատասխան սահմանների վորոշումը պետք է կատարել հաճախակի օդալուսանկարների և կրտսեր հետևակ հրամանատարների և առաջավոր հրետանական դիտողների ցուցումների հիման վրա: Հետո հրետանու պետն անցնում է կազմակերպչական միջոցառումներին:

Յեթե ճակատում կանգնած մասերը գրոհի համար փոխարինվում են թարմ մասերով, այդ դեպքում ցանկալի յե հրետանին թողնել դիրքերում, վորովհետև վոչոք չի կարող հրետանուց ավելի լավ իմանալ շրջանը:

Յեթե պատասխանը մասնակցելու համար ուժեղացման հրետանի յե գալիս, հրետանու պետը կատարում է նրա գալու հաշիվը, յուրաքանչյուր մասի համար առանձին, և յեկող մասերը հաշվառման է յենթարկում նրանց թաքուն դասավորման և առաջիկա գործողության ժամանակ նրանց տեղը վորոշելու համար:

212. Մարտական բաշխման հիմունքները: Գրոհի հրետանին սովորաբար բաշխվում է հետևյալ կերպ.

ա) ՀՍ խմբակները բաշխվում են գրոհող դիվիզիաների թվի համաձայն: Ցանկալի յե, վոր այդ խմբակների հրամանատարները լինեն դիվիզիական հրետանու համապատասխան գնդերի հրամանատարները. դրանով պարզվում ու հեշտացվում է վերասորադասությունը մարտի ընթացքում:

Գնդի հրետանին, մնալով հրաձիգ գնդերի հրամանատարների ստորադրության տակ, մտցվում է մարտկոցների ընդհանուր հաշվի մեջ: Աշխատանքի բոլոր ժամկետներն ու կարգը, վոր նախատեսված են հրետանու գործողությունների պլանով, պարտադիր են նաև գնդի բաժնյակների համար: Վերջիններն իրենց գնդերի հարձակման շերտում անցքեր են բացում արհեստական արգելքներում:

Հրետանու ըստ խնդիրների բաշխման ժամանակ, պետք է նկատի ունենալ, վոր խրամատների ավերման ու հետևակի ճնշման համար նախապատրաստության շրջանում պետք է նշանակել գրոհի հրետանու բոլոր հրանոթների մինչև 50$^0/_0$: Մնացած հրետանին պետք է բաշխել արհեստական արգելքներում անցքեր բանալու և հակառակորդի հրետանու դեմ կռվելու և նրա թիկունքը ռմբակոծելու համար:

բ) ՀԿ խմբակի քանակն է՝ հրետանու ամբողջ քանակի 25 %-ից մինչև 35 %-ը։

գ) Ցեխե դրոհի հրետանու մեջ մտցվում են ԳՀՈՀ մասերը, նրանք բաշխվում են ընդհանուր հիմունքներով։

213 ՀՐԵՏԱՆՈՒ ՊԵՏԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ։ Խմբակների հրամատարներ նշելով, հրետանու պետը նրանց ծանոթացնում է պատասխան շրջաններին։ Ապա խմբակների հրամատարները մանրամասն ուսումնասիրում են նրանց համար նշած տեղամասերը տեղանքի ու լուսանկարչական պլանի վրա։

Հետախուզության հիմնական խնդիրներն են՝ վորոշել հետևյալ տվյալները (տես եջ 170)։

Հակառակորդի դասավորման բազմակողմանի ու մանրամասն ուսումնասիրության համար անհրաժեշտ է նրան զննել զանազան կետերից, սկսելով տեղանքի ամենաբարձր կետերից ու ավարտելով առաջավոր խրամատներով ու ոդնական դիտակետերով։

Խմբակների հրամատարների աշխատանքը վերջացնելուց հետո, հրետանու պետը նրանց հետ միասին ևս մեկ անգամ շրջում է ամբողջ ռայոնը և լսում է նրանց զեկուցումները, վորոնց բովանդակությունը հետևյալը պետք է լինի.

ա) իր տեղամասի գնահատումը.

բ) Նկատառումներ կրակի բաշխման մասին, ցույց տալով, թե վորտեղ են հարկավոր հզոր հորիցները, վորտեղ դիվիզիական հորիցները և վորտեղ կարելի յե սահմանափակվել 76 մմ թնդանոթներով։

գ) իր դիտակետերի ու կրակային դիրքերի տեղադրության սխեմի նշումը։

Խմբակների հրամատարների հետ միասին հետախուզությունը պահանջում է 2—3 որ։

214 ՀՐԵՏԱՆՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ։ Խմբակների հրամատարների հետ միասին հետախուզությունը վերջացնելուց հետո, հրետանու պետը վերջնականապես բաշխում է հրետանին ըստ խմբակների (սահմանում է վերջինների կազմը)։

Այդ բաշխման հետագա փոփոխությունները մինչև հետևակի գրոհի մոմենտը, վորպես կանոն, անթույլատրելի յեն։ Ուստի հրետանու պետի վճիռ կայացնելուն պետք է նախորդի այն բոլոր հարցերի լուրջ ու բազմակողմանի մշակումը, վորոնք կապ ունեն գրոհի հրետանու կրակային աշխատանքի սխեմի հետ։ Այդ մշակումը պետք է կատարել հանդիստ պարագայում խմբակների հրամատարների բացակայությամբ, վորովհետև նրանց մասնավոր պահանջները կարող են ազդեցություն ունենալ հրետանու պետի կամքի վրա։

215 ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՀՍ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ։ Խմբակների կազմը վերջնականապես սահմանելուց և դիտակետերի հաստատված բաշխումը հրետանու պետից ստանալուց հետո, ՀՍ խմբակների հրամատարները բաժանում են բաժնյակների հրամատարներին (բոլոր մարտկոցների համար) քարտեզները, խրամատների լուսանկարչական պլանները, կողմորոշող պլանը և կրակի բաշխման սխեման։ Վերջինիս վրա նշանակվում են պատասխանատու կրակային շերտերի և խմբակի գիտողության սեկտորների ճիշտ սահմանները, դիտակետերի համարները և կրակային դիրքերի շրջանները։

Խմբակի հրամատարը կանչում է իր բաժնյակների հրամատարներին մարտկոցների հրամատարների հետ միասին։ Այդ միջոցին պարետն ուժեղացրած պոստեր է դնում, վորոնք ցույց են տալիս տեղափոխության ճանապարհներն ու կարգը ապաքողարկումից խուսափելու համար։

Բաժնյակների ու մարտկոցների հրամատարները կանչած տեղը գալուց հետո, ուսումնասիրում են հակառակորդի դասավորությունը խմբակի գործողությունների շրջանում տեղանքի ու պլանների վրա։

Ապա խմբակի հրամատարը ճիշտ ցույց է տալիս

Արհեստական արգելքները	Խրամատները	Մարտկոցները	Թիկունքը
Շերտերի թիվն ու ուղղությունը: Յուրաքանչյուր շերտի խորությունը (ցցերի շարքերի թիվն ու նյութը): Էլեկտրական հոսք: Ականները և այլ փակոցները:	Խրամատների փոխադարձ տեղադրությունն ու կրակային համագործակցությունը: Յուրաքանչյուր խրամատի ուղղությունն ու տարածությունը: Գնդացրային բների, դիտակետերի և դեպի առաջ դուրս բերած պահակների քանակն ու տեղադրությունը: Հրամատարական դիտակետերը: Բլինդաժները: խրամուղիների թիվը՝ նրանց յերկարությունը:	Կրակային գծերի տեղադրությունը: Դիտակետերը, կրակային գծերի հետ կապված կապի գծերը թիկունքից նրանց մոտենալու ճանապարհները: Տիպարներն ու տրամաչափերը: Հնարավորությունները (մարտի զանազան շրջանների համեմատ):	Օժանդակների մոտենալու հնարավոր ճանապարհները: Նրանց կուտակման հնարավոր տեղերը: Շտաբները: Թիկունքի հետ հաղորդակցությունը: Ճանապարհները և հեռախոսա-հեռագրական գծերը:

բաժնյակների հրամատարներին ու այն առանձին մարտկոցների հրամատարներին, վորոնք մտնում են խմբակի կազմի մեջ, նրանց պատասխանատու կրակային շերտերի (շրջանների) սահմանները տեղական առարկաներով:

Այդ ցուցումներին համապատասխան, բաժնյակների և մարտկոցների հրամատարները պլանների վրա ճիշտ նշանակում են իրենց կրակային շրջանները: Դրանից հետո տեղի յե ունենում բոլոր դիտակետերի ընտրությունն ու վերջնական բաշխումը մարտկոցների միջև, վորը և հաստատվում է խմբակի հրամատարի կողմից ու զեկուցագիր է ուղարկվում հրետանու պետին, ճիշտ նշանակելով, թե վոր դիտակետն է և ում կողմից գրաված:

Խմբակի հրամատարը բոլոր հրամատարական դիտակետերից ստուգում է, թե արդյոք ճի՞շտ են հասկացել մարտկոցների հրամատարները իրենց տեղամասերի սահմանները: Մարտկոցների հրամատարների զեկուցումները ցանկալի յե կատարել հետևակի հրամատարների ներկայությամբ, իսկ յերբեմն էլ հատկապես նրանց համար:

Հետագայում բոլոր մարտկոցների հրամատարները շարունակում են կատարել իրենց հետախուզությունը մինչև գրոհի որը:

216. ՀԳ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ: Հակառակորդի հրետանու դեմ կռիվ մղող մարտկոցներին անհրաժեշտ է ոդային միջոցներ տալ հետախուզություն կատարելու և կրակը ճշտելու համար:

Յուրաքանչյուր հակամարտկոցային բաժնյակի համար պետք է ունենալ առնվազն 3 սավառնակ, հրետանական հետախուզության հատուկ օրգաններից անկախ: Յեթե սավառնակները քիչ են, այդ դեպքում հակամարտկոցային հրետանու աշխատանքը խոշոր չափով պատահական բնույթ է կրում: Այդ պատճառով, յեթե

ոդային ուժերը քիչ են, չպետք է մեծ քանակությամբ ՀԳ խմբակներ ունենալ։

ՀԳ խմբակների կազմի մեջ նշանակած ուժեղացման մարտկոցների հրամանատարական կազմը կանչվում է գրոհի շրջանը, որքան հնարավոր է, ավելի շուտ։

Ոդաչուները, առնվազն շաբաթը մեկ անգամ նկարում են հակառակորդի հրետանական դիրքերի հավանական շրջանները։ Բոլոր հայտաբերած մարտկոցները նշանակվում ու համարագրվում են։ Ապա լրացուցիչ հետախուզությամբ (մշտական վերերկրյա դիտողությամբ, ոդային լուսանկարչությամբ ցածրացումով, փախստականների ցուցումներով) սահմանվում է, թե որ մարտկոցներն են իսկական և որոնք են կեղծ։ Գործող մարտկոցները պետք է խնամքով կլասիֆիկացիայի ենթարկել ըստ նրանց տիպարների և տրամաչափերի։

Սխեմա № 5

Համարագրությունը սահմանվում է այն հաշվով, որ հաջորդաբար հայտաբերված մարտկոցները կարելի լինի համարակալել որոշ կարգով։ Դրա համար անհրաժեշտ է պահեստի համարներ ունենալ։ Նշելով այն պայմանական գիծը, որը խոտորնակի կերպով բաժանում է հակառակորդի հրետանական դիրքերի շերտը, այդ գծից դեպի աջ տեղավորված մարտկոցների համար սահմանում են, օրինակ, №№ 1—20, իսկ դեպի ձախ տեղավորվածների համար՝ №№ 20—40 (տես № 5 սխեման)։

Հակամարտկոցային հրետանու դիտակետերը դասավորվում են լայն ճակատի վրա և շարանվում են խորությամբ։ Դիտողությունը կատարվում է ցերեկը և գիշերը (բռնկումների հատումները մի քանի օրվա ընթացքում երբեմն շատ ճիշտ տվյալներ են տալիս հակառակորդի մարտկոցների տեղավորման մասին)։

Հրետանական ազդեցության ենթակա պիտի լինեն ոչ միայն հակառակորդի այն հրետանին, որը տեղավորված է գրոհի ճակատի դիմաց, այլ և այն մարտկոցները, որոնք կանգնած են ոչ պակաս քան 5 կլմ դեպի աջ և այնքան էլ դեպի ձախ։ Այսպիսով, յեթե կորպուսը գրոհ է տալիս 5 կլմ ճակատի վրա, այդ դեպքում հակամարտկոցային պայքարի ճակատը սովորաբար հասնում է 15 կլմ։

Ղեկավարման ու մասնավոր խնդիրների լուծման հարմարության համար, ՀԳ խմբակը բաժանվում է ենթախմբակների։

Հակառակորդի թիկունքը ռմբակոծելու համար կարելի յե հատուկ ենթախմբակ նշանակել։ Սակայն, այդ խնդիրներն ավելի հաճախ հանձնվում են հակամարտկոցային ենթախմբակներին և դրա համար սրանց միջև ճիշտ բաշխվում է հակառակորդի ամբողջ թիկունքային շերտը։

217. ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ։

Իմպրովիզացիան (անպատրաստությունը) անթույլատրելի յե ոչ միայն ամրացված շերտի գրոհի նախապատրաստության ժամանակ, այլև այդ գրոհին սատարություն կատարելու ժամանակ։ Ուստի յուրաքանչյուր մարտկոցի գործողությունների պլանը պետք է մշակած լինի ճիշտ ժամերով։

Ոպերատիվ գաղտնապահության համար, գրոհի օրն ու ժամն առաջուց չի հաղորդվում զորքերին։ Գործողությունների պլանում գրոհի օրը պայմանական կերպով նշանակվում է Ո տառով, իսկ գրոհի հրետանական նախապատրաստության սկզբի ժամը՝ Ժ տա-

ռով։ Յուրաքանչյուր մարտկոցի համար աշխատանքի կարգը ցույց է տրվում, հաշվելով Ժ ժամից։ Օրինակ, յեթե մարտկոցների կրակի տեղափոխությունը պետք է կատարել հրետանական նախապատրաստության սկզբից 45 րոպե հետո, դրա ժամանակը նշանակվում է Ժ+45։

Հրետանու պետի օրինակելի հրամանը ու ՀՍ խըմբակի հրամանատարի հրամանի քաղվածքը տես №№ 12 և 13 հավելվածներում։

218. ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ։ Ամրացրած չերտի գրոհի նախապատրաստության ու սատարության ժամանակ, հրետանական կրակի ամբողջ ուժն ու գործունեությունը հիմնվում է շեղահար ու թևային կրակի հմուտ և նպատակահարմար զուգակցության վրա։

Հաճախ ավելի ձեռնտու յե լինում մարտկոցը տեղավորել ½—1 կմ ավելի խորը, միայն թե հնարավոր լինի ամենալավ կողահարություն ձեռք բերել։

Գրոհողի հրետանական դիրքերի ամբողջ չերտը բաժանվում է մի քանի դիրքային շրջանների (իբրև սահմանագծեր ծառայում են բնագծերն ու տեղական առարկաները)։ Յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է պարետային ոգնական, վորի տեղը նշանակած պիտի լինի յուրաքանչյուր որվա համար վորոշ ժամից սկսած։

Դիրքային շրջանների բաշխումը պարետային ոգնականների գտնվելու տեղի ցուցումի հետ միասին ուղարկվում է բոլոր մարտկոցների հրամանատարներին։

Պարետային ոգնականները ճանապարհների վրա հետիոտ մարդիկ են դնում, իսկ ճանապարհների խաչմերուկների վրա ցուցիչներ են դնում հետևյալ մակագրերով «դեպի I դիրքի պարետը», «դեպի IV դիրքի պարետը»։

Մարտկոցների հրամանատարները վորոշում են նրանց համար նշանակած կրակային շրջանների վրա կատարվելիք հրաձգության [illegible] ուղղությունները

և, նշանակելով այդ ուղությունները նշանաձողերով, կրակային դիրքեր են փնտռում, ըստ վորում զգուշություն են պահպանում, վորպեսզի իրենց չհայտաբերել։ Ընտրած կրակային դիրքերը նշանակվում են մարտկոցների հրամանատարների և համապատասխան պարետային ոգնականի կողմից։

Մարտկոցների հրամանատարների միջև ծագած բոլոր ընդհարումներն ու թյուրիմացությունները լուծում է պարետային ոգնականը. յեթե այդ նրա ուժից վեր է, հարցը լուծելու համար փոխանցվում է պարետին կամ, վերջապես, հրետանու պետին։

Կրակային դիրքի ընտրության ժամանակ առավելություն ստանալու իրավունքը վորոշվում է հրետանու պետի կողմից, նայած մարտկոցների խնդրին, նրանց տիպարներին, տրամաչափերին և տեղանքի բնույթին։

Մարտկոցների, հետևակի, դիտակետերի և այլն փոխադարձ դասավորության անվտանգությունն ըստուգվում է պարետի և խմբակների հրամանատարների կողմից սխեմաներով, պլաններով և տեղանքի վրա՝ մարտկոցների կողմից կրակային դիրքերը գրավելուց առաջ. հրանոթների տեղերում նշանաձողեր են տնկում։

Դիրքերի սարքավորումը կատարվում է հաջորդաբար։ Դիտակետերի սարքավորումը լիակատար գաղտնապահության համար շատ մեծ զգուշություն է պահանջում։ Այդ պետք է կատարել բացառապես գիշերով։ Պարետային ոգնականները հսկում են աշխատանքներին և, յերբ հարկավոր է, դադարեցնում են այդ աշխատանքները։ Ցերեկը նրանք պահապաններ են դնում, վորոնք պարտավոր են գաղտնապահության միջոցները պահպանել. յեթե հրամանատարներից կամ կարմիր բանակայիններից մեկնումեկը անզգույշ գործողություններով մատնի դիտակետի տեղը, պահապանները զեկուցում են այդ մասին համապատասխան պարետային ոգնականին։

Կրակային դիրքերի քողարկումը և բլինդաժների,

մարտամթերքների համար նկուղների և կեղծ մարտկոցների կառուցումը կատարվում է դեռ կրակային դիրքերը մարտկոցների կողմից գրավելուց առաջ: Նկուղները պետք է ունենան կամ լաստաններ, կամ փայտե հատակ, կամ ջախի, ծղոտի կամ տերևների վրան ճյուղերի հաստ շերտ: Տեսանելի ճանապարհները փակվում են. դրանց փոխարեն ծածկված շրջանցող ճանապարհներ են շինում:

219. ԿԱՊ: Կապը պետք է կազմակերպված լինի այնպիսի հաշվով, վոր հակառակորդի արկերով առանձին լարերի վնասվածքները լուրջ խանգարումներ չառաջացնեն փոխանցման սիստեմի մեջ: Հրամանատարական կապը պետք է յերկու կամ նույնիսկ յերեք ինքնուրույն գիծ ունենա: Միջնական (վերստուգիչ) կայանների թիվն ավելացվում է:

Հեռախոսային լարերը կտրելուց պահպանելու համար իր հետևակի կողմից նրա գրոհի շարժվելու սկզբում, հատուկ հեռախոսային անցքեր են շինում: Այդ անցքերը խնամքով քողարկվում են գոնե սովորական խրամուղիների նմանողությամբ: Լարերի վրա վահանիկներ են կապում ու նրանց վրա պայմանական ձևով նշանակում մասերի և մարտկոցների անունները:

Գծեր գցելու ժամանակ պարետային ոգնականները հետևում են կարգ պահպանելուն: Յուրաքանչյուր ոգնականի տրամադրության տակ նշանակվում են հեռախոսակներ ապարատներով, վորոնց նշանակումն է՝ իմանալ, թե վոր գիծն է անկանոն գնում. դրա համար նրանք միացվում են տվյալ լարին:

Հրետանու պետի տրամադրության տակ կապի համար գործուղվում են 1-2 հեռախոսույդ յուրաքանչյուր խմբակից: Նույնը կատարում են նաև բաժնյակների հրամանատարները խմբակների պետերի վերաբերմամբ:

Կապի սխեման մշակվում է գրոհի հրետանու շտաբում և ուղարկվում է բոլոր հրաձիգ գնդերին ու բոլոր մարտկոցներին: Սքեման չափազանց մանրամասն չպիտի լինի:

Յուրաքանչյուր հրետանական խմբակում, բացի դրանից, նկարվում է իր սեփական կապի սքեման:

220. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՏԿՈՑՆԵՐՆ ԱՌԱՋ ՇԱՐԺԵԼՈՒ ՀԱՄԱՐ պետք է վաղորոք, լիովին և թաքուն կատարել: Բոլոր ճանապարհները պետք է հետախուզած լինեն: Բոլոր այն տեղամասերը, վորոնց չի կարելի նախորոք պատրաստել, պետք է ճիշտ հայտնի լինեն: Այդ տեղամասերի համար պետք է պատրաստել ձեռքի տակ յեղած նյութերը՝ գերաններ, տախտակներ, ճեղաններ:

221. ՍՏՈՒԳՈՒՄ: Մարտից 1-2 որ առաջ հրետանու պետը, նույնպես և ընդհանուր զորական հրամատարները կատարում են նախապատրաստական աշխատանքների ստուգում:

Ընդհանուր զորական հրամատարները, շրջելով մարտկոցների հրամատարների դիտակետերը, համոզվում են, վոր հետևակի այն բոլոր ցանկությունները, վոր ներկայացվել են հրետանուն, վերջինիս կողմից հաշվի յեն առնված: Մասնավորապես, ստուգում են, թե մարտկոցների հրամատարները յեղե՞լ են արդյոք համապատասխան գումարտակների հրամատարների մոտ և ստացե՞լ են նրանցից կոնկրետ ցուցումներ (տեղանքի վրա) թե վո՛ր խրամատները, բները, բլինդաժները, հրակնատները նրանց կարծիքով, պետք է ավերել, վո՛ր խրամուղիները պետք է լցնել փակել և լարափակոցների մեջ վորտեղ անցքեր բանալ:

Հրետանու պետն ստուգում է. ա) արդյոք իմանո՞ւմ է յուրաքանչյուր հրետանական հրամատար իր խնդիրները (ըստ մարտի շրջանների) և իր բոլոր նպատակները, համարադրած են արդյոք այդ նպատակները և յուրացված են արդյոք ազդանշանները. բ) արդյոք ճի՞շտ է կազմակերպված հեռախոսային ու հեռագրական փոխանցման սիստեմը (իրենց մանրամասնություններով). գ) ի՞նչպես են պատրաստված ճանապարհները դիրքը դեպի առաջ փոխելու համար. դ) ի՞նչպես են պահվում

մարտամթերքները և ինչպես է ապահովված նրանց տեղ հասցնելը մարտի ժամանակ։

222. Մարտկոցների դիրք դուրս գալը կատարվում է, վորքան կարելի է, ուշ (ըստ հնարավորին, գոնե մասամբ, գրոհի նախորդ գիշերը)։

Նայած, թե կրակային դիրքերը և դեպի նրանց տանող ճանապարհները վորքան են ծածկված, մարտկոցները բաժանվում են կատեգորիաների։

Առաջին կատեգորիային վերաբերում են այն մարտկոցները, վորոնց կրակային դիրքերը ծածկված են ոդային հետախուզությունից (անտառներում, այգիներում, ավերակներում, բնակավայրերում)։ Այդ մարտկոցները կարելի է դիրք դուրս հանել նախորոք, բայց բոլոր նախազգուշության միջոցները ձեռք առնելով, վորպեսզի նրանց տեղը չմատնել հակառակորդին։

Յերկրորդ կատեգորիան կազմում են այն մարտկոցները, վորոնց կրակային դիրքերը չեն պաշտպանված ոդային հետախուզությունից, բայց գտնվում են ծածկված տեղերի (ռայոնների) մոտերքում, վորտեղ մարտկոցները կարող են գտնվել մինչև հրետանական նախապատրաստության սկիզբը։ Յերկրորդ կատեգորիայի մարտկոցների հրանոթները բերվում և տեղավորվում են այդ ծածկված տեղերում (ռայոններում) գրոհից մոտ 2 որ առաջ։

Բոլոր մնացած մարտկոցները կազմում են յերրորդ կատեգորիան և դուրս են գալիս վերջին հերթին (վորպես կանոն գրոհի նախորդ գիշերը)։ Այդ մարտկոցների թիվը չպետք է մեծ լինի։

Բոլոր ճանապարհները և դիրքերին մոտենալու ուղիները պետք է խնամքով հետախուզել։ Հաճախ հարկ է լինում շարժվել ազիմուտներով, վորոնց պետք է նշել և նշանաձողերով նշանակել պարետի կարգադրությամբ։

Դիրք դուրս գալը կատարվում է քայլով լռություն պահպանելով։ Շարժումը պետք է կատարել փոքր սյուներով առանց անկարգ հապաղումների։ Դժվար անցանելի տեղամասերում դրվում են խմբեր (հեռեվակ) հրետավորներին ոգնելու համար և լրացուցիչ լծվածքներ։

Յերբ սկսում է գործել հակառակորդի լուսարձակը, բոլոր լծվածքներն անմիջապես կանգնեցվում են։

3. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՐՈՀԻ ՍԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

223 ԿՐԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԻՍՏԵՄԸ համապատասխանում է նույն հիմնական դրույթներին, վորոնք ցույց են տրված X գլխում։

Փորձնական հրաձգությունը պետք է կրճատված լինի մինչև մինիմալ աստիճանը։ Սակայն արհեստական արգելքների ավերման ժամանակ անհնարին է կատարել այն առանց փորձնական հրաձգության։ Ուժեղացման մարտկոցներն այդ կատարում են գրոհի որը, իսկ դիրքերում արդեն կանգնած մարտկոցները՝ վաղորոք ու զանազան ժամանակ։

Հրետանու գործողությունների պլանի կատարածման ճշտությունը՝ ամրացրած շերտի գրոհի ժամանակ է՛լ ավելի մեծ նշանակություն ունի քան զորաշարժական պատերազմում։

224. ԳՐՈՀԻ ՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՐԱԿԱՅԻՆ ՈՒՂԵԿՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ տարբերվում են զորաշարժական մարտի մեթոդներից ավելի մեծ պլանաչափությամբ։

Կրակային պատնեշը կարելի է կիրառել միայն ամենակարևոր ուղղությունների վրա և այն էլ նեղ շերտերում. զանազան մարտկոցների կրակը կարելի է միմյանց վրա դնել։

225. ՄԱՐՏԱՊԱՇԱՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԼԻՆԵԼԸ ոպերացիայի (գործողության) անհրաժեշտ պայմանն է։ Ավելի լավ է քիչ մարտկոցներ ունենալ, բայց բավականաչափ քանակությամբ արկերով, քան ընդհակառակը։

ԳԼՈՒԽ XII

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

226. *ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, նայած ավագ պետի վճռին ու պարագային, կարող են լինել.*

ա) Ժամանակի շահում և ուժերի ազատում վճռական ուղղության վրա հարված տալու համար։

բ) Տարածությունը (շրջանները, բնագծերն ու ճանապարհները) ձեռքին պահելը։

գ) Հակառակորդի հարձակողական թափի թուլացում, անմիջապես հարձակման անցնելու նպատակով։

227. *ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։ Պաշտպանության ուժը նրա կրակի մեջ ե և այդ կրակի ու հետևակի զորաշարժի զուգակցության մեջ ե։ Պաշտպանության կայունությունն ու առաձգությունն ավելանում ե նրա խորության մեծացումով։ Այսպիսով պաշտպանության հաջողության անհրաժեշտ պայմանները հանդիսանում են.*

ա) Կրակի կազմակերպված սիստեմի ստեղծումը, բոլոր կրակային միջոցների լիակատար համագործակցությամբ։

բ) Կրակի սիստեմի և կենդանի ուժի զորաշարժի զուգակցությունը։

Տեղանքի կանոնավոր ընտրության ու նպատակահարմար օգտագործման ժամանակ, հրետանական ու հետևակ միջոցների ճակատային, թևային և շեղահար կրակի ամենալավ զուգակցության ժամանակ, պաշտպանողական շերտի խորքում զորաշարժական խմբակների հմուտ բաշխման, դասավորման և նպատակին ուղղելու ժամանակ, հակառակորդը հենց մարտի սկզբից կրակային արգելքների մեջ ե վերցվում։ Հակառակորդի

գնդակահարված մասերը վերջնականապես ջախջախվում են հաջորդական հակագրոհներով, իսկ յեթե հնարավոր ե, նաև ընդհանուր հակահարվածով։

228. ՀՐԵՏԱՆՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԶՈՐԱՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ. 1) Մերձեցման ու հարձակման *շրջանում հրետանին հարվածում ե հակառակորդի կենդանի ուժն ու գնդացիրները, դժվարացնելով նրա շարժումն ու մարտակարգի բացազատումը և խանգարելով նրա կողմից գրոհի համար ձեռնտու յելակետային դրություն գրավելուն։ Հակառակորդի հարձակման ժամանակաշրջանում պաշտպանության հրետանու մեծ մասը խնդիր ե ստանում հակառակորդի հարձակվող հետևակ մասերին սատարող հրետանու կրակի սիստեմը ճնշել և քայքայել։*

2) Գրոհի *շրջանում հրետանին խափանում ե հարձակվող հետևակի ճանապարհը, նրան իրական հարված ե հասցնում, վոչնչացնում կամ ճնշում ե նրա կրակային միջոցները, տանկերը, զրահապատ ավտոմոբիլները, յետ շպրտելով կամ վերջնականապես կասեցնելով պաշտպանության ոջախներին հաջորդաբար տիրելու փորձերը։ Միաժամանակ նա կռիվ ե մղում հակառակորդի հրետանու դեմ, խանգարելով նրա կրակային աշխատանքի սիստեմը։*

3) Պաշտպանողական շերտի ներսը հակառակորդի ներխուժելուց հետո, *հրետանին շարունակում ե օգնել պաշտպանության անվնաս մնացած ոջախներին, կրակով բոլորելով հակառակորդի ներխուժած մասերը և նրանց առանձին հարված հասցնելով, և միևնույն ժամանակ աջակցում ե իր հետևակի մասնավոր հակագրոհներին, առանց հակառակորդի հրետանու դեմ կռիվը դադարեցնելու։*

4) Վճռական ընդհանուր հակագրոհի կամ հարձակման անցնելու ժամանակ, *հրետանին իր ամբողջ ուժով վրա յե տալիս հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների վրա ամենակարևոր ուղղու-*

թյուններում, ձգտելով իր հետևակին ամենագործուն օգնությունը ցույց տալ։

5) Ամբողջ մարտի ընթացքում հրետանին խախտում է հակառակորդի թիկունքի նորմալ գործունեությունը, խանգարում է ռեզերվների մոտենալուն կամ նրանց հարված է հասցնում։

229. ՀՐԵՏԱՆՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ խոշոր չափով կախված է պաշտպանության ճակատի լայնությունից։

Դիվիզիայի 3 կմ. վոչ ավելի ճակատի վրա պաշտպանողական գործողությունների ժամանակ, կրակի սիստեմը պետք է ապահովի հարվածելու անընդհատ շերտի ստեղծումը, լիովին օգտագործելով գործոն հրետանական կրակի հզորությունը և զուգակցելով այն հետևակի զենքի կրակի հետ։

Ավելի լայն ճակատի վրա պաշտպանության ժամանակ, հրետանին չի կարող հույս ունենալ ամբողջ ճակատի վրա բավականին հոծ կրակ ապահովելու։ Այդ պատճառով ճակատի ամբողջ տարածության վրա նա ընտրում է ամենապատասխանատու և ամենավտանգավոր ռայոնները, և մի քանի խմբակ կազմելով, զբաղվում է այն հաշվով, որ հնարավորություն ունենա հարվածել հակառակորդի մարտկոցները կամ նրա հրետանական կրակի սիստեմը քայքայել, նայած հետախուզական միջոցներին և արկերի քանակին։

ՀՍ խմբակներն այդ դեպքերում սովորաբար բաշխվում են հետևակ միավորությունների միջև և մտնում են վերջիններիս հրամատարների ստորադրության տակ։

2. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

230. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ։ Կրակի սիստեմի հաջող կազմակերպման համար, հրետանու ղեկավարությունը պաշտպանության ժամանակ պետք է կենտրոնացրած լինի դիվիզիայի շրջանակներում։

Պաշտպանության նեղ ճակատի ժամանակ (3-4 կմ. մեկ դիվիզիայի համար) և բարենպաստ տեղանքում, հնարավոր է հրետանու միացումը նաև ամբողջ կորպուսի ճակատի վրա։

Միևնույն ժամանակ բոլոր դեպքերում հրետանու օրգանիկ կապը հետևակի հետ պետք է պահպանել լրիվ չափով։

231. ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ պետք է համապատասխան լինի հետևակի խնդիրներին և խմբավորմանը։

Գնդի հրետանին, մտնելով պաշտպանության ընդհանուր կրակային սիստեմի մեջ, սովորաբար, ընդհանուր հրետանական խմբակների մեջ չի մտցվում։ Նրա վրա, գլխավորապես, դրվում է՝ ամենամոտիկ մատույցների պաշտպանությունը, տանկերի և զրահավտոմոբիլների դեմ կռվելը և հակագրոհները կրակով ու անիվներով ուղեկցելը։ Գնդի հրետանուց պահանջվում է ամենասերտ համագործակցություն հետևակի կրակային միջոցների հետ։

Դիվիզիական հրետանին հրետանու պետի ձեռքում մնալով, պաշտպանության ժամանակ նույնպես բաշխվում է հետևակի մարտական մասնատմանը համապատասխան։ ՀՍ յուրաքանչյուր խմբակ նաև այդ դեպքում պետք է վորոշ գնդի տեղամասին օգնի։ Միևնույն ժամանակ ՀՍ յուրաքանչյուր խմբակ պետք է հնարավորություն ունենա օգտագործելու իր կրակի ամբողջ գործոն հասողությունը նաև հարևան տեղամասերին օգնելու համար։

Եթե պաշտպանողական գործողությունները վերջնականապես նպատակ ունեն հարձակման անցնելու, հակառակորդին հետ շպրտելուց անմիջապես հետո, այդ դեպքում հարվածական խմբակին կրակով ու անիվներով ուղեկցելու համար, վաղօրոք նշում են դիվիզիական հրետանու վորոշ մարտկոցներ՝ գործող խմբակների կազմից։

Սխեմա № 6.

ՄԱՐՏԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ.
ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԻ ՍԽԵՄԱՆ



Կորպուսային *հրետանին կամ ՀԳ կորպուսային խմբակներ է կազմում, կամ բաշխվում է դիվիզիաների միջև:*

Առաջին դեպքում *դիվիզիաներում ՀԳ խմբակներ չեն կազմվում: Իսկ կորպուսային խմբակի ուժեղացման համար կարելի յե կորպուսային հրետանուն միացնել մի քանի մարտկոցներ դիվիզիական հրետանու կազմից ի հաշիվ յերկրորդական տեղամասերի, բայց սովորաբար յուրաքանչյուր դիվիզիայից մեկ բաժնյակից վոչ ավելի:*

Յերկրորդ դեպքում *կորպուսային հրետանին սովորաբար մտցվում է ՀԳ դիվիզիական խմբակների կազմի մեջ, կազմելով նրանցից յուրաքանչյուրի կորիզը:*

Յեթե պաշտպանությունը կատարվում է լայն ճակատի վրա, սովորաբար ՀԳ խմբակներ չեն լինում:

Յուրաքանչյուր ՀՄ խմբակ, վոր օգնում է պաշտպանության հանգույցին, կռիվ է մղում հակառակորդի մարտկոցների դեմ սեփական միջոցներով:

Պաշտպանվող զորական միավորություններին տրված ԳՀՈՀ մասերը բաշխվում են, նայած այդ միավորությունների խնդիրներին:

3. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

232. *ԱՎԱԳ ՊԵՏԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ: Յեթե պաշտպանության կազմակերպության համար ժամանակ կա, ընդհանուր պլանի մշակումն ու ռայոնի ընտրությունը, սովորաբար, կորպուսի հրամանատարի պարտականությունն է կազմում:*

Կորպուսի հրետանու պետը, հիմնական վճռի սկզբնական ուրվագիծը կորպուսի հրամանատարից ստանալուց հետո, տեղանքը գնահատում է քարտեզով և զեկուցում է իր նկատառումները կորպուսի հրամանատարին: Ապա նրանք միասին դուրս են գալիս ռայոնի անձնական հետախուզության համար: Այդ հետախուզությունը վերջացնելուց հետո, վերջնական վճիռ է ընդունվում, մշակվում է պաշտպանության պլանը և կարգադրություններ են արվում դիվիզիաներին: Հրետանու պետը զեկուցում է կորպուսի հրամանատարին, թե՛ վոր խնդիրները պիտի կատարի կորպուսային հրետանին և վո՛ր դիվիզիաները պետք է ուժեղացնել կորպուսային հրետանիով:

Դիվիզիայի հրամանատարը, քարտեզի վրա նշելով պաշտպանության շերտը, լսում է իր հրետանու պետի զեկուցումը տեղանքի գնահատման և հրետանու խնդիրների ու խմբավորման մասին սկզբնական նկատառումների հետ միասին: Ապա նրանք միասին դուրս են գալիս անձնական հետախուզության համար: Տեղանքի վրա վերջնականապես կատարվում է շերտի ընտրությունը, վորից հետո կազմվում է պաշտպանության պլանը: Միաժամանակ հրետանու պետը զեկուցում է

դիվիզիայի հրամանատարին իր նկատառումները հրետանու կողմից խնդիրները կատարելու կարգի մասին, յելակետային խմբավորման, ստորադրության և հետեվակի հետ հաստատվելիք կապի մասին:

Պաշտպանողական չերտի ընտրության համար, իբրև հիմունք, պետք է ծառայեն հետեվյալ պահանջները.

ա) ձեռնտու դիտակետերի առկայությունը.

բ) հակառակորդի կողմից ծածկված մատույցների բացակայությունը.

գ) հրետանու դասավորության չարանման հարմարությունը.

դ) ծածկված թիկունքը:

233. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ: Յեթե պաշտպանության պատրաստության համար մեկ օրուդիշերից ավելի ժամանակ կա, դիվիզիայի հրետանու պետը հրետանական խմբակների հրամանատարների հետ միասին տեղանքն է դուրս գալիս, իրազեկ է անում նրանց դիվիզիայի հրամանատարի վճռի մասին և ցույց է տալիս յուրաքանչյուրին նրա պատասխանատու կրակային տեղամասը և լրացուցիչ սեկտորը:

Յեթե նախապատրաստության համար ժամանակը մեկ օրուդիշերից ավելի չէ, այդ դեպքում վերոհիշյալ ցուցումները տրվում է քարտեզի վրա:

Խմբակների հրամանատարները, իրենց հիմնական խնդիրները դիվիզիայի հրետանու պետից ստանալուց հետո, կատարում են իրենց հետախուզությունը: ՀՍ խմբակների հրամանատարները ներկայանում են մասերի հրամանատարներին (սովորաբար՝ գնդերի հրամանատարներին), վորոնց նրանք պիտի օգնեն, և նրանց հետ միասին հետախուզություն են կատարում: Միաժամանակ նշում են.

ա) հետեվակի խնդիրներն ու բաշխումը.

բ) ՀՍ խմբակի մասնավոր խնդիրներն ըստ շրջանների.

գ) մարտկոցների խմբավորումը.

դ) հրամանատարական դիտակետերը.

ե) մարտկոցների և հետևակ ստորաբաժանումների միջև կապ հաստատելու կարգը:

Ապա խմբակների հրամանատարներն սկսում են առջևում ընկած տեղանքի մանրամասն ուսումնասիրությունը մարտկոցների հրամանատարների հետ միասին, վորոնց հենց այստեղ էլ ցույց են տալիս նրանց պատասխանատու կրակային չերտերը, լրացուցիչ սեկտորները և հատուկ ուղղությունները:

234. ՏԵՂԱՆՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ: Յուրաքանչյուր խմբակի սեկտորում նշում են կողմորոշ կետեր (առարկաներ), վորոնց հենց այստեղ էլ նկարում են պլանի վրա: Միաժամանակ ընտրում և բաշխում են դիտակետերը: Այն առանձին մատույցների և բնագծերի հատուկ դիտողության համար, վորոնք չեն յերևում հիմնական դիտակետերից, ոգնական դիտակետեր են ընտրում:

Կրակային դիրքերի ընտրության ժամանակ գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել մարտի ամբողջ ընթացքում կրակային համագործակցության հնարավորության վրա: Յուրաքանչյուր մարտկոցի մեռյալ տարածությունները պետք է գնդակոծվեն մյուս մարտկոցների թեվային կամ չեղահար կրակով կամ գնդացրային կրակով:

Այն մարտկոցների համար, վորոնք պիտի կռվեն պաշտպանողական չերտի ներսում, ընտրում և պատրաստում են թիկունքի կրակային դիրքեր: Այդ դեպքում խնամքով ընտրում են տեղափոխության ճանապարհները, վորի շնորհիվ խոշոր չափով պակասում են մարտկոցների կրակային աշխատանքի ընդհատումները:

Յեթե ժամանակը թույլ է տալիս, ոգտակար է մինչև հակառակորդի մոտենալը, իր պաշտպանողական չերտը մանրամասն գննել հավանական դիտակե-

ներից այն ռայոնում, վորտեղից պիտի հարձակում կատարի հակառակորդը:

235. ՀՐԵՏԱՆՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԼԱՆԸ ԿԱԶՄՎՈՒՄ Ե դիվիզիայի հրետանու պետի հետախուզությունը վերջացնելուց հետո: Խմբակների հրամանատարների սխեմաները կողմորոշ առարկաներով ամփոփվում են միասին դիվիզիայի հրետանու պետի շտաբում, ըստ վորում այն յերկրորդական կողմորոշները, վորոնք միայն տեղական նշանակություն ունեն, դուրս են գցվում: Իբրև ամփոփման հետեվանք հանդիսանում ե դիվիզիայի կողմորոշ պլանը:

236. ՆՐԱԿԻ ՍԻՍՏԵՄԸ. ա) մարտական պահպանության մասերի ոգնության համար նշանակվում են գնդի հրանոթները, վորոնք գործում են կամ ամբողջ մարտկոցների կազմի մեջ, կամ առանձին-առանձին:

Այդ հրանոթները տեղավորվում են մասամբ պաշտպանողական շերտի առջևի յեզրի անմիջապես յետեվում, իսկ մասամբ ել ուղարկվում են դեպի առաջ մինչև կես կիլոմետր հեռավորության վրա: Առաջ դուրս բերած հրանոթների խնդիրն ե (բացի մարտական պահպանության ոգնությունից)՝ մոլորության մեջ գցել հակառակորդի առաջավոր մասերին. իսկ հաջողության դեպքում նաև գլխավոր ուժերը, վորպեսզի նրանց հարկադրել վաղաժամ բացազատվել և հայտաբերել իրենց խմբավորումը: Առաջ դուրս բերած հրանոթները պետք ե ապահոված լինեն դեպի հիմնական դիրքերն անցնելու համար և ծածկված ճանապարհներով:

Մարտական պահպանության մասերի և նրանց սատարող դեպ առաջ դուրս բերած հրանոթների հմուտ դասավորության ժամանակ, հաճախ կարելի յե հարկադրել հակառակորդին բացազատվել կեղծ ուղղությամբ, վորը միանգամից դնում ե նրան թեվային կրակի և հարվածի վտանգի տակ:

Յեթե դեպ առաջ դուրս են հանվում հետախուզական ջոկատներ (խմբակներ), այդ դեպքում նրանց

արվում են առանձին հրանոթներ կամ ամբողջ մարտկոցներ նման խնդիրներով:

բ) ՀՍ բոլոր մարտկոցները տեղավորվում են և կրակային շերտեր ու լրացուցիչ սեկտորներ են ստանում այն հաշվով, վոր հնարավորություն ունենան հակառակորդի հետեվակին հարվածել դեպի պաշտպանողական շերտի առջևի յեզրը բերող մատույցների վրա:

ՀՍ մարտկոցներից մի քանիսը խնդիրներ են ստանում՝ ոգնել մարտական պահպանության մասերին և պաշտպանել նրանց յետխաղացումը դեպի պաշտպանողական շերտը: Դրա համար այդպիսի մարտկոցների կրակը բաշխվում ե այնպես, վոր նրանք կարողանան հակառակորդի հետեվակին գործոն հարված հասցնել մարտական պահպանության մասերի առջևում 400—800 մ. վրա, այսինքն՝ պաշտպանողական շերտի առջևի յեզրից 2—3½ կմ. հեռավորության վրա: Այդ ժամանակ պետք ե լայն չափով ոգտագործել դեպի առաջ դուրս բերած դիտակետերը:

ՀՍ մնացած մարտկոցները խնդիրներ են ստանում՝ հակառակորդի հետևակին ճնշել մոտավոր մատույցների վրա, այսինքն 200—800 մ. վրա պաշտպանողական շերտի առջևում: Ամբողջ այդ գոտին խստիվ և ճիշտ բաշխել հրետանու, գնդացիրների և ականանետների միջև (տես հավելված № 14):

Թեվային կրակը, այդ գոտին կազմելու ժամանակ, պետք ե ամենամեծ ոգտագործումն ստանա:

գ) Գնդի հրանոթները գնդացիրների և գումարտակային հրանոթների հետ միասին կազմում են դաշունահար կրակի սիստեմը պաշտպանողական շերտի անմիջապես առջևում: Վորոշ տեղամասերում հարկ ե լինում այդ սիստեմին մասնակցել այդ տեղամասերի ամբողջ գնդի հրետանուն, վորը հենց դրանով գիտակցաբար լռության ե մատնվում մերձեցման շրջանում:

դ) ՀՍ յուրաքանչյուր մարտկոց ստանում ե, բացի պատասխանատու տեղամասից և լրացուցիչ սեկ-

տալից նաև հատուկ տեղամաս խափանիչ կրակի համար և հակառակորդի ներխուժած խմբակներին հարվածելու համար:

ե) ՀԳ խմբակի մարտկոցները, շարունակելով իրենց կռիվը հակառակորդի հրետանու դեմ և առաջին հերթին այն մարտկոցների դեմ, վորոնք օգնում են հետևակին, հնարավոր խափանիչ կրակ են վարում և խանգարում են շարժումն ու աշխատանքը հակառակորդի դասավորման թիկունքում և նրա թևերում:

237. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԱՐԴԵՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՃՆՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ և նրա մարտկոցների դեմ կռվելու համար պաշտպանության հրետանին կարիք ունի օդային հետախուզության միջոցների ու գործիքային հետախուզության օրգանների: Բոլոր անհրաժեշտ տվյալները վաղորոք են պատրաստվում: Վերերկրյա դիտակետերի շրջանները պետք ե, ըստ հնարավորին, ավելի մեծ խորություն ունենան: Ավելի ձեռնտու յե հարկանի դասավորությունը:

Ամենալավ տեսածիր պիտի ունենան ՀԳ մարտկոցների դիտակետերը:

Դիտողությունը պետք ե կատարել անընդհատ կերպով դիտակետն ընտրելու և գրավելու մոմենտից: Վոչ մի ժամ, վոր գործադրվել ե տեղանքի խնամքով ուսումնասիրության համար, թեկուզ հակառակորդի բացակայության ժամանակ, իզուր տեղը չի կորչի:

Յուրաքանչյուր դիտակետի համար անտեսության դաշտերը գծավորում են վոչ թե քարտեզի վրա, այլ կողմորոշ պլանի վրա:

238. ԿԱՊ: Պաշտպանության ժամանակ հետևակի հետ կապը նույնքան կարեվոր նշանակություն ունի, վորքան և այլ տեսակի մարտական գործողությունների ժամանակ:

ՀՍ յուրաքանչյուր մարտկոց հետևակի հետ կապ պահպանող իր ջոկն ուղարկում ե այս կամ այն վաշտին գումարտակի հրամանատարի ցուցումով:

ՀՍ խմբակների հրամանատարները, իբրև կանոն, տեղավորվում են համապատասխան հրաձիգ գնդերի հրամանատարների հետ միասին:

Հեռախոսային կապի խզվելու դեպքի համար ամենահասարակ ազդանշաններ են սահմանվում: Դրա համար գործադրվում են գունավոր հրթիռներ, ծխագլաններ, լուսարձակներ և վառվող նշանաձողեր: Ի լրումն տեսողական նշանարարության, գործադրվում ե նաև ձայնախոսական նշանարարություն՝ սիրենաներ, զանգակներ, շչակներ, գնդացրեր:

Բացի ազդանշաններից, լայն գործադրություն են ունենում վազանները (հետիոտ լրատարները) և կապի շները:

Ներքին հրետանական կապը պաշտպանության ժամանակ պետք ե, վորքան հնարավոր ե, ավելի քիչ կախում ունենա հեռախոսային լարերից, վորովհետև հեռախոսային ցանցի ավերումն ու քայքայումը գրոհի հրետանու խնդիրներից մեկն ե հանդիսանում: Այդ պատճառով ել ներքին կապի համար պետք ե լայն չափով գործադրել ազդանշաններ և փոխանցման կենդանի միջոցներ (կարճ ժամանակամիջոցով):

Հեռախոսային կապն ամենուրեք կրկնակի պիտի լինի:

239. ՔՈՂԱՐԿՈՒՄ: Դիտակետերը և կենտրոնական հեռախոսային կայանները մեկտեղ չպիտի լինեն: Վերջինները պետք ե տեղավորված լինեն ծածկված, դիտակետերից մոտիկ և նրանց հետ կապված լինեն յերկու լարով:

Յեթե ժամանակ կա, մարտկոցների բոլոր դիրքերը պետք ե լուսանկարել օդից և յուրաքանչյուր մարտկոցի հրամանատարական կազմը պետք ե խնամքով ուսումնասիրի լուսանկարները, վորպեսզի ավելի լավ ընտրի ծածկվածության միջոցները:

Հատկապես կարևոր ե կազմակերպել մարտկոցներին թաքուն մոտենալը թե վոտով և թե անիվներով, վորովհետև կածանները ու ճանապարհներն ամենից

չատ են մատնում մարտկոցների դասավորությունը: Յուրաքանչյուր մարտկոցի համար պետք է սահմանված լինեն որոշ կանոններ կածաններով և մոտենալու ճանապարհներով օգտվելու վերաբերյալ և այդ կանոնները խախտողներին պետք է խիստ պատժել:

Շատ օգտակար է լինում կեղծ դիտակետեր և կրակային դիրքեր ստեղծել, ըստ որում ժամանակ առ ժամանակ այդ դիտակետերը կարելի յե հետախույզներ ուղարկել, իսկ կրակային դիրքերն ուղարկել առանձին հրանոթներ, որոնք իրական հրաձգություն են կատարում: Հակառակորդի կողմից այդ կեղծ դիտակետերի և կրակային դիրքերի վրա կրակ բանալուց հետո, բոլոր մարդկանց պետք է հեռացնել այդ տեղերից:

240. *ՄԱՐՏԱԿԱՆ ՄՆՈՒՆԴԸ*: Յեթե պաշտպանությունը վճռական նպատակով է կատարվում (հարձակման անցնելը), այդ դեպքում մարտկոցները պետք է ապահովված լինեն կրկնակի քանակությամբ մարտապաշարով (յերկրորդ կոմպլեկտը՝ նկուղներում):

Յեթե պաշտպանությունը ժամանակ շահելու համար է միայն կատարվում, մարտամթերքները մնում են ամբարկղներում և սայլերի վրա, իսկ կրակային դիրքերին բաց է թողնվում միայն խիստ անհրաժեշտ քանակությամբ:

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

241. *ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԶՈՒԿԱՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՄԱՐՏԿՈՑՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՆՈԹՆԵՐԸ* պետք է գործեն վճռականորեն և չափազանց համարձակ, բայց ջոկատին տրված խնդիրներին համապատասխան: Հակառակորդին մոլորության մեջ գցելը կատարվում է բոլոր հնարավոր միջոցներով և, մասնավորապես, կրակի տեմպի զանազան համակցությամբ: Այդ ժամանակ ցանկալի յե հարկադրել հակառակորդին հրետա-

նական կրակ բանալ, որով և հայտաբերել նրա ուժերը (կրակային հետախուզություն):

242. *ՀԵՌԱՎՈՐ ԿՐԱԿԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ*: Յերբեմն օգտակար է հակառակորդին հնարավորություն տալ անարգել մոտենալու պաշտպանողական շերտին հրետանական կրակի հեռակայության վրա և ապա վրա տալ նրա սյուների վրա կենտրոնացրած ճիշտ կրակով, որն անակնկալ և կարճատև կրակային հարձակումների ձև պիտի ունենա: (Տես հավելված № 15):

Այդ հրաձգության համար յելակետային տվյալներ պետք է վաղօրոք պատրաստել բոլոր այն յեղանակներով, որոնց կիրառելու համար ժամանակ կա:

Հեռավոր կրակային հարձակումները միշտ պատրաստվում ու կատարվում են ավագ հրետանական պետի ցուցումներով (սովորաբար՝ դիվիզիայի հրետանու պետի, իսկ որոշ դեպքերում էլ՝ կորպուսի հրետանու պետի ցուցումներով):

243. *ՄԵՐՁԵՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ* մարտական պահպանության մասերին օգնում են, առաջին հերթին, դրա համար հատկապես նշանակած գնդի հրանոթները (մարտկոցները), որոնցից մեծ տոկունություն է և ինքնուրույնություն է պահանջվում:

Դիվիզիական հրետանու մարտկոցների մի մասն օգնում է մարտական պահպանության մասերին, հարվածելով հակառակորդի հետևակին իր հիմնական կրակային դիրքերից: Հետագայում այդ մարտկոցները պաշտպանում են մարտական պահպանության մասերի յետխաղացումը:

Այդ մարտկոցների հաջող գործողությունները հնարավոր են միայն այն ժամանակ, յերբ մարտական պահպանության մասերին անմիջապես մոտիկ առաջավոր դիտակետեր կան:

ՀԳ մարտկոցները կրակ են բաց անում հակառակորդի այն մարտկոցների դեմ, որոնց կրակային դիրքերը հայտաբերված են:

244. *ՀԱՐՁԱԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ* (պաշտպանողա-

կան չերտի առջևի յեզրից 1·000—200 մ.) ՀԳ մարտկոցները շարունակում են իրենց կռիվը հակառակորդի հրետանու դեմ, վորն ոգնում է նրա հարձակվող հետևակին: Այդ ժամանակ մեծ ոգուտ են տալիս սավառնակներն ու գործիքային հետախուզության որգանները:

Յեթե հակառակորդի կրակային դիրքերը հայտաբերված չեն, ՀԳ մարտկոցների կրակի գլխավոր մասսան կենտրոնացվում է.

ա) հեռահար թնդանոթային մարտկոցներինը՝ կապի ճանապարհների ու հանգույցների վրա.

բ) հոբիցային մարտկոցներինը՝ դիտակետերի ու դեպի սրանց տանող մոտավոր թիկունքային մատույցների վրա:

Այդ բոլոր գործողությունները կատարվում են դիվիզիայի հրետանու պետի պլանով ու նրա ղեկավարությամբ:

ՀՍ մարտկոցները կրակ են վարում հակառակորդի հարձակվող հետևակի դեմ, ըստ վորում այդ կրակը ամենամեծ լարվածության է հասնում պաշտպանողական չերտի առջևում 500—200 մ. գոտում: (Տես հավելված №16):

Կրակը պետք է լավ դիտելի լինի: Նրա տեմպը պետք է համապատասխանի պարագային: Անընդհատ խափանիչ կրակը չի թույլատրվում, վորովհետև նա մարտապաշարի չափազանց մեծ ծախք է պահանջում:

245. ԳՐՈՀԻ ՇՐՋԱՆՈՒՄ (200 մետրից) հակառակորդի հետևակը ռմբակոծվում է դաշունահար հրանոթների ու մարտկոցների կողմից, վորոնք մինչայդ լռում եյին: Այդ միջոցին թնդանոթային շրապնելը հիանալի ներգործություն է ունենում:

Յերբ հակառակորդի հետևակն անցնում է պաշտպանողական չերտի առջևի յեզրը, ՀՍ վորոշ մարտկոցները գնդի հրանոթների և հետևակ միջոցների հետ միասին անմիջապես հարվածում են ներխուժած մասերին, իսկ մյուս մարտկոցներն իրենց կրակով բոլորում են

այդ մասերը, թույլ չտալով զորավիգներին ու հարևան մասերին նրանց հաջողությունը զարգացնել:

ՀՍ յուրաքանչյուր մարտկոց չի դադարեցնում իր կրակային ոգնությունը այս կամ այն հետևակ ստորաբաժանմանը նաև պաշտպանողական չերտի խորքում մղվելիք կռվի ընթացքում:

ՀԳ մարտկոցները շարունակում են իրենց կռիվը հակառակորդի հրետանու դեմ ու հարվածում են ոժանդակներին հեռավոր ճանապարհների ու մատույցների վրա:

246. ՀԱԿԱԳՐՈՀՆԵՐ: Հակագրոհներին սատարելու գործին մասնակցում են ՀՍ բոլոր մարտկոցները:

ՀԳ մարտկոցներն այդ շրջաններում իրենց կրակը կենտրոնացնում են հակառակորդի այն մարտկոցերի դեմ, վորոնք ամենից շատ են վնասում հակագրոհ տըվող հետևակին:

247. ԴԻՐՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ: Մարտկոցների տեղափոխությունը դեպի թիկունքային դիրքերը կատարվում է խիստ հաջորդականությամբ նախորոք մշակած պլանի համաձայն: Սկզբում, իբրև կանոն, փոխում են դիրքերը գնդի հրանոթները, իսկ հետո անցնում են մնացած մարտկոցները շարաններով:

Մարտկոցների մի մասը, վորն ավելի խորն է տեղավորված, կրակ է վարում, առանց դիրքերը փոխելու, մինչև մարտի ճղնաժամը:

248. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱԿԱՀԱՐՎԱԾԸ կարող է հաջողություն ունենալ միայն յերկու պայմաններում.

1) յեթե թարմ զորքեր կան, վոր չեն քայքայված մարտի ընթացքում.

2) յեթե հրետանին, վորն ոգնում է հակահարվածին, պահպանել է հուսալի կապն այն հետևակի հետ, վորն իրականացնում է հակահարվածը:

Ուստի, հակառակորդի կողմից գրաված տարածությունը վերադարձնելուց հետո, անհրաժեշտ է միանգամից վերականգնել կապի կազմակերպությունը և

նկնել հրետանական կրակի սխեմի կազմակերպումը պատրաստվող հակահարվածին օգնելու համար։

ՀՍ վորոշ մարտկոցները պետք է առաջուց նշանակված լինեն հարվածական խմբակին սատարելու դեռ նրա բացազատման և հարձակման անցնելու համար յելակետային դրություն գրավելու շրջանում։ Այդ մարտկոցները պետք է ունենան հարվածական խմբակի վաշտերում՝ հետևակի հետ կապ պահպանող իրենց ջոկերը։

Հարվածական խմբակի բացազատումը պետք է թաքուն կատարել առաջուց մշակած պլանի համաձայն, վորպեսզի հարվածական խմբակին սատարող մարտկոցների կրակը չկարողանա մատնել նրա բացազատումը։

Հակահարվածին սատարող հրետանական խմբակի հրամատարը պետք է կենդանի կապ հաստատի հետևակի հարվածական խմբակի հրամատարության հետ՝ հենց վոր վորոշվի մասնավոր հակադրոհների հաջողությունը և նշմարվի ընդհանուր հակահարվածի հնարավորությունը։

Ամենալավն այն է, յերբ հակահարվածի հրետանական սատարության անմիջական ղեկավարությունը դրվում է ՀՍ խմբակի հրամատարի վրա, վորն առաջուց արդեն գործել է այդ ուղղության վրա։

Հարվածական խմբակի հարձակման սկզբից՝ նրան սատարող մարտկոցները կրակը կենտրոնացնում են այն նպատակների վրա, վորոնք ամենից շատ են վնասում հարձակվող հետևակին (հակառակորդի գնդացրերի և մոտավոր ոժանդակների վրա)։Այդ մարտկոցների գործողությունները պետք է մոտ լինեն հրետանու մարտական աշխատանքի բնույթին՝ դիմամարտում գլխավոր ուժերի բացազատման ժամանակ։

Հակառակորդի մարտկոցների դեմ կռիվն այդ շրջանում շարունակվում է անդուլ յեռանդով։

5. ՄԱՐՏԻՑ ՅԵԼՆԵԼԸ

249. ՀՐԵՏԱՆՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ։ Յեթե ճակատում անհաջողություն է հայտնվել, վորի հետևանքով կարող է ընդհանուր յետխաղացում տեղի ունենալ, հրետանու գլխավոր խնդիրն է՝ թուլացնել և դանդաղեցնել հակառակորդի բուռն գրոհը և հեշտացնել հետևակի համար հակառակորդից կտրվելը։

Այդ հիմնական խնդրի կատարման համար հրետանին պետք է տոգորված լինի մինչև վերջին ծայրահեղությունը կռիվ մղելու վճռականությամբ, առանց ուշադրություն դարձնելու զոհերի վրա։ Հրետանու համարձակ և անձնվեր գործողությունները՝ հակառակորդի հետապնդող զորքերի դեմ կռվի ծանր պայմաններում կարող են վճռականապես ազդել մարտական պարագայի փոփոխման վրա։

250. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ։ Մարտից յելնելու առաջին շրջանում մարտկոցների և բաժնյակների հրամատարներին պետք է վերապահված լինի գործողությունների, ըստ հնարավորին, ավելի լիակատար ազատություն։ Նրանք ամենասերտ կապ են պահպանում այն հետևակի հետ, վորի հրամատարներից խնդիրներ են ստանում հետևակ ստորաբաժանումների ամենակենսական պահանջների համաձայն։ Հետագայում ընդհանուր յետխաղացման պաշտպանությունը կազմակերպելու ժամանակ, նպատակահարմար է լինում հրետանու մարտական աշխատանքի ղեկավարության միացումը։

Միացյալ ղեկավարության անցնելու ժամանակը վորոշվում է հետապնդող հակառակորդից հետևակի միանգամայն կտրվելու իրականացումով։

Յեթե տարածությունն ու տեղանքի հատկությունները թույլ չեն տալիս լիովին իրականացնել հրետանու միացումը ավագ հրետանական պետի ձեռքում, այդ դեպքում հրետանին պետք է բաշխել մարտական տեղամասերի միջև։

Հրետանու, հատկապես կորպուսային թնդանոթա-

յին մարտկոցների հեռահարությունը պետք է օգտագործել լրիվ չափով:

Մյուս մարտկոցները կռիվ են մղում հակառակորդի հարձակվող հետևակի դեմ և նրա այն մարտկոցների դեմ, վորոնք իրենց կրակով խանգարում են գլխավոր ուժերի պլանաչափ և հանդիստ յետխաղացումը:

251. ԴԻՐՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ: Վերջապահի մարտկոցներն իրենց դիրքերը փոխում են վտավաններով, չընդհատելով յետխաղացող զորքերի կրակային պաշտպանությունը և փոխադարձաբար սատարելով ու պաշտպանելով միմյանց:

Այդ միջոցին տեղական բնագծերի օգտագործումը, մանավանդ յեթե կիրճեր կան, և թևային ու չեղահար կրակի զուգակցությունը հատկապես կարևոր նշանակություն է ունենում:

Դիրքերի հաջորդաբար վտավաններով փոփոխման հաջողության համար, անհրաժեշտ է առաջուց և խնամքով հետախուզություն կատարել յետխաղացման ճանապարհների ու դիրքերի և ամեն մի առանձին դեպքում տեղափոխության սկզբի համար ժամանակը ճիշտ ընտրել:

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել յետխաղացող զորական միավորության թևերի վրա, վորոնց դիտողությունն ու ապահովումը պետք է դնել հատկապես նշանակած հրետանական մասերի վրա:

Մեծ օգուտ է տալիս թևային դիրքեր գրավելը՝ հակառակորդի շարժման ուղղությանը զուգահեռական, և հանկարծակի թևային կրակ բանալը նրա այն մասերի դեմ, վոր հաճախ շարժվում են հետապնդման թիկունքում հոծ և հեշտ խոցելի խմբակներով:

Գումակները, պարկերը, իսկ յերբեմն էլ մարտական սնդի ջոկերը պետք է վաղորոք թիկունք ուղարկել, վորպեսզի նրանք չփակեն զորքերի յետխաղացման անմիջական ճանապարհները և, մասնավորապես, ընդհանուր յետխաղացումը պաշտպանող հրետանու ճանապարհը:

ԳԼՈՒԽ XIII

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԻՐՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

252. *ՄԱՐՏԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ*: Դիրքային պատերազմում պաշտպանության ժամանակ, ինչպես և զորաշարժական պատերազմում, նախաձեռնությունը պատկանում է հարձակվողին: Սրանից բխում է պաշտպանվողի գործողությունների վորոշ անպատրաստության անխուսափելիությունը:

Սակայն հակառակորդի գրոհի համար գործողությունների պլանի սիստեմատիկ կերպով մշակելու միջոցով կարելի յե փոքրացնել անպատրաստության հավանականությունը: Մասնավորապես, հրետանին կարող է նախատեսել անցքերի հնարավոր ընթացքն այն չափով, վորպեսզի նրա գործողությունները պաշտպանության ժամանակ ավտոմատիկ բնույթ կրեն:

253. *ՀՐԵՏԱՆՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*: Ընդհանուր առմամբ, նույնն են, ինչ վոր զորաշարժական պատերազմում պաշտպանության ժամանակ: Դիրքային պատերազմի պայմանները միայն թույլ են տալիս ավելի լրիվ և ավելի մանրամասն մշակել կրակային գործողության սիստեմը մարտի ամբողջ ընթացքի համար:

2. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

254. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ*: Ղեկավարման կենտրոնացումը, իբրև կանոն, իրականացվում է լրիվին դիվիզիայի շրջանակներում, իսկ հակառակորդի հրետանու դեմ կռիվը հաճախ կենտրոնացվում է նաև կորպուսի մասշտաբով:

255. *ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ*, չափազանց մեծ նշանակություն ունենալով, միևնույն ժամանակ մեծ դժվարություններ է ներկայացնում, վորովհետև հա-

կառակորդը միջոցներ է ձեռք առնում օպերատիվ գաղտնապահության համար։

Սակայն հակառակորդի կողմից հարձակման նախապատրաստությունը մեծ մասամբ կարելի յե հայտաբերել հետևյալ հատկանիշներով.

1. Գործունեության ուժեղացումը հակառակորդի թիկունքում (ցերեկը և գիշերը) և թիկունքային ճանապարհների զարգացումը.

2. Ամրաշինական սիստեմի զարգացումը. առաջավոր խրամատների ուժեղ մոտեցումը և ճեղքերի ու խրամուղիների ցանցի ընդլայնումը խորքից։

3. Նոր դիտակետերի հանդես գալը և կապի ցանցի զարգացումը։

4. Նոր մարտկոցների հանդես գալը և, վորոշ դեպքերում, նրանց փորձնական հրաձգությունը պաշտպանության դիրքերի սիստեմի ներսի հրջանների (կետերի) և բնագծերի վրա, նույնպես և թիկունքային ճանապարհների վրա։

5. Ոդային ուժերի գործնեության ուժեղացումը։

Հակամարտկոցային հետախուզության վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել։ Հրետանու ամբողջ հետախուզական գործողությունն անպայման պետք է անընդհատ լինի. գիշեր ժամանակ այդ պետք է վոչ թե թուլանա, այլ ուժեղանա։

256. *ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ*։ Գնդի մարտկոցները սովորաբար մնում են հրաձիգ գնդերի հրամատարների ստորադրության տակ, բայց մտնում են պաշտպանության հրետանու ընդհանուր սիստեմի մեջ և իրենց աշխատանքը տանում են հրետանու գործողությունների ընդհանուր պլանի համեմատ։

Դիվիզիական հրետանին ամբողջովին մնում է հրետանու պետի ձեռքում։ ՀՍ խմբակները բաշխվում և գործում են նույն սկզբունքներով, ինչպես և զորաշարժական պատերազմում։ ՀԳ դիվիզիական խմբակները հաճախ բացակայում են. դրանց փոխարեն կազմվում է ՀԳ հզոր կորպուսային խմբակ։

Միևնույն ժամանակ կորպուսային հրետանու վո-

րոշ մարտկոցները (ամենից առաջ 76 մմ) կարելի յե նշանակել ՀՍ խմբակների ուժեղացման համար ամենակարևոր տեղամասերում։

ԳՀՈՀ մասերը կարելի յե նշանակել՝ ինչպես ՀԳ խմբակների, նույնպես և ՀՍ խմբակների ուժեղացման համար։

Կրակային համագործակցությունն ու փոխադարձ սատարությունը կազմակերպվում է ավագ հրետանական պետի կողմից (սովորաբար կորպուսի հրետանու պետի)։ Միևնույն ժամանակ դիվիզիաներն իրենք սատարության վերաբերյալ փոխադարձ համաձայնության են գալիս, առանց վերևից ցուցումների սպասելու։

Յ· ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

257. *ՊՆՏԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ* կատարվում է նույն հաջորդականությամբ, ինչպես և զորաշարժական պատերազմում պաշտպանության ժամանակ։ Տարբերությունը միայն նրանումն է, վոր ճակատի կայունությունը թույլ է տալիս հետախուզությունից հետո ավելի ճիշտ իրականացնել հրետանու հարկավոր վերախմբավորումները։

258. *ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ* կազմվում է պաշտպանության ընդհանուր զորական պլանին միանգամայն համապատասխան։

Հրետանու գործողությունների պլանը կազմելու համար անհրաժեշտ է մանրամասն և խնամքով ուսումնասիրել վոչ միայն հակառակորդի դասավորությունը և դեպի մեր դիրքերը բերող մատույցները, այլ և սեփական դասավորությունը։ Վերջին պայմանը հաճախ առաջնակարգ դեր է խաղում։ Պետք է շատ լավ ուսումնասիրել պաշտպանության բոլոր վաշտային հրջանները և հետևակ մասերի փոխադարձ կրակային կապի ամբողջ սիստեմը, նույնպես և հակագրոհի համար բոլոր մատույցները և յետխաղացման մոտավոր ճանապարհները։

Հրետանու գործողությունների պլանի համար հիմնական հիմունք պետք է ընդունել.

ա) Ձեզոք գոտու ամենակարևոր հրջաններից յուրաքանչյուրի վրա (յուրաքանչյուր ամենակարևոր մատույցի վրա), ամենակարճ ժամանակամիջոցում, ամենամեծ թվով հրանոթների կրակը կենտրոնացնելու հնարավորությունը.

բ) Գրոհի հրետանու ավերիչ գործողությանը հզոր հակընդդեմ հրետանական հարված հակադրելու հնարավորությունը.

գ) Իր հետևակի համար պաշտպանողական շերտի խորքում հաջողությամբ կռվելու ապահովումը։

Հրետանու գործողությունների պլանը կազմելու համար քաշում են հրաձիգ գնդերի հրամատարներին և ընդհանուր զորական շտաբների աշխատավորներին։ Միևնույն ժամանակ յուրաքանչյուր հրետանական պետ, որ ստորում է որոշ զորական միավորության կամ հետևակ մասին, իր հերթին պարտավոր է ուսումնասիրել այդ միավորության կամ մասի պաշտպանության պլանը և դրա հետ համաձայնեցնել իր գործողությունների պլանը։

Հրետանու գործողությունների պլանը նախատեսնում է.

1. Կորպուսում. ա) կռիվ մղել հակառակորդի հրետանու դեմ. սովորաբար այդ կռվի համար ճակատ է նշանակվում՝ կորպուսի ճակատից վոչ պակաս և լրացուցիչ հատվածով առնվազն 5 կմ յուրաքանչյուր կողմը. բ) կազմակերպել հարևան դիվիզիաների հրետանու փոխադարձ կրակային սատարությունը. գ) բաշխել ուժեղացման հրետանին (կորպուսային և ԳՀՈՀ) հարձակման անցնելու և յետխաղացման համար. դ) հրետանու մարտական անդի սխեմը։

2. Դիվիզիայում. ա) ՀՍ խմբակների աշխատանքն ու համագործակցությունը. բ) թևերի և կցուրդների ապահովությունը. գ) դիվիզիայի հրետանու մասնակցությունը հակառակորդի հրետանու դեմ մղվելիք կռվին. դ) մարտական անդի սխեմը։

3. ՀՍ խմբակում. ա) մարտկոցների կրակի բաշխումը (ըստ հրջանների). բ) մարտկոցների կապը հետևակ ստորաբաժանումների հետ։

Հրետանու գործողությունների պլանն արտահայտվում է աղյուսակի և կողմորոշ պլանի ձևով։ Ամբողջ դիվիզիայի հրետանու գործողությունների պլանի աղյուսակն ուղարկվում է հրետանական խմբակների հրամատարներին և հրաձիգ գնդերի հրամատարներին, իսկ յուրաքանչյուր խմբակի գործողությունների պլանի աղյուսակը՝ այդ խմբակի հրամատարներին և այն դումարտակների հրամատարներին, վորոնք գործում են ճակատի համապատասխան տեղամասի վրա։

259. ՀՐԵՏԱՆՈՒ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ։ Դիրքային պատերազմում պաշտպանության պայմանները թույլ են տալիս ամենալայն չափով ոգտագործել թևային ու շեղահար կրակի ուժը։ Այդ պատճառով մարտկոցների մեծ մասը պետք է այնպես դասավորել, վոր հնարավորություն լինի կողահարել կամ պաշտպանության շերտի մատույցները, կամ նրա ներսի վորոշ հրջանները։

Յուրաքանչյուր մարտկոցի հրամատար դիրքն ընտրում է այն հաշվով, վոր ամենալավ կերպով կողահարի նրան տրված տեղամասերը։

Մարտկոցների վորոշ մասի դասավորությունն իր դիվիզիայի ու նույնիսկ կորպուսի տեղամասից դուրս, յեթե դիվիզիան թևային է, սովորական յերևույթ է հանդիսանում։

Վորպեսզի հնարավորություն ունենալ կրակ վարելու հարևան տեղամասերի վրա, մարտկոցին հարկ է լինում մարտի ընթացքում մի քանի անգամ ճակատը փոխել ընդհանուր առմամբ մինչև 180 աստիճան. այդ պատճառով յուրաքանչյուր մարտկոց պետք է յերկու, իսկ յերբեմն էլ յերեք դիրք ունենա։ Յեթե գետինը վատ է, այդ դիրքերը պետք է միացված լինեն ճանապարհով հրանոթներն արագ տեղափոխելու համար։

Դրա հետ միասին կողահարման հասնելու ձգտումը չպետք է բացասաբար ազդի հետևակի հետ ու-

նեցած համագործակցության ու կապի վրա ու հրե-
տանու դասավորության ըստ խորության չորանման
վրա: Մարտկոցները պետք է շարանել այնպես, վոր
պաշտպանության հրետանու կրակային գործունեու-
թյունն անընդհատ լինի մարտի ամբողջ ընթացքում:
Միևնույն ժամանակ ըստ խորության շարանումը խո-
շոր չափով նվազեցնում է պաշտպանության հրետանու
մեծ մասը միանգամից կորցնելու վտանգը: Այդ հատ-
կապես կարևոր է գրոհողի կողմից քիմիական հարձա-
կում գործելու ժամանակ:

260. ԴԻՏԱԿԵՏԵՐ: Ավագ հրետանական հրամա-
տարների հրամատարական դիտակետերը, երև
կանոն, պետք է կառուցել ընդհանուր զորական հրա-
մատարների հրամատարական դիտակետերի կող-
քին: Այդ կետերը կարող են իրենց մոտերքում լավ
տեսածիր ունեցող դիտակետեր չունենալ. ավագ հրա-
մատարներին կարիք չի լինում կրակը ղեկավարել:
Խմբակների հրամատարները տեղավորվում են
այնպիսի հրամատարական կետերում, վորտեղից
նրանք հնարավորություն ունենան դիտել իրենց խըմ-
բակների կրակային շերտերը: Այդ մանավանդ վերա-
բերում է ՀՍ խմբակներին. վերջիններիս հրամա-
տարները գտնվում են համապատասխան հրաձիգ դըն-
դերի հրամատարների հետ կամ, նրանց մոտ կապի
պատվիրակներ ուղարկելով (հրետանու հրամատա-
րական կազմից), դրանց մոտերքում դիտողության
համար կետեր են դրավում:

Յուրաքանչյուր մարտկոց պետք է առնվազն 3 դի-
տակետ ունենա:

Անտեսության դաշտերի գծավորումը պարտադիր
է և այն եղ կողմորոշ պլանի վրա: Գծավորման ժամա-
նակ պետք է աշխատել տարածությունն ընդգրկել,
վորքան հնարավոր է, լայն չափով այնպես, վոր ընդ-
գըրկած սեկտորը 360 աստ. մոտ լինի:

Յուրաքանչյուր դիտակետում սահմանվում է
հրամատարական կազմի մշտական որապահու-
թյուն: Դիտողության մատյանները պետք է տանել

տանց ընդհատումների: Կողմորոշ պլանի վրա գրած
պիտի լինեն անկյունաչափի, նշանոցի և փողակի բո-
լոր հաստումները դեպի այն նպատակները, վորոնց
վրա փորձնական հրաձգություն է կատարած. կող-
մորոշ պլանների վրա նույնպես պիտի գրած լինեն այն
կողմորոշ առարկաներին վերաբերող հաշված հաս-
տումները, վորոնց վրա փորձնական հրաձգություն չի
կատարված, բայց կարող են նշանակություն ունենալ:

Հաստումների աղյուսակով տախտակը պետք է
գտնվի նաև մարտկոցում յուրաքանչյուր հրանոթի
մոտ:

261. ԿԱՊԸ դիրքային պատերազմում պաշտպա-
նության ժամանակ հատուկ խնամքով կազմակերպու-
թյուն է պահանջում:

Դաշտային յեղանակով դցած հեռախոսային ցան-
ցը մատնված է արագ վոչնչացման արդեն հակառա-
կորդի հրետանական նախապատրաստության ժամա-
նակ: Անհրաժեշտ է գետնի տակով, 1 ու կեսից մինչև
2 մ. խորության վրա հատուկ ստորերկրյա հեռախո-
սային մալուխ անցկացնել: Ցածր մակարդակի գետ-
նաջուր ունեցող տեղանքում, այդ կարելի յե փոխարի-
նել դաշտային, բայց անպայման նոր ու լավ պատիչ
ունեցող մալուխով: Մալուխը դցելու խորությունը
նույնն է. մալուխը դցում են փայտե, տափաձև, յե-
ռանկյունի հատված ունեցող վաքերում:

Հեռախոսային ցանցի կազմակերպման ժամանակ,
պետք է միջոցներ ձեռք առնել հեռախոսային խոսակ-
ցությունը հակառակորդի կողմից բռնելու հնարավո-
րությունը կանխելու համար: Պետք է ամեն կերպ
խուսափել ճակատին զուգահեռական գծերից:

262. ՔՈՂԱՐԿՈՒՄԸ կազմակերպվում է նույն
սխեմով, ինչպես և զորաշարժական պատերազ-
մում, բայց ե՛լ ավելի խնամքով: Հմտորեն քողարկած
դիտակետը, թեկուզ և ուժեղ կերպով ամրացրած չլի-
նի, միշտ ավելի յերկար է գոյություն ունենում, քան
ավելի ամուր, բայց հեշտ հայտաբերվող դիտակետը:
Նույնը վերաբերում է նաև կրակային դիրքերին:

263. ՄԱՐՏԱԿԱՆ ՍՆՈՒՆԴԸ: Մարտամթերքի քանակը, որ տրվում է մարտկոցներին, սահմանվում է խմբակի հրամանատարի հրամանով յուրաքանչյուր մարտկոցի համար, նայած խնդիրներին: Այն մարտկոցներում, որոնց սնումը մարտի ժամանակ դժվար է, պաշարը պետք է ապահովի օրական մարտական կարիքը:

Բանակային միջոցներով մարտապաշար կրել բերելը, նեղգծանի յերկաթուղիների կառուցումն ու քողարկումը, պահեստների կազմակերպությունն ու սարքավորումը— պատրաստվում ու մշակվում է վաղօրոք:

4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

264. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ հակառակորդի գրոհի համար տարվելիք նախապատրաստական աշխատանքները հայտաբերելուց հետո, պաշտպանության հրետանին, ուժեղ վերերկրյա ու օդային հետախուզություն կատարելով և խանգարելով հակառակորդի օդային հետախուզությունը, միաժամանակ կատարելագործում է կրակի կազմակերպությունը ճակատի վտանգավոր տեղամասերում:

Որոշ դեպքերում հակապատրաստությունը՝ մի շարք հանկարծակի կրակային հարձակումների ձևով հակառակորդի ուժերի կենտրոնացման շրջանների վրա կարող է մեծ օգուտ տալ: Հրաձգությունը կատարվում է ժամանակավոր դիրքերից, որպեսզի չհայտաբերել հիմնական դիրքերի իսկական սիստեմը:

265. ԳՐՈՀԻ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ հրետանին կամ հակընդդեմ հրետանական հարված է կազմակերպում հակառակորդի յելակետային զինադաշտում հավաքված հետևակի դեմ, կամ լռում է մինչև գրոհի սկիզբը:

Հակառակորդի կողմից գազագլանային գրոհի պատրաստություն հայտաբերելուց հետո, օգտակար է կարճատև հակընդդեմ հրետանական հարված կազմակերպել: Գազեր բաց թողնելու սկզբին մարտկոցների

մեծ մասը ուժեղ կրակ է բաց անում գազագլանների տեղավորման շրջանի վրա:

Յեթե խրամատների վրա, որտեղ գտնվում են գազագլանները, փորձնական հրաձգություն է կատարված ոչ բոլոր մարտկոցներով, թույլատրվում է մակերեսով կրակ վարել, լրիվին օգտագործելով արագաձգությունը, 3 րոպեյից ոչ ավելի ժամանակի ընթացքում:

266. ԳՐՈՀՆ ՍԿՍԵԼԻՍ, հրետանին խափանիչ կրակ է բաց անում, խանգարելով հակառակորդի առաջին շարանի գրոհը և նրան կտրելով հետեվյալ շարաններից: Կրակը պետք է բացել ամենաուշը հետեվակի կողմից կրակ պահանջելուց յերկու րոպե հետո:

Խափանիչ կրակին մասնակցում է ամբողջ հրետանին: Յուրաքանչյուր մարտկոցի խափանիչ կրակի համար հատուկ տեղամասերը նշանակվում են լիտերներով (տառերով): Խափանիչ կրակի սխեման ուղարկվում է վաղօրոք դիվիզիայի հրետանու պետի կողմից բոլոր մարտկոցներին և գումարտակների շտաբներին:

Խափանիչ կրակը դադարեցվում է այն հետեվակ պետերի ցուցումներով, որոնց տեղամասերի առջեվում կրակ է բաց արած:

Խափանիչ կրակ բանալու հետ միասին, դաշունահար գործողության համար նշանակված գնդի հրանոթները պատրաստվում են մարտի: Յեթե խափանիչ կրակի ծուխն ու փոշին այնքան են ծածկում ամբողջ չեզոք գոտին, որ տեսանելիությունը միանգամայն վերանում է, գնդի հրանոթները մասնակցում են խափանիչ կրակին, կրակ վարելով իրենց նեղ դաշունային սեկտորում:

267 ՀՐԵՏԱՆՈՒ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ նույնն են, ինչ որ զորաշարժական պատերազմում պաշտպանության ժամանակ:

ԳԼՈՒԽ XIV

ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

I. ԼԵՌՆԵՐՈՒՄ

268 ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ մեծ դժվարություններ են ներկայացնում և հրամատարական կազմի հատուկ փորձառությունն ու մասերի մարզությունն են պահանջում: Զորքերի գործողությունները լեռներում բնորոշվում են զորաշարժի խոչընդոտներով և իբրև հետևանք, զորական միավորությունների մասնատումով՝ մանր ինքնուրույն սյուների:

Հրետանու կենտրոնացրած ղեկավարությունը լեռներում իրականացնելի չէ: Հրետանական մասերը (մարտկոցները) տրվում են սյուներին ու ենթարկվում են սյուների պետերին:

Բավարար դիրքեր գտնելու չափ սահմանափակ հնարավորությունը պահանջում է սյուներին տրվող մարտկոցների թիվը խիստ սահմանափակել: Դիրքերի բացակայության պատճառով անհնարին է լինում հրետանին բացազատել ու այդ պատճառով մարտկոցները ծանրաշարժ ու անոգուտ զումակ են դառնում:

Լեռնային ռելյեֆը պահանջում է ուղղորդ հետագիծ ունեցող հրանոթներ: Լեռներում գործողությունների համար ամենից շատ գործադրելի յեն հոբիցները և լեռնային թնդանոթները: Վերջիններս, ընդունակ լինելով շարժվել վոչ միայն անիվներով, այլ և գրաստներով (դեսպակներով), հատկապես գործադրելի յեն լեռներում, վորտեղ հետեվակին ուղեկցելու համար հաճախ հարկ է լինում շարժվել ճանապարհներից դուրս կածաններով:

269 Հրետանական հետախուզությունը լեռներում շատ դժվարանում է: Շարժումը ճանապարհներից

դուրս շատ ժամանակ է պահանջում: Հենելադետակները ուղարկվում են, իբրև կանոն, միմիայն ճանապարհներով, հրետանու բացազատման ժամանակ դիտակետեր գտնելն անխուսափելիորեն ուշանում է: Տեսածիրի փոքրությունը և անտեսանելի տարածությունների շատությունը միշտ պահանջում է ոգնական դիտակետեր բռնել: Կրակային դիրքի ընտրությունը դժվարանում է՝ ամենափոքր նշանոցի մեծ լինելու և մեռյալ տարածությունների շատ լինելու պատճառով, նույնպես և մոտենալու լրացուցիչ ճանապարհների քիչ լինելու պատճառով: Կապ հաստատելն ուշանում է լարային գծեր գցելու դժվարության և սահմանափակ տեսածիրի պատճառով (տեսողական նշանարարության համար):

270. ԼԵՌՆԵՐՈՒՄ ՀՐԵՏԱՆՈՒ ԲԱՑԱԶԱՏՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇՈՒՄ Է ՆՐԱ ՏԵՂԸ ՍՅՈՒՆԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ: Անմիջապես կրակ բանալու բացառապես դժվարությունը աննպատակահարմար է դարձնում առաջապահի (առաջավոր ջոկատի) կազմի մեջ ուժեղ հրետանի նշանակելը: Գլխավոր ուժերի սյան մեջ հրետանին չպետք է կենտրոնացնել սյան գլխի մոտ: Մարտկոցների միջև ոգտակար է հետևակ թողնել (վաշտ-առ-վաշտ): Մարտկոցների մեջեվ շարժվող վաշտերը հրետանու պաշտպանակ են կազմում և ոգնում են հրետանուն ճանապարհին բունդ լինելու ժամանակ (ուղղորդ վերելքներն ու վարեջքները):

271 ՑԵՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ դժվարանում են, և նրանց արագությունը կախված է ճանապարհների տրամատից: Հրետանու շարժման արագությունը յերբեմն ընկնում է մինչև 1–2 կմ մեկ ժամում: Ուղղորդ վերելքները հաճախ պահանջում են լրացուցիչ լուծքեր, վոր վերցվում են մյուս հրանոթներից, ու հրանոթ-առ-հրանոթ շարժում, վորի պատճառով նույնպես շատ ժամանակ է կորչում:

Հրետանու որագնացքը հաճախ 8–10 կմ ավելի չի լինում:

272. ԱՌԱՋԱՑԱԾ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ կատարվում է հեծելադետքերով, վորոնք շարժվում են ճանապարհներով յերթական ուղեկալների բարձրության վրա։ Ճանապարհից դուրս նրանք կարող են բռնել լավ տեսածիր ունեցող հատկապես ձեռնտու բարձունքները դիտողության համար։ Այդ բարձունքները թողնում են պայմանական նշանով այն ժամանակ, յերբ հետեվյալ բարձունքն առջեվում գրավում է մյուս հեծելադետքը։

Այդպիսի մեկ բարձունքից դեպի մյուս բարձունքը վտավաններով շարժման միջոցով իրականացվում է դիտողության անընդհատությունը և հրետանուն ամենաարագ կերպով մարտի մտցնելու հնարավորությունը։ Հրետանական հրամատարը հայտնում է հետեվակ հրամատարներին այն բարձունքների մասին, վորոնց գրավումը հրետանու համար անհրաժեշտ դիտողություն է ապահովում։

Գլխավոր ուժերի բացազատումն առաջապահի շարժման ուղղության վրա հազվագյուտ դեպքերում է հնարավոր լինում։ Սովորաբար ձեռնարկվում է զորաշարժ (թիկնանցում, թեվանցում)։

Գլխավոր ուժերի հրետանու հեծելադետքերը շարժվում են գլխավոր ուժերի սյան գլխում և առաջ են ուղարկվում այն ուղղությամբ, ինչ ուղղությամբ բացազատվում է սյունը, միմիայն մարտկոցների կողմից վորոշակի խնդիրներ ստանալուց հետո։

273 ԴԻՏԱԿԵՏԵՐԸ հաճախ ընտրվում են կրակային դիրքերին անմիջապես մոտիկ։ Ոգնական դիտակետերը կապվում են հրամատարական կետերի հետ կամ հեռախոսով, կամ տեսողական նշանարարության միջոցներով։ Բարձունքների վրա դիտակետեր բռնելու ժամանակ, պետք է հաշվի առնել, վոր առավոտյան մառախուղները հաճախ թույլ չեն տալիս դիտողություն կատարել այդ բարձունքների վրայից, և կպահանջվի ոգնական դիտակետերի ոգնություն; Եական

ոգնություն է հասցնում հրետանուն ավիացիան, վորը սավառնակներից ճշտում է կրակը և ցույց է տալիս նպատակները։

274 ՀՐԵՏԱՆՈՒ ԿԱՊԸ ԱՌԱՋԱՎՈՐ ՀԵՏԵՎԱԿ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ սահմանափակ դիտողության և գնդակոծի պայմաններում բացառիկ նշանակություն է ունենում։ Մարտկոցներից առաջավոր դիտողներ ուղարկելը պարտադիր է։

275. ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ։ Մեռյալ տարածությունների շատությունը հանդես է բերում հատուկ մարտկոցներ կամ առանձին հրանոթներ նշանակելու անհրաժեշտությունը, այդ տարածությունները թեվային կամ շեղահար կրակով ռմբակոծելու համար։ Համենայն դեպս հրետանական և գնդացրային կրակի զուգակցությունը պետք է բոլոր կարեվորագույն ուղղությունների և մատույցների հուսալի կրակային ապահովում տա։

Մարտկոցները պետք է շարանել ըստ խորության, վորպեսզի հակառակորդի մասերը, վորոնք ձգտում են թիկնանցել կամ թեվանցել, հանդիպեն մեծ քանակությամբ հրանոթների հրետանական կրակին։

Յերբեմն, մանավանդ յետխաղացման ժամանակ, բավարար դիրքերի բացակայությունը հարկադրում է առանձին հրանոթների կրակը գործադրել փոքր հեռակայություններից ուղղակի նշանառությամբ։

Մարտկոցների դիրքը փոխելու ժամանակ, վորը լեռներում յերկար ժամանակ է պահանջում, կրակի անհրաժեշտ անընդհատությունն իրականացվում է վըտավաններով տեղափոխության միջոցով, ըստ վորում մեկ մարտկոցի կրակը դադարեցվում է միայն այն ժամանակ, յերբ մյուս մարտկոցն արդեն կրակ է բաց անում նոր բռնած դիրքից։

276. ՀՐԱԳԱՇԱՐՈՎ ՄՆՈՒՆԴԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, յերբեմն էլ մարտկոցին հրապաշար հասցնելու անհնա-

րին լինելը (ճանապարհների բացակայություն), լեռներում գործող հրետանուց ամենամեծ խնայողականություն է պահանջում արկերի բանեցնելու ժամանակ։

2. ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

277. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ բնորոշվում են. 1) դասավորության և տեղափոխությունների թաքնությամբ և 2) ղեկավարման, կապի պահպանության և համագործակցության դժվարությամբ։ Հրետանու գործողություններն անտառներում կախված են՝ անտառային տարածությունների չափերից ու գծագրությունից և նրանց մեջ ճանապարհների, հատուղիների և բացատների առկայությունից։

Անտառային մարտերում շրապնելը կիրառվում է, գլխավորապես, փորձնական հրաձգության համար։ Նռնակներն ակնթարթային գործողության փողակներով և քիմիական արկերը ամենաշատ գործուն են հանդիսանում։ Գետնամերձ հետագիծ ունեցող հրանոթների գործադրությունը դժվարանում է գնդակոծի փոքրության պատճառով։ Հոբիցներն ամենից շատ կիրառելի հրանոթներն են անտառներում գործողությունների համար, մանավանդ առաջապահ մասերի հետ, երբ պահանջվում է արագ կրակ բանալ ամեն մի դիրքից։ Թընդանոթներն ավելի շատ գործադրելի յեն գլխավոր ուժերի հրետանու կազմի մեջ, որոնց բացազատումը թույլ է տալիս ավելի մեծ խնամքով դիրքեր ընտրել։ Թնդանոթներն ոգտակար է կիրառել հատուղիների, բացատների և բոլորքների երկայնակի ռմբակոծման և կողահարման համար։ Երբեմն ոգտակար է նրանց քողարկած դնել անտառի բոլորքում, որպեսզի հակառակորդի համար անսպասելի կերպով կրակ բանալ փոքր հեռավորությունից։

278. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ պետք է ընտրել

հատուղիների, բացատների բոլորքներում կամ նոսր անտառներում, յեթե հարկավոր է, գնդակոծի տարածությունը մաքրելով։ Դիտակետերը մեծ մասամբ պետք է տեղավորել ծառերի վրա։ Նրանց չպետք է դուրս բերել անտառի հենց յեզրը։ Տեսածիրի փոքրությունը սովորաբար թույլ չի տալիս սահմանափակվել մեկ դիտակետով յուրաքանչյուր մարտկոցի համար, այլ պահանջում է այնպիսի դիտակետերի սիստեմ ստեղծել, վորոնք փոխադարձաբար լրացնում են միմյանց։

279. ԿԵՆՏՐՈՆԱՑՐԱԾ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ առհասարակ դժվար իրագործելի յե։ Հրետանին, սովորաբար, յենթարկվում է այն հետևակ պետերին, վորոնց մասերին հրետանին ոգնում են։ Անտառում կողմորոշման դժվարությունը պահանջում է հրետանուց անընդհատ և ամենասերտ կապ պահպանել հետևակի հետ, մանավանդ նրա առաջավոր մասերի հետ։

280. ԱՆՏԱՌԻ ՆԵՐՍՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՏԵՐՈՒՄ ոգտակար է ոգտագործել գնդի կամ դիվիզիական հրետանու առանձին հրանոթները կից մոտիկից ուղղակի նշանառությամբ կրակ վարելու համար։

Բոլորքի կամ հատուղու ներամուտ անկյուններում միշտ ոգտակար է լինում առանձին հրանոթներ դնել ամենից շատ հավանական մատույցները կողահարելու համար. իբրև այդպիսիներ հանդիսանում են անտառի դուրս յելնող անկյունները։

Խոշոր անտառային տարածությունների ներսում պաշտպանության ժամանակ, պաշտպանության հրետանական, նույնպես և գնդացրային սիստեմի կազմակերպության համար հատկապես մաքրում են հատուղիներն ու բոլորքները։ Նրանց կողահարմանը կարե-

լի յե հասնել, հատուկ գնդակոծ ունեցող բլոկհաուզներ կառուցելով։

3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

281. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԿԱՊ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԴԸԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ բնակավայրերի ներսում մարտական գործողությունների առանձնահատկությունն ե հանդիսանում։

Զորքերի համագործակցությունը նույնպես շատ դժվարացած ե լինում, և զորքերի գործողությունները առանձին ինքնուրույն խմբակների գործողությունների բնույթ են ստանում, այնպիսի խմբակների, վորոնց պետերին լայն նախաձեռնություն ե վերապահվում։ Շենքերի և քարե պատերի առկայությունը պաշտպանվողին լավ ծածկվելու հնարավորություն ե տալիս, իսկ հարձակվողից հրետանական միջոցների գործադրություն ե պահանջում։

Բնակավայրի դըրոհի նախապատրաստության համար, նույնպես և նրա ներսում գործողությունների համար անհրաժեշտ ե ունենալ մանրամասն և ճիշտ պլաններ (լուսանկարներ)։ Սավառնակից կամ բարձր շենքից դիտողության հնարավորությունը նույնպես խոշոր չափով հեշտացնում ե հրետանու աշխատանքը։

282. ԳՐՈՀՈՂԻ ՀՐԵՏԱՆԻՆ մեծ մասամբ ոգնում ե հետևակ մասերին, տեղավորվելով բնակավայրից դուրս, և, բնակավայրը հետզհետե գրավելուց հետո, դիրք ե բռնում հրապարակներում, այգիներում, սկվերներում և բակերում։ Հրետանուն բնակավայրի ներսը տանելու ժամանակ, առաջին հերթին պետք ե տանել հոբիցային մարտկոցները։ Մարտկոցների դասավորման տեղից անկախ, հետևակի հետ կապ պահպանելը պարտադիր ե։

Առանց հետևակի հետ անընդհատ կապ պահպանելու, հրետանին հնարավորություն չի ունենալ իր կրակն ուղղել այն նպատակների դեմ, վորոնք խանգարում են հետևակի գործողությունները։ Մարտկոցների հետևակի հետ կապ պահպանելու ջոկերն ու առաջավոր դիտակետերը պետք ե միշտ գտնվեն հետևակի այն առաջավոր մասերի հետ, վորոնց ոգնում ե հրետանին։

Բնակավայրից դուրս տեղավորվող հրետանին կարելի յե կենտրոնացնել միակի ղեկավարությամբ այն անհրաժեշտ պայմանով, վոր ՀՍ մարտկոցները սերտ կապ պահպանեն ոգնության յենթակա հետևակի հետ։ Բնակավայրի ներսը մտած մարտկոցները յենթարկվում են համապատասխան հետևակ հրամանատարներին։ Գրոհողի հրետանու կազմից կարելի յե ՀԳ խմբակ կատել՝ հեռավոր նպատակների ռմբակոծման, պաշտպանվողի հրետանու դեմ կռվելու և կայաններում (առանձին փողոցներ, կամուրջներ, հոներ և այլն) խափանիչ կրակ կազմակերպելու համար։

Գրոհողի զորքերին առանձին հրանոթներ տալը շենքերն ու բարիկադները կիպ մոտիկից ռմբակոծելու համար յերբեմն եական ոգնություն կհասցնի հետևակին։

283. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ հրետանական կրակի կազմակերպությունը պետք ե հնարավորություն տա կրակը կենտրոնացնելու ամենակարևոր մատույցների և ամենակարևոր ուղղությունների վրա և հուսալի կերպով ռմբակոծելու պաշտպանվող շրջանի ամբողջ սահմանն այն մարտկոցների և առանձին հրանոթների թևային կրակով, վորոնք տեղավորված են բլոկհաուզ դարձրած շենքերում։

Բավարար դիտողություն կազմակերպելու հնարավորությունը պաշտպանվողին թույլ ե տալիս կռիվ մղել հարձակվողի հրետանու դեմ։ Յերբեմն ձեռնտու յե լինում հրետանու մի մասը տեղավորել պաշտպանվող բնակավայրի սահմաններից դուրս։ Այդ հրետանին ամենաիրական ոգնություն կհասցնի հետևակին այն

շրջանում, յերբ գրոհողը, քաղաքի (գյուղի) մի մասը գրավելուց հետո, շարունակում է հարձակումը զարգացնել արդեն նրա ներսում։

Պաշտպանվողը պետք է հոգ տանի օդային-քիմիական պաշտպանության միջոցների մասին։ Եթե սավառնակների դեմ կռվելու համար հատուկ միջոցներ չկան, այդ նպատակի համար նշանակվում է հրետանու և գնդացրերի մի մասը։

4. ՁՄԵՌԸ

284․ *ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ*։ Ցածր ջերմաստիճանը պահանջում է մի շարք միջոցներ ձեռք առնել մարդկանց սառչելու դեմ․ պարենի և խոտի ուժեղացրած օրաբաժին, տաք հագուստ, յերեսն ու ձեռքերը վազելին քսել, ասպանդակները փաթաթել և այլն։ Պետերի կազմի ուշադրությունը պիտի ուղղված լինի ձիերը ժամանակին ձմեռվա պայտերով (ձմեռվա գդեռներով) պայտելու վրա։ Ձյան ծածկոցի պատճառով անհրաժեշտ է լինում հատուկ քողարկում՝ սպիտակ քաթաններով և խալաթներով։ Վարչական դասակներին պետք է խալաթներ տալ առաջին հերթին։

285․ *ՄԱՍԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ* բնակավայրերից դուրս չափազանց դժվարանում է։ Եթե պարագան հարկադրում է դաշտում կամ անտառում տեղավորվել, կանգառման համար պետք է տեղ ընտրել ծածկըված և քամու վոչ յենթակա տեղերում և միջոցներ ձեռք առնել մասերին վառելիք և տաք կերակուր հայթայթելու համար։ Այդ դեպքերում պետք է հաշվի առնել խարույկ վառելու անհրաժեշտությունը։

286․ *ՄԱՍԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ* ձմեռը դըժվարանում է։ Օրադնացքները պետք է փոքրացնել։ Նյութական մասը կարելի յե դնել հատուկ սահնակների վրա։ Եթե սահնակները նեղ են հրանոթները կարելի յե տեղափոխել քանդած դրությամբ ճոլիկների

կույտերով լծվածքը փոխարինվում է իծաշարուկ լըծվածքով։

Եթե ճանապարհը շատ ծանր է, հրետանու օգնության համար նշանակվում են սապյորական մասեր և հետեվակ։

Երթի ժամանակ յուրաքանչյուր 30–50 րոպեյից հետո ձիավորներին պետք է ձիերից իջեցնել 10–15 րոպեով։ Հրանոթային համրանքը և հեռախոսակներն առավելապես վոտքով են գնում։

Խորը ձյունով առանց ճանապարհների շարժվելու դժվարությունը պահանջ է դնում, վոր հետախույզները կարողանան օգտվել դահուկներով։

287․ *ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* ձմեռ ժամանակ պահանջում են հատուկ յեղանակներ գործադրել՝ ծածկվելու և քողարկման համար։ Խրամատները պետք է չինել բերովի նյութից, յերբեմն ձյունից։ Տերեվների բացակայությունը հարկադրում է գործադրել հատուկ ձմեռնային քողարկում։ (Տես Ռազմա-ճարտարագիտական գործի հրահանգ հրետանիում)։

5. ԳԻՇԵՐԸ

288․ Գիշերը չափազանց դժվարացնում է հրետանու գործողությունները․ նրա կրակը գիշեր ժամանակ դժվար է դիտել և այդ պատճառով քիչ է գործոն։

Հրետանին չի կարողանում պատշաճ կրակային օգնություն ցույց տալ մյուս զորքերին գիշերային մարտում, վորի հաջողությունը բացառապես հիմնվում է հետեվակի վրա։ Գիշեր ժամանակ հեռավոր և միջին հեռակայություններից կարելի յե հրետանական կրակ վարել միայն վաղորոք և պատշաճ կերպով կազմակերպելու ժամանակ և յեթե կան այնպիսի միջոցներ, վորոնք ապահովում են հրաձգության բավական գործոնությունը և իր զորքերի համար հրաձգության անվտանգությունը։ Այն նպատակների վրա, վո-

րոնք հայտնաբերված են ցերեկվա մարտով, գիշերային հրաձգությունը պետք է վարել այն տվյալների համաձայն, որոնք պատրաստված են ցերեկվա փորձնական հրաձգությամբ, անհրաժեշտ ուղղումներ կատարելով ի հաշիվ փոփոխված օդերևութաբանական պայմանների. իսկ այն նպատակների վրա, որոնք հայտաբերված են գիշերային մարտի ժամանակ, պետք է հրաձգություն կատարել լուսատու միջոցների օգնությամբ կամ հաշված տվյալների համեմատ:

Հրետանու գործոն գիշերային հրաձգության համար բարենպաստ պայմանները հնարավոր են դիրքային պատերազմում. զորաշարժական պատերազմում, մանավանդ հարձակողական գործողությունների ժամանակ այդպիսի պայմանները բացառություն են կազմում:

Հրետանու գործողությունների պլանը գիշերային մարտում մշակվում է նախօրոք հատուկ խնամքով և մանրամասնություններով: Հատուկ ուշադրություն է դարձվում հետևակի հետ կապ կազմակերպելու վրա. հրամատարների անձնական շփումը բացառիկ նշանակություն է ունենում:

Գիշերային մարտի համար հրետանու պատրաստության ժամանակ պետք է պահպանել գաղտնապահության բոլոր միջոցները:

289. ԽՆԴԻՐՆԵՐ: Գիշերային հարձակողական գործողությունների ժամանակ հրետանու նախապես պատրաստությունը վերացնում է անակնկալության մոմենտը: Այդ պատճառով գիշերային մարտում հրետանական նախապատրաստությունը տեղին է, եթե ընդհանրապես գրոհը չի կարելի ծածուկ պատրաստել և հույս չկա հակառակորդին հանկարծակի հարվածել:

Գիշերային մարտում բարենպաստ պայմաններում հրետանու վրա կարելի է դնել հետևյալ խնդիրները.

ա) գիշերային գրոհի համար նշանակած տեղամասերի կրակային բոլորումը թևերից և թիկունքից:

բ) լուսավորում (լուսատու արկերով) և ամրակածում այն կետերի, որոնք ցույց են տրված գիշերային գրոհի համար, նույնպես և հակառակորդի այն մարտկոցների և հետևակ կրակային խմբակների, որոնք իրենց կրակով խանգարում են հարձակվող մասերի առաջշարժումը:

գ) կռիվ հակառակորդի հրետանու դեմ այն մոմենտին, երբ նա խափանիչ կրակ է բացում մեր հարձակվող հետևակի վրա.

դ) ճիշտ որոշված շրջանների թունավորում քիմիական արկերով և քիմիական փակոցների կառուցում հակառակորդի թիկունքում նրա շարժման ճանապարհների վրա.

ե) հակառակորդի թիկունքի ահաբեկում (գիշեր ժամանակ հրետանու ժամանակակից արկերի ներգործությունը հոգեկան դրության վրա շատ ուժեղանում է):

290. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ՄՈՏԵՆԱԼԻՍ ԳԻՇԵՐ ԺԱՄԱՆԱԿ հրետանուն ավելի հարմար է պահել սյան պոչում. մեծ մասամբ հրետանին հարկավոր կլինի այն դեպքերում, երբ կարելի է սպասել մարտի զարգացում լուսաբացին: Հրետանին, գտնվելով յերթական սյուների գլխում, հետևակին գիշեր ժամանակ օգուտ չի տալ և նրա համար բեռ կդառնա: Հրետանու յետևից գնացող հետևակը կարող է ուշանա և կորցնի իր կապը առջևի շարանների հետ: Գիշերային ընդհարման և մանավանդ հակընդդեմ ընդհարման պարագայում, ժամանակի ու գիշերային հրաձգության պատշաճ կազմակերպության համար տվյալների բացակայության պատճառով, նույնպես և պարագայի ծայրահեղ անորոշության պատճառով, հրետանու կրակը քիչ գործոն կլինի և, անհապաղ օգտագործման դեպքում, չի կարող նախաձեռնությունը հակառակորդից խլել, ինչպես ցերեկվա մարտում. ընդհակառակը, հրետանու կրակը

նախորոք կհայտաբերի գիշերային գրոհն ու հարձակվողի ուժերը:

291. ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ կատարվում է քանի դեռ լույս է և շարունակվում է բոլոր ժամանակ մինչև մարտի սկիզբը և մարտի ժամանակ:

Հետախուզությունը պետք է նախորոք հավաքի այն բոլոր տվյալները հակառակորդի և տեղանքի մասին, որոնք անհրաժեշտ են նրան ուղարկող հրետանական պետին, որպեսզի մարտկոցների համար դիտակետերն ու դիրքերը կարելի լինի ընտրել մինչև մութն ընկնելը: Քարտեզների ուսումնասիրությունը հատկապես կարևոր նշանակություն է ստանում:

Ընտրած դիրքերը գիշեր ժամանակ ճիշտ գրավելն ապահովելու համար, անհրաժեշտ է քանի դեռ լույս է նշանակել յուրաքանչյուր հրանոթի տեղը և շատ մեծ խնամքով հետազոտել մարտկոցների դեպի իրենց դիրքերը գնալու ճանապարհները. մարտկոցները գիշեր ժամանակ պետք է տանել իրենց դիրքերը այն ուղեցույցների օգնությամբ, որոնք կատարել են դեպի դիրքերը տանող ճանապարհների հետազոտությունը:

Հրետանին պետք է պատրաստ լինի իր վրա դրած խնդիրները ի կատար ածելու այն ժամին, որը նշանակված է ավագ պետի կողմից:

292. ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿ ԲԱՆԱԼԸ և ԿՐԱԿԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԱՍԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՔԸ կատարվում է լուսեղեն ազդանշաններով, որ տրվում են գրոհող հետևակի կողմից (գունավոր հրթիռներ—տես § 769 ԲԳԿԲ Հետևակի մարտական կանոնադիրք, մ. II, հրատ. 1927 թ.) կամ այլ յեղանակներով հրետանական դիտողների միջոցով:

293. ՀԱՐՁԱԿՈՒՄԸ կատարվում է, ըստ հնարավորին, առանց որևէ կրակի: Հրետանին, սովորաբար կրակ է բացում միմիայն երբ և պատասխան հակառակորդի հրետանու խափանիչ կրակին:

Այն դեպքում, յերբ հակառակորդի կողմից խափանիչ կրակ բանալու ժամանակ հակառակորդի և հարձակվող մասերի միջև տարածությունն այնքան մեծ է, որ հարձակվող մասերին ապահովում է իր հրետանու արկերի հարվածումից, կարելի յե հրետանական կրակ բանալ գրոհվող կետերի վրա գրոհող հետևակի ազդանշանով: Այդ կրակը, դրա համար նոր ազդանշան տալուց հետո, տեղափոխվում է դեպի հակառակորդի դասավորման խորքը, հենց որ հակառակորդի և գրոհող մասերի միջև հեռակայությունը թույլ չի տալիս մեր հրետանու հետագա անվտանգ կրակը:

Գիշեր ժամանակ հրետանու կողմից ռմբակոծումը այն գրոհվող տեղամասերի և առանձին կրակային խմբակների, որոնք խանգարում են հարձակումը, կատարվում է գլխավորապես հոբիցային կրակով, որովհետև այդ ամենից ուժեղ բարոյական ներգործությունն է ունենում հակառակորդի վրա:

Հետևակի շարժման ուղղության ճշտությունը յերբեմն կանոնավորվում է հրետանու կողմից, որն իր արկերի պայթյուններով ցույց է տալիս հետևակի հասնելու համար նշանակած վերջնական կետերը: Այդ դեպքում հրետանական կրակը պետք է բանալ վոչ ի վնաս հետևակի գործողությունների անակնկալության և վարել քարտեզով ցերեկվա փորձնական հրաձգության հետևանքների համաձայն:

294. ԱՆԱԿՆԿԱԼ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՐՈՀԸ կատարվում է առանց հրետանական կրակի, որպեսզի հակառակորդին հանկարծակիի բերել: Սակայն, այն հրետանին, որը սահմանափակ քանակությամբ տրվում է հետևակին, պետք է պատրաստ լինի կրակ բանալ գրոհող հետևակի պահանջով:

Պետք է բացառիկ ուշադրություն դարձնել հրետանու և հետևակի միջև յեղած ամենահաստատ կապի վրա, հետևակին իր ժամանակին կրակով օգնելու հա-

մար և իր զորքերին հրետանու կրակով հարվածելուց խուսափելու համար։

Հրետանու մեծ մասը, վորը գիշերային մարտում անմիջական մասնակցություն չի ունենում, սպասողական դրության մեջ է գտնվում և պատրաստ է լինում լուսաբացին գործելու։

295. ԳԻՇԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ հրետանին պետք է վաղօրոք ցերեկով պատրաստի գիշերային կրակի պատշաճ կազմակերպությունը. խափանիչ կրակի կազմակերպությունը (խիստ համաձայնեցնելով նրա անհրաժեշտությունը հրապաշարի անխուսափելի մեծ ծախքի հետ) առաջուց փորձնական հրաձգություն կատարած բնագծերի, մատույցների և տեղական առարկաների դեմ, լուսատու միջոցների օգնությամբ, հակառակորդի ձիգերի փայլով և այլն։ Գրոհը յետ չպրտելու համար հրետանական կրակը պետք է ժամանակին բանալ. այդ ապահովվում է միայն հետևակի հետ ամենահուսալի կապ ունենալու դեպքում։

Կրակ բանալը, դադարեցնելը և վերսկսելը կատարվում է հատուկ լուսեղեն կամ այլ ազդանշաններով, վորոնք սահմանվում են ավագ պետի կողմից։

Հրետանու դասավորությունը դիրքերում, հրետանական կրակի կազմակերպությունն ու նրա ղեկավարությունը պետք է ապահովեն մի քանի մարտկոցների կրակն արագ կենտրոնացնելու հնարավորությունը այն կետերի դեմ, վորոնց վրա ավելի հավանական է կամ վտանգավոր է հակառակորդի գիշերային գրոհը։

Գիշերը պաշտպանության ժամանակ հրետանու հրաձգությունը մեծ հեռավորությունների վրա չի արդարացնում հրապաշարի ծախքը. կրակային դիմադրությունը պետք է ցույց տալ փոքր հեռավորությունների վրա։

ԳԼՈՒԽ XV

ՀԵԾՅԱԼ ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

296. Հեծյալ հրետանին իր կրակով ապահովում է հեծելազորի հետախուզությունն ու բացազատումը մարտի համար և ոգնում է հեծելազորին մարտի ընթացքում։

Հեծելազորի համար սովորական համակցված մարտում հեծյալ հրետանու գործողությունները համակցվում են՝ մերթ հեծելազորի ձիաթափ արած մասերի և նրա գնդացիրների գործողությունների հետ, մերթ հեծելազորի հեծյալ շարքում գործողությունների հետ։

Հեծելազորի ձիաթափ արած մասերի մարտում հեծյալ հրետանին գործում է հրետանու համար ընդհանուր կանոններով։

Հեծելազորի մասերի հեծյալ շարքում ընդհարման ժամանակ մարտը վաղանցիկ բնույթ է կրում. այդ պահանջում է հրետանական հրամատարից արագ վճիռ ընդունել և կիրառել այն առանց տատանումների։ Այդ դեպքում ժամանակ չկա հրետանական դիրքերի խնամքով ընտրության և պատրաստության համար։ Հրետանական հրամատարը պետք է բռնի ամենամոտ դիրքը և նրանից, ըստ հնարավորին, մոտիկ գտնվող դիտակետը. Հեծյալ հրետանու կողմից դիրք բռնելու ժամանակ պետք է հաստատված լինի դիտակետի կապը դիրքի հետ։

Հեծյալ հրետանին մարտի համար տեղավորվում է առավելապես ծածկված դիրքերում։ Սակայն անհրաժեշտ դեպքերում հրետանին չպետք է կանգ առնի բաց դիրքեր բռնելու առաջ, չնայած անխուսափելի խոշոր կորուստներին ու մեծ դժվարություններին,

մանավանդ մարտում բաց դիրքից հեռանալու ժամանակ:

Կրակ բանալու ժամանակը և հրաձգության համար նպատակները, յեթե այդ ցույց չի տրված հեծելազորի պետի կողմից, ընտրում է հեծյալ-հրետանական հրամատարն ինքը՝ խնդրին համապատասխան և նայած պարագային:

297. ՄԵԾ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ, որը հատուկ է հեծյալ հրետանուն, նրան թույլ է տալիս համեմատաբար հեշտ դիրքերը փոխել՝ ավելի ձեռնտու տակտիկական պայմաններում դասավորվելու համար, որոնք ապահովում են կողահարող և չեղահար կրակի հաջող օգտագործումը:

Իր հարձակվող հեծելազորին սատարելու համար առաջ շարժվելու ժամանակ, նույնպես և նրա յետխաղացման ժամանակ, հեծյալ հրետանին դիրքը փոխում է շարան-շարան և նույնիսկ հրանոթ առ հրանոթ, առանց իր կրակը թուլացնելու:

298. ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: Հեծյալ մասերի մարտի արագընթացությունը հազվագյուտ դեպքերում է թույլ տալիս իրականացնելու հեծյալ մարտկոցների կրակի կենտրոնացրած ղեկավարությունը: Մարտկոցները խնդիրներ են ստանում սատարել որոշ մասերին և ստորաբաժանումներին (գնդերին, հեծելավաշտերին), որոնց հրամատարների հետ ամենասերտ կապ են պահպանում՝ ամենալրիակատար համագործակցությունն իրականացնելու համար:

Մարտկոցները, որոնք ուղեկցում են նրանց կողմից օգնություն ստացող մասերը (ստորաբաժանումները), մանավանդ յերբ նրանք շարժվում են թիկնանցման համար, սովորաբար, յենթարկվում են այդ մասերի (ստորաբաժանումների) հրամատարներին:

2. ՀԵԾՅԱԼ ՀՐԵՏԱՆԻՆ ՅԵՐԹՈՒՄ, ՏԵՂՈՒՄ ԴԱՍԱՎՈՐՎԵԼՈՒ ՅԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

299. ՅԵՐԹՈՒՄ հեծյալ հրետանին բաշխվում է սյուների միջև և յուրաքանչյուր սյան մեջ յերթի նպատակին և հակառակորդի մոտիկությանը համապատասխան:

Հարձակողական յերթի ժամանակ առաջապահի կազմի մեջ նշանակվում է սյան ամբողջ հեծյալ հրետանու մեկ յերրորդից մինչև կեսը:

Նայած պարագային, յերթական պահպանության առաջավոր, թիկունքային ու կողքի ջոկատների կազմի մեջ կարելի յե հեծյալ հրետանի նշանակել, ըստ որում նրա քանակը որոշվում է տակտիկական պայմաններով և այդ ջոկատների մեծությամբ:

Պարտադիր է հեծյալ հրետանի նշանակել հեծելազորի նույնիսկ այն փոքր մասերի կազմի մեջ, որոնք խնդիր են ստացել այնպիսի կարևոր կետեր գրավել կամ ձեռքում պահել, որոնք գտնվում են սյուների շարժման ճանապարհին, թևում կամ թիկունքում:

Յեթե պարագան պարզված չէ, յերբ ամեն րոպե կարելի յե հակառակորդի հետ ընդհարում սպասել, հեծյալ հրետանին շարժվում է ցատկումներով՝ մեկ դիրքից դեպի մյուսն այնպես, որ հեծելազորի յերթական սյունը միշտ գտնվի առաջուց դիրք բռնած հեծյալ հրետանու կրակի պաշտպանության տակ:

300. ՀԱՆԳՍՏԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ հեծյալ հրետանին ղեկավարվում է սույն Մարտական կանոնադրքի ընդհանուր կանոններով և ձեռք է առնում բոլոր միջոցները՝ արագ հավաքվելու հնարավորությունը, յելուստի հարմարությունը և տագնապի դեպքում դիրք բռնելն ապահովելու համար:

Պահապան և սրապահ մասերին ավելի մեծ կայունություն տալու համար, նրանց կազմի մեջ կարելի յե հեծյալ հրետանի նշանակել մեկ հրանոթից սկսած և

ավելի մեծ քանակությամբ, նայած պահապան մասի ուժին և պարագային:

Պահապան կամ որապահ մասերի կազմի մեջ հեծյալ հրետանի նշանակելու ժամանակ, համապատասխան հրետանական հրամատարը պետք է վաղորոք դիրք ընտրի և գրավի այն և գիշերային հրաձգության համար բոլոր տվյալները առաջուց պատրաստի:

Հեծյալ հրետանին, պահապան և որապահ մասերում գտնվելու ժամանակ, մարտական պատրաստություն է պահպանում. դրա համար ձիերից թամբերը չեն վերցվում, մարդիկ զենքն իրենց վրայից չեն հանում և իրենց հրանոթներից չեն հեռանում:

301. ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, յեթե նրանք մեկ հեծելավաշտից սկսած և ավելի մեծ ուժ ունեն, ըստ հնարավորին, պետք է միշտ հեծյալ հրետանի տալ, վորի քանակն ու կազմը կախված է հետախուզության խնդրից և պարագայի պայմաններից. յերբեմն ձեռնտու յե լինում նույնիսկ առանձին հրանոթներ տալ:

Հետախուզական ջոկատի կազմի մեջ մտած հեծյալ հրետանին նշանակվում է նրա համար կրակով ճանապարհ հարթելու և հետախուզական ջոկատի ուժի վերաբերմամբ հակառակորդին մոլորության մեջ գցելու համար:

Այդ դեպքերում հեծյալ հրետանու գործողությունները պետք է հմուտ և վճռական լինեն. նրան հարկ է լինում գործել ինչպես ծածկված դիրքերից մեծ հեռավորությունների վրա, նույնպես և բաց դիրքերից ամենափոքր հեռավորությունների վրա:

3. ՀԵԾՅԱԼ-ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

302. ԴԻՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ և հեծյալ հրետանու կրակ բանալու համար ժամանակին պատրաստվելն ապահովվում են հեծյալ-հրետանական հետախուզության որգանների ժամանակին և ճիշտ աշխատանքով:

Հրետանական հրամատարն իր հետախուզությունն ուղարկում է մեկ կամ մի քանի ուղղություններով, յերբ հեծելազորի պետից ցուցումներ է ստանում՝ նրա կողմից ընդունած վճռի և հեծյալ հրետանու առաջիկա խնդրի մասին և հակառակորդի մասին ունեցած տեղեկությունների համապատասխան:

Առաջավոր հեծյալ-հրետանական հեծելադետքը շարժվում է առաջապահի առաջավոր ջոկատի հետ: Այդ հեծելադետքի պետը պետք է ունենա հակառակորդի մասին բոլոր այն տեղեկությունները, վորոնք անցնում են առաջավոր ջոկատի ձեռքով: Առաջավոր հեծյալ-հրետանական հեծելադետքի պետն իրավունք ունի իր նախաձեռնությամբ ուղարկել հեծելազորի առաջավոր կամ կողքի հեծելադետքերի մոտ իր դետքը անմիջական դիտողության համար: Առաջավոր հեծյալ-հրետանական հետախուզության պետը զեկուցագրերն ուղարկում է հեծյալ հրետանու պետին առաջավոր ջոկատի պետի զեկուցագրերի հետ միասին, իսկ հատկապես կարևոր դեպքերում, օրինակ՝ հակառակորդի հետ շփման ժամանակ, զեկուցագրերն ուղարկում է իր հետախույզի միջոցով:

Կրակային դիրքեր փնտռելու համար հեծելադետքը շարժվում է իր հրետանական հրամատարի յետևից և ուղարկվում է նրա անձնական պատվերով:

Հրետանական հրամատարը պետք է իրազեկ լինի հեծելազորի պետի մոտ ստացվող բոլոր զեկուցագրերի մասին և հետևի (այդ պետի կողմից տրվող բոլոր պատվերներին, վորպեսզի միշտ տեղյակ լինի ծավալվող պարագայի մասին:

303. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԸՆԴՀԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՆԵԼԻՍ, հրետանական հրամատարը հեծելազորի պետի հետ միասին դուրս է գալիս անձնական հետախուզության համար, վորտեղ հեծելազորի պետից ստանում է խնդիր հեծյալ հրետանու համար առաջիկա մարտում, ուղղություն, վորի վրա նա պետք է գործի, և ցուցումներ

կրակ բանալու մասին: Դրանից հետո նա մարտադաշտի դիտողություն է կազմակերպում իր կողմից ընտրած դիտակետից, դիտողներ է ուղարկում ոգնական դիտակետերը և կապ է հաստատում սատարության յենթակա հեծելազորի հետ. ապա հեծելաշետք է ուղարկում կրակային դիրքեր ընտրելու, այդ դիրքերին մոտենալու ծածկված ճանապարհները հետախուզելու և հեծյալ մարտկոցները կրակային դիրքերը տանելու համար:

4. ՀԵԾՅԱԼ ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ

304. ԴԻՄԱՄԱՐՏԸ ՀԵԾՅԱԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԵՄ, յեթե նա հարված է ընդունում, անցնում է արագ և անդադար փոփոխվող պարագայում: Այդ պատճառով հրետանական հրամանատարը, հեծելազորի պետից սկզբնական ցուցումներ ստանալուց հետո, հետագայում գործում է իր նախաձեռնությամբ, ղեկավարվելով հիմնական խնդրով, այն է՝ իր հեծելազորին կրակով աջակցել հարված հասցնելու ժամանակ, հաջողության դեպքում նրան ոգնել հակառակորդին հետապնդելու, իսկ անհաջողության դեպքում կրակով պաշտպանել իր հեծելազորի յետխաղացումը:

Հեծյալ հակառակորդի դեմ դիմամարտ մղելիս, չի կարելի հույս դնել հեծելազորի պետի և հրետանական մասերի միջև ամուր կապ ունենալու վրա. ուստի ոչ միայն ավագ, այլև յուրաքանչյուր հրետանական պետին հարկ է լինում մարտում գործել իր նախաձեռնությամբ. ըստ որում, յեթե լավ դիտողություն է հաստատված, հրետանական հրամատարը պետք է կրակով ոգնի ոչ միայն այն հեծելազորին, վորին նա նշանակված է սատարելու, այլև հարևան հեծելազորին:

305. ԱՎԱԳ ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՏԱՐԸ պարտավոր է դիտել իրեն յենթարկվող մասերի աշխատանքը, նրանց կրակն ուղղել ամենից առաջ այն նպատակների դեմ, վորոնք ամենից շատ են վնասում իր հեծելազորին, իսկ հետո կրակը տեղափոխել ամենախոցելի նպատակների վրա: Հեծյալ շարքում ընդհարման ժամանակ, իբրև այդպիսի նպատակներ մեծ մասամբ կլինեն՝ սկզբում հակառակորդի հեծելազորի առաջնամարտիկ մասերը, իսկ յերբ նրանց դեմ ուղղած հրաձգությունը վտանգավոր է դառնում իր հեծելազորի համար, կրակը պետք է տեղափոխել հակառակորդի հեծելազորի հետևյալ շարանների վրա:

Հակառակորդի կրակի վոլորտում զորաշարժ կատարելու ժամանակ, հեծյալ հրետանին պետք է ծածկված ճանապարհներ ընտրի զորաշարժերը, վորքան հնարավոր է, արագ կատարել ու ձգտել թիկային դիրքեր գրավել հակառակորդին չեղահար կրակով ոմբակոծելու համար:

306. ՀԵԾՅԱԼ-ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ ԵՆ հեծելազորի ամբողջ մարտակարգի կողմից. վորոշ դեպքերում հեծյալ հրետանու համար կարելի յե հատուկ պաշտպանակ նշանակել, վորը յենթարկվում է հրետանական հրամատարին:

307. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՎԵՐՈՒՄ: Հարձակման ու պաշտպանության ժամանակ, հակառակորդի թևին ուղղված հարվածը, մանավանդ անակնկալ հարվածը, կարող է վճռական նշանակություն ունենալ մարտի վախճանի համար:

Հեծելազորը՝ նրան տրված բավականին ուժեղ հեծյալ հրետանու հետ միասին, իբրև զորքերի ամենաշարժուն տեսակը, կարելի յե ոգտագործել այդ նպատակների համար շատ մեծ ոգուտ ստանալով: Հեծյալ հրետանու նշանակությունը, թևին հարվածելիս, շատ մեծ է: Ոգտվելով իր դյուրաշարժությունից և հրանոթների հեռահարությունից, հեծյալ հրետանին, հեծելազորի պաշտպանության տակ, հակառակորդի համար անսպասելի կերպով կարող է դուրս գալ նրա թևի դիմաց և կրակ բանալ հակառակորդի ճակատի յերկարությամբ: Այդ դեպքում հեծյալ հրետանու կր-

րակը կարող է կանխել հակառակորդի թևի դեմ ուղղված հեծելազորի մարտի բռնվելը, վորն իր գրոհներով կարող է ավարտել հակառակորդի քայքայումը:

Հեծելազորն ու հեծյալ հրետանին կարելի է նույնպես օգտագործել հակառակորդի կողմից ձեռնարկած մեր թևի թևանցումը կամ թիկնանցումը խափանելու համար: Այդ դեպքում հեծելազորը, իր հերթին, ուղղվում է թիկնանցող կամ թևանցող հակառակորդի թևին հարված հասցնելու համար:

ԳԼՈՒԽ XVI

ՄԱՐՏԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ

308. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ*: Հրապաշարը հրետանու մարտական ուժի աղբյուրն է հանդիսանում: Յերկարատև մարտական ընդհարումների ժամանակ, հրետանուն վիճակված չափազանց բազմազան խնդիրների ժամանակ, նրա հրանոթների արագաձգության հետևանքով և հետևակի մարտակարգերի քիչ խոցելիության պատճառով հրապաշարի ահագին ծախք է պահանջվում: Հրետանական կրակը վոչ պլանաչափ կերպով վարելու ժամանակ հրապաշարն արագ կերպով սպառվում է:

Բոլոր պետերն ու հրամանատարները պարտավոր են հետևել հրապաշարի չափ խնայողաբար ծախսելուն և անհրաժեշտ դեպքերում արկերը չխնայել: Հրետանական արկերն ընդհանուր զորական պետի ձեռքում հանդիսանում են իբրև մի միջոց գլխավոր հարվածի ուղղությամբ ուժերի գերազանցության հասնելու համար:

Մարտի վճռական շրջաններում, հրետանական կրակն ամենակարևոր ուղղության վրա պետք է վարել լիակատար լարվածությամբ: Յերկրորդական ուղղությունների վրա մարտապաշարի ծախքը պետք է սահմանափակել:

Հրետանական պետերը պետք է նախատեսեն հրապաշարի ծախքը, այդ պաշարը համապատասխան

կերպով բաշխեն և նրանց անընդհատ լրացումն ապահովեն:

309. *ՀՐԱՊԱՇԱՐԻ ԾԱԽՔԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ*: Հրապաշարը նպատակահարմար և խնայողաբար ծախսելու համար հրետանին պարտավոր է.

ա) կրակ բանալ միայն վորոշ մարտական խնդիրներ լուծելու համար և հրաձգությունը դադարեցնել հետևանքին հասնելուց անմիջապես հետո.

բ) կրակել տակտիկական տեսակետից կարևոր նպատակների վրա և քիչ կարևոր ու քիչ խոցելի նպատակների վրա հրաձգությունից խուսափել.

գ) միջոցներ ձեռք առնել, վորպեսզի առաջուց տվյալներ պատրաստել փորձնական հրաձգությունն արագացնելու համար.

դ) փորձնական հրաձգության համար արկեր չխնայել՝ հարվածական հրաձգության համար ճիշտ տվյալներ ստանալու համար և պարզագույն խիստ համապատասխան կրակ վարել:

ե) խուսափել այնպիսի ընդարձակ մակերեսների ռմբակոծումից, վորոնց վրա նպատակների դրությունը չի կարելի բավական ճշտությամբ վորոշել. խափանիչ կրակ տալ բացառիկ դեպքերում և միայն ամենակարճ ժամանակով, վորն անհրաժեշտ է խնդիրն ի կատար ածելու համար. խուսափել հարվածական հրաձգությունից, յեթե այդ չի ապահովված բավականին հուսալի տվյալներով և յերբեք փորձեր չանել հարվածական հրաձգության համար տվյալների անճշտությունը կամ կասկածելիությունը լրացնել մեծ քանակությամբ արձակած արկերով:

զ) խուսափել բարոյական ազդեցության համար հրաձգության կատարելուց.

է) գիշերը կրակել միայն այն դեպքում, յեթե հրաձգությունը պատշաճ կերպով կազմակերպված և նախապես պատրաստված է այնպես, վոր ապահովված է նրա բավական գործունեությունը և սեփական զորքերի համար անվտանգությունը:

310. ՀՐԱՊԱՇԱՐԻ ԼՐԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ. ա) հրապաշարի առաջիկա ծախսի նախնական հաշիվը.

բ) մարտական սնունդի ծառայության պատշաճ կազմակերպությունը, վորը համապատասխանում ե պարագային և մարտի խնդրին.

գ) անընդհատ և հուսալի կապ թիկունքի հետ.

դ) մարտական սնունդի ծառայության ամբողջ անձնական կազմի կողմից լայն նախաձեռնության և հատուկ ճկունության ցուցահանում՝ հրապաշարը հասցնել այն զորամասերին, վորոնք մարտ են մղում, ինչ գնով էլ վոր լինի, յեթե նույնիսկ դրա համար ուղղակի կարգադրություն չկա, բայց պարագան այդ է պահանջում.

ե) սնունդի որգաններին առաջադրել միայն իրագործելի պահանջներ.

զ) խիստ կարգի ու կարգապահության պահպանում այն մասերում, վորոնք սպասարկում են մարտական սնունդը:

311. ՍՆՈՒՆԴԻ ՈՐԳԱՆՆԵՐԸ և ՀՐԱՊԱՇԱՐ ԿՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՆ՝ քարշակային անձեռնմխելի պաշարն ու մարտկոցների ամբարկղները, սնունդի ջոկերը — հրետանական բաժնյակներում, կորպուսային հրետանական պարկերը — հրաձիգ կորպուսներում. հրապաշար կրելու համար կարելի յե նույնպես օգտագործել կորպուսային տրանսպորտները. բանակում — առաջավոր և միջնական պահեստների հրետանական բաժինները, բանակային տրանսպորտները, յերկաթուղիները կամ ջրային հաղորդակցությունները:

312. ՄԱՐՏԱԿԱՆ ՍՆՈՒՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ: Հրապաշարի հայթայթումը պետք ե ապահովի այնպիսի կրակ վարելու հնարավորությունը, վորն անհրաժեշտ ե տրված խնդիրն ի կատար ածելու համար: Յուրաքանչյուր մարտկոց իր մոտ պետք ե ունենա լրված մարտի ամեն մի որվա համար իր ձիգերի «մարտական համալիրը»:

Մեկ հրանոթի համար ձիգերի պաշարը, վոր կրում ե մարտկոցն իր քարշակներում և ամբարկղներում, նույնպես և սնունդի ջոկի ամբարկղներում, կազմում ե «մարտական համալիրը»:

Մարտական սնունդի ծառայությունը բաշխվում ե սնունդի որգանների միջև, վորոնք շարանվում են ըստ խորության:

Ժամանակին և բավականաչափ մարտական սնունդը կախված ե տրանսպորտային միջոցների բեռնամբարձ ընդունակությունից և նրանց արագընթացքի մեծությունից և այն հեռավորությունից, վոր գոյություն ունի զորքերի և հայթայթող յերկաթուղային կայարանի կամ պահեստի միջև, վորտեղից կրում են հրապաշարը: Հիշյալ տվյալներից յելնելով, համապատասխան կերպով շարանում են սնունդի որգանները:

Մարտական սնունդը կարելի յե կազմակերպել զանազան յեղանակներով, նայած խնդրին և պարագայի պայմաններին:

Հրապաշար կրելը նրա ուժեղ բանեցնելու ժամանակ և մարտական հրետանական մասերը թեթևացնելու համար պետք ե կատարել թիկունքից դեպի առաջ. սնումը նույնպես կարելի յե կատարել, հրապաշարի յետևից փոխադրական միջոցներ ուղարկելով սնունդը բերող առաջավոր որգաններից դեպի յետ, նրանցից ամենամոտիկ թիկունքային որգանները, կամ խառը կարգով — սնունդի ջոկերի ամբարկղներն ուղարկելով հրապաշարի յետևից դեպի յետ փոխանցական կայանները (հրապաշարի ժամանակավոր պահեստները). վերջիններս հրապաշարն ստանում են թիկունքից դեպի առաջ պարկերի և տրանսպորտների միջոցով (տես հավելված № 17 ա և բ — հրապաշար կրելու սքեման դիվիզիական հրետանու 76 մմ մարտկոցների համար):

Ձիու ուժական վերջնական աշխատանքը մարտ մղելու որերին հրապաշար կրելու ժամանակ 30 կլմ. ավելի չե. միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում և բարենպաստ պայմաններում ձիու ուժական աշխատանքը կարելի յե հասցնել մինչև 40 կլմ.:

Յեթե հրետանական պարկի տարողությունը հա-

վասար է «մարտական համալիրի» կեսին և ձիու օրական աշխատանքը հավասար է 30 կմ., պարկը մեկ օրուգիշերում կարող է կրել մարտկոցներին «մարտական համալիրի» կեսը, տեղավորվելով սնունդի ջոկից 15 կմ. վրա. այդ դեպքում պարկը կկատարի մեկ 30 կիլոմետրանոց շրջանառություն կամ 2 վազք՝ գնալն ու գալը, յուրաքանչյուրը 15 կմ.:

Սնունդը կազմակերպելիս, հրետանական պարկերը պետք է շարանել, որպեսզի կրելու ավելի կարճ հեռավորությունների վրա հնարավոր լինի ավելի մեծ քանակությամբ հրապաշար կրել և կրելն ավելի արագ կատարել (փոփոխակի քայլքով և վարգով). ըստ որում ձիերը կարողանային հանգիստ և կեր ստանալ հրապաշարի բեռնաթափման ժամանակ, նույնպես և դատարկ յետ գնալիս:

Յեթե հրետանական պարկի յուրաքանչյուր դասակի տարողությունը հավասար է «մարտական համալիրի» $1/4$-ին և ձիու օրական աշխատանքը հավասար է 30 կմ., մարտկոցներին օրուգիշերում «մարտական համալիրի» $1/4$ կրելու համար, պարկի առաջավոր դասակը տեղավորվում է սնունդի ջոկից յոթ և կես կմ. վրա, իսկ թիկունքային դասակը յոթ և կես կմ. վրա առաջավորի յետևում. այն ժամանակ պարկի յուրաքանչյուր դասակ օրուգիշերը յերկու շրջանառություն կկատարի՝ յուրաքանչյուրը 15 կմ. կամ 4 վազք՝ գնալն ու գալը՝ յուրաքանչյուրը յոթ և կես կմ:

Հայթայթող յերկաթուղային կայարանը կամ առաջավոր պահեստի հրետանական բաժինը և յուրաքանչյուր կորպուսի (դիվիզիայի) համար կրելու ճանապարհը նշանակվում է բանակին (կորպուսին) տրվող հրամանով:

Հրետանական պարկերի շարանների տեղերը կրելու գծի վրա սահմանում է դիվիզիայի հրետանական հայթայթման պետը. այդ տեղերը դիվիզիայի շտաբի պետի զեկուցումով հաստատվում են դիվիզիայի հրամանատարի կողմից:

Հրետանական բաժնյակների մարտական սնունդի ջոկերը մարտում տեղավորվում են դեպի բաժնյակի մարտկոցները տանող հարմար և ծածկված ճանապարհների վրա, նրանցից մոտ 3 կմ վրա, առավելապես կենտրոնացրած, կամայական կարգով:

Սնունդի օրգանների շարժման ընթացքում ամեն մի տեղավորման ժամանակ միջոցներ են ձեռք առնվում քողարկման համար: Յերբեմն հրապաշար կրելը կատարվում է գիշերը:

Սնունդի օրգանների կապը միմյանց միջև և մարտական մասերի հետ սահմանվում է ընդհանուր կանոններով՝ թիկունքից դեպի առաջ իսկ յենթարկության գծով՝ վերևից ներքև:

Զորքերը և նրանց սնող թիկունքային հրետանական հիմնարկները կապվում են հեռախոսով: Հեռախոսային կապը հաստատվում է. մարտկոցների կապը սնունդի ջոկերի հետ՝ բաժնյակների միջոցներով. պարկերի կապը զորքերի հետ և միմյանց միջև՝ պարկերի միջոցով. պարկերի կապը տրանսպորտների հետ—վերջինների միջոցով. տրանսպորտների կամ պարկերի կապը, յեթե տրանսպորտներ չկան, առաջավոր պահեստի կամ վերջին բեռնաթափման կայարանի հետ—կորպուսի կամ բանակի միջոցներով: Բացի հեռախոսային կապից գործադրվում են՝ լրատարներ, հեծանվորդներ, մոտոցիկլիստներ և այլն:

Պարկերի առաջավոր դասակները պետք է իմանան նրանց կողմից սնվող սնունդի ջոկերի և մարտկոցների դասավորման տեղերը, նույնպես և դեպի նրանց տանող ճանապարհները. ընդհակառակը, սնունդի ջոկերն ու մարտկոցները պետք է իմանան իրենց պարկերի առաջավոր դասակների դասավորման տեղերը: Փոխադարձ կապի համար օգտակար է սնունդի ջոկերից ուղեցույցներ ուղարկել պարկերի առաջավոր դասակներին:

Մարտապաշարի ժամանակին և անընդհատ լրացումն ապահովելու համար անհրաժեշտ է մարտական

սնունդի աշխատանքն առաջուց կազմակերպել և սկսել առաջին անգամ կրակ բանալու հետ միասին:

313. ՀՐԱՊԱՇԱՐՈՎ ՍՆՈՒՆԴԻ ԿԱՐԳԸ: Հրապաշարի ծախքի լրացումը տեղի յե ունենում սնունդի բոլոր օրգանների տրանսպորտային միջոցների շրջանառության միջոցով. մարտկոցների կողմից կրակ բանալու հետ միասին այդ միջոցներն անընդհատ շարժման մեջ են գտնվում:

Արկերի հենց առաջին անգամ կրակային դիրքերին կրելու ժամանակ, մարտական սնունդի բոլոր շարաններում համապատասխան լրացում ե կատարվում թիկունքային շարաններից:

Մարտից առաջ և կրակային դիրքը փոխելուց առաջ մարտկոցներն իրենց մարտական համալիրները լրացնում են մինչև նորմայի:

Այն ամենը, ինչ որ թողել են որևե պատճառով մարտկոցները կրակային դիրքը փոխելու ժամանակ, պետք ե հավաքեն մարտական սնունդի ջոկերը:

Այն արկերը, որ կրում են հրանոթային քարշակներում, մարտկոցի անձեռնմխելի պաշարն ե կազմում, որը ծախսվում ե միմիայն բաժնյակի հրամանատարի պատվերով և լրացվում ե առաջին հենց հնարավորության դեպքում:

Հրանոթների անմիջական սնումը կատարվում ե մարտկոցների ամբարկղների վերջակուրծքերից, որոնք տեղավորվում են հրանոթների կողքին:

Մարտկոցների սնումը բաժնյակի մարտական սնունդի ջոկից կատարվում ե ամբարկղները ջոկերից դեպի մարտկոցի կրակային դիրքերը բերելու միջոցով: Յուրաքանչյուր մարտկոց լրացվում ե իր ողակից, յեթե բաժնյակի հրամանատարի կողմից ուրիշ պատվեր չի յեղել:

Հրապաշարը տեղ հասցնելու յեղանակը կախված ե տեղանքի պայմաններից և պարագայից: Պետք ե աշխատել ամբարկղները, որքան հնարավոր ե, ավելի մոտ բերել հրանոթներին, բայց անհրաժեշտ ե միջոց-

ներ ձեռք առնել, որպեսզի նրանք իրենց գալով չհայտաբերեն մարտկոցը:

Մարտական սնունդի ջոկերում հրապաշարի լրացումը կատարվում ե պարկերից բաժնյակների հրամանատարների պահանջներով, գլխավոր հրետանու պետի ցուցումներին համապատասխան:

Մարտական սնունդի ջոկերում հրապաշարը հանում են այն խցանվածքից, որի մեջ նրանց բերել ե պարկը, և դնում են ամբարկղների վանդակների մեջ: Յեթե վանդակները չեն բավարարում, մարտական սնունդի ջոկերը հրապաշարն ընդունում են պարկերի բերած խցանվածքից. խցանվածքն անպայման վերադարձվում ե պարկերին:

Հրապաշարի լրացումը պարկերում կատարվում ե կորպուսային և բանակային տրանսպորտներից կամ անմիջապես առաջավոր պահեստների հրետանական բաժիններից: Տրանսպորտները հրապաշարը բերում տալիս են անմիջապես պարկերին կամ հատկապես կազմակերպած փոխանցական (բաշխելու) կայաններին, որտեղից հրապաշարը ստանում են պարկերը:

Յերկարատև մարտերում և դիրքային պատերազմի ժամանակ հրապաշարի ժամանակին լրացմանը հասնում են, հատուկ պաշարներ կազմելով զորքերում կամ առաջավոր սնող հրետանական պարկերում, ժամանակավոր պահեստներ կամ նկուղներ կառուցելով հրապաշարը պահելու համար:

314. ՀՐԱՊԱՇԱՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ: Հրապաշարը պետք ե հասնի զորամասերի մարտական սնունդի օրգաններին տեսակավորած ըստ փամփուշտների մարկաների և արկերի ու լիցքերի քաշի, որոնց մասին խցանման արկղների վրա պետք ե համապատասխան մակագրեր լինեն:

Մարտական սնունդի զորական օրգանները պարտավոր են մարտապաշարի տեսակավորում կատարել խցանվածքի վրայի հիշյալ մակագրերի համաձայն:

Բաժնյակների մարտական սնունդի ջոկերը հրա-

պաշարի վերջնական տեսակավորում են կատարում արկերի ու լիցքերի քաշերի և վառոդների մարկաների համեմատ, մարտկոցներին, ըստ հնարավորին, միատեսակ հրապաշար ուղարկելով:

315. ՊԵՏԵՐԻ ՅԵՎ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Դիվիզիայի հրետանու պետը կարգավորում է արկերի ծախքն իրեն հանձնված հրետանու բաժնյակներում, լրացնելով նրանց պարկերից և, կարիքի դեպքում, արկերը մեկ բաժնյակից մյուսին տալով:

Բաժնյակի հրամանատարը բաշխում է բաժնյակի մարտկոցների մարտական սնունդը և պատասխանատու յե հրապաշարը նրանցում ժամանակին լրացնելու համար: Նա կարգավորում է արկերի ծախքը մարտկոցներում, հրապաշարը լրացնելով իր հայեցողությամբ և, կարիքի դեպքում, արկերը մեկ մարտկոցից մյուսին տալով: Նա վորոշում է մարտկոցները լրացնելու համար հրապաշարի քանակը՝ պարագային, մարտկոցների կրակային խնդիրներին և նրանց հրամանատարների զեկուցումներին համապատասխան:

Մարտկոցի հրամանատարը հետևում է արկերի ծախքին և միջոցներ է ձեռք առնում նրանց ժամանակին լրացնելու համար: Մարտկոցի հրամանատարը, վոր առանձին տեղ է գտնվում, հանդիսանում է մարտական սնունդի ջոկից ստացած ողակի կարգադրիչը և պատասխանատու յե հրապաշարի ժամանակին լրացման համար:

Կրակային դասակի հրամանատարն արկերի ծախքի ճիշտ հաշվառում է տանում և պարբերաբար զեկուցում է մարտկոցի հրամանատարին մարտկոցում յեղած առկա հրապաշարի մասին:

Մարտական սնունդի ջոկի հրամանատարը պատասխանատվություն է կրում մարտկոցներին ժամանակին հրապաշար հասցնելու համար: Նա պետք է ամեն միջոց ձեռք առնի, վորպեսզի մարտի ամենից շատ լարված րոպեներին, չնայած բոլոր խոչընդոտներին, արկերը

տեղ հասնեն ժամանակին և պահանջած քանակությամբ:

Նա պարտավոր է հոգ տանել ջոկի հրապաշարը համապատասխան պարկերից ժամանակին լրացնելու մասին:

Բաժնյակի հրամանատարի հետ կապ չունենալու դեպքում, մարտական սնունդի ջոկի հրամանատարը պարտավոր է բավարարել մարտկոցների հրամանատարների հրապաշարի պահանջները: Այդ դեպքում հրապաշարի բանեցնելու պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է մարտկոցների հրամանատարների վրա:

Հավելված № 9.
Հոդ. 85

ՄԱՐՏԱԿԱՆ ՈՐԻՆԱԿ

(Տես հավելվածներ № № 3ա և 3բ կողմորոշ սխեման ու պլանային աղյուսակը)

Հակառակորդի գրոհի համար, որ պետք է գրավել Ուսսա գետի մյուս կողմում—Զապլյա, Բ. Նովոսելկի, Մ. Նովոսելկի, Գայեվկա, Առանձին Բակեր, Մոշչանե ճակատի վրա, 2-րդ հրաձիգ դիվիզիայի տրամադրության տակ, բացի իր դիվիզիական հրետանուց, կա նաև կորպուսային հրետանու 4 մարտկոց, ընդամենը 14 մարտկոց—42 հրանոթ (76 մմ թնդանոթ—18. 122 մմ հոբից—12. 107 մմ թնդանոթ—6 և 152 մմ հոբից—6.): Այդ ամբողջ հրետանին դասվում է դիրքերում, յերեք խմբակում՝ Մոշչնիցա, Կուլակովկա, Սառցարաններ շրջաններում:

Հրետանու խնդիրները տրված են դիվիզիայի հրամատարի հրամանում (տես պլանային աղյուսակը—հավելված № 3բ). հենց նա էլ ցուցումներ է տալիս*), ՀՍ հրետանու որ խմբակները ու մանավանդ վո՛ր հետեվակ մասերին պիտի սատարեն (որինակ, ՀՍ I խմբակը սատարում է 4-րդ հրձ. գնդին, ՀՍ II խմբակը—5-րդ հրձ. գնդին. 6-րդ հրձ. գունդը, որ գործում է յերկրորդական ուղղության վրա, սատարում են միայն իր գնդի մարտկոցները և այլն):

Հրետանու բաշխումը խնդիրների համեմատ կատարվում է հրետանու պետի կողմից, նա էլ կազմում է անհրաժեշտ հրետանական միջոցների հաշվարքը, ղեկավարվելով պլանային աղյուսակով (գնդի հրետանին հաշվի մեջ չի մտնում):

*) Հրետանու պետի զեկուցման հիման վրա:

ՀՐԱՊԱՇԱՐԻ ԾԱԽՔԻ ՄՈՏԱՎՈՐ ՀԱՇԻՎԸ։

(Տես կազմ որոշ սքեման ու պլանշետային աղյուսակը—հավելվածներ №№ 3ա և 3բ)։

Խնդիրներ	Հրետանու բաշխումը	Արկերի թիվը	Հաշվի հիմունքը
Կռիվ հրետանու դեմ։ I շրջան (15—20 րոպե) հարվածային հրաձգության համար տվյալներ չեղած ժամանակ։	Այդ խնդիրը կատարելու համար I շրջանում նշանակվում է ամբողջ դիվիզիական հրետանին, բացի մեկ հոբիցային մարտկոցից, և ամբողջ կորպուսային հրետանին 4. 18 թնդանոթ 76 մմ. . 9 հոբից 122 մմ. . 6 թնդանոթ 107 մմ 6 հոբից 152 մմ. .	 600 120 260 80	1) Հակառակորդի մոտ հեշտ հայտաբերված 5 մարտկոց (20 հրանոթ)։ Կրակի չեզոքացման և, մասամբ, վորոշ մարտկոցների վոչնչացման համար կպահանջվի, միջին թվով, հակառակորդի յուրաքանչյուր հրանոթի համար ծախսել՝ 76-մմ դրամաչափի մինչև 50 արկ, 107-մմ մոտ 40, 122-մմ մոտ 30, 152-մմ մոտ 20։ Թնդանոթների և հոբիցների համակցված կրակի ժամանակ արկեր կպահանջվի.76-մմ(8×50) 122-մմ (4×30).107-մմ (4×40) և 152-մմ (4×20)։ 6 նկատված դիտակետերում դիտողներին շլացնելու համար՝ մոտավորապես 50 ական ծխատու կամ ֆոսֆորական արկ յուրաքանչյուր դիտակետի համար. ընդամենը 300 արկ (նույն թվում 76-մմ 200 և 107-մմ-100)։
II, III ու IV շրջաններ	Հակառակորդի հրետանու դեմ կրակ վարելու համար հետագա II, III և IV շրջաններում թողնվում են (յեն-		2) Մոտավորապես հաշվելով 1 ձիգ 4 րոպեյում 107 մմ թնդանոթով և 1 ձիգ 8 րոպեյում 152-մմ հոբիցով։

Խնդիրներ	Հրետանու բաշխում	Արկերի թիվը	Հաշվի հիմունքը
	թաղրաբար) կորպուսային հրետանու 2 թնդանոթային և 1 հոբիցային մարտկոց:[3]		
	6 թնդանոթ 107 մմ	360	
	3 հոբից 152-մմ . .	90	
I շրջան: Կրակ հետևակի դեմ (գլխավորապես, կողահարող կրակային միջոցների դեմ):	Նշանակվում է դիվիզիական հրետանու 1 հոբիցային մարտկոց:[4]		3) Միջին թվով ամեն մի հոբիցի համար 40-ական ձիգ հաշվելով:
	3 հոբից 122-մմ . .	120	4) Հարվածում է մինչև 60 հետևակ խմբակ, վորոնք լավ տեսանելի չեն դիվիզիայի ճակատի առջևում Յուրաքանչյուր խմբակի համար հաշվելով 35 ական արկ 76-մմ և 20 ական 122-մմ, ընդամենը 76-մմ արկեր մոտ 2100 և 122-մմ մոտ 1.200:
II շրջան: Հետևակի և գնդացիրների կրակի ճնշում. գրնդացրային բների վոչնչացում:	Նշանակվում է ամբողջ դիվիզիական հրետանին և կորպուսային հրետանու 1 հոբիցային մարտկոց:[4]		Վոչնչացնում է 11 գրնդացրային բուն, վորոնք լավ տեսանելի չեն դիվիզիայի ճակատի առջևում: Յուրաքանչյուր բնի համար հաշվելով մինչև 50 ձիգ 76-մմ, 20 ձիգ 122-մմ և 5 ձիգ 152-մմ և յուրաքանչյուր հեռու և հատկապես ամուր բնի համար մինչև 100 ձիգ 152-մմ, ընդ. 76-մմ արկ (50×9)=450, 122-մմ (20×9)=180 և 152-մմ (5×9)+ +(100×2)=245:
	18 թնդանոթ 76-մմ .	2.550	
	12 հոբից 122-մմ . .	1.3.0	
	3 հոբից 152-մմ . .	245	

III շրջան: Մեր հետևակի առաջխաղացման ապահովումը դեպի հակառակորդի պաշտպանության խորքը. գումարտակների դիմադրության կենտրոնների խորքում կրակային կետերի հաջորդական հարվածում:	Նշանակվում է նույն հրետանին, ինչ վոր II շրջանի համար:		5) Հաշվելով 40-ական ձիգ 76-մմ թնդանոթով և -ական ձիգ 122-մմ կամ 152-մմ հոբիցով:
	18 թնդանոթ 76-մմ .	720	
	12 հոբից 122-մմ . . .	240	
	3 հոբից 152-մմ . . .	60	
IV շրջան: Կրակ հակառակորդի խորը առանցակների վրա. կրակային փակոց (արգելիչ կրակ):	Նույն հրետանին, ինչ վոր II և III շրջանների համար և բացի այդ, կորպուսային հրետանու թնդանոթային մարտկոցները:[6]		6) Հաշվելով 30-ական ձիգ 76-մմ թնդանոթով, 20-ական ձիգ 107-մմ թնդանոթով և 10-ական ձիգ հոբիցներով՝ խորը թիկունքները ամբակոծելու համար: Խափանիչ կրակի մեկ 2-րոպեանոց սերիայի համար, կրակ վարելու թույլատրելի արագությունը հաշվելով:
	18 թնդանոթ 76-մմ .	756	75-մմ (18×6×2) . . . . 216 արկ.
	12 հոբից 122-մմ . . .	168	122-մմ (12×2×2) . . . . 48 »
	6 թնդանոթ 107-մմ .	168	107-մմ (6×4×2) . . . . 48 »
	3 հոբից 152-մմ . . .	42	152-մմ (3×2×2) . . . . 12 »

ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐԿԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԱՐՏԻ ՄԵԿ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ.

76-մմ .	4.626	կամ 1 հրանոթի համար մոտ	260
107-մմ .	788	» » » » »	135
122-մմ .	2.028	» » » » »	170
152-մմ .	517	» » » » »	85

Այս հաշվով, որն ամենևին մաքսիմալ չէ, այնուամենայնիվ հրապաշարի ծախքը չի կարելի ապահովել մարտակազմ համալիրով. դիվիզիայի հրամատարը համարում է, որ պարկերի պաշարը պետք է պահել հետագա օրերի համար, իսկ մարտի առաջիկա օրը ծախսել յուրաքանչյուր հրանոթի համար մոտավորապես.

76-մմ . .	թնթանոթի համար մինչև	190 ձիգ.
107-մմ . .	» » »	85 »
122-մմ . .	հոբիցի » »	140 »
152-մմ . .	» » »	70 »

Այդ պատճառով անհրաժեշտ է սահմանափակվել նպատակների հարվածումով միայն 5 և 4 հրձ. գնդերի գրոհի ամենակարևոր վճռական ուղղության վրա: (Տես կողմորոշ սքեման—հավելված № 3ա):

Արկերի ամենամեծ ծախք են պահանջում II շրջանի խնդիրները—հետևակի կրակային միջոցների ճընշումը ու գնդացրային բների վոչնչացումը, գոնե միայն լավ տեսանելիների, բայց դիվիզիայի ամբողջ ճակատի առջևում: Միայն վճռական գրոհն ապահովելու կրակը կենտրոնացնելու ժամանակ, արկերի ծախքը նույն խնդիրները միայն 5 և 4 հրձ. գնդերի ճակատի առջևում կատարածելու համար գրեթե յերկու անգամ կփոքրանա: Ամենակարևոր նպատակները հարվածելու համար 5 և 4 գնդերի ճակատի առջևում Բ. Նովոսելկի, Կրիլովիչի, մատուռով գերեզմանատան, Մ. Նովոսելկի, Բոբրովկա գյուղից դեպի հյուսիս գտնվող բարձունքի (Բոբրովսկի գետակի ձախ ափում), Կլոր անտառի ռայոնում արկեր կպահանջվի. ա) 36 տեսանելի հետևակ խմբակները հարվածելու համար—76-մմ արկ

1·000 և 122-մմ 800. բ) 9 տեսանելի գնդացրային բների վոչնչացման համար—76-մմ արկ մոտ 350, 122-մմ ռումբ 200 և 152-մմ 150. ընդամենը արկեր, կլորացրած թվերով. 76-մմ 1·350, 122-մմ 1·000 և 152-մմ 150: 107-մմ արկերի ծախքը պետք է կրճատել. հրետանու դեմ կռվելու համար մինչև 400 (620 փոխարեն) և 48 այդպիսի արկ բոլորովին չծախսել IV շրջանում խափանիչ կրակի համար: Այդ հաշվով արկերի ընդհանուր ծախքը մարտի ամբողջ օրվա համար կիջնի մինչև դիվիզիայի հրամատարի ցույց տված չափերը:

Այսպիսով, հետևակի գրոհի նախապատրաստության ժամանակ (II շրջան), արկերով մանյովրելու հմտությունը, այսինքն գլխավոր հարվածի ուղղության վրա դիվիզիական և կորպուսային հրետանու մարտկոցների մեծ մասի կրակի համախմբումը (այդ մարտկոցներին անհրաժեշտ հրապաշար տալով մյուս մարտկոցներից) ապահովում է վճռական գրոհի հաջողությունն արկերի ամենաքիչ ծախքով: Այդ միջոցին հետևակի գրոհին յերկրորդական ուղղությունների վրա (6-րդ հրաձիգ գունդ) օգնում է գնդի հրետանին և դիվիզիական ու կորպուսային հրետանու մարտկոցների միայն ամենաանհրաժեշտ մասը:

ՄԱՐՏԿՈՑԻ ԿՐԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ



Հավելված № 11

Հոդվ. 86

ՀՄ. խմբակի կրակային շերտերը



ՀՐԱՄԱՆ

ՎԱՍՅՈՒԿՈՎԱ ԳՅՈՒՂԻ ՄՈՏ ԳՐՈՀԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՑՐԱԾ ՀՐԵՏԱՆՈՒ

Գ. ՈՒՏՉԻՆԱ № 01/օպ. Գ. 4 ՈԳՈՍՏՈՍԻ 22 ԺԱՄ. ՔԱՐՏԵԶ 2 ՎԵՐՍՏԱՆՈՑ ՊԼԱՆ 250 ՍԱԺ.

1. Հակառակորդը մինչև մեկ դիվիզիայի ուժով ամրացրած դիրք է գրավել, հետևյալ ճակատի վրա.

Դիմադրության գլխավոր չերտի առջևի յեզրը— 93,6 բարձունք, Սպիտակ Լեռնակ, Յերեք ծառ, Աղյուսի գործարան, Շիկակարմիր հող, 93,5 բարձունք։

Դիմադրության ուժեղ օջախների չերտը—Ֆերմա, Գորշ տուն, 94,5 բարձունք, գ. Վասյուկովա։

2. Ո օրը և Ժ ժամին, վոր կհայտնվեն լրացուցիչ կերպով, սկսվում է հրետանական նախապատրաստությունը, վորից հետո III Հրաձիգ կորպուսի մասերը գրոհում են հակառակորդի դիրքերը։ 7-րդ և 8-րդ դիվիզիաների միջև սահմանային գիծն է—Յերեք ծառ, Գորշ տուն (յերկու կետն էլ 7-րդ դիվիզիայի համար)։

3. Գրոհի ժամանակ հրետանու գործողությունների ղեկավարությունն իմ վրա յե դրված։

4. Մարտական բաշխումը և հրետանու խնդիրները։

Խմբակների անունները	Խնդիրները	Տեղամասերը
I. ՀՍ 7 բնկ. Ա.	Հետևակի ճնշումը և արգելքների ավերումը	1-ին գիծը. 93,6 բարձունք, Ձոր ծառ. 2-րդ գիծը. Ֆերմա, Գորշ տուն
II. ՀՍ 8 բնկ. Բ.	Նույնը.	1-ին գիծը. Ձոր ծառ, 93,5 բարձունք 2-րդ գիծը. Գորշ տուն, Վասյուկովա գյուղը։
III. ՀՓ բնկ. Գ.	Կռիվ հրետանու դեմ, թիկունքի քայքայում, կրակային արգելում և թևերի պաշտպանում։	Զախնևկա, Կոզլովո

Մասերի անունները	Մարտկոցների թիվը				Հրանոթների ընդհանուր թիվը.
	76 մմ	122 մմ	107 մմ	152 մմ	
7-րդ հրետ. գունդ .	3	2	—	—	—
9-րդ » » . .	3	2	—	—	—
ԳՀՌՀ I գնդի . . .	—	2	—	—	—
» III » . . .	—	—	—	2	—
Ընդամենը . .	6	6	—	2	84
8-րդ հրետ. գունդ .	3	2	—	—	—
III կորպ. բաժնյակի	—	—	—	1	—
Ընդամենը . .	3	2	—	1	36
ԳՀՌՀ I գնդի . . .	3	—	—	—	—
» II » . . .	—	—	2	—	—
» III » . . .	—	—	2	2	—
III կորպ. բաժնյակի	—	—	1	—	—
Ընդամենը . .	3	—	5	2	60
Ընդամենը . .	12	8	5	5	180

5. Ցենթախմբակների բաժանումը կատարվում է խմբակների հրամատարների կարգադրությամբ:

6. Մարտկոցների տեղամասերը բաժանելը՝ հակագրոհները յետ մղելու ու կրակային փակոցներ կառուցելու համար, դրվում է խմբակների հրամատարների վրա:

7. Տանկերի դեմ կռվելը մտնում է գնդի մարտկոցների պարտականությունների մեջ:

8. Խմբակների հրամատարներին վաղը 5/VIII լուսաբացին սկսել հակառակորդի, մարտադաշտի, իրենց դիրքերի, մոտենալու թիկունքային ճանապարհների մանրամասն հետախուզություն կատարել: Բոլոր անհրաժեշտ հետախուզական և կողմորոշ տվյալների փոխանցումը պետք է ավարտել 5/VIII ժամի 12-ին:

9. Բոլոր մարտկոցներին ճիշտ հրաձգության համար հիմնական տվյալներ պատրաստել 6/VIII ժամի 12-ին: Յուրաքանչյուր նպատակի համար յելակետային տվյալներն ունենալ վոչ միայն դիտակետերում, այլ և կրակային դիրքերում, մարտի ժամանակ կապը փչացնելու դեպքի համար:

10. ՀՍ խմբակների հրամատարներին 5/VIII կապ հաստատել դիվիզիաների ու հրձ. գնդերի հրամատարների հետ: Լարափակոցների անցքերը ճիշտ բաշխել գնդի մարտկոցների և այն մարտկոցների միջև, վորոնք նշանակված են դրա համար հրետանական խմբակից:

11. Խմբակների հրամատարների հրամանները, վորոնց մեջ պետք է ճիշտ ցույց տված լինեն—խնդիրներն ու մարտկոցների տեղամասերը, տեղամասերի բաշխումը կողմորոշ պլանի վրա, իր մարտկոցների դասավորման սքեմատիկ նախագծերը, անտեսության դաշտերի հաշվառման քարտերը, պահեստի և կեղծ դիրքերի, մոտենալու և թիկունքային ճանապարհների նախադրակը, մարտկոցների առաջշարժման և յետխաղացման նկատառումները, հաշվարկները և սքեմաները (դիրքերի փոփոխումը դեպի առաջ և յետ)—ներկայացնել 6/VIII ժամի 8-ին:

12. Ավիացիոն ջոկատի հրամատարին շարունակել հետախուզությունը տված ցուցումներով: Յերկրորդ հերթի մշակած լուսանկարները ներկայացնել ինձ 5/VIII 20 ժամին: Հրաձգությունը ճշտելու համար նշանակվում են. ՀՍ 8 պետի տրամադրության տակ—2 սավառնակ, ՀԳ պետի տրամադրության տակ—2 սավառնակ:

13. Ոդադնացական ջոկատի հրամատարին 6/VIII մինչև ժամի 8-ը ոդապարիկը թաքուն տեղափոխել անտառը, վորը Պրուդնյա-ից դեպի հյուսիս-արևելքն է:

14. Քիմիական ծառայության պետին մարտադաշտի մանրամասն քիմիական հետախուզություն կատարել և 5/VIII ժամի 18 ներկայացնել քիմիական հարձակման և պաշտպանության կազմակերպության նկատառումները:

15. Հետախուզության պետին կազմակերպել մասնագիտական հետախուզական խմբերի գործունեությունը 5/VIII ժամի 24-ին:

16. Մարտկոցների մարտական դասավորությունը, դիրքային տեղամասերի բաշխումը, կրակային դիրքերը բռնելու կարգը, ժամանակը, թաքունության միջոցները—ցույց կտրվեն լրացուցիչ կերպով:

17. Հրետանու կապի պետին անմիջական կապ հաստատել իմ հրամատարական դիտակետի (Սեյլցի) և հրետանական խմբակների հրամատարների միջև, նույնպես և կենտրոնական կայանի միջոցով գրոհի հրետանու շտաբի, կապովի ոդապարիկի և ընդունիչ ռադիոկայանի հետ: Դիվիզիայի շտաբի հետ կապը—հրետանական խմբակների պետերի միջոցով: Կապը հաստատել մինչև 5/VIII ժամի 8-ը:

---

18. Հրետանական պարկերի շարանները։

Շարանների անուն-ները	7-րդ հրետ. գնդի	7-րդ հրետգնդի	9-րդ հրետ գնդի	III կորպուսային բաժնյակի	ԳՀՈՀ 1-ի գնդի	ԳՀՈՀ 1 և 3 գնդերի
Առաջավոր . . .	Անտառում, որը Բուրցովից դեպի արևելք է գտնվում.	Անտառում, որը Նովոսելկից դեպի արևմուտք է գտնըվում։	Անտառում, որը Բուրցովից դեպի արևելք է գտնըվում։	Անտառում, որը Նովոսելկից դեպի արևմուտք է գտնվում։	Անտառում, որը Վորոնցովայից դեպի հյուսիս է գտնվում։	Անտառում, որը Ռատչինայից դեպի արևմուտք է գտնվում։
Թիկունքային . .	Անիկինա։	Անտառում, որը Ծոլդեյեվայից դեպի հարավ է գտնըվում։	Անիկինա	Անտառում, որը Ծոլդեյևից դեպի հարավ է գտնվում	Արխանիչչևա	Ցուրկովա

19. Մարտկոցներում և նկուղներում 5/VIII ժամի

76-մմ		122-մմ	
Նռնակներ	Շրապնելներ	Ռումբեր	Շրապնելներ
195	105	190	20

20. Ժամկետավոր զեկուցագրերը—ժամի 8-ին,

21. Տեղակալներ. Շտաբի պետ և ՀԳ խմբակի

Հրետանու

Շտաբի

24-ին յուրաքանչյուր հրանոթի համար ունենալ.

107-մմ		152-մմ	
Նռնակներ	Շրապնելներ	Ռումբեր	Շրապնելներ
130	20	120	5

15-ին և 22-ին։

Հրամատարը։

պետ՝

պետ՝

Հավելված № 13
Հոդ. 217

ՔԱՂՎԱԾՔ ՀՍ ԽՄԲԱԿԻ

Կրակը վարել

ՀՐԱՄԱՏԱՐԻ ՀՐԱՄԱՆԻՑ

Հետևյալ պլանով

Մարտկոցների №№	Ժ	Ժ+1	Ժ+1—20	Ժ+2—20	Ժ+2—30	Ժ+2—40	Հետո
1	Ցերկաթալարի վրա։ Անցքեր Գ, Դ և Ն։	Նույնը։	Նույնը։	Թփով բնից մինչև Սպիտակ լեռնակը։	Ցերկաթալարի վրա։ Անցքեր Գ և Դ։	Գոր, Տան մոտի խրամատների վրա։	1) Նույնը։ Արագությունը՝ պարագայի համեմատ։
Կրակի արագությունը։	1 ձիգ 1 րոպեում յուրաքանչյուր հրանոթի համար։		»	15 վայրկյանում 1 ձիգ։	1 ձիգ 1 րոպեում մեկ հրանոթի համար։	20 վայրկյանում 1 ձիգ։	2) Թափանիչ կրակ բացատի յելքի վրա, 15 վայրկյանում 1 ձիգ։
2	Ֆերմի մոտի խրամատների վրա։	Ուղղությունների ստուգում։	Սպիտակ լեռնակից մինչև դեղին խրամատի վերջը։	Ֆերմի մոտի խրամատների վրա։	Սպիտակ լեռնակից մինչև դեղին խրամատի վերջը։	Ֆերմի մոտի խրամատների վրա։	1) Ֆերմի մոտի խրամատների վրա։ Արագությունը՝ պարագայի համեմատ։
Կրակի արագությունը։		Ընդամենը 4 ձիգ։	1 ձիգ 2 րոպեյում մեկ հրանոթի համար։	15 վայրկյանում 1 ձիգ։	1 ձիգ 2 րոպեում մեկ հրանոթի համար։	15 վայրկյանում 1 ձիգ։	2) Թափանիչ կրակ գերեզմանատան վրա, 15 վայրկյանում մեկ ձիգ։

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

Ազդանշան сигнал
Ական мина
Ականանետ миномет
ружение
Ամրաշինական կառուցվածք фортификационное соо-
Ամփոփում сводка
Անոթ прибор
Անցարան переправа
Ապաստան убежище
Ապաքողարկում демаскирование
Առաջակուրծ передний ход
Առաջավոր ջոկատ передовой отряд
Ասպանդակ стремя
Արագաձիգ скорострельный
Արգելանտառ засека
Արկ снаряд
Արշավ галоп
Արշավակի галопом

Բաժնյակ дивизион
Բացազատում развертывание
Բացատ поляна
Բեկորա-քիմիական արկ осколочне-химический снаряд
Բնագիծ рубеж
Բնակարանորդ квартирьер
Բոլորել կրակով окаймлять огнем
Բոլորք опушка

Բոցամարիչ пламягаситель
Բռնկում вспышка
Բռնկումների հատում засечка вспышек

Դագաթնահար կրակ навесный огонь
Գազաբալոնային գրոհ газобалонная атака
Գետնամերձ հետագիծ настильная траектория
Գշեռ шип
ԳՀ (գնդի հրետանի) ПА (полковая артиллерия)
ԳՀՕՀ (գլխավոր հրամանատարության օժանդակի հրետանի) АРГК (артиллерия резерва главного командования)
Գործիական, գործիքային հետախուզություն инструментальная разведка
Գումակ обоз
Գրաստ вьюк
Գրաստային հրետանի вьючная артиллерия

Դադարք привал
Դահուկ лыжа
Դաշունահար գործողություն кинжальное действие
Դետք дозор
Դիմադրություն сопротивление
Դիմամարտ встречный бой
Դիպուկ կրակ меткий огонь
Դիտակետ наблюдательный пункт
Դիտող наблюдатель
Դյուրաշարժություն подвижность

Զենիթային հրետանի, մարտկոց зенитная артиллерия, батарея
Զինադաշտ плацдарм
Զորական հրետանի войсковая артиллерия
Զրահագնացք бронепоезд
Զրահամեքենա бронемашина
Զրահապատ ուժեր броневые силы

Ընթացուղի маршрут

Թևանցող դրություն охватывающее положение
Թևանցում охват
Թևային դիրք фланговая позиция
Թիկնանցում обход
ԹՆ (Թունավորող նյութեր) ОВ (отравляющие вещества)
Թնդանոթ пушка

Ժամկետ срок

«Ի մարտ» (հրաման) «К бою» (команда)
Իշխող բարձունք командующая высота
Իրազեկում ориентировка

Լաստան стелаж
Լաստանավ паром
Լարափակոց проволочное заграждение
Լուսարձակ прожектор
Լուսատու արկ светящий, осветительный снаряд
Լուսեղեն ազդանշան световой сигнал
Լրատար посыльный

Խաչաձև կրակ перекрестный огонь
Խաչափառք рогатка
Խափանիչ կրակ заградительный огонь
Խմբավորում հրետանու группировка артиллерии
Խրամուղի ход сообщения
Խրուտ տեղ топкое место

Ծածկարան закрытие, укрытие
Ծածկույթ завеса
Ծխագլան дымовая шашка
Ծխատու արկ дымовой снаряд

Կամրջանավ понтон
Կապան дефиле, теснина
Կապովի օդապարիկ привязной аэростат

Կարգադիր дислокация
Կեռմանաձև зигзагообразный
Կողահարող կրակ фланкирующий огонь
Կողահարում фланкирование
Կողմնապահ боковой авангард
Կողմորոշ ориентирный, ориентир
Կտրտուկ տեղանք пересеченная местность
Կրակային ուղեկցում огневое сопровождение
Կրակային փակոց огневое заграждение

Համագործակցություն взаимодействие
Համալիր комплект
Համախմբում կրակի массирование огня
Հանգույց կապի, ճանապարհների узел связи, дорог
Հասողություն досягаемость
Հաստարան (յերկաթուղային) установка
Հաստիքային կազմ штатный состав
Հաստոցավոր գնդացիր станковый пулемет
Հատուղի просека
Հատում засечка
Հարկանի դասավորություն ярусное расположение
ՀԳ (հեռավոր գործողության) խմբակ группа ДД (дальнего действия)
Հեծելաղեւք раз'езд
Հեռախոսակ, Հեռախոսիչ телефонист
Հեռակայություն дистанция
Հեռահար дальнобойный
Հեռահարություն дальнобойность
Հզորություն արկի мощность снаряда
Հոբից гаубица
Հոբիցային մարտկոց гаубичная батарея
Հոս ելեքտրական ток электрический
ՀՍ (հետևակին սատարող) խմբակ группа ПП (поддержки пехоты)
Հորիկ унос передний
Հրածածկույթ огневая завеса
Հրակնատ бойница

Հրամատարական դիտակետ, կետ командирский наблюдательный пункт, командный пункт
Հրանոթ орудие
Հրանոթային համրանք орудийный расчет
Հրապաշար огнеприпасы
Հրասանդ мортира
Հրթիռ ракета
Հրձիգ արկ зажигательный снаряд

Ձայնախոսական նշանարարություն акустическая сигнализация
Ձգարանական ուղղում баллистическая поправка
Ձիակապարան коновязь
Ձիավար ездовой
Ձիաքարշ հրետանի артиллерия конной тяги
Ճեղան фашина
Ճշտամոտ հրաձգություն уточненная стрельба
Ճշտում կրակի, հրաձգության корректирование огня, стрельбы

Մալուխ кабель
Մասնատում մարտակարգի расчленение боевого порядка
Մատույց подступ
Մարտապաշար боеприпасы
Մեծակալիբր գնդացիր крупнокалиберный пулемет
Մեռյալ տարածություն мертвое пространство
Մերձեցում сближение

Յելակետ исходный пункт, точка
Յելակետային տվյալներ исходные данные
Յենթախմբակ подгруппа
Յետխաղացում отход
Յերթ поход, марш
Յերկայնակի կրակ продольный огонь

Նավակամուրջ понтонный мост

Ներամուտ անկյուն входящий угол
Նշանառու наводчик
Նշանարարություն сигнализация

Շարան эшелон
Շարանում эшелонирование
Շեղակի, շեղահար կրակ косой, косоприцельный огонь
Շլացում ослепление
Շքարան козырек

Ոդաչափական ուղղում аэрометрическая поправка
Ոդաչու летчик
Ոդապարիկ аэростат
Որագնացք дневной, суточный переход
Պահեստի, պահունի դիտակետ запасный наблюдательный пункт
Պաշտպանակ прикрытие
Պատառում прорыв
Պատնեշ կրակային вал огневой
Պատվիրակ կապի делегат связи
Ջուխտակում կապի, կարգադրությունների дублирование связи, распоряжений

Ռմբարկղ зарядный ящик
Ռումբ бомба

Սակավակայուն ԹՆ малостойкие ОВ
Սանդղաձև դասավորություն уступное расположение
Ստորերկրյա ապաստան подземное убежище

Վազան бегун
Վարգ рысь
Վարգով рысью
Վարչական դասակ взвод управления
Վերախմբավորում перегруппировка
Վերաստորադասություն переподчинение

Վերերկրյա գործողություն наземное действие
Վերջակուրծ задний ход
Վերջապահ ариергард

Տեսաբանական նշանաբարություն оптическая сигнализация
Տեսակավորում сортировка
Տեսողական կապ зрительная связь
Տրամաչափ калибр
Տրամատ профиль

Փակոց заграждение
Փարոս маяк
Փոխարկիչ коммутатор
Քարշակ передок
Քարշակային պաշար передковый запас
Քելք аллюр

Публичная Биб...

ՑԱՆԿ

Էջ

ԽՍՀՄ ՀՌԽ ՀՐԱՄԱՆ № 326 . . . .

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Գլուխ I. *ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ* (հոդ. հոդ. 1—6) 5

Գլուխ II. *ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ* (հոդ. հոդ. 7—11) . . . 8

Գլուխ III. *ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ* (հոդ. հոդ. 12—42).

1. *Ղեկավարության հիմունքները* 14
2. *Մարտական բաշխում* 17
3. *Հրետանական պետերի պարտականությունները* . 23
   - ա. *Դիվիզիայի հրետանու պետը* 23
   - բ. *Հրետանական խմբակի հրամատարը* . . . 25
   - գ. *Հրետանական բաժնյակի հրամատարը* . . . 26
   - դ. *Մարտկոցի հրամատարը* 28
4. *Հետախուզություն* 29
5. *Կապ* 31
6. *Հրետանական շտաբ* 36

Գլուխ IV. *ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ* (հոդ. հոդ. 43—78).

1. *Քաղաքական ղեկավարման կազմակերպություն* . 39
2. *Ռազմա-քաղաքական դաստիարակման հիմունքները* 45
3. *Զորքերի մարտական գործունեության քաղաքական ապահովում* 56
4. *Քաղաքական աշխատանք բնակչության մեջ* . . 60

Գլուխ V. ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐԱԿԸ (հոդ. հոդ. 79—87).
1. Ընդհանուր դրույթներ 62
2. Կրակի տեսակները 70
3. Կրակի ղեկավարություն 76

ՀԱՏՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ VI. ԵՐԹ (հոդ. հոդ. 88—101) 79
Գլուխ VII. ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂՈՒՄ (հոդ. հոդ. 102—108) 86
Գլուխ VIII. ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՑԱԶԱՏՈՒՄ (հոդ. հոդ. 109—135)
1. Հրետանու մարտակարգը 90
2. Հրետանական դիրքեր 92
3. Հրետանական հետախուզություն 98
4. Պետերի աշխատանքը 107

ՀԱՏՎԱԾ ԵՐՐՈՐԴ

Գլուխ IX. ԴԻՄԱՄԱՐՏ (հոդ. հոդ. 136—166).
1. Ընդհանուր դրույթներ 113
2. Հրետանական պետերի նախնական աշխատանքը . 114
3. Երթի կազմակերպությունը դիմամարտ նախատեսնելիս 116
4. Առաջապահի հրետանին 118
5. Գլխավոր ուժերի հրետանին 121
6. Հետապնդում 130
Գլուխ X. ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՄԱՐՏ ԶՈՐԱՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (հոդ. հոդ. 167—199).
1. Ընդհանուր դրույթներ 133
2. Մարտի բռնվելը 136
3. Գլխավոր ուժերի նախապատրաստական գործողությունները 140
4. Հրետանական նախապատրաստություն և գրոհի սատարություն 151

Գլուխ XI. ՀԱՐՁԱԿՈՒՄ ԴԻՐՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ։ Ամրացրած շերտի գրոհը (հոդ. հոդ. 200—225).
1. Ընդհանուր դրույթներ 158
2. Նախապատրաստական աշխատանք 161
3. Հրետանական նախապատրաստություն և գրոհի սատարություն 179
Գլուխ XII. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՇԱՐԺԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (հոդ. հոդ. 226—251).
1. Ընդհանուր դրույթներ 180
2. Ղեկավարություն 182
3. Պաշտպանության կազմակերպությունը 185
4. Գործողությունները մարտի ժամանակ 192
5. Մարտից յելնել 197
Գլուխ XIII. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԻՐՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ (հոդ. հոդ. 252—267).
1. Ընդհանուր դրույթներ 199
2. Ղեկավարություն 199
3. Պաշտպանության կազմակերպությունը 201
4. Գործողություններ մարտի ժամանակ 206
Գլուխ XIV. ՀՐԵՏԱՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (հոդ. հոդ. 268—295).
1. Լեռներում 208
2. Անտառներում 212
3. Բնակավայրերում 214
4. Ձմեռը 216
5. Գիշերը 217
Գլուխ XV. ՀԵԾՅԱԼ ՀՐԵՏԱՆՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (հոդ. հոդ. 296—307).
1. Ընդհանուր հիմունքներ 223
2. Հեծյալ հրետանին յերթում, տեղում դասավորվելու և հետախուզության ժամանակ 225
3. Հեծյալ-հրետանական հետախուզություն 226
4. Հեծյալ հրետանու գործողությունները մարտում 228

ՀԱՏՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Գլուխ XVI. ՄԱՐՏԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ (հոդ. հոդ. 308—315).
1. Ընդհանուր դրույթներ 230
2. Սնունդի ծառայություն . . . .

ՑՈՒՑԱԿ

ՏԵՔՍՏՈՒՄ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ՍԽԵՄԱՆԵՐԻ, ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ։

1. *Սխեմա* № 1. *Մարտական օրինակ* (*Հոդ*. 18) . . 23
2. *Կրակ վարելու արագության նորմաները* (*Հոդ*. 80) 64
3. *Նպատակից հետևակի անվտանգ հեռացման սահմանը հրետանու հրաձգության ժամանակ* (*Հոդ*. 80) 65
4. *Հրանոթների տրամաչափերի կիրառման աղյուսակը* (*Հոդ*. 82) 67
5. *Արկերի մոտավոր ծախսը շենքերի, խրամատների, ծածկարանների ավերման համար* (*Հոդ*. 84) 73
6. *Սխեմա* № 2. *Մարտական օրինակ* (*Հոդ*. 125) . 104
7. » № 3. » » (*Հոդ*. 153) . 123
8. » № 4. » » (*Հոդ*. 185) . 146
9. » № 5. » » (*Հոդ*. 216) . 172
10. » № 6. » » (*Հոդ*. 231) . 184
11. *Բառացուցակ* 256

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

№ 1.—*Վաշտային քարտ* (*Հոդ*. 37)։

№ 2.—*Կողմորոշ սխեմա* (*Հոդ*. 37)։

№ 3.—*ա) Կողմորոշ սխեմա և բ) նրա պլանային աղյուսակը* (*Հոդ*. 37)։

№ 4.—*Կողմորոշ պլան* (*Հոդ*. 37)։

№ 5.—*Կապի սխեման մարտկոցում, որ սատարում է վաշտին* (*Հոդ*. 38)։

№ 6.—*Կապի սխեման մարտկոցում, որ սատարում է գումարտակին* (*Հոդ*. 38)։

№ 7.—*Բաժնյակի կապի սխեման* (*Հոդ*. 38)։

№ 8.—*Արկերի մոտավոր ծախսի աղյուսակը* (*Հոդ*. 84)։

№ 9.—*Մարտական օրինակ «Արկերի ծախսի մոտավոր հաշիվը* (*Հոդ*. 85)։

№ 10.—*Մարտկոցի կրակի բաշխումը* (*Հոդ*. 86)։

№ 11.—*Խմբակների հրապաշարը* (*Հոդ*. 86)։

№ 12.—*Հրետանու պետի հրամանը* (*Հոդ*. 217)։

№ 13.—*Քաղվածք խմբակի հրամատարի հրամանից* (*Հոդ*. 217)։

№ 14.—*Կրակի սիստեմը պաշտպանության ժամանակ* (*Հոդ*. 236)։

№ 15.—*Հեռավոր կրակային հարձակումներ* (*Հոդ*. 242)։

№ 16.—*Հրետանու գործողությունները հարձակման շրջանում* (*Հոդ*. 241)։

№ 17ա—*Հրապաշար կրելու սխեմա* (*Հոդ*. 312)։

№ 17բ—*Հրապաշար կրելու սխեմա* (*Հոդ*. 312)։

ՀՀ Ազգային գրադարան
NL0254373

42.483